



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

20154

20155

891.99-192

U-67

217

108

✓

ՄՈՒՍԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԼԻԱԿԱՏԱՐ ԵՐԳԱՐԱՆ

ԽՄԲԱԳԻՐ-ՀՐԱՍԱՐԱԿԻՉ

Ս.Ի.Ա.Գ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑ:

Քանի կերդէ Հայաստանին
իմ Սոխակ,
Սրտիս խորքում վառ կ'ծողէ
Նա միշտ սիրո՞յ, միշտ ազգային
յիշատակ:

ԲՅՈՒՆՆԵՐ:

Ս. Ե. Խ. Ա. Տ. ՈՒ Թ. Ի Ի Ն Ը.

ՀԱՏՈՐ IV.

ԲԱԳՈՒ.

ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՏՊԱՐԱՆ.

1878.

Գրուած է Առանձին Տեր Գրականականաց.

3886

Дозволено Цензурою: Тифлисъ 20 Марта 1878 года.

20117-57

СОЛОВЕЙ

АРМЕНИИ

ПОЛНЫЙ ПЪСЕННИКЪ

Редакторъ - Издатель

АВАКЪ Л. ГРИГОРЬЕВЪ.

ПРОИЗВЕДЕНІЕ 8-Е.

ТОМЪ IV.

БАКУ.

Типографія Армян. Человѣколюб. Общества,

1878.

ԴԱՐՁԵԱԼ ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Ով ընթերցասիրել է „Սոխակի“ անցեալ երեք հատորները, նա անշուշտ յիշելիս կլինի և այժմ, որ իմ հրատարակութիւններիս միայնակ դէվեզը—նպատակը եղել է այն պարզ և անհերքելի ճշմարտութիւնը, որ սպասաւորեմ Հայ գրականութեան վերաբերեալ անհոգութեան զոհ դառած գրաւոր աշխատութիւններին: Ա. յսինքն՝ ժողովեմ ազգի մէջ կորած, փոշիներու մէջ թաթախված, կտոր մտոր թրջութերի վերայ այս և այն արկղի մէջ գերի եղած ազգային խորհրդածութիւնները, ազգային ցաւերը, ազգային կարեկցութիւնները, արտայայտված թէ՛ գուսանական երգերով և թէ՛ գրական մշակված բանաստեղծութիւններով:

Եւ իրաւ, ես իմ անցեալ երեք փորձիս մէջ որքան առաջ էի գնում, նոյնքան աւելի և աւելի լայն աշխարհէր բացվում իմ առաջ: Ա. յստեղ տեսնում էի ազգու գրիչների արգասիքներ, սո՛ւր, սո՛ւր մտքի ծնունդներ և՛ ազգին, և՛ մարդկութեան պիտանի գրվածներ: Հէնց այդ ուրախառիթ երևոյթից զրդված, Հայ մամուլը

միջոցաւ խոստացել էի իմ պատուական ընթերցողներին, որ նուիրեմ ազգային զրականութեանը „Սոխակի“ և IV հատորը:

Ահա՛ այսօր կատարուեմ նորան, հրատարակուեմ „Սոխակի“ Չորրորդ հատորը, յիշելով իմաստուն ֆրանսիացու ասածը. „Faisons notre devoir, le reste est vanité“, այն է՝ մենք կատարենք մեր պարտականութիւնը, մնացածը ունայնութիւն է:

Առէ՛ք ուրեմն այս փունջը, իմ պատուական ընթերցողներ, որ նուիրուեմ ձեզ ազգի զրականութեան անունով: Սա բարի և ճշմարիտ Հայինն է. սա ընթերցասէր և զրականասէր Հայինն է. ուրեմն՝ և ձե՛րն է, ձե՛րը, ընդունեցէ՛ք, խնդրեմ:

Ա. Գրեհոնեանց.

1877 թ. Բազու:

ՍՈՒ Ա Կ Ի

ԱՌՈՒԹԱՅԱԿԱՆ ՅՈՒՅԱԿԸ.

	Երես.
Դարձեալ երկու խօսք:—Ա. Գրիգորեանց	
Ա.՝ քեզ յաւանդ:—Յ. Վ. Ալամդարեանց	1
Ա.՝ քեզ իմ միշտ առ. քեզ պշտուն:—Յ. Վ. Ալամդարեանց	2
Ա.՝ նցաւ խիստ ձմեռ 0. Հ. Գեորգեանց	4
Ա.՝ հա՛ մեր կենաց:—Վ. ք. Տէր Յովհաննէսեանց	5
Ա.՝ նղին զարուհը:—Ա. Տէր-Սարգսեանց	6
Ա.՝ ի՛ քեզ զովմ:—Յ. Յովհաննիսեանց	7
Ա.՝ յօր կ'ցնծան:—Յ. Յովհաննիսեանց	9
Ա.՝ ղոթարանը բացուեցաւ:—Գամառ-Քաթիպա	11
Ա.՝ ստուած վըկայ որ:—Գամառ-Քաթիպա	12
Ա.՝ մեն ծառ բարձրանալով:—Նեազմի	13
Ա.՝ իս, Անի՛, Անի՛:—Ա. Տէր—Մեղքիսեղէկեանց	—
Ա.՝ սա՛ տեսնեմ:—Ա. Տէր—Մեղքիսեղէկեանց	14
Ա.՝ ման ի սէր Գրիստոսի:—Խ. Մարգանեանց	15
Ա.՝ յ աշխարհիս մարդիկը:—Ա. Բիշարայով	16
Ա.՝ ի՛ արի՛ իմ Սոխակի:—Մայի՛	19
Ա.՝ իս իմ մէրս, իմ մէրս:—Յարութիւն	23
Ա.՝ նուն հօր և որդւոյ:—Յարութիւն	24
Ա.՝ իս իմ ցաւերս:—Մայի՛-Յարութիւն	25
Ա.՝ իս զար աման, աման:—Սայեազ-Օղլի	27
Ա.՝ շխարհիս լաւութիւն արա:—Աշղ-Ղարա	28
Ա.՝ իս իմ տէրս, իմ տէրս:—Բեշիշ-Օղլի	29
Ա.՝ յոց սունը քեզ օթեան չի լինիլ:—Ջիւան	30
Ա.՝ նձս, մի՛ փափագիլ:—Ջիւան	31
Ա.՝ բարիչք ամեն մարդու:—Ջիւան	—
Ա.՝ ւաղ ձեզ, իմ անցած օրեր:—Ջիւան	32

Արտասուքըդ աչքէդ սրբէ	33
Ալթիջա սուվաբ վարս—Իվան	—
Աւաղ, Գրիգոր աղա—Մեւքիսէթեկ	34
Անձինք յարգելիք:—Քահանայ	36
Ան, իմ քաղցր Հայրենիք:—Ս. Տէր—Մեւքիսէթեկանց	38
Անո՛յշ, անո՛յշ ձայն մը կուգայ:—Յ. վ. Մեծատունեանց	39
Անդադար զլշեր, ցերեկ:—Հաւէսի	40
Ա՛հ, պիտի անցնին օրերս:—Հաւէսի	41
Այս ին՞չ խառնակութիւն—Ջամալի	42
Առաքիլնի մարդը:—Ջամալի	43
Աստուածութեան ընդունող:—Ջամալի	—
Անշուշտ նախանձութիւն կունենայ մարդը:—Ջամալի	44
Արի՛, Հայ տղայ:—Ջամալի	45
Առանց փողի աշխարհի մէջ:—Ջամալի	—
✓ Բարև տամ քեզ, իմ Սոխակ:—Մ. Բժշկեանց	46
✓ Բացուեց արդ նոր ասպարէզ:—Մ. Բժշկեանց	47
✓ Բարև տամ քեզ իմ Սոխակ:—Մ. Բժշկեանց	48
Բարեա՛ւ եկար Սոխակի Չորրորդ Հատոր:—Գեղզատէ	—
✓ Բանականութիւնը մարդկանց:—Ջիւան	49
Боже, Царя храни!—Жыковскіи	50
Բացէ՛ք, պատուելի անձինք:—Տփլիսայ Աւետիար	—
Բանաստեղծներ շատ կայ:—Մայի՛Ք Յարութիւն	51
Բայց ես վշտակոծ:—Յ. վ. Մեծատունեանց	52
Բռնակալ ես աշխարհիս—Մովսէս	54
Բոլոր երկիրներէն ինձի համար:—Հաւէսի	55
Բնական ձիւրքերս ինչ շատ նուազ են:—Հաւէսի	56
Բազմացան վերքերս:—Մարիլի	57
Բնութեան հրաշալեաց ներկայացուցիչ:—Ջամալի	—
Գեղատեսիլ կոչս անարատ:—Գ. Մ. Մանդակունի	58
Գիշեր, ցերեկ անդադար:—Շամլի-Բալէ	59
Գնումեմ փողոց (ի հարկէ դրծի):—Ս. Սափարեանց	60

Գողթան մանուկներ:—Գողթնեցի	62
Դուն խելօք հաշուով:—Գամառ-Քաթխա	63
Դժգոհ, տխուր ամբողջ օրս:—Բաբբունի	64
Դու լուսափայլ արքայ փառաց	65
Դրացիս դու, ի՞նչ ես նստել:—Ղարիբ-Տղայ	66
Ես Մըշեցի ճամբորդ եմ:—Գամառ-Քաթխա	69
Երևանեան ողեսպառ անգութ շորին:—Բաբբունի	70
Եկաւ, եհաս, երեր ահա—Նեազմի	71
Եթէ լինիս մեծ շահնշահ:—Սէյեաղ	72
Ես եմ աշխարհումս անպիտան:—Խունքար-Նաւէ	—
Եղբա՛րք, ուժից ընկած:—Գ. Բարխուդարեանց	73
Երեք ազգ թշնամիք սպանել են ինձիս:—Սայեաղ-Սղլի	74
Եղբա՛րք, տեսէ՛ք ի՞նչ է:—Սայեաղ-Սղլի	75
Երեկոյ էր, ասող էր փայլում:—Իշխան Բաղրատունի	76
Երբ պատահանի առաջին նստած:—Օր. Ն. Նազուբեանց	77
Երբ որ մեր աղան ապրումէր:—Յ. Քուշուբէզեանց	78
Ես պիտի Քրիստոսի դալուն:—Հաւէսի	90
Ես տեսայ նորան:—Ս. Սափարեանց	91
Զգուշանանք, լինինք մտքով հեռատես:—Ջամալի	92
Թէ իմ այլևոր հերքս սենային:—Ռ. Պատկանեանց	—
Թէ ինձ կ'տեսնէք տխուր ու տրտում:—Շաւարշ	94
Թէ դառն հոգսերից:—Ս. Տէր—Մեւքիսէթեկեանց	95
Թշուառ Հայաստան:—Սէյեաղ	97
Թո՛ղ կործանու ին դէպի դժոխք:—Ս. Սափարեանց	99
Թո՛ղ չար օրհասը թափէ իմ գլխին:—Ս. Սափարեանց	100
Ժամանակով մարդոյն մէկը:—Գ. Մանդակունի	102
Իմ հրեշտակ ի մարմնի:—Խ. Մարգանեանց	103
Իմ Հայ անբաղդ դասիներ:—Տ. Ն. Մանդակունի	105
✓ Ի՞նչի էդպէս շուտ փոխվեցար	107
Ի՞նչու, Հայ աղջիկ:—Շամլիսեցի Գօգէթ	108
Ի՛մ խաղողը Գանջու է:—Կինսօ	110

Ի Թարմ քնոյդ նսեմական:—Աշտարակեցի Խաչիկ .	110
Իժ Հայրենեաց սիրուն գեփիւս:—Մ. Բժշկեանց .	111
Լապտեր, դու լապտեր,—Յ. Յովհաննիսեանց .	115
Լերի'նք Հայոց, ցնծացէ՛ք:—Թ. Վ. Շիրակունի .	117
Աոյս դառնայ հողիլ:—Պետրոս .	119
Խրատ մի ասել կամիմ .	120
Խոցերիս չկայ բժշկելու յոյս:—Աշտարակեցի-Խաչիկ .	121
Ծնաւ յաշխարհ մեր Սուրէն:—Ա. Խնալեանց .	122
Ծննդոց զիրքը կարդայ:—Հաւէսի .	123
Կատուն նստեր լաց կը լինէր:—Ս. Ս. .	—
Կայր մին բասիբ Ծփտի անուն:—Ջարկեար .	124
Կենա քեօվլում հաւալանդի:—Իվան .	128
Կարծեմ ժամանակն եհաս:—Յ. Մեծատունեանց .	—
Կը սիրեմ ես:—Ս. Ա. Փափանեանց .	129
Կենսատու Քրիստոսով:—Հաղիրի .	130
Կորաւ հաւատարիմ արդարու թիւնը:—Ջամալի .	131
Հողեզուարձ դարձիդ:—Յ. Վ. Ալամդարեանց .	132
Հայրենիք ցանկալի—Մ. Բժշկեանց .	133
Հազիւ լրացաւ քրտան մէկ տարիս:—Պամառ-Քաթիպա .	134
Հայր մեր երկնաւոր:—Պամառ-Քաթիպա .	135
Հանապաղ շքիզ նոր քաշած նկար: Բարբուռնի .	136
Հայոց հսկայ երիտասարդներու—Վ. Եղիազարեանց .	137
Հալալ մալիդ մէջը հարամ մի՛ խառնիլ:—Բէչարա—Մկրտիչ .	—
Հեռո՛ւ հեռո՛ւ Հայրենիքից:—Ն. Ա. .	138
Հնչեցէ քաղցրաձայն տասնաղի երգարան .	139
Հազար ութ հարիւր:—Մայի՛Յ-Յարու՛թիւն .	140
Հիւանդու՛թեան ցաւն է կարել:—Յ. Նսայեանց .	142
Հեռացել եմ իմ մայրենի աշխարհից:—Ռ. Պատկանեանց .	144
Հայե՛ր, իրար սիրե՛ք:—Ջամալի .	146
Հայ մարդ:—Ջամալի .	—
Հնչեցո՛ւր քաղցրաձայն — Ջամալի .	147

Հայ եղբայր ուսուցիչ:—Ջամալի .	147
Չեքերս կապած, ոտքերս շղթայ:—Պամառ-Քաթիպա .	148
Չիւնն եկեր, երկիր պատեր:—Ա. Նալեանց .	149
Չեզ համար, հայ երգիչներ:—Ա. Նալեանց .	152
Ճէհանի ալեմ, հէփ պանայ պոքըպ:—Գրիգոր-Պետ .	153
Ճշմարտու թիւնն, ո՛վ մարդ, ա՛ս:—Հաղիրի .	155
Մի՛ լար, իմ՛ բալաս:—Գ. Նիկողոսեանց .	159
Մեզի մոռացաւ Հայոց ազգը:—Պամառ-Քաթիպա .	161
Մեղրաձանձի փիթակի մօտ:—Բարբուռնի .	162
Մի քաջ վիթխարի—Շաւարշ .	163
Մինչ ե՞րբ, ո՛վ երկինք:—Մ. Ք. Մանուկեանց .	164
Մայրաքաղաք ես դու:—Մայի՛Յ-Յարու՛թիւն .	166
Մինչ առաօտեան:—Յ. Ալոյեանց .	168
Մաղթեմք, Հայեր:—Թ. Վ. Շիրակունի .	169
Մեր խեղճ ազգը ուսում չունի:—Պամառ-Քաթիպա .	171
Мы дружно на враговъ .	173
Մին մեծ տան մէջ:—Յ. Քուչուբէզեանց .	—
Մինչև ե՞րբ այսպէս:—Հաղիրի .	179
Մին մանգալու տեղում:—Ջամալի .	—
Մարդս պարտական է:—Ջամալի .	183
Մեր Նախնիքը:—Ջամալի .	—
Մարդու լաւը:—Ջամալի .	184
Մէկ լաւ նայէք:—Ջարկեար .	—
Յոյս հաւատով:—Ջառափ .	187
Նա՛մակ, բարեւ տա՛ր:—Միսկին .	188
Շատ դուր եկար.—Չիթախեանց .	—
Ո՛հ զինի, զինի:—Յ. Յովհաննիսեանց .	189
Ո՛վ յանցանք ունէ:—Նեազմի .	190
Ունայնու՛թիւն ունայնու՛թեանց.—Սէյեադ .	191
Ո՛վ ճոխ բազմամարդ:—Ս. Փիլոյեանց .	192
Ո՛վ է հորցնում մարդկու թիւնն:—Ջարկեար .	193

Ողջոյն քեղ:—Ա. Մխիթարեանց	194
Որտեղաց որտեղ:—Յ. Նայեանց	196
Ողբամ զքեզ, Հայոց աշխարհ:—Խաչիկ-Ռպիր	198
Ո՛վ սիրելի, աղաչումեմ:—Ջամալի	199
Ո՛վ քաջդ անուանի:—Ջամալի	200
Ո՛ւր են մեր նախնիքը:—Ջամալի	—
Ո՛վ մարդ, աշխարհի մէջ:—Ջամալի	201
Ո՛վ մոլորեալ ազգ:—Հաւէսի	—
Ոչ մի մարդ չ'հարստանայ:—Ջամալի	202
Ողջունումենք քո գալուստը:—Ջամալի	—
Ուրախացէ՛ք մարդիք:—Ջամալի	203
Չք զխտեմ թէ միայն ես եմ:—Ջամալի	204
Պրզախ' տղայ՝ չեմ օրօրիլ:—Գամառ-Քաթիպա	—
Պար—գլուխը քառամիլիօն:—Բաբբունի	205
Պէպէս մոլութեամբ հողիս կորուսած:—Յ. Փ.	207
Պարտիզպան, օ՛ն անդր:—Հաւէսի	—
Սիրա Մուսային շարժի ի լաց	208
Սէրը պաղել է:—Հազիրի	—
Սոխակ գեղեցիկ:—Կ. Տէր—Ջաքարեանց	209
Սիրահանիկ սիրուն աղջիկ:—Տ. Ս. Տէր-Յովհաննէսեանց	210
Սոխակ, իմ Սոխակ:—Օ. Պասպայեանց	211
Սէրն է:—Սէյեադ	212
Սոխակ, Սոխակ:—Քիշիշ-Օղլի	213
Սիրելիդ իմ համազգի հայ:—Ջամալի	214
Սոխակ, իմ Սոխակ:—Ա. Ղազարեանց	215
Սէր, քեզանից զահէս գնաց:—Ջարկեար	217
Սոխակ, ի՛նչ գեղեցիկ թռչուն ես:—Պետրոս	218
Ստեղծող երկնային:—Խունքար-Նաէ	219
Славься, славься нашъ Русскій Царь!	220
Սիրումեմ քեզ:—Ջամալի	—
Սիրահարուած Սոխակի:—Աշտարակցի Խաչիկ	221

Վ իզերրս ճրկած:—Գամառ-Քաթիպա	222
Վ առ անուն մի՛ ժառանգիր—Վ. Նղիսազարեանց	224
Վ կըջացաւ մեր այգին:—Ջիվան	225
Վե՛ր ընկալ այս իմ նամակ:—Ս. վ. Մուշեղեանց	—
Տէ՛ր ողորմեա՛ Հայոց ազգին:—Գամառ-Քաթիպա	226
Տեղի՛ սրտին տեղի՛ տուք:—Յ. վ. Շիրակունի	228
Տխուր ձայն զանգակի:—Խ. Խուզարեանց	229
Տուն տեղ կորուսած: Մ. Մուշեղեանց	230
Փառփառ ահունք:—Յ. ք. Մխիթարեանց	232
Քեզ սիրումեմ:—Վ. ք. Տէր—Յովհաննէսեանց	233
Քարտա՛շ, ինդրումեմ:—Բաբբունի	234
Քանի՛ որ զինին քո թատումը փայլումէ:—Ս. Ս.	235
Քաղցր խրատոյս ձերդ Սրբութեան:—Յ Սայեազնեանց	236
Քննողը սուրբ զրբերէն:—Հազիրի	238
Քնքա՛շ և սիրուն է իմ Նատաշան:—Գողթնեցի	—
Քնի՛ր որդեակ:—Ջամալի	240
Քեզ ի՛նչպէս ընդունեմ:—Ջամալի	241
Քաջ ես, քաջ ես:—Մայիֆ-Յարութիւն	—
Օ իպօխտաարս Ալլահտան:—Խվան	243
Օրը բացվումէ: Տիրումէ գիշեր:—Բաբբունի	244
Յաւելումածք	245
Ծանուցում:—Ա. Գրիգորեանց	247
Բաժանորդագրոց ցուցակ	

Ա՛ռ քեզ յաւանդ զողջոյն իմ՝ սիրտ, վա՛րդ պայծառ բոցավառ,
 Ուր և եղէց, միշտ քո եղէց, սիրահար, սրահար,
 Լալով մեկնիմ՝, կեանք իմ՝, 'ի քէն ոգեսպառ, ո՛չ խապառ,
 Փոյթ չքասցին բուքք ձմերանս չարաչար խռովարար,
 'ի քաղցրաշունչ զարնան է մեր մխիթար:

Ա՛մօթխած կերպ մանուշակին յոյժ չքնաղ, չքնաղ
 Մեզ աւետէ զձեանց հալել յոյժ վաղվաղ, սնդանդաղ,
 Մայքք, սօսիք, նոճք, սաղարթազարդք են 'ի խաղ անդաղ,
 Բախճան կազմեալ զմեզ հրաւիրեն 'ի ծիծաղ, 'ի ծիծաղ,
 Գուշակ լինին աւուրց, բարեաց և խաղաղ:

Դ՛ու հոգեզուարճ ազնիւ իմ վարդ, պատուական, կարմրերփեան,
 Յե՞րբ 'ի թփիդ կացցես սքօղեալ, հոգեհան, կարկեհան,
 Աչացս իմ լոյսք քով կարօտով քաղեցան, քամեցան,
 Անգամ մի ցոյց զգեղդ բոսոր, հրաշագան, աննման,
 Աշխարհ խնդայ՝ ես միայն եմ 'ի շեւան:

Բ՛ոպէքս թուին առանց վարդիդ դար յերկար հոգեվար,
 Ի յա՛յց փութա, ահա՛ եղէ շնչասպառ շատ դժուար,
 Եթէ տեսից դքեզ մօտ մահճիս մահարար, տրամարար,
 Անուշ հոտովդ դարձայց յուշ իմ ցարդ խաւար հեշտաբար,
 Յայնժամ ո՛չ ոք զիս կոչեսցէ, հէ՛զ) թշուա՛ռ:

Ա՛խ քո յամելդ և երևելդ անազան, սիրական,
 Ներկէ արեամբ զիմ՝ սիրտ ու լեարդ եղիական, ողբական,
 Յայց ու ցերեկ կամ յախ ու վայ 'ի վարան անպայման,
 Զքեզ որոնմամբ համայն ոսկերքս մաշեցան, չորացան,
 Արդ մեռանիմ՝, բարեա՛ւ մնա.....անսասան:

2.

Դաւ երեւակայութեան*)

Աչք իմ միշտ առ քեզ պնդուն, սիրելի,
 Հանգէտ երկաթւոյ գերեոյ մաղնիսի,
 Չեմ երբէք բաժան 'ի քէն, տենչալի,
 Նման լուսասէր խոնարհ ստուերի,
 Սիրտ իմ քեզ յաւանդ ետու, նագելի,
 Անսիրտ կամ ահա՛ որպէս անշունչ զի,
 Սրդ խէթ հայեցիւք զես խոցոտելով
 Նման արևու գաչս հողեղենի,
 Ձի՞նչ կամիս առնել, հո՛ւր անտանելի,
 Մահու խղճալոյս է՞ր լինիս գործի:

Չքնաղ զիմաց քոյ 'ի կերպ հրեշտակի
 Քաղցր ակնարի, ծիծաղ՝ ժպիտ յարմարի,
 Քո անուշ ձայնի սրտակէզ լեզուի
 Խրոխտ բարբառ՝ բիրտ բան ո՛չ է արժանի,
 Կարմրերփեան շրթանցդ նուրբ զարմանալի
 Չուսպ անխօս կալն է մեղք աններելի.
 Այդ քո հրաշակերտ անզոյգ իրանի
 Բարբ հեղ՝ զիւրանսաց, միայն պատշաճի,
 Քեզ չեք ինչ նման յոլորտս աշխարհի,
 Ով 'ի քեզ հայի՛ անշղթայ կապի:

Հայեաց 'ի պարզ ջուր կամ 'ի հայելի,

*) Կարծեսք մեր հանդուցեալ քանրարաւոր Հայրիկը այս եւ տորա նախըն-
 թաց երգը գրած պէտք է լինի իրա կողակցու առթիւ, որն արդէն իրանից
 առաջ մեռել էր: Ա. Գրիգորեանց:

Տե՛ս, թէ զե՞նչ ես դու, սրտիս թազուհի,
 Բայց սոսկամ, զուցէ ինձ նման գերի
 Դարձիս քոյդ գեղոյ՝ գեղոյ անմահի,
 Որպէս ծուխն 'ի վեր բնապէս ձգի,
 Որպէս նետն առ իւր նպատակ բերի,
 Որպէս ջուր վերուստ 'ի վայր սողոսկի,
 Որպէս մարդ հիւանդ ողջանալ կամի,
 Նոյնպէս սիրտ, մարմին, իմ բոլոր հոգի
 Քեզ բաղձայ, Սէր իմ, քեւ վառի, մաշի:

Չքնաղաց զգով զանուն և պատկեր
 Շատ լուայ, անտի յայս աշխարհ աւեր,
 Յուղիթ, Սաթինիկ, Բերսաբէ, Եսթեր,
 Մեծ Կղէոպատրայն, որ զաշխարհ գերէր,
 Պարբ օրիորդաց 'ի կողքիս յնգեր,
 Ոյց սիրով երբեմն Հոովմ՝ հեծեծէր,
 Ռաքէլն Յակովբայ, որ գեղով այրէր,
 Չքեռ իւրոյ նախանձ 'ի բոց արծարծէր,
 Առ քեւ չեն այլ ինչ, բայց միայն ստուեր,
 Դու լոյս աննման, իսկ դոքա զիշեր:

Թո՛ւ գքեզ յիշելով այդքան բորբոքիմ,
 'ի գով քո բերեալ, այսպէս կաթոգնիմ,
 Տե՛ս թէ 'ի խօսիլս ընդ քեզ, հոգի իմ,
 Ձի՞նչ կրեմ, յի՞նչ բոց, յի՞նչ հնոցի կիզեմ՝
 Յիշել զքո անուն չ'իշխեմ, պապանձիմ,
 Յահէ նախանձոտ մարդոց զիւաղէմ
 Չգեղ քո վայելել միշտ ո՛չ վստահիմ,
 Հեռացիալ 'ի քէն թոշնիմ, թառամիմ,
 Ա՛խ, յիւր կէտ վերջին եհաս սեաւ կեանք իմ,
 Ա՛հ, ես ե՞րբ մեռայց, ե՞րբ հանգարտիցիմ:

Յարո՞ւնէն վարդապետ Աւագը պրեանց:

3.

Գարուն*).

Անցա՛ւ խիստ ձմեռ զարշ ազիտութեան,
Հասաւ նոր գարուն շքեղ վե՛հ ուսման,
Փչեց ուսման հովն սիրով անձկալից,
Հալուեցան սառոյցք մարդկային սրտից:

Բնութիւն ստացաւ մի նոր զօրութիւն,
Նոր սիրա ու նոր ոյժ և նոր ցանկութիւն,
Շուտով մանեւու նոր զարնան պարտեց,
Նոր փնջեր կապել ծաղիկներ պէսպէս:

Զարթեցան կանայք զարևոր քնից,
Կանգնեցան ոտքի մահուան մահճից,
Սևապատ ամպը բարձաւ երկնքից,
Մի նոր լոյս ծաղեց վերին խորանից:

Կանայք զգացին նոր փառք, նոր արև,
Նոր լոյս զարգացման, նոր շող յարատև,
Սյլ մենք միասին ուսման ծայր բունեք,
Դէպ այն ճանապարհ մեր անձ պատրաստեք:

Օրերդ չափեալի՛ք Գեորգեան, նախկին ու
չափեալի՛ք օրերդ սալեան զարոյցն նորոյց:

*) Թոյլ տուէք, խնդրեմ, քնքշիկ օրիորդ, շնորհակալ լինել ձեզ, ձեր ազ-
նիւ արտայայտութիւնների եւ զգացմունքների համար: Աստուած տար, որ այդ-
պէս լինէր, ինչպէս ձեր կարծիքն է. բայց եւ այնպէս աւելի ուրախ կլինէի,
որ Հայ տիկիներ եւ օրիորդներ բարոյապէս եւ մտաւորապէս աւելի ծլէին,
աւելի ծաղիկէին եւ աւելի պտուղներ տային ազգին—երեսնաւոր, վաթ-
սունաւոր եւ հարիւրաւոր: Ա. Գրիգորեանց:

4.

Դպրոց-Ուսումնարան.

Ահա՛ մեր կենաց զխտութեան մի փառք,
Ահա՛ Հայկական լեզուին մի պարծանք,
Ուր մեր ազգութիւն և կրօն ազատ՝
Մաքո՛ւր սրբութեամբ պահպանի անխախտ:
Հայե՛ր, սիրենք Դպրոց,
Սա է յոյս մեր որդւոց:

Երբ որ պապերիս շքեղ շնամ տուն
Անկաւ ՚ի կործան, եղև բուոց բուն,
Սա մնաց անշարժ մեր մանկանց համար,
Ուր շահացելով՝ Յիսուսի քանքար:
Հայե՛ր, սիրենք Դպրոց,
Սա է յոյս մեր որդւոց:

Թէպէտ մեր դատ հող, թունդ փոթորիկներ,
Փայլակ և կայծակ, կարկառու ձիւներ՝
Իջան, տեղացին օրհնեալ հիմ խախտել,
Ո՛հ, անկարացան մինչ անգամ շարժել:
Հայե՛ր, սիրենք Դպրոց,
Սա է յոյս մեր որդւոց,

Մեր բուն վաստակոց փոքրագոյն լումայն
Մեծ յուսով զցենք սորա զանձամալին,
Որով մանկիկներ չեն մնալ քաղցած,
Փողոցների մէջ աստ և անդ ընկած:
Հայե՛ր, սիրենք Դպրոց,
Սա է յոյս մեր որդւոց:

Զեք ձեռքի տալով հոգւով՝ միանանք,

Սուրբ սրտից բղխած ողջոյն Սորան տանք,
Հեռ. և չար նախանձ խաղառ. փարատել,
Ամեն օր և ժամ սիրով այց առնել:

Հայե՛ր, սիրենք Դպրոց,
Սա է յոյս մեր որդւոց:

Սա կ'յարդարէ մայրեր սրբասուն,
Ուղեղ անդամներ, հովիւներ արթուն,
Որով քայքայուի կապանք բռնութեան,
Խեղդամահ լինի հողին կորստեան:

Հայե՛ր, սիրենք Դպրոց,
Սա է յոյս մեր որդւոց:

Սա է կաթնարոյց մանկանց մայր արդար,
Մաքուր ստեանց կաթ բաշխող անդադար,
Սա՛ երջանկութիւն բաղդի հրաւեր,
Եւ սա՛ խոստանող ոսկեղար օրեր:

Հայե՛ր, սիրենք Դպրոց,
Սա է յոյս մեր որդւոց:

Ուրեմն, լուանանք մեր սրտի կեղտեր,
Սուրբ խորան յաղօթս դիմենք անվհեր,
Սուրբ խորանի հիմն—Դպրոց գերափառ.
Կացցէ՛ ծաղկաւէտ, կացցէ՛ մշտալուռ:

Հայե՛ր, սիրենք Դպրոց,
Սա է յոյս մեր որդւոց:

Վահան Ժան. Տեր-Յովնանեանց, Նորեջի:

5.

Գարուն.

«Հանգիստ է՛ անուշ» երգի եղանակով.

Անգին գարունը երբ իւր զահ նստեց,

Բոլոր դաշտերն շքեղ զարդարեց.
Տխուր բնութիւն նորան սուրբ սրտով
Հոգեպէս յարգեց և սէր նուիրեց:

Ուտի և արագ խիտ ուրախացած
Վազեցի դէպի դաշտեր զարդարուած,
Ուր բոլոր ծաղկունք, բոյսեր ու տունկեր
Ծածանում մեղմիկ զեփիւռից շարժուած:

Քանի մի բույս այնտեղ շրջեցի,
Սրախ անկիւններ ցնծութեամբ լցի,
Սթափուած բոլոր տխրութեան հոգսից,
Ուր քաղցրածիծաղ «Սոխակին» տեսի:

Սոխակ, դու Սոխակ, երգիչ անմահ,
Ո՞րտեղից եկար այս դաշտ ծաղկազան,
Հնէ՛ր դու, հնէ՛ր հոգւոյդ քնարիկ,
Ո՛վ Հայաստանի մեր սիրուն թռչնիկ:

Կարօտ հայեացքով մտեցաւ վարդին
Եւ ուրախ ուրախ կանգնեց մի ճիւղին,
Որտեղ զանելով բացուած մի կոկոմ,
Սկսեց երգել, օրհնել Սրարչին:

Ազէ+սանդր Տեր-Սարգսեանց,
Բազա+սանն Նորեջի:

6.

Ծխախոտ.

Արի՛ քեզ դովեմ, սիրուն զլանակ,
Լաւ ծխախոտից շինած կլորակ,
Քո հոտը, համը զբախտումն էլ չկայ.
Սյնտեղ կարօտ է և եթերի հրեշտակ:

Առանց քեզ իմ օրը սե է, կլանակ,
 Առանց քեզ մէկ բոպէ մնալ չեմ կարող,
 Մինչև որ դու չ'լինիս զրած առաջիս,
 Կ'կորցնեմ խեղբ ու միտքս, ո'վ զլանակ:

Միայնութեան մէջ դու ես իմ ընկերը,
 Օտարութեան մէջ իմ հայրն ու մայրը,
 Անբաղդ միջոցում երբ քեզ կ'առնեմ իմ ձեռքը,
 Կ'մոռանամ բոլորը, անգամ և՛ փափուկ սէրը:

Եթէ ես լինիմ աղքատ, չքաւոր,
 Անաէր, անտէրունչ, որբ ու սղաւոր,
 Գարձեալ քեզ պիտի ունենամ զբարեմտման,
 Առանց քեզ զիմանալն է անհնարաւոր:

Թո՛ղ չունենամ հաց, այդ իմ փոյթս չէ՛,
 Առանց ջրի էլ անցնելը դժուար չէ,
 Միայն թո՛ղ ծխախոտս լինի լաւ սաման՝
 Ծուխն քնթիցս հանելն էլ դժուար չէ:

Երկինքը թո՛ղ օրհնէ նորա տունի ու բոյբը,
 Առատ թո՛ղ հոսէ իւր անձրևն ու ցօղը,
 Որ աճի, ու զարդանայ, ծլն ու ծաղկի
 Իմ միակ մխիթար սիրուն ծխախոտը:

Թո՛ղ օրհնէ Աստուած նորա մշակողն ու տէրը,
 Այգին, անդատան, բոլոր դաշտ ու ձորը,
 Թո՛ղ փայլի արեգը անդադար նորա վերայ,
 Որ սարթանայ ու հոտ քաշէ իմ մեծ +իւրը:

Յարս-Լիան Յովհաննէանեանց:

Քրիստոս յարեալ 'ի մեռելոց.

Այսօր կ'ցնծան ողջ քրիստոնեայքը,
 Կ'տօնեն նոքա այն շքեղ օրը,
 Մարդիկ հաղնուած, զուգուած, սիրունցած
 Երթեակ կ'առնեն սիրելեաց տունը:

Զինորականքը և քաղաքականք
 Կոկիկ զարդարուած իւր համագրեատով,
 Կառքերում նստած շիապով, կեպով՝
 Մէկը միւսին հասնում շապով:

Արհեստագործը նոյնպէս այս օրը
 Տօնումէ ուրախ, ուրախ է սիրտը,
 Նորան զատիկ է, ուսումէ, խմում,
 Եւ իւր Արարչին ուղերձ նա կարգում:

Նոյնպէս և կանայք պճ'նազարդ սիրուն
 Հագնուած, զուգուած ինչ կարաւ նախշուն,
 Անց ու դարձ կանեն թե թեւի մտած,
 Համբոյրներ տալով իւրեանց սիրելուն:

Օրիորդ անմեղ սենեկում փակուած
 Աղաչեն, կոչեն արտասուօք լցված,
 Որ իւր հրաշալի սուրբ յարութեամբը
 Ազատէ, փրկէ տնից թառամած:

Այսօր կ'տեսնես և մարդիկ հարբած,
 Ոտից ու ձեռից ընկած, դնացած,
 Բայց միշտ գնումէ ու շարունակում
 Տներից 'ի տուն մտքից մոլորուած:

«Քրիստոս յարեալ» նա բացականչում, սուր փոփոխ
 Կռնակի վերայ այնտեղ վեր ընկնում, քննում ց

Նա անկարող է, այլ չէ՛ գնում տուն,
Այնտեղ մնումէ մինչև արթնանում:

Այսօր աներում սեղաններ սարքած*)
Շուայլ խմիչքներ կարգով պատրաստած,
Եւ կենդանիներ ափսէների մջ
Նոյնպէս և զառը խորոված զրած:

Ժլատ հարուստը շատ է տխրացած,
Նա դուրս չէ՛ գնում, տանը վերընկած
Մարդ չէ՛ ընդունում ինչպէս հիւանդոտ,
Դէմքը տխուր է, հոգւով զուենատված:

Աղքատ շուայլը պարտքեր է անում
Եւ իր սեղանը սիրուն զարդարում,
Որ չ'ասեն չունի, ամօթ է նորան,
Պարտքի վերայ պարտք, ո'չինչ իւր մտքում:

Ուրախ են այսօր թէ մեծ թէ փոքրիկ,
Ժպտումեն նոքա, ուրախ է սրտիկ,
Ես միայն տխուր, տխուր ցաւերով
Նստած սենեկում հանդարտիկ, լռիկ:

Հեռացած, զրկված սիրոյ համբոյրից,
Արտասուք հոսեն վշտոտ աչքերից,
Առանց ընկերի, առանց մխիթար
Խոր վերաւորված անարդար դատից:

*) Արդեօք երբ պիտի այս շուայլ եւ վնասակար սովորութիւնը վերանայ մեր ժողովրդից եւ այն թշուառ եւ աղքատ ժողովրդից, որ նայելով իրա հարուստ հարեւանին, հետեւումէ նորան մինչև անգամ պարտքով: Պատասխանումեմ, այն ժամանակ միայն, երբ մեր արժ. հոգեւօր Հայրերը պարտաւորութիւն համարած կլինեն իրանց բացաղբել ժողովրդին այդ բարոյական աստի վատ հետեւանքները եւ ապա պատուիրել նոցա հնուայնելու այդ ակտը իրանց ընտանեկան շրջաններից: Ա. Գրիգորեանց:

Թո՛ղ հնչէ զանգաւք սրբո թեան տեղից,
Թո՛ղ եկեղեցին ձօնէ աւետիք,
« Բրիստոս յարեաւ » ասելով եղբարց,
Թո՛ղ ուրախացնէ սրտեր զայլայլիկ:

Յարութիւն Յովնան Ղանէանց:

Ճ.

Վանեցի գեղջուկի տաղը.

Աղօթարանը բացուեցաւ, ժամանակ է զարթելու.
Երթամ ակտոս, գոմշուկներըս լըծեմ՝ գութան վարելու:
Դէ՛հ գոմշուկներ, ելէ՛ք, ելէ՛ք, արտը էրթանք, աշխատինք,
Հարկ ու խարճի վատէն մտա է, վօթենք արուն ու քրտինք:

Հայի գութան, հայի գութան, որի՞ համար կը ջանաս,
Ո՞վ քեզմնով կը տանջուի, որի՞ն դու կուշտ հաց կուտաս:
Այն օր, երբ քեզ ձեռքս առի՝ ազատ օրը կորուցի,
Անվախ սիրտըս վըհատեցաւ, հոգիս թուլքին մատնեցի:

Բա՛ւ է, գութան, մեր տանջանքը. համբերութիւնն վերջ ունի,
Դուն տեսար որ՝ մեր դուշմանը ամօթ, խելք ու գութ չունի:
Արի՛ փշընմ ես քու խոփը, տանք զարբինին կրուելու,
Կրուենք — կոփենք սուր ու սուսեր՝ դուշմանի դէմ կրուելու:

Եղբայր Հայեր՝ առէ՛ք խոփը, առէ՛ք զարբինին կրուելու,
Կրուել — կոփել սուր ու սուսեր՝ Հայաստանը փրկելու:

Գ. Կարամանլիեանց:

« Փոքր » Ա. Տ. № 3.

9.

Չայն բարբառոյ յանապատի.

Աստուած վըկայ որ՝ մենք կը յաղթէինք,
 Թէ մէկ անձնուրաց մարդ ունենայինք.
 Օրէ օր Թուրքը կ'ելլէ մեր տեղէն,
 Տեղըս մարդ չի մնաց զատ ծըծի արդէն.
 «Հայը զէնք չունի», կ'ասէ Օսմանլին,
 Անաէր թողել է նա մեր հայրենին...
 Աստուած վըկայ որ՝ մենք կը յաղթէինք,
 Թէ մէկ անձնուրաց մարդ ունենայինք:

Մի՞թէ ազգային պարծանքը չարժէր—
 Ամեն Հայ մէկմէկ օսիլի ընծայէր,
 Երկուսը՝ մէկ թուր, երեքը՝ հրացան,—
 Որ մոլի ճաճիլին անէինք ցիր ցան...
 Լուկ այն, որ կուտաք խուժի ու թըղթի,
 Հայք, ձեզ կը հասցնէր ազգային բաղդի:
 Աստուած վըկայ որ՝ մենք կը յաղթէինք,
 Թէ մէկ անձնուրաց մարդ ունենայինք:

Ո՞ր կաթողիկոս զըրեց մէկ կոնդակ,
 Ո՞ր եպիսկոպոս ցըրուեց հրաւիրակի,
 Ո՞ր զիսնականը ձայնը բարձրացուց,
 Ո՞ր զօրականը թուր ու զէնք վերցուց.
 Ո՞վ Հայ ազգասէր՝ ո՞ր ես, ո՞ր ծակ ես,
 Ազգային զգացմունք՝ մի՞թէ դեռ խակ ես:
 Աստուած վըկայ որ՝ մենք կը յաղթէինք,
 Թէ մէկ անձնուրաց մարդ ունենայինք:

Ա՛խ, անդարձ կ'անցնի լաւ ժամանակը,
 Անվտիտիս կըմնայ մեր դառ վիճակը.

Մլախօնի ձեռքէն թափթըլած շողթան
 Քեզ պինդ կը կապէ, խեղճի՛կ Հայաստան...
 Բայց լաւ յիշեցէ՛ք, սառնասի՛րտ Հայեր,
 Որ փրկութիւնը ձեզնէ շատ մօտ էր...
 Եւ ես միշտ կ'ասեմ՝ «Մենք կը յաղթէինք»,
 Թէ մէկ անձնուրաց մարդ ունենայինք:»

Գամառ-Քալիպա:

«Փոք» Ա. Տ. № 3.

10.

Փողը հետ խելք էլ պիտի, ինչպէս սորան մին զարդարանք,
 Թէ ո՛չ՝ դու չես սասնալ ո՛չ խելօք, ո՛չ հարուստ անուանք:

Ամեն ծառ բարձրանալով՝ պտուղն ծիրան չի լինիլ,
 Ամեն այրուբէն զիտեցող, մարգարէ Յովնան չի լինիլ:
 Իշին թէ տալու լինիս քաղաքական մեծ կըթութիւն,
 Միշտ կումնայ չորս ոտանի՛ բանական ինսան չի լինիլ:

Ազուաին որ զարդարես դու զոյն-զզոյն փետուրներով,
 Այն փոքրիկ անուշաբեր Սոխակի նման չի լինիլ:
 Բէյհանի պատկերն թէ՛ թղթի վերայ լաւ նկարես,
 Նմանը բէյհան կ'լինի՛ ինքն բէյհան չի լինիլ:
 Բեա'դասը մարդուն եթէ արքայական թախտ պարզուես,
 Բան զՍողոմօն արքայն աւելի նորան դու յարգես, սիրես,
 Անօգուտ է, եթէ կեանքդ էլ զոհ մատուցանես.
 Նեա'ղջի, քեզ պէս յօղուտ ազղի՛ պատրաստ պատասխան չի լինիլ:

11.

Վշտալի Անին.

Ա՛խ, Անի, Անի, Անի, վշտալի, խղճուկ Անի,
 Բո՛ցաւերդ անթիւ են, խեղճ պատանիս ի՞նչ անի:

Հա՛, ուզումեմ ճար գանել, անդ անել քո ցաւերուդ,
Բայց դեղն փայտայ չ'կայ ծակ զրպանում քո որդուդ:

Ա՛խ, Անի, Անի, Անի, քաղցած, մերի, աղքատ Անի՛,
Դեռ շա՞տ պիտի ծարաւ մնաս ալքից Ախուրենի,
Հա՛, ուզումեմ ջուր բերել ծարաւդ զովացնել,
Հայ Գառաւիշ կորելէ, անկարել է գտնել:

Դէ՛ սպասիր շատ ժամանակ մինչև գաւաթը գտնեմ,
Ախուրեան զետի ափից քեզն համար ջուր բերեմ,
Ջուրը խմես, զովանաս, գաւաթն էլ մտող պահես,
Որ չ'կորչի միւսանգամ, ծարաւին ձեռք ասնջուես:

Սարկէէ՛ք Տէր-Մելիքեղէնեանց:

12.

Դէպի Սոխակ Հայաստանին՝

Ասա՛, տեսնեմ, սիրո՛ւն Սոխակի, ի՞նչու այդպէս հեռու ես,
Ու չես թողում դու մեր քաղաք, երդելու մեզ երգ պէսպէս.
Սրդեօք չունի՞նք մենք բուրաստան ծաղկունքներով զանազան,
Որ քեզ առնեն, հիւրասիրեն վարդի մօտին անմահն:

Քո ցանկացած վարդենիքը այտտեղ շա՛տ են ու սուտտ,
Քո վառ սրտին, զբացմունքին նորա կտան և վարատ,
Սրդէն ժամէ, մի՛ ուշանար, բա՛ց այդ նախշուն թւերդ,
Մէկ սլացի՛ր, ա՛խ, դէպի մեզ, սուլըր անուշ երգերդ:

Չմեռն անցաւ, ցուրտը դնաց, սառուցները հալեցան,
Հայաստանի չոր դաշտերը ծաղկենքով լցուեցան,
Քո սրտակից վարդենիքն էլ հեռոհեռէ ծաղկումեն,
Վառ Սոխակիդ զիշեր ցերեկ իւրեանց մօտը կանչումեն:

Սարկէէ՛ք Տէր-Մելիքեղէնեանց:

13.

Աման՛ ՚ի սէր Քրիստոսի, ով անցք բանին իմ լսի,
Թէև ինձի չ'ափսոսի, մէկ չողորմի թո՛ղ ասի:

Թարիֆլամաս երկար ա, պատմել լեզուս տկար՝ ա,
Ով դօտ սիրդաշ ջնկար ա, նա ձեզ կանի աշկարայ՝
Թէ չ'իլաւ ինձ մին չարայ, որքան զեղ ու ճար արայ,
Ախր վերջն բեզարայ, որ տեսայ ոչ—աղաք ա,
Մահն միթամ շիքար ա, կենդան վախտիս ես տեսի:

Ղարիբ էի վեց տարի, կարօտ ազգաց զխտարի,
Երբ դուլուդս կատարի, իմ վաթանս ետդ արի,
Թէ ցաւս քիչ դադարի, դուրս դամ յերկրէն օտարի,
Բայց պատահայ բէթարի, խիտ դատ ու բիդատ արի,
Ախր ինչ մուրատ արի, ո՛չ մէկին էլ չ'հասի:

Ազար ու դարդ երկու ցաւ, քեամբաղդ զլստիս զիւր անցաւ,
Սրտիս նաշտար սուր ցցաւ, լերդ ու թոքս սաղ խոցաւ,
Ախր զիւզին դաղ բացաւ, խապառ հալեց ինձ քցաւ,
Իմ փայ քոլը հէչացաւ, բոլոր ջաֆաս փուչացաւ,
Աչքս աղն ջուր լցաւ, խաւար մեօհթաջ եմ լուսի:

Մալում էր էր ինձ զրված, էդքան նասիր, փայ զրված,
Գառն եմ սպանդ ես վարված, մնացել եմ շուարված,
Չորս դիս ջալլաթ բոլորված, մէջներում կամ մոլորված,
Վերջի թելս կարված, մէջք ու բէլս կտարված,
Իմ թայ թուշից խտտորված՝ ճանապարհս կորուսի:

Պատահայ՝ մուլթ օթաղ ա, անաչք, անդուռ, անթաղ ա,
Արել են ինձ զաղաղայ, թէ դա քեզ միշտ եաթաղ ա,
Դէ ի՞նչ անեմ, մեծ դաղ ա, որ ուր ծնայ, ուր թաղայ,
Թէ ո՛չ ջանս մատաղ ա, ձեր արեւին սաղաղ ա,
Հողիս մեղօք թաթախ ա, միջնորդ ա պէտք բան խօսի:

Եթէ քննեց լաւ խորը, ինչ ա մեր հալ և օրը,
 Մէկ ա դունիւմ թաց, չորը, ծեր ու ջահիլ, հին, նորը,
 Գրեցէք իմ աղբօրը, խաբարս տայ մեր մօրը,
 Գիտեմ կ'հազնի սև շորը, կ'ընկնի սղով սար, ձորը,
 Բայց ո՞նց դանի էն հորը, որ կլանեց ինձ պէսի:

Մարդու համար մահն ա թուր, չին վեղ ա տամ ինչպէս սուր,
 Ահա՛ վալլահ կայ որ զուր, էդ գազանին կիլնի կուր,
 Հէնց էդ մասին կրակ հուր՝ ինձ էրումայ առանց ջուր,
 Մարդանա՞ն էմ խաչարո՞ւր, որ ասացի բան տխուր,
 Հանգիտ հոգւոյ, Տէ՛ր իմ, տո՛ւր, Աղէքսանդրի Մուրղուզովի:

14.

Հոգևոր մուխամնազ.

Այս աշխարհիս մարդիքը ի՞նչպէս են անում դարար,
 Որ պարտաւոր են քննել անդադար ու մուղարար:

Աստուած շինեց աշխարհքը, վեց օրում գրբաւ դարար,
 Երկինք, երկիր և լոյսն՝ միմեանց պէտքական արար,
 Զուրը ջոկեց ցամաքից, հողն շինեց պողարար,
 Վերջն մարդին ստեղծեց իւր պատկերով բարերար:

Որովի ու խամ մարդիքը, թո՛ղ ասենք, չեն խմանում,
 Իմացողների մահնան ի՞նչ ա, որ էս են անում,
 Չեն ճանաչում Աստուծոյն, չեն սիրում ամեն բանում,
 Եթէ ասեն «դժուար ա, էնդուր ենք սրտից հանում»,
 Ա՛խ, մարմնաւոր նեղութեան բաս ի՞նչպէս են դիմանում,
 Ուղորդն ասեմ՝ վերջումն քաշելու են շատ դարար:

Աստուած մարդին սիրելով, պահպանումէ հանապաղ,
 Ինչ որ պէտք ա տալիս ա՛յ անդպատեղ ու սաղպասաղ.

Մարդն իսկի միտք չանում թէ էս աշխարհն ա երազ,
 Վերջն կը գնայ մին տեղ, կը տեսնի միզան թարազ,
 Մեղքն ու վարձքն կը կշռեն, հիմիկ քնած ա Ֆարազ,
 Մին հետ վեր կը կացունեն, մին բան չունենալ եարար:

Քարոզ, խրատ քար չանում, պնդացել ենք քարի պէս,
 Որ լսենք, սաղացունենք մեղքի հարան ճարի պէս,
 Մին մին մեռնումենք մորթվում դասապի ոչխարի պէս,
 Ելի տույմիչ չենք լինում էն հէյվան տաւարի պէս,
 Չենք զխում ինչ ենք անում կուրացած խաւարի պէս,
 Մսխալն չափ վարձք չունենք, մեղք ունենք խարար խարար:

Եկէ՛ք բայն դէ հիմիկ մահի քնից վե՛ր կենանք,
 Ամեններս մեր մեղքին զարուլ անենք, տէր կենանք,
 Աստուծոյ ասածի պէս՝ մին մինի հետ ոէր կենանք,
 Եղբօր նման ապրելով, միշտ սիրով ընկեր կենանք,
 Որ Աստուած մեզ սղորմի, բարի պողարեր կենանք,
 Եանի՛ թափենք արտասուք գետերի նման վարար:

Լեզուովս եմ էս ասում, գործովս շատ հեռու եմ,
 Անուամբ ես քրիստոնեայ եմ, ինքս նման նեռի եմ,
 Իմ արարմունքիս կեօրայ, աստանայի ձեռի եմ,
 Գարունքս ա՛նց ա կացել, երեսս ձմեռի եմ,
 Մեղայի պէս եմ ասում, իբր մարդկանց սեռի եմ,
 Խնդրեմ Աստուած ընդունի, դուք լինէք աղօթարար:

Բարի բարերար Տէրն համեշա ձեզ եար լինի,
 Կակղացունի սիրաներդ, թէ պնդացած քար լինի,
 Լուսաւորի միտքներդ, չի թողնի խաւար լինի,
 Ծաղկի գործներդ պայծառ, ինչպէս թէ բըհար լինի,
 Որ Աստուած ուրխանայ, բալքա թէ մին ճար լինի,
 Աղբատ չի մնաք հարկիդ, այլ միշտ լինէք վարդարար:

Ինքներդ լաւ գիտումէք, աշխարհս մարդ ա խաբում,
 Մարդին թամահ գցելով, նա մարդի խելքն ա չափում,
 Կրակ դառած ջաններին՝ դազանի պէս ա լափում,
 Որ համեշա գլխներին դահրու զուսայ ա թափում,
 Նորա արած զիւլմերը չկայ ոչ մի ինսանում,
 Նա ուզումայ քեզ տանի, թէ համբերես՝ դու տարար:

Չարով լեքը աշխարհք ա, ամենքս ցաւ ենք քաշում,
 Փարիսիուչ բանի համար հէնց սիրտներս ենք մաշում,
 Եղբորից, բարեկամից միշտ դէպի մեզ ենք տաշում,
 Ինչ կանես որ մայիլ ենք, դիտես թէ եմք թամաշում,
 Ամնա թամաշից ետով տես ի՞նչպէս ենք ետաշում,
 Բաս աշխարհքից դուս դալիս լինելու ենք ի՞նչարար:

Ամեն մարդ թէ չ'իմանայ սուրբ գրերի ստածը,
 Չի կարող դամիշ լինիլ ուրիշներից լրսածը,
 Թողնէք հալա իրանում Աստուածանից հասածը,
 Որ է յայտնի իւր սրտի խղճմանքից բլսածը,
 Որ նրանով ա ջոկում իւր ամեն սլրսածը,
 Թէ չար լինի թէ բարի և թէ միջակ պիղարար:

Բահմ անենք մեր հոգւոյն, էսքան խօսքը սուտ չիլիլ,
 Թէ հաւատանք ընդունենք, մեր անունին փուտ չիլիլ,
 Ով որ հաւատայ սրտով, իսկի նէյումուտ չիլիլ,
 Թէ մին փոքր համբեր է, կարծեմ անողուտ չիլիլ,
 Յատուկ վարձքն կ'ստանայ, նա հա՛ ահուտուտ չիլիլ,
 Այլ Աստուծոյ օրէնքը այլոց էլ բաժանարար:

Արդարանալ օրէնքով՝ զրկած ա, հնար չ'կայ,
 Օրէնքն էլ պէտք ա պահենք, որքան կարենք, ճար չ'կայ,
 Բայց մեզ սրբողն նա ա, որին բարեբար չ'կայ,
 Նորա քաշած ջաֆային թիւ հեսաբ, համար չ'կայ:

Որ լինի Տէր Յիսուսը, ուրիշ բարեբար չ'կայ,
 Ինչի որ իւր արիւնով մեզ հետ զրել ա իղբար:

Յիսուսին թէ հաւատանք, նա Աստուած էր՝ մարդ դառաւ,
 Մերկացած մարդկանց համար յատուկ պայծառ զարդ դառաւ,
 Մեղքով թառամած մարդն՝ նորանով զուարթ դառաւ,
 Մեղքի սար ու ձորերն իողացաւ ու հարթ դառաւ,
 Մեզ միամտութեան համար մին զեղեցիկ զարդ դառաւ,
 Էս հարկաւոր պարզելին, նա էլաւ մատակարար:

Ում որ բան ա պատահի, եթէ կարգայ էս թուղթը
 Թիւն է հասկայ ունի հարկայ քան և երկու ընտարը,
 Շամախի քաղաքումն գեղեցիկէր ամսի զիտարը,
 Ասեց մին ողորմելի, ամենակերպ ապուխտը,
 Ով որ յիշի մին բերան, Աստուած կատարի ուխտը,
 Աւել պակասը ների, լինի ուղիղ ետարար:

Վերջապէս ձե՛զ, ո՛վ եղբա՛րք, կարծեմ թէ շահ եմ ասում,
 Որ ճշմարտիւ հասկանաք, թէ ունիք մահ եմ ասում,
 Մինչի մահն էլ շատ ունինք, յատկապէս ահ եմ ասում,
 Էն պատճառաւ իմ գլխիս թակելով վա՛յ եմ ասում,
 Ի՞նչ կ'լինի որ ունենանք անպիտան զահ եմ ասում,
 Գրնալով արքայութիւն՝ Տէրի մօտ ուրախարար:

Աւագել Բեկարայով:

15.

Այգեպանն և յՍոխակ Հայաստանին^(*)

Այգեպանը.

Սոխակը .

1. Արի՛, արի՛, իմ Սոխակ, Այգեպէս ուրախ թռչու՛մես,
2. Ո՞վ ես, ինձի կանչումես, Գու ինձի ճանաչո՞ւմ ես,

Այգիցն հեռացել ես, Դու իմ ձայնը լսելուս՝
Դու անվարդ պարտէզումն ես: Կարօտած թառանջումես:

Այգեպանը. Սոխակը .

3. Այգեպանն եմ, կանչումեմ, 4. Ասեմ քեզի իմանաս,
ես քեզի ճանաչումեմ, Մին քանի վախտ զիմանաս,
Բաղքրիկ ձայնդ լսելուս՝ Ծառան առանց վարձքի չէ՛,
Կարօտած թառամումեմ: Բո վարձքդ դու կ'ստանաս:

Այգեպանը. Սոխակը .

5. Ազնի՛ւ Սոխակ, լա՛ւ ասար, 6. Հեռազիրով ման եմ դամ,
Դու իմ սրտիս ցաւ ասար, Բարաթներով տուն եմ դամ,
Մտի՛կ տուր այգւոյ պատին, Աւետիք լուրեր ունեմ,
Գեանի հետ է հաւասար: Ո՛րախ եմ, անքուն եմ դամ,

Այգեպանը. Սոխակը .

7. Առանց Սոխակի այգւոյ 8. Այգեպան, հաշիւն քունն է,
Կոկոններն փակ կ'լինի, Այլին քունն է, քո տունն է,
Ազնի՛ւ Սոխակ, դու երգես, Ես ասամ, դու որոշի,
Այգւոյ զլինին թագ կ'լինի: Որ շահն որ քունն է:

Այգեպանը. Սոխակը .

9. Այգեպան եմ ես մենակ, 10 Գարունը մօտենումէ,
Այգւոյ ճամփեն երկիւղ փակ, Երկիւղ ճամփեն բացվումէ,

*) Սա այն Մայիֆն (Յարութիւն Աղէքսանդրեանց) է, որին հանգուցեալ Չարկեարը (Արրահամ Մարտիրոսեանը) իրա զրուածների մէջ (Տես „Սոխակ Հայաստանի“ I եւ II հատորներում) միշտ յիշում է եւ օրինակելի կացուցանում շատերին: Թէ ինչու Չարկեարն այդքան սիրելիս եղել է Մայիֆին, դորա պարզ պատկերը ինքն ընծերցողը կարող է տեսնել վերջինիս կենսազրուածեան մէջ, որ համաձայն իմ նամակի, նոյն ինքն պ. Մայիֆը հաղորդեց ինձ Ղանբարանից այսպէս.

«Ես ծնուել եմ 1823 թուին Պարսկաստանի Թէհրանու դաւառի Ղարաղան

Վիզս ծուռ ման եմ գալիս Զմեռն նուազվումէ
Խեղճուկ, որպէս մանիշակ: Սոխակն էլ ձայն հանում է:

Այգեպանը. Սոխակը .

11 Մատա՛ղ լեզուիդ նուազին 12 Հէնց այժմն էլ երգումեմ,
Երգէիր այգւոյ բակին, Հին երգեր նորոգումեմ,
Դու լինէիր ծառի վերայ, Նոցա աղաււնոյ նման
Ես լինէի ծառի տակին: Կտուցով տարածումեմ:

Այգեպանը. Սոխակը .

13 Լաւ գեղեցիկ վարդերը, 14 Աստուծով կ'շինվի պատը,
Փունջ մանիշակ զարդերը՝ Այլքն չեն փնջիլ հատը,
Այդիս առանց պատի է, Օտարներ կ'հեռանան,
Փնջումեն այլ մարդերը Զի կպնիլ նորանց օտը:

գիւղում: Հայրս—Ղազար Աղէքսանդրեանցը եղած է բանաստեղծ աշուղ եւ սագով (քնարով) մանդալիս է եղել, ուր կամեցել է: Աշուղութիւնը մեզ պակաս մնացած է: Ես մի տարեկան որբ եմ եղել, երբ հայրս վախճանել է: 1853 թ. հօրեղբայրս ինձ, մօրս, երկու բրոջս եւ մէկ եղբորս հետ գաղթել է (բոջել) նոյն գիւղից Ղանբարան: Յետոյ 1858 թ. գաղթել ենք Շամախի: 1842 թ. Շամախում փոքր ժամանակ կարդալով, այլ եւս միջոցս չներեց շարունակելու, այս պատճառով ստիպուեցայ նոյն ժամանակվայ նորաշէն Եկեղեցու վերայ մշակութիւն անել եւ ստացած վարձից ընծերցանութեան գրքեր առնել: Մի շաբաթ չափից դուրս ծանրակիր մշակութիւն անելով, աչքերս վնասվեցան դորա ներդրածութիւնից եւ ապա կուրացան: Այդ իսկ օրից ես կրումեմ Մա յի ֆ անունը, որ պարսկերէն կոչվումէ կոյր: Բայց որովհետեւ հարկատր էր մի որ եւ իցէ ապրուստի միջոց գտնել ինձ համար, ուստի հարկազրկեցի սովորել սաղ ածել եւ աշուղութիւն անել, միայն առանց Թափառելու:

Լսելով Շամախում Արրահամ Մարտիրոսեանի բանաստեղծական համբաւը, փափականօք ցանկացայ տեսութիւն անել նորա հետ: Մի օր կանգնած մի դինետան առաջ, տեսայ որ մի մարդ եկաւ եւ նստեց այնտեղ: Միեւնոյն Արթաւմից, ի հարկէ ես չճանաչելով նորան, հարցրի թէ Արրահամն ո՞վ է,

Այգեպանը.

Սոխակը.

15 Այդ ի՞նչ է, թէ կրա՞ց է, 16 Աւագ Գրիգորեանը
 Այդ Ֆրթօ՞ւն է, թէ զա՞ղ է, Գիշեր, ցերեկ է բանը—
 Իմ գեղեցիկ այգւոյ մէջ՝ Այդ այգւոյ ճանապարհին
 Քեզի երգել կու սաղէ: Զոհ է ասել իւր ջանը:

Այգեպանը.

Քարի բան է, կատարի՛ր
 Մայի՛Ֆին միշտ դու երգի՛ր,
 Լորն երբ երազ տեսնի,
 Տեսածն կորեկ կ'լինի:

Եւ ձրտեղ է բնակւում: Նա պատասխանեց մի բանի հետաքրքիր հարցերից յետոյ թէ «ի՞նչ ես անում նորան, նա էլ ինձ նման մի մարդ է»: Վերջապէս ես նորան յայտնեցի, որ ցանկանումեմ նորանից բանաստեղծութիւն սովորել: Նա պատասխանեց. «մի չարեք զինի առ, ես նորա բանաստեղծութիւնից կը սովորեցնեմ, նա ինքն քաղաքումս չէ»: Ես յօժարացայ. առնելով զի՛նին, սկսեցիք խմել: Այստեղ նա սկսեց իրա բանաստեղծութիւններից պարսկերէն ասել եւ ես նկատեցի, որ նա հէնց ինքը—Սոխակը Մարտիրոսեանն էր: Խնդրեցի, որ ինձ աշակերտ ընդունէ, բայց նա մերժելով ասաց. «իմ բնակութեանս տեղը ես ինքս էլ չեմ իմանում, մէկ օր այստեղ եմ, միւս օրը այլ քաղաքում»:

Հանգուցեալ Արրահամը, որին 1849 թուից թողած էի Շամախի, 1853 թ. եկաւ Լանքարան եւ ամուսնացաւ: Ես դառայ նորան խաչ եղբայր եւ ապա նորա երեխաներին կնքաւոր:

Տայելով իմ յաջողութեանը, Արրահամին վեր առայ իմ հովանաւորութեան տակ եւ պահպանումէի: Նորա երգերը, որ տպւումեն սիրուն եւ պատուական «Սոխակիդ» միջոցաւ, իմ յորդորանքով է ժողովել հանգուցեալը եւ պահպանել: Նորա մահից յետոյ, նորա ընտանիքը—կինն եւ երկու դստերն իմ հովանաւորութեան տակ են եղած մինչեւ 1873 թ. իսկ նորանից յետոյ, կառավարումէ նորանց հանգուցեալի կնոջ եղբայրը:

1850 թուից մինչեւ այժմ—1877 թ. ես Լանքարանում պարապումեմ կրթւ աչքերովս զանազան առեւտրով եւ հիմայ էլ բնակութիւնս այս քաղաքումն էս:

Մայի՛Ֆի երգերից.

«Ա. Ի՞նչ անէ՞՞» երգի եղանակով.

Ա՛խ իմ մէքս, իմ մէքս, ախտո՛ս չը տեսամ՝ հէքս,
 Թխպած մնաց ունքերս, եարաբ ո՞վ է ընկերս,
 Նորա հետ տանեմ սէքս. ա՛խ, իմ մէքս, իմ մէքս:

Ցաւերս ես ու՞մն ասեմ, արտասվելով ըսկսեմ.
 Ազատութեան ես պաս եմ, մինչեւի ե՞րբ ստլասեմ,
 Որ բարձրանայ թւերս. ա՛խ, իմ մէքս, իմ մէքս:

Ի՞նչ օրուայ ինձի բերար, ազու արտասուք կերար,
 Քցար կրակն էրար, զանակով խոցս քերար,
 Վ երջացել է համբերս. ա՛խ, իմ մէքս, իմ մէքս:

Ինձի եղբայրներ ունեմ, երևումէ որ չունեմ,
 Անմիբբան ի՞նչ անեմ, այս ցաւերն ո՞ւր տանեմ,
 Շուաք չունի ճիւղներս. ա՛խ, իմ մէքս, իմ մէքս:

Եղբարքս ծուլացած են, երևի խուլացած են,
 Առանձին պէլացած են, մէ՛ր, քեզի մոռացած են,
 Էլի դո՛ւ միտ բեր, մէ՛րս. ա՛խ, իմ մէքս, իմ մէքս:

Զարմանալի է պ. Յարութիւն Աղէքսանդրեանցի (Մայի՛Ֆի) գործակատութիւնը վաճառականութեան մէջ: Նա ամեն մի տեսակ արծաթադրամներ եւ թղթադրամներ շօշափելով, շատ ճարպիկութեամբ ճանաչումէ նորա ինչ արժէք ունեցող դրամներ են: Նա ամեն մի առեւտրական գործ կատարումէ շատ ճշդութեամբ: Նա անցեալ 1876 թ. զնացել էր Աստրախան վաճառականութեան պատճառով: Բազու վերադառնալով, տեսնուեցանք: Գրիգորեանց:

Պարսիկիցն են յետ եմ, տեսէք որքան անգէտ եմ,
Չեմ խմանում ում հետ եմ, թուրով ինձի թուրոտեմ,
Թո՛ղ տեսնեն իմ վերքերս. ա՛խ, իմ մէրս, իմ մէրս:

Իմ հէրս խաչապաշտ ա, տե՛ս ո՞վ ում հետ, ա՛խ, հաշտ ա,
Ո՞վ է ասում շատ հեշտ ա, մեծ պատերազմի դաշտ ա,
Արիւնաքամ հէրերս. ա՛խ, իմ մէրս, իմ մէրս:

Խնդրեմ, մէ՛ր իմ, գարդարուի՛, կրկին զնա՛ դու մարդի,
Ինձի ընդունի որդի, կը նմանիմ նոր վարդի,
Որ նորոգուի իմ սէրս. ա՛խ, իմ մէրս, իմ մէրս:

Յարս-Ինձ, քո է հողը, ու՛մ է մնացել փողը,
Ապրել է զբրկրվողը, թէև քաշել է դողը,
Յուսամ ողորմի տէրս. ա՛խ, իմ մէրս, իմ մէրս:

17.

Մայիֆի երգերից.

Անուն հօր, և որդւոյ և հողւոյն սրբոյ ասեմ,
Որ շջումէր ջրի վերայ, ամենայն անկիւնն ասեմ,
Ս/զգից մի էութիւն, հայր սուրբ, որդին սուրբ, հողին,
Միմեանցից փառք էին առնում, գովելն անհունն ասեմ:

Խաւարն լուսից բաժանաւ, և մեծ հրաշքներ արաւ,
Ստեղծաւ շունչ կենդանի, մեզն նորանց տէր արաւ,
Մնանք իրան փառքի համար, սէրն մեզ հետ սէր արաւ,
Մասնիցն մեզ մօտ մնալով՝ խղճմտանքի տունն ասեմ:

Աղամայ կան իւր ձեռօք կազմաւ և փչաւ հողին,
Նոյն բանիւ յարութիւն առաւ մեր ստեղծողի գողին,
Տուաւ Աղամին իրաւունք ման դայ դրախտի բակին,
Կրկին թմբութիւն կոխաւ՝ հայր Աղամի քունն ասեմ:

Հայր Աղամի ձախ կողմիցն քաշաւ նորան կին Եւին,
Էութիւնը հասկացաւ, ինքն և նա ով էին,
Չ'տեսան իրանց մարմինն, որով նորանք լոյս էին,
Հաղել էին հրեղէն հազուստ, լուսապայծառ զոյնն ասեմ:

Յարս-Ինձ, դու նորանց թողն ես, ի՞նչի պղպէս կուրացար,
Ինչպէս նորանք ուրացան, դու էլ այնպէս ուրացար,
Չ'պահար տէրի պատուէրն, դու քու մեղքին տէրացար,
Յայտնապէս այս բաներն ամենիդ իսկն ասեմ:

18.

Պանդխտի հառաչանքը.

«Ո՛վ քո՛ւ Բարեկամ» երգի եղանակով.

Ա՛խ իմ ցաւերս, ինձ խիտ էք պատի,
Ինձ ողորմելոյս շատ խեղճ էք գտի,
Ամեն պատողին ինձ պէս էք ատի՞,
Սիրոս, ջիկարս ձեր հօգն կուտի
Ել ես չե՛մ կարող վեր կենալ ոտի,
Ա՛խ իմ ցաւերս, ո՛՛՛՛՛ իմ ցաւերս:

Գլխիցս ամեն խելքս տարեցիք,
Ինձի շիտթուած քեամբախտ արեցիք,
Ի՞նչ վիճակ ունէի, ի՞նչ տեղ բերեցիք,
Սրախ, ջիկարիս դաղեր դրեցիք,
Մինչև Աստուծոյ դուռն ինձ երեցիք,
Ա՛խ իմ ցաւերս, ո՛՛՛՛՛ իմ ցաւերս:

Յաւե՛ր, դանդատս ձեզնից ո՛ւմ ասեմ,
Ուրախ օրերից ես բնաւ պաս եմ,
Առանց ըմպելի ինքս ինձ խօսեմ:

Խոցոտ վերքերիս ո՞ր ճարն քսեմ՝
 Անցկացած օրեր ձեզի բամբասեմ,
 Ա՛խ իմ ցաւերս, օ՛Ֆ իմ ցաւերս,

Ա՛խ թշուառ օրեր, յերկար կ'զնաք,
 Հաննէք բախտի դուռը՝ հարար կ'մնա՞ք,
 Թէ կամենաք իմ հայս իմանաք՝
 Պատրաստ եմ խմել մահու ըմպանակի
 Բալքամ ինձանից դուք յերկարանաք,
 Ա՛խ իմ ցաւերս, օ՛Ֆ իմ ցաւերս:

Ա՛խ ցաւեր, դուք իմ ոսկոռս մաշաք,
 Ոսկոռից, միտից ջեղս որոշաք,
 Փշարիք կեանքս, մահի դուռն քաշաք,
 Այդպէս անողորմ ձեզ պէս էր Արշակի
 Ափսո՛ս իմ մեղքս անուամբ չի յիշաք,
 Ա՛խ իմ ցաւերս, օ՛Ֆ իմ ցաւերս:

—Ցաւերն ասացին—ձեզի սէր չունէք,
 Այդ մասին օգնող ձեզ ընկեր չունէք,
 Թէեւ մայր ունէք, մայրին Տէր չունէք,
 Միաբանութիւն ձեզի է՞ր չունէք,
 Այդ մասին ձեզի ազատ օր չունէք,
 Ա՛խ իմ ցաւերս, օ՛Ֆ իմ ցաւերս:

Այդ երկու բանն ձեզի ունենաք,
 Առանց դադրելի յառաջ կ'զնաք,
 Հիմքն քարափուճ հաստատ կ'ունենաք,
 Հօր կտակն ձեզ վկայ իմանաք,—
 Ազատութեան դուռը այն ժամ կ'բանաք,
 Ա՛խ իմ ցաւերս, օ՛Ֆ իմ ցաւերս:

—Ցա՛ւ, առաջինն խղճմտանքն է,
 Անսխալը միայն Տէրն ինքն է,

Ապաշխարութեան տեղն վանքն է,
 Ո՛չ թէ այսպիսի ձիգ տանջանքն է,
 Ամենն տանողը առողջ կեանքն է,
 Ա՛խ իմ ցաւերս, օ՛Ֆ իմ ցաւերս:

Տէրն տայ Յօբի պէս առողջանանք,
 Միշտ փառաբանինք Տէրին, գոհանանք,
 Տէրի պարգևով մեր կապն բանանք,
 Մեր ստանալիքն ամենն ստանանք,
 Երես անկեալ Հայրենիք գնանք,
 Ա՛խ իմ ցաւերս, օ՛Ֆ իմ ցաւերս:

Մայիֆ-Յարո-Բէ-ն, ի՞նչեր ես խօսում,
 Չանդակի ձայն ես յերկարից լսում,
 Այդ բարակ միտքն դու ո՞ւմ ես ասում,
 Թո՛ղ աղանջ գնի, ով ունի ուսում,
 Այս իմ ցաւերին ի՞նչ ճար են ասում,
 Ա՛խ իմ ցաւերս, օ՛Ֆ իմ ցաւերս:

19.

Մուխամմազ .

Ա՛խ զար ամա՛ն, ամա՛ն, մին ճար, ամա՛ն, ամա՛ն.

Ով ջամահաթ, կամ թէ եղբա՛րք, ամա՛ն, ամա՛ն,
 Մին բան ասեմ քօլի համար, ամա՛ն, ամա՛ն,
 Գիտէ՞ք, էս աշխարհ է մին սար, ամա՛ն, ամա՛ն,
 Անվնաս անցնելն է դժուար, ամա՛ն, ամա՛ն,

Աստուած քօլին տուաւ պատշաճ իմաստութիւն,
 Ամեն ժամ ունենալ պարտ է զգաստութիւն,
 Աշխարհումս մի՛ ցանկանաք հարստութիւն,

Զուր բանն անարգէք, սիրէ՛ք զրիստոթիւնն,
Զար ու բարին չափէք փարկեար, ամա՛ն, ամա՛ն.

Աշխարհս ուրիշ ա դառել էս ժամանակ,
Մարդ աջողակ իլաւ, շատ կունենայ քօմակ,
Զսխորդութեան վախտին շուտ կ'ըմնայ մէնակ,
Այլոցն տե՛ս, եղբա՛յր, քեզ վե՛ր առ օրինակ,
Մենք էլ չ'իլնենք նորանց յարմար, ամա՛ն, ամա՛ն,

Միշտ սիրտներիդ պահէք ստեղծողն ահն,
Խնդութեան օրներիդ մի՛ մոռանաք մահն,
Մարդ պիտի ցանկանայ միշտ իւր հոգւոյ շահն,
Վառէ՛ք, լուսաւորէ՛ք դուք էն կենաց ջահն,
Հոգւոց վերայ կամար կապի, ամա՛ն, ամա՛ն

Ո՛չինչ չենք տանելու, զխտէ՛ք, էս աշխարհից,
Աստուած ընդ մեզ լինի, յերկարանանք չարից,
Բարի կանենք, եթէ ունենանք նամուս առից,
Հոգւոյ շահն ընտրենք բոլոր խէր ու շառից,
Սայեապ-Օղլէա մոլոր ոչխար, ամա՛ն, ամա՛ն:

20.

Գուրբէիտ.

Աշխարհիս լաւութիւնն արա,
Գանդատ չունեմ, զալն ի՞նչ անեմ,
Ժամանակով քեզ ճա՛ր արա,
Զի լինիլ իխտիար, հալն ի՞նչ անեմ:

Ուղիղ սրտով, ժամ զնայով
Գնանք ճանապարհին լալով,
Զեռնով ողորմութիւն տայով
Սրտէս չի գալ, տալն ի՞նչ անեմ:

Շատ է մեր սաղմուսի զօրքը,
Պատիւ անենք, պահենք փառքը
Պէտքը կ'գայ էն աշխարհքը
Գուր ջաւահիր լալն ի՞նչ անեմ:

Մի՛ թողալ մեղքդ շատանայ,
Քեզ կ'իտարի չար սատանայ,
Մէջ դերեզման չես զինջանայ,
Վերադ քաշած սալն ի՞նչ անեմ:

Սուտ բաներին մի՛ կաց վկայ,
Սրդարներին տանջանք չ'կայ,
Վառլու մարդ կայ՝ տուրքն չի տայ,
Ոսկի, արծաթ մալն ի՞նչ անեմ:

Ես մեղաւոր Աւր-Ղարա,
Գործած մեղքիս, Տէ՛ր, ճա՛ր արա,
Մեղաւորին չ'իլնիլ չարայ,
Հաղած թիրմա շալն ի՞նչ անեմ:

21.

«Ա՛խ, է՛մ ճէրս, է՛մ ճէրս» երգի եղանակով:*)

Ա՛խ, իմ տէրս, իմ տէրս, քեզ չ'են տեսնում աչքերս,
Մոլորվել է մտքերս, սև է դառել օրերս,
Քեզ յայտնի է ցաւերս, ա՛խ, իմ տէրս, իմ տէրս:

*) Անցեալ 1876 թուի Օդոստոսին, երբ Քեշիշ-Օղլին (կոմ) եկած էր Բաղու, նա մի օր իմ մօտ դալով, ես նորան կարդացի ի միջի այլոց եւ այս Մայիֆի երգը: Նա միւս օր եկաւ իմ մօտ եւ թելադրեց ինձ այս երգը:

Ա. Գրիգորեանց:

Տէր, խնդրեմ մեզ խրատես, մեր սէրն չի անջատես,
Մեզ հաւատով հաստատես, Պարսիկիցն ազատես
Իմ Հայաստան ազգերս, ա՛խ, իմ տէրս, իմ տէրս:

Տէր, դու ես իմ դատօղս, իմ բարի կամեցողս,
Քեզ խնդրեմ, ստեղծողս, հասցնես պտուղներս,
Զի չորանայ դաշտերս, ա՛խ, իմ տէրս, իմ տէրս:

Շատ ունենք մեզ թշնամի, Տէր, Հայոց բարին կամի,
Սմեն յունուար ամսի վախճանումեմ թարշամի
Մազիկներս, վարդերս, ա՛խ, իմ տէրս, իմ տէրս:

Տէր, դու ես մեզ դատաւոր, ամենքս քեզ պարտաւոր,
Ո՛վ իմ Յիսուս թաղաւոր, Քեշեշ - Օղևն մեղաւոր,
Գու ջնջի՛ր իմ մեղքերս, ա՛խ, իմ տէրս, իմ տէրս:

22.

Խրատ.

Այլոց տունը քեզ օթեան չի լինիլ,
Աշխատիր դու քեզի օթեան ճարել,
Օտարը շատ ունի հաց, անուշ զինի,
Քեզ ի՞նչ օղուտ, որ քո բանը դժուար է:

Մոլիներու կեանքին աչք մի՛ ունենալ,
Նորանց ճիգ ու ջանքին աչք մի՛ ունենալ,
Այլոց աշխատանքին աչք մի՛ ունենալ,
Ճակատիդ քրտի՛քով քեզ կառավարէ:

Ուսում սովորի՛ր, անվարժապետ մի՛ մնալ,
Գորտի գորգով բռնված տղետ մի՛ մնալ,
Միշտ աշխատիր ընկերից յետ մի՛ մնալ,
Այլոց նման դու ես բան հնարէ:

Զե՛ւան, անուտումին յիմար կ'անուանեն,
Անօգուտ մարդին խելքից տկար կ'անուանեն,
Սպրուտ չ'ճարողին խաւար կ'անուանեն
Ասելով՝ այս դարը լուսաւոր դար է:

23.

Ղոշմա.

Ա՛նձս, մի՛ փափագիլ աշխարհիս փառքին,
Կ'ճարես ցաւ բաժին վշտեր զանազան,
Սշխատի՛ր, որ նստես հրեղէն կառքին,
Վայելես Փրկիչը — կեանքը յաւիտեան:

Աշխարհիս բաղձանքը ունայնութիւն է,
Նորանց սէրի ջանքն ունայնութիւն է,
Մարդոյս բոլոր կեանքն ունայնութիւն է,
Օրերը կ'անց կենան շուաքի նման:

Էհօկվան կ'դատի իրան յարմարին,
Զի թողնիլ վրէժն հեղին, խոնարհին,
Մտածէ՛, կ'տեսնես վերջն աշխարհին
Կ'մերկանայ, կ'լինի թերի, անպիտան:

Զե՛ւան, թերի սիրող՝ սէրին չի սիրէ,
Սէր չունեցող փոքրն՝ ծերին չի սիրէ,
Աշխարհ սիրող մարդն՝ Տէրին չի սիրէ,
Կարգա՛ Յովհաննէսից, կ'առնես պատասխան:

24.

Արարիչը ամեն՝ մարդու մէկ բնութիւն տուած է,
Որը ազատ, որը գերի ցաւերի մէջ խրուած է:

Ճշմարիտ խօսողների գազաթները ծակ պէտք է միշտ,
Որովհետև ստի ձեռքից կեղծաւորին սրուած է:

Ճշմարիտ քաջ զինւորը, տե՛ս, կուվումէ, սուսեր չունի,
Աղքատի մեծ զիտունը իր տանը մէկ լապտեր չունի,
Քաղցրն արդեօք ինչո՞ւ իրան համեմատ բնկեր չունի,
Կարելի է լաւը վատին բնականից սուած է:

Կեղծաւորը աշխատումէ միամտին խանգարէ,
Հետեւումէ պարզախօսի ունեցածը աւարէ,
Ուզումէ ճշմարտութեան հանդէպ կոխներ հնարէ,
Սուտ խօսողը աղեղը լարված՝ սուսերը սրուած է:

Տե՛ս, Զի՛վան, ուղղախօսին երթարու ճանապարհ չ'կայ:
Սուտ լուրերը չորս բոլորը փատտելն՝ համար չ'կայ,
Հիմա նորէն երկնից Աստուած բղաւէ՝ ճար չ'կայ,
Երբ մէկ մարդու անունը վատ աշխարհի մէջ ցրուած է:

25.

Աւաղ ձեզ, իմ անցած օրեր, Ցաւերս անթիւ նման դէզի,
Չ'զիտնալով զուր կորուսի, Արմատացեալ մէջ պարտեզի,
Սրի՛ք տեսնեմ ո՞ւր էր կորեր, Իմ մանկութեան օրեր, ձեզի,
Ձեզանով շատ լուր կորուսի: Ո՛հ չեմ գիտեր՝ ո՛ւր կորուսի:

Ցաւս ո՞րին ասեմ, կամ ո՞ւմ, Վշտեր կ'զան սրտիս մէջ հիւր,
Որ այժմն կամ ես անուսում, Կը դատեն իմ խնդր ողիս թիւր
Մէկ ուրախ, հինգ օր տրտում, Անմահական կենաց ազրիւր
Ողջ կենանքս տխուր կորուսի: Ներից փայլուն ջուր կորուսի:

Բոլոր սրտով հայցեմ 'ի քէն,
Խնայեա՛ Զի՛անոս արդէն,
Կորած օրերուս փոխարէն,
Տէ՛ր իմ՝ խնդրեմ առ'ւր՝ կորուսի:

26.

Երգ.

Արտասուբբդ աչքէդ սրբէ, Անցել է այն ձմեռնածին՝
Եւ մի՛ ողբար լալազին, Չիւնն ու սառոյց փոթորիկ,
Մի՛ հառաչեր սղւորի պէս, Եւ չեն փչում սառնամանեաց
Մի՛ կողկողար ցաւազին, Չարաշունչ հողմ՝ ու մրրիկ,
Մայր Հայաստան, ո՛վ: Գառն գծաութեան. ո՛վ:

Լաւ օրերուդ գարուն հասաւ, Տուն Հայկազանց նորոգվումէ,
Մտերն ամեն են ծաղկում, Նորա որդիք զարթել են,
Քո ծոցումը պարտիղի պէս Հոգեկան վատ թմրութենէն,
Պայծառ զունով է փթթում, Մահահանգոյն խոր քրնէն,
Վարդ ցնծութեան: Նոր զուարթացած:

Անցել է այն թշուառ դարը Գայլք ու գառինք մի օրինակ
Եւ չարաբաստսև օրը, Անդորր դռնումեն ճարակ,
Երբ որ իրանց հայրենեաց մէջ Յառաջադէմ լինելու իղձը՝
Օտար էին Հայերը, Տալ նոցա է օժանդակ,
Միշտ հալածուած. ո՛վ: Ձիր հաշտութեան

27.

Երգ զափիա տերի դատաստանի համար.*)

Ալթիջա սու վար վար դիւնեայ ի զինդայ,
Ախր մաշար կիւնի հախ սօրաջախտը,

*) Հանդուցեալ եւանի Հայերէն պատուական եւ սիրուն երգերն արդէն տպագրուած են «Մոխակի» II եւ III հատորների մէջ: Բայց որպէս զի Վորձէին նոր եւ մի քանի երգերը, որոնք արտայայտուած են թիւրքերէն լեզուով, եւ որոնք ունին նոյնպէս իրանց արժանաւորութիւնը, աւելորդ հնամաքեցի ներկայ հատորիս մէջ նոցանից եւս տպագրելու: Ա. Գրիգորեանց:

Չիլաղի կէյղրմաղ, աջի դոյղրմաղ,
Խաստարիգա կեօրմաղ, բախ, սօրաջախոր:

Ղարիբայ մօհուբաթ, սուսրգա սո՛ւ վեր,
Ձնդանայ դուշանն խաթրի կէթ կէօր,
Մէջլիսայ դավաթ էթ, աղսաղեղա կեօր,
Քիմդա քի վար, քիմդա քի եօխ՝ սօրաջախոր:

Թաքմիլի հաղեղաթ սօլլաղի Խլան,
Դիւնեաղայ Թափարսան ջանուվայ դարման,
Նէ քի էյլամիշախ — եախշե եա եաման՝
Համի բիրար բիրար սաղ սօրաջախոր:

28*).

Աւա՛ղ, Գրիգոր աղա, բարեխնամ տէր մեզի,
Հաստատ հաւատ, յաղթող յոյս և տարփալի սէր մեզի,
Ո՞րտեղ գտնենք այսուհետ էսպէս ծնող հէր մեզի,
Իւր ամենազօր ձեռով Աստուած էր տուել մեզի,
Իննը դասուց ցնղից էր, երկնային ո՞վ էր մեզի,
Պողալեց ձիթենի էր, հովանի ստուէր էր մեզի,
Անտէրունչ, անօգնական թողաւ կիսամեռ մեզի:

Վա՛յ քեզ, Հաշտարխան քաղաք, արուսեակդ պառաւաւ,
Անմահական աղբիւրից այժմ մնացիր ծարաւ,
Բազմերախտ տէրը մեր գեանի հետ հաւասարվաւ,
Հովիւ չունի ոչխարին, այսուհետ դէլը տարաւ,

*) Այս երգը սոված է Ասորիսանի Հայ հասարակութեան առանձնաշնորհութիւն (ПРИБЛИЖЕНА) ստանալու առիթով 1848 թ. Մայիսի 30ին: Դորա գլխաւոր պատճառն է եղել աղա Գրիգոր Դանիէլեան Սարգսեանցը: Այսպիսի մի երգ եւս ասած է հանդուցեալ Իվանը: Տես „Սոխակի“ III հատոր, երգ 23. Ա. Գրիգորեանց:

Յարեւելից յարեւմուտ, հիւսիսից մինչի հարաւ
Հռչակաւոր անուեր ամենայն ազգ բարբառաւ,
Անկաշառ դատաւորին դու բարեխօս լե՛ր մեզի:

Աթոռանիստ Պետերբուրգ զարմացել էր քու բանում,
Մին համբաւդ փովել էր մեծ փայթախտու թէհրանում,
Մին անունդ պատմէին թիֆլիսի Գիւրջստանում,
Մին համբաւդ փովել էր Ղահորու իսպահանում,
Մին անունդ պատմէին Ջուսքի շնդատանում,
Անյաղթելի Աննիբալ տայիր հաջի Թարխանում,
Երկնային գաւառիցն էր՝ վերուստէն իջեր մեզի:

Փոքր Հայաստան ա մեզ, Արարտեան սար էր սա,
Դրախտի կենաց ծառից, երկնային նուկբար էր սա,
Փխտնայ Եղեմ գետից՝ ծածկախորհուրդ քար էր սա,
Կարօտելց, տնանկաց՝ մեծ հովանի ծառ էր սա,
Ինչ խափանված խորհուրդ կար, ողջը կու կատարէր սա,
Ամեն մարդի ետրայի մահչամ դեղ ու ճար էր սա,
Երկնային ամպ հովանի, հրեղէն սիւն էր մեզի:

Այն ի՞նչ օր էր, որ կարդան Պրիվիլեգիա ժամումը,
Ամեն թուղթում զրված էր առաքինի անումը,
Ո՞վ իմացաւ որքան էր քու մայեան էս բանումը,
Հէնց էն օրվանից մնաց համը մեր բերանումը,
Բայց էս ուրախութիւնը չի թողաւ մեր ջանումը,
Կէսամորթ թողաւ մեզի վերջի սարանջամումը,
Նոր սաղացած խցոներս կրկին իլաւ վեր մեզի:

Տիրապետութեան նշան ունէր պատանի վախտից,
Որ պիտի մեզ ազատէր, մալում էր խակ շնախտից,
Խաչանման գետիցն էր, էն Եղեմայ դրախտից,
Ձի կարացանք զովանալ մեր էս քարացած բաղդից,
Մարգարտաշար յօրինված իւր փղոսկրեայ թախտից,

Իսպառ հիմքից շուռ եկաւ, չիմացանք մենք ո՞ր ազգից,
Կամ մեզ էլ աս'ր, ողո՛րմած, կամ նրան ետ՛ բեր մեզի:

Քանի սաղ էր մեզ համար, ահ չունէինք խանիցը,
Անկշռելի դանձ պակաս մեր հաջի թարխանիցը,
Թէ կուզ հազար փեղամ՝ կար խունդքարից, սուլ-
թանիցը,
Միամիտ և աներկբայ կայինք ամեն բանիցը,
Լալով, ողջալով խնդրենք համաձայն Աստուածանիցը,
Որ լոյս կամարը բղխի սորա գերեզմանիցը,
Ասող առաւօտեան էր սա, Չահագոյց լապտեր մեզի:

Տեսէք ինչպէս պարզեւ էր Աստուած մեզն շնորհելէր,
Որ ամենայն աւերակ կու զարդարէր, կու նորէր,
Մին միտք արէք տեսէք թէ, բախտներս որքան քոռ էր,
Որ չարին կու խափանէր, բարին միշտ կու յորդորէր,
Թէ չարուղ հագնենք, ընկնենք պորենք սար ու ձորեր՝
Դժուար տեսնենք այսուհետ հսպէս երջանիկ օրեր,
Օգնութիւնը ամեն ժամ աջ ու ձախ գամէր մեզի:

Եթէ բիւր անգամ գովեմ, էլ փոքր է, թիւ չունի,
Սրա բարերարութիւնը գումար ու հաշիւ չունի,
Մեր Գրիգոր Աղային երբէք ուստի՞ չունի,
Մութնացաւ Հաշտարխանը, այսուհետ էլ տիւ չունի,
Մեր Հայ ազգին այսուհետ էլ էնպէս պատիւ չունի,
Մէլքիսէ՛կէ՛ն՝ սրանից առաւել թարի՞ չունի,
Երկրորդ Մակեդոնացի հաստատ ծնել էր մեզի:

29.

Ուրախութեան երգ.

Ներսէս Շնորհալու «Աստուածային» եղանակով.

Անձինք յարգելքը, ասածս ո՛ւնին դիք, այստեղ ոյք նստիք.

Բանս որ երգեմ, բնակելոցդ ատեմ, բազմացդ ևս պատմեմ:
Գէտ՛րդ Նաւինի, դազ չունես չափսի, դործ քո է կաշի.

Դանէլ ժամկոն, դա հարէ զանգն, դա բանայ դուռն:
Ետորը Մինայի, Նազոր վլասի, Նակո՞ թամանի,

Չոր ևս ձեզ սիրեմ, զորհնո թիւնս բաշխեմ, զանուն ձեր գովեմ:
Էղէգիէն, է Բաղդասարն, է Բարի ծերն

Ընտրեալ անձինք են, ընկեր երբէք չեն, ընդ մարդկանց մէջ են:
Թողութի՛ւն արէք, թէ սխալս տեսէք, թաց ու չոր ջուկէք,

Ժողովո՛ւրդք բարի, ժամ եկէ՛ք արի, ժի՛ր կացէք բանի:
Ինձ թէ որ լսէք, ինչ գործ որ գործէք, խին մտածեցէք,

Լոյս թէ զիշերի, լուսով տեսանի, լաւ թէ վատ լինի:
Խոնդար լուսեղէն, խաչն արա՛ քեզ գէն, խաչն փրկէ չարէն.

Ծածուկ թէ յայտնի, ծուռ բանն երևի, ծերոյ թէ քեօ՛՛՛վի:
Կարպ Ալեքսէ՛յի, կերպդ է աղայից, կեանքդ անցո՛ լաւից,

Հասկացամ զորքդ, հսկայ է ձայնդ, համառօտ բանդ:
Չեռին ծերունի, ձիգ թեզէ՛հ ունի, ձեռքովն տայր ինձի.

Ղամբար կ'վառէի, զայրազ օրհնանքի, զուլուղ կանէի:
ձաշ թէ երկոյ, ձաշին կերակրոյ, ձուռն համեղ սուվոյ.

Մինաս Չէրքեղն, Մինաս Քացախն, Մինաս Չախմախն:
Յատուկ կ'ըպատուեմ, յաճախ կը կանչեմ, յարգելի կասեմ.

Նսաէք քէ՛՛՛թ արէք, նոր տաղս ասացէք, ներուփն շնորհեցէք:
Շուշեքն բացէք, շուտ շուտ ածեցէք, շուրջ պարարեցէք,

Ում կենաց ասէք, ուրախ խմեցէք, որ դարձն առնէք:
Չարութիւն թողէ՛ք, չարին դուրս ձգէ՛ք, չար բան մի՛ բանէք,

Պողոս Նթմիշով, Պետրոս Եղբարք քով, Պետրոս Գէվէ՛ջով:
Չերմ օրն որ նստէք, Չերմ գինի մի՛ խմէք, Չուր պաղ խառնեցէք,

Ռատ տեսակ գինիք, Ռամ ժողով մարդիկ, Ռատ ըմպեն ցըքիք:
Սիմէօն Պօպով, Սիմէօն Չոռնով, սեր կերէ՛ք հացով

Վարդ երես չախմախ, վերջն է քոյին վախ, վարդ թէ կուզ զամբախ:
Տիրացու Թաթող, տես քո գառն խող, տա՛ւր զոր էած փորս.

Բախ կանչի մեզն, Բախ ունենք խուզն, Բամ վնասս տո՛ւր ինձի:

Յնճացեալ մարդ էք, ցանաճս հնձեցէք, ցեցին մի՛ տուէք.
 Իլւծեալ ձեր զանձն, լիւսեցէք լաւն, լիւանդ ձեր անձնս
Փառք տուէք Արարչին, փառք քեզ այս ժամին, փրկիչդ մեր անձին,
 Քեզ միշտ փառք պատիւ, քարոզեմ բանիւ, Քահանայս ձայնիւ:
Ահա՛ ազատեա՛ զմեզ ՚ի մեղաց, քաւիչ յանցանաց, աղա-
չեմք: Լո՛ւր տէր և ողորմեա՛:

30.

Պանդխտի արտասուքը.

Ա՛խ, իմ քաղցր Հայրենիք, արդեօք դու ո՞ւր մնացիր,
 Որ պատանիս քեզանից, քո հողերից մեկնեցիր,
 Իմ ճակատի՞ս էր միայն զրաճ այդ սև տառերը,
 Որ քեզանից հալածուած՝ սիրեմ Պարսից քարերը:

Իմ նազելի հայրենիք, իմ ճննդեա՛ն սուրբ վայրեր,
 Խեղճ պատանիս շա՞տ պիտի թափառական ու երևր
 Պարսից երկիր, Պարսից հող, Պարսից դաշտերի վերայ
 Մոլորուած դառի նման վա՛յ կանչելով երերայ:

Ա՛խ, Հայրենիք, Հայրենիք, միայն ե՞ս չէի արժան
 Երջել քո հողի վերայ, մնալ քեզանից բաժան,
 Միայն ե՞ս եմ յանցաւոր մեր Հայրենեաց խմբիցը,
 Որ ինձ միայն զօրեցիր քո թանգազին տեսքիցը:

Ա՛խ, թո՛ղ լինի ոտքերս իբրև գերի շողթայած,
 Թո՛ղ վայելիմ ամեն օր շատ դառն տանջանք ու հարուած,
 Միայն քո մօտը լինիմ, քո դաշտի մէջը մեռնեմ,
 Վերջը մահուան դադաղս էլ քո հողի մէջը թաղեմ:

Սարկիէէ՛ք Տէր-Մեծիսեդէկեանց:

31.

Զանգակն մասեաց հրաւեր կարգայ
Հայ օրիորդաց*).

Անո՛յշ, անո՛յշ, ձայն մը կուգայ Արագած լեռնէն,
 Արի՛ք, երթանք, սիրուն Քոյրեր, այս օտար երկրէն,
 Ետևո՛վ դնանք, ձևեռ չեկած՝ հասնինք յԱրագած,
 Խաղաղութեան սուրբ ձիթենին ձեռքերնիս առած:

Զեր եղբայրն եմք... մեր Քոյրերն էք, մէկ Մօր կաթ ծըծած,
 Հէ՛րիք մնամք այսպէս յերևր, շուարած, տխրած.
 Անդ ծալ ՚ի ծալ վարդն ՚ի կոկոն փթթի շատ ծիծաղ,
 Անդ պլպուլին քաղցրաձայն չառնէ ակն ու վախ:

Զրկանքներէ սիրտս մաշուաւ, արիւնս ցամքեցաւ,
 Գիշեր, ցերեկ, հառաչելով լեարդս այրեցաւ.
 Ո՛հ, ի՞նձ միայն վիճակուեցաւ այսպէս վատ օրեր,
 Այսպէս վիճակ, այսպիսի բաղդ, այսպիսի ցաւեր:

Մօրերուս լացն, Հօրերուս ողըն, Պապերնուս արիւն
 Բողոք կանէ, կ'հրաւիրէ մեզ ՚ի միութիւն.
 Վեղբայր եմք մեք, ելէ՛ք ի դուրս այդ օտար երկրէն,
 Զայն մը կուգայ, ո՛հ, ի՞նչ անոյշ, Արագած լեռնէն:

Ելէ՛ք, քոյրերս, ելէ՛ք Դուք հոս՝ ո՛հ, չունիք այլ բան,
 Մեզ կսպասէ լեռան Արագած, լեռան երջանկութեան,
 Անդ Հայկն, Արամ, Տրդատ, Պարոյր, դէմ առ դէմ նստած,
 Մովսէս, Սահակ, Ներսէս Մեսրոպը շուրջառնին առած:

*) Հեղինակն կը խրախուսէ Տանկարնակ Հայ օրիորդաց, Օսմանեան Տէրութեան հպատակութենէն գաղթել և գալ յԱրագած - Ռուսաց ողորմած և բարեկարգեալ ղետութեան Գրօշին ներքեւ:

Ատեան կազմեն, խորհուրդ կընեն, օրէնքներ բացած՝
Նախարարներ, վարդապետներ, մէկ տեղ գումարուած:

Քաջն վարդան և Եղեշէն իւր ընկերներով
յԱւարայր դաշտ ելեր, կանգներ հայկեան դրօշով,
Ելէ՛ք, երթանք, շուտով երթանք, ձմեռ չհասած,
Քանի որ դեռ ձիւն չէ՛ ծածկել ճաղկեալն Արագած:

Ա՛խ, քո օրեր, քո այն օրեր, Հայաստա՛ն աշխարհ,
Է՞ր կորուցեր, ինչդեմ ասես, անլաց, անաշխար,
Հա՛, նեղացար, իմ Արագած, սաստիկ նեղացար,
Սիրոյդ սահման ո՛չ ոք զիտաց, հալուեցար, մաշուար:

Ե՛լ, ո՛վ կուսան, չքնա՛ղ կուսան, նազել Քոյրեր,
Ելէ՛ք ի դուրս ... քանի որ սառն չէ՛ ծածկել սարեր,
Ելէ՛ք գնանք, մերն յԱրագած ձմեռ չհասած,
Ազատութեան վի՛հ ձիթեմնին ձեռքերնիս առած:

Եղեշէ վարժապետ Մեծաստուծեանց:

32.

Անդադար զիշեր ցերեկ աշխատեցայ հանձար գտայ,
Ախտերուս, տգիտութեան, կարծեմ թէ ես հնար գտայ,
Գիրքերը քննելով՝ կոտրաւ լուծը աղքատութեան,
Ըստ որում փնտրտելով քչիկ-քչիկ քանքար գտայ:

Սորվելու աշխոյժ էի ճշմարտութիւնը մշտական,
Երբ հասայ իմաստութեան՝ միտքս նորէն տխմար գտայ:
Փորձի ու փորձանքներու փափագներս ենթարկելով,
Կրկին իմ հոգւոյս սէրը կրկին բարոյն յօժար գտայ:

Դրդելով արթնացուցին մտքիս սէրը սուրբ զբերը,
Ճշդութեան դանձարանը շտապ բացի գոհար գտայ:

Մարմինս աշխարհային փառքով փառաւորվեց (Հաս-է*)
Հողիս փրկութեանը ֆրիստոսով մեծ ճար գտայ:

33.

Ա՛հ, պիտի անցնին օրերս թէ անապաշաւ մնամ,
Աշխարհէս ելանելէն վերջը առանց համբաւ մնամ,
Խղճիցը տանջուելով՝ ի՞նչու պապակիմ՝ մշտական,
Երբ բերող չլինի կենաց ջուրը՝ հոգւոյս ծարաւ մնամ:

Խաբուեցայ զրախտի մէջ, ինձէն գնաց իմ պարզես,
Մերկացայ որպէս Այամ, ընդէ՞ր ես անհալաւ մնամ,
Մինչև ե՞րբ արդարութեան արևը ինձի լոյս չտայ,
Իբրև ես մառախուղով լեցուն մէկ քարանձաւ մնամ:

*) Մահտեսի Թաղէոս Յովհանէսեան Ալեքսանդրապօլի (մականուանալ Հաւէսի) ծնվել է 18... մօտ 47 ամաց: Սորա հայր կտաւագործ Յովհանէսեան փոքրիկ Թաղէոսին տալիս է կարգալու: Երբ փոքր ինչ կարդալ է սովորում, սկսում է իւր ժամանակը երգելով անցկացնել եւ ապա (ըստ այլոց ասումեան) աշակերտում է Ղայրատի եւ Մալի աշղների մօտ: Մէկ ժամանակ էլ զրբեր կուան տակ դարսած, փողոցներում մանգալով գրավածառութիւն է արել: Մի քանի տարուց յետոյ Ալեքսանդրապօլում բաւականութիւն չգտնելով, գնում է Տաճկաստանի մայրաքաղաքները իւր փափագը լցուցանելու նպատակաւ: Վերջապէս մի քանի ժամանակ Պօլիս եւ Զմիւռնիա մնալուց յետոյ, վերադառնում է Կարին եւ բաւական ժամանակ մնում այդտեղ, ուր եւ ծանօթանում է Պօլսոյ Պ օր տ ընկերութեան անդամներից մի քանիսի հետ: Սա սկզբում երգելիս է եղել Արարական բարբառով խառն տանկերէն երգեր. բայց յետոյ սկսել է երգել եւ շատ Հայերէն երգեր, որոնք, ըստ կարծեաց, մօտ 200-ի կհասնին: Հաւէսին բնաւ սովորութիւն չունի իրան երգերից ծրիապէս տալ սորան, նորան. այլ ցանկացողը պէտք է գնէ 25-50 կոպէկով իւրաքանչիւր երգը: Հաւէսին զիտէ մի քանի լեզուներ. Հայերէն, Տաճկերէն եւ Արարեւելէն բաւականին լաւ, իսկ Յունարէն եւ Վրացերէն շատ սակաւ:

Թէպէտ բանաստեղծութեան մէջ բաւականին քանքար ունի, բայց Սոխակ Հայաստանի, IV հատոր. Ա. Գ.

Լոյս տուող խորհուրդները տարածելու շարժում չունիմ,
 Երբուի այս ծուլութիւնը, իցէ թէ անպարտաւ մնամ,
 Կենդանութեան յարզը ճանչցայ ես-չառանս հիմա,
 Չ'զիտեմ խոստահեալ ինչպէս անեմ, որ լաւ մնամ:

34. *)

Այս ի՞նչ խառնակութիւն, այն ինչ ցածուութիւն
 Տիրում է Հայոց մէջ, անմահ Սրարիչ,
 Ինչպէս մեզ դու անես մեզ հոգացութիւն,
 Բայ ի քէն մեք չունինք մեր ազգին Փրկիչ:

Մարդուն ի՞նչ յոյս դնենք, որ ունի նախանձ,
 Իւր շահը պրտուելով միշտ գոչում է դանձ,
 Եսականութեան մէջ իւրաքանչիւր անձ
 Եղել են խեղճերիս կախարդող թովիչ:

ունեցած բանքարը փոխանակ փայլեցնելու, թագնում է մոռն անկիւններում:
 Յուսակի է որ մեր երգիչը այսուհետեւ կհետեւի ժամանակի պահանջին, եւ
 իւր երգերը անինսպարար լոյս կընծայէ որ եւ իցէ կերպով: Եթէ ոչ, այնու-
 հետեւ կը նմանի Փրկչի ասած «բանքարաժողոց ծառային»

*) Մկրտիչ Զովհաննէսեան Տալոյեանց Աղերսանդրապօլցի (մականու-
 նեալ Չամալ), ծնվել է 1848 թ. Հոկտեմբեր ամսում: Սա իւր սկզբնական
 ուսումը ստացել է մի մասնաւոր ուսումնարանում եւ ապա աշակերտել է
 կոշիակարութեան իւր հօր Յովհաննէսի մօտ: Մի բանի ժամանակից յետոյ
 ունեցել է դինեվանատի կրպակ, որին կից եւ մի սրճարան (кофейня): Այս
 սրճարանում մշտապէս երգելիս է եղել մեր այժմեան հայերէն բանահիւս
 աշըղ-Ջիւանին: Չամալը հետաքրքիր լինելով երդումեան (աշըղումեան) ար-
 հեստին, սկսում է կամաց, կամաց իրանից երգեր յօրինել եւ միեւնոյն ժամա-
 նակ սովորում է քնար (սազ) ամել: Անցնում է մի քանի ժամանակ, երբ բաւա-
 կանին լաւ տեղեկանում է այդ արհեստին, 1875 թուին Չամալը որոշում է
 հաստատապէս պարապել երդումեամբ եւ այն օրից մինչեւ ցայժմ ընկերա-
 ցած է Աշըղ-Ջիւանու հետ: Այս ինքնակիրթ կամ ինքնուս երիտասարդի, դեռ
 օրինաւորապէս չհարգացած, տաղանդը բաւականին մխրթարական յոյսեր է
 խոստանում մեզ ապագայի համար: Աղերսանդր Մխրթարեանց:

Չկայ մեր սրտերում քո սուրբ պատուերը,
 Վերացել է բարի գործոց նուէրը,
 Այսօրուան ճանաչուած քաջ ազգասէրը
 Վաղը դուրս է դալիս ազգութեան մասնիչ:

Մեր ազգի Պետերը անմիաբան են,
 Ամեն մինն ուզում են մի բան սահմանեն,
 Չամալիս պարզ ասեմ, իբրև վարձկան են,
 Եստ սակաւ կայ մեր մէջ խղճով ուսուցիչ:

35.

Առաքինի մարդը առաքինեաց մէջ
 Կրնդունվի, կը սիրվի որպէս վարդ ազնիւ,
 Բայց ի՞նչ անէ խեղճը ահագինեաց մէջ,
 Երբ որ շատերն են ամբարիշտ ցրիւ:

Բարին մտածելով կը մաշէ կեանքը,
 Բարութիւնն է նորա փափաղը, Չանքը,
 Ուղղութիւնով սակաւ է աշխատանքը,
 Եւ զրկուելով չունի յարգանք ու պատիւ:

Չամալի, բարեգործ մարդը սակաւ է,
 Վատի չարութիւնը նորան մեծ ցաւ է,
 Բայց ի՞նչ կուզէ լինի, լաւ մարդը լաւ է,
 Լաւ օրինակ կլլէ ընկերին անթիւ:

36.

Աստուածութեան ընդունող եղար տաճար, տիրուհի,
 Եամանդալ ճանապարհիս վառած դամբար, տիրուհի,
 Խաւարացած մտայս լոյս ու կամար, տիրուհի,

Դու բարութեան օրինակ հողեոյս յարմար, տիրուհի,
Բարեխօսելու համար լիզուով ճարտար, տիրուհի:

Դու երկնային զրախտից ընտիր ընծայ, հոտով բոյս,
Առաւօտեան արուսեակ, իսկ լուսատու պայծառ լոյս,
Աստուածային օթեան, փրկչին կրող մաքուր կոյս,
Պատերազմող կենաց օգնական ու խրախոյս,
Չար թշնամուց ազատող, զէն ու ասպար տիրուհի:

Ամեն ժամ, ամեն բույս, ամեն օր, ամեն տարի
Սիրոս, միաքս, խորհուրդս առանց քեզ չի դադարի,
Ամբողջ հողածիններից սուրբ անարատ և բարի,
Առանց քո միջնորդութեան ոչ մէկ բան չէր կատարի,
Բանն-Աստուած կատարեալ դու մարդ ծնար, տիրուհի:

Չամայիս կ'ճանաչեմ մայր Աստուծոյ քեզ հաստատ,
Անոյշ որդեոյդ բարեխօս իսկ կ'ընծայեմ քեզ հաւատ,
Նորա արեան զինն եմ ես փոքր հօտից հարազատ,
Թէ վարք ունենամ սիրով ճշմարտութեանն համեմատ՝
Վերջը կ'լինիս օգնող ինձ մխիթար, տիրուհի:

37.

Անշուշտ նախանձութիւն կունենայ մարդը;
Բնութիւնից պարզե-տուրք բնական է,
Որը միշտ բարութիւն, որը թակարդը
Կը լարէ ընկերին, որ անարժան է:

Բարեսէր մարդիկը նախանձը բարին
Գործ կը դնեն, նախանձելով արդարին,
Կօզնեն խեղճ չքաւորին, տրկարին,
Այս նախանձը բարձր բարոյական է:

Չար նախանձը մարդուն յատուկ կը մաշէ,
Կեանքիցը կը զրկէ, հողին կը հաշէ:

Չամայի, լա՛ւ եղիր, քո հողըդ քաշէ,
Կը պահէ գլուխը, ով գիտնական է:

38.

Արի հայ տղայ, համարձակ խօսակցիր-տո՛ւր պատասխան դու,
Չէ՞ որ էիր յառաջ երևելի ազգով ախոյեան դու,
Քաջազուն Հայութեան զրոյմը բարձր յարգով ընդունած՝
Չէ՞ ամօթ քեզին, որ սգէս լինիս-ուսման մուրացկան դու:

Ծնար զարգանալով քրիստոնէութեան լուսոյ տակը,
Հողեոյն սրբոյ շնորհքով լի մտար փառքով աւագան դու,
Քանի ժամանակդ ներող է, անդադար հեռելիք միշտ
Գիտութեան սրբազան պարտքդ լեցընես, դաս յերևան դու:

Լուսաւոր ազգերից օրինակ ա՛ռ քեզն բաներ յարմար,
Քեզանից ստոր ազգերին լինիս ցոյց և տեսարան դու,
Չամայո՞ւս խօսքերի խորհուրդը առանց թերութեան պահես,
Կունենաս անկորուստ անուն այժմը և միշտ յաւիտեան դու:

39.

Առանց փողե աշխարհի մէջ ոչ մի բան
Չի յառաջիկ, ամեն ջանքն անօգուտ է,
Փողով ամենայն ինչ կըստանայ սահման,
Թարց սորան որքան լաւ խօսք լինի՝ սուտ է:

Նախ ասվում էր զործք քոյ օրհնեն զքեզ, այր՝
Այժմ՝ զրամք օրհնեն զքեզ, քաջ եղբայր,
Թէ ունիս, աշխարհը քուկդ է ծայրէ ծայր,
Թէ չունիս, քո գործդ անհիմ, խախուտ է:

Չի անցնի քարոզը երիցու ազբատ,
Ասել են հները ճշմարիտ, հաստատ:

Գամայլի հարուստը կանթը լաւ թէ վատ
կը զնէ, ուր կամի, ազատ բրուտ է:

40.

Ո՛ղջ լեր ,, Սոխակ Հայաստանի՛՛:

Պարսից «Բէէաթ Եեթապէ» եղանակով.

Բարև տամ քեզ, իմ՝ Սոխակ, եկար Պարսկաստան կրկին,
Տեսութեանդ ուրախ եմ, իմ երգս է քո հազագին:

Ափսո՛ս չես կարողանում ամեն զրածս երգես,

Քաղցր է նոցա եղանակ թէ Պարսից ձայնով հնչես

Դու ամենէն լաւ գիտես և քեզ նա միշտ է յայտնի,

Քո սիրելին կարմիր վարդ, մի՛թէ նորան փուշ չունի:

Բնական է այն ամեն ահագին լոյս արևի,

Մոթ մառախուղով պատած՝ նորան զիշերներ չունի՛:

Ո՛վ իմ սիրելի Սոխակ, այց արա դու պանդխտիս,

Որ քեզմով ես պարծենամ, շուտ հասնեմ նպատակիս:

Նորահաս է բուրաստան, դեռ նորա վարդ կոկոն է,

Թէ համբերես, որ բացուի, քեզ շատ ախորժեղի է:

Կ'պատրաստեմ զայն ջանքով, ցանեմ նոր ծաղկանց սերմեր,

Աճենալու պատուաստեմ, որ ունենայ լաւ գոյներ:

Ամեն տեսակ կ'բացուի, զարդարէ իմ բուրաստան,

Երբ որ նորան պատահես, լինի քեզ մի օթարան

Յայնժամ երգէ նորա մէջ անոյշ ձայնով անդադար,

Քո սիրեցած վարդն է բաց, փունջեր հիւսէ, վարդէս տա՛ր:

Թո՛ղ տեսնեն մեր ազգայինք ծաղիլունք Հայոց սերունդոցն,

Չե՛ն կորցրեր Պարսկաստան, ունին դարձեալ իրենանց գոյնն:

Կ'սպասեմ ես անդադար թէ գարունն անէ մեզ այց,

Զուարթանան ծաղիլունքս, ուրախ լինի Բժշկեանց:

41.

Կեցցե՛ն ողիքն ազգասէր.

Բացուեց արդ նոր ասպարէզ, որ կարդայ մեզ հրաւեր,
Տէգ, նիզակաց փոխարէն շողայ սուր սուր զրիչներ:

Թո՛ղ սարսափին ըմբիշներ, կորովի հուժկու քաջեր,
Անցան նոցա դարերը, փոխուեցան այն հին ժամեր:

Չի դիմանար վահաններ, անբուժ է նորա վէրքեր,
Մարդ լաւ է սրով մեռնի, չընդունէ զրջի խոցեր:

Սրի վէրքին պատահողն միայն մի անգամ մեռնէ,
Բայց սուր զրջի խոցուածը մինչ յաւիտեան կ'տուէ:

Այս վերաց ճիշդ դարմանը պէտք է ազգը մտածէ,
Նորա ազդու շանթերը բարձր ուսմունքով նա փանէ:

Կազմեն ընկերութիւններ, ուսեալ հոգաբարձուներ,
Տեսակ, տեսակ լեզուներ սովորին Հայոց մանուկներ:

Կարողանան ասպարէզ նոքա մանկ ընդարձակ,
Վարել ընդդէմ թշնամեաց կուռ պատերազմ համարձակ:

Ի՛ր սրատես աչօք զայն մեր վեհափառ գուշակեց,
Ծաւալեց մեր մէջ ուսմունք, արագաջան հետեց:

Կարդաց քարոզ բարձրաձայն, ամեն ուրեք լսեցին,
Բառակայ մեր քաջ Հայերը շուտ գործիս ձեռնարկեցին:

Անձնանուէր վեհ անձինք բարձին միաբան ձայներ,
Աշխատեցան անխնայ, կարգեցին կարգ, կանոններ,

Յանուն Մարտիրոսիան կազմեցին Ընկերութեան
Մեր հէգ Հայ սերնդոցը ջանան անել օգնութիւն:

Յառաջանայ մեծաքայլ, ուղիղ է իւր ընթացքը
Սզգային հանդէսներով կատարէ իւր շրջանը:

Ինայէ թո՛ղ բարերարն երկխայոց այն որբիկ,
Ոխերիմ՝ չար նախանձը յարուսէ ո՛չ փոթորիկ:

Ազգը մաղթէ ձեզ նոր օր, չի մոռանալ ձեր վաստակ:

Գիտու թիւնից մարդ չէ տեսել փեսար,
 Բայց շատ փեսավէլ է խելքից պակասը,
 Աշխատի՛ր սովորել՝ գոնեա քիչ մասը,
 Գու լնքդ էլ անուսու՛մ, ազէտ ես, Զէ՛-ան:

45.

Русский народный гимнь.

Maestoso. (величественно)

Боже, Царя храни!
 Сильный Державный,
 Царствуй на славу на славу нашу.
 Царствуй на страхъ врагамъ,
 Царь Православный
 Боже, Царя храни!

Жуковский.

46.

Էս խաղն ասել է Թիֆլիսեցի Աւետիք Եւանգուլեանցը „Մեղու Հայաստանի“ լրագրի վրայ:

Բացէ՛ք, պատուելի անձինք, ձեր մտաց բուրաստանը,
 „Մեղու“ քաղցր ախորժիւն անուանեալ «Հայաստանը»,
 Որ այժմն արժանացանք*) սորա սուրբ տեսութեանը,
 Վերահասու կը լինի սա մեր որպիսութեանը,
 Կրթութենով ուսում կը տայ ինչպէս Եւրոպաստանը:

„Կովկաս“ անուամբ լրագիրն սեր չունելով՝ վերացաւ,
 Երկրորդն „Արարատ“ կոչվեց, զեռ չը ծաղկած՝ չորացաւ,
 Զ՛կամեց հիմնաւորվել, Հայաստանը մոռացաւ,

Մածկեց ամեն մթութենով, հնչեց հողմ, չորացաւ,
 Զը հաւանեց Թիֆլիզին, սփռեց իզմիրաստանը:

Եկէ՛ք, Թիֆլիզու Հայք, սիրով միմեանց աղաչենք,
 Տարեկան զինն չը խնայենք, ստորադրվենք, չը փակչենք,
 Նոր «Մեղու»-ով Հայաստանի՝ կրկին ծաղկենք, կանանչենք,
 Ազգի լուսաւորութենին ուրախանանք, չ՛տրտմենք,
 Մէկ Հայերէն լրագիր պահպանէ վրաստանը:

Հարստութեամբ լի իշխանք, լերո՛ւք ազգին օգնական,
 Եւ սա էլ ձեզ կը օգնէ, արհեստ ունի պատուական,
 Քաղցր է սորա պտուղը, համեղ և ախորժական,
 Ինձ անուսու՛մ թողնելով, հայրս մնաց պարտական,
 Տփիխաս, Աւետիան եմ մոլորեալ ազգաց ամեր:

47.

Բանաստեղծներ շատ կայ՝ խօսքն զին ունի,
 Զարկեարն անզին ա, նորան զին չունի,
 Թէ և „Սոխակի“ էլ սիրական մին ունի,
 Զարկեարին էլ Մայլի՛ճ ընտրած հին ունի,
 Հայն հաւատ ունի, Թուրքն զին ունի,
 Բանաստեղծներ շատ կայ՝ խօսքն զին ունի:

Ո՛վ որ հաւատ ունի, նորան յոյս ունի,
 Ո՛վ բարի վարք ունի, նորան լոյս ունի,
 Ո՛վ արտին սերմ ունի, նորան բոյս ունի,
 Զարկեարն էլ մէկ օրիորդ կոյս ունի,
 „Սոխակի“ խոստացածը**) ականջին ունի,
 Բանաստեղծներ շատ կայ՝ խօսքն զին ունի:

*) Ինչպէս երևումէ, այս խաղը գրուած է „Մեղու Հայաստանի“-ի նոր հրատարակութեան առիթով:

**) Այո՛, «Սոխակը» ինչ խոստացել է, նոյն ամենայն ճշդութեամբ կատարելու է: Ա. Գրիգորեանց:

Մա հայր չունի, եղբայր չունի, ի՞նչ անի,
 Որք դուտոր ա, ուսում առնի, կու տանի,
 Աստիճանի հասացունի, կու բանի,
 Ուսում առնի՞ մայր կու լինի պիտանի,
 Ով որ տանի, կասեն չուսումով կին ունի՞ .
 Բանաստեղծներ շատ կայ՝ խօսքն զին ունի:

Ինձ յայտնի ա, յՍոխակը՞ վարդ սիրում ա,
 Հողն մշակում ա, կարգին բրում ա,
 Աշխատելով ծառն հասակի բերում ա,
 Ինչ որ խոտանում ա, խօսքն տեղում ա,
 Ամեն եղանակ իւր քամին ունի,
 Բանաստեղծներ շատ կայ՝ խօսքն զին ունի:

Երբորք հասարն անցաւ, զամէ Զորն,
 Յոյսով սպասողն՝ կ'ստանայ որն,
 Փեսի մօտն պարզերես է կոյս հարսն,
 Մայի՛ք-Յարո՞ւնի-ն, ո՞ւմից առեցիր դարսն,
 Ով յանձն առաւ՝ վզին լուծ սամին ունի .
 Բանաստեղծներ շատ կայ՝ խօսքն զին ունի:

48.

Բայց ես վշտակոծ Մասեաց սարին տակ
 Զախջախ քնարիկս առած ի կունակ,
 Պատեցայ յանկարծ քնով մը անուշակ,
 Մինչդեռ կողբայի Հայկն, Արամ, Արշակ,

Զարթեցայ... աւա՛ղ, տրտո՛ւմ, սղաւո՛ր,
 Դէմքս թախծագին, ցաւերս բիւրաւոր,
 Մասիւր կողբայ զիւր կորուսան անդին,
 Մա՛ռն, ձիւն և բու՛ք առել է չորս զին:

Իւր հին և թէ նոր մեծ մեծ խոցերուն
 Դեղ, դարման կուգէ անթիւ վշտերուն,
 Հեծե՛ց, ա՛խ քաշեց դալկահար զիմօք,
 Սրտին այս հառաչ դեռ լսած չէ՛ր ոք:

Եւ իմ այլ սրտին տուաւ մի նոր զարկ,
 Հայոց ազգութեան դառն յիշատակ,
 Աւա՛ղ քեզ, Մասիս, վշտալի՛ Մասիս,
 Որ ցարդ աղէտից մէջ հալիս, մաշիս:

Ոչ ուրախութեան ձայն մի կը լսես,
 Եւ ո՛չ նոր տարւոյ փառքն վայելես,
 Այլ միշտ ՚ի կսկիծ, ի ցաւ աղէկեղ՝
 Սիրասուն որդւոցդ սիրա կը տրորես:

Ո՞վ չէ զիտցած, որ շատ քաղցր են ամեն մարդու իւր Հայրենիք
 Թէպէտ Աշխարհն մեր Հայաստան դարձաւ հողմոց արդ խաղալիկ,
 Ո՞վ Հայրենի փառաց համար ոսկի, արծաթ, կեանք չի գոհել,
 Սիրոյ անմահ Հրեշտակին հետ Մասեաց զիրին ո՞վ չի հանդէս:

Հայրենեաց փուշերն վարդ են ինձ համար,
 Քարերն ոսկի, սարքն ամեն գոհար,
 Բայց դու, խեղճ Մասիս, բա՛ւ է, մի՛ լար,
 Կը բացուի անշուշտ քեզ նոր օր, նոր դար
 Լուսաւորութեան, բարեկարգութեան,
 Ընդ Արծուէ դրօշիւ Ռուսաց Պետութեան,
 Ազգասէր ջանիք Տէր Դէորդ Զորորդ
 Կաթողիկոսի մեր Նախնեաց յաջորդ,
 Ա՛խ, Մասի՛ս, Մասիս,

Երբ որ սիդապանծ կելլես, կը կանգնիս,
 Յայնժամ չմոռնաս, այլ թէ՛ յիշես զիս...
 Օրհնե՛ալ է հողդ, հիմունքդ ալ օրհնած, Գուն օրհնած,
 Յաւիտենից ցյաւխտեան քեզ կործանման կորուսման չկայ
 մի կասկած:
 Ելելէ վարժապետ Սեփարատեանց:

49.

Բռնակալ ես աշխարհի, անիրաւ, վատթար, մամոնայ
 Բարեաց հեռու միանգամ, չարեաց իսկ սատար, մամոնայ,
 Քեզ սիրողաց խեղդելոյ անխղիւ լար, մամոնայ,
 Չեմ ուզիլ ինձ մօտ դառնայ հարիւրդ հազար, մամոնայ,
 Շատանաս քան զչափն՝ ինձ առնես տկար, մամոնայ:

Բռուն իշխանս զօրութեամբ ինչ կամենումես, անումես,
 Եղբայրն եղբօրիցն, որդին հօրիցն հանումես,
 Որին կայար ես շնում, որին սովու սպանումես,
 Կանանց պէս սիրահարիդ արիւնք իսպառ քամումես,
 Գիշերն քունն չես տալիս, ցերեկը դադար, մամոնայ:

Շատերն կարծումեն քեզ բարւոյ, չարի տէր եմ ասում,
 Աստուծոյ իսկ ծառայ չէ ունողն ընդ քեզ տէր եմ ասում,
 Մեռանես քեզ չեմ լինիլ սիրահար ընկեր եմ ասում,
 Իմանամ բաշխելուես ինձ ոսկոյ մթեր եմ ասում,
 Քո տուած փառք, պատկին երազ եւ ստուեր եմ ասում,
 Թէ մի կոպէկ տուել ես, արի՛, ա՛ռ յետ, տա՛ր, մամոնայ:

Բարւոյ, չարի տէք չես դու, բայց նոքա քեւ յառաջանան,
 Իմաստուն գործադիրդ արքայութեան առնես արժան,
 Խի յիմար անարժանս իսկոյն մոնես ՚ի հուր զեհեան,
 Դու ծնող, նոքա ծնունդ, թող լսողքը չի զարմանան,
 Խառնակիչ ես աշխարհիս, անկինջ, անդադար մամոնայ:

Բաց ասեմ, ոչ ամաչեմ, անց ստուերի է փառքն քոյ
 Մերթ յաթոռ իշխանութեան, մերթ զլորի ՚ի գուր սղմոյ,
 Գիշեր ցերեկ անդադար հոլովումէ իբրև անուոյ,
 Անկայուն աշխարհի մէջ միշտ սարբերի նման հողմոյ,
 Դու նաւ ես ալէկոծեալ առանց զեկալար, մամոնայ:

Ամեն մարդ ջանք է անում քեզ ստանայ իւր սեպհակա՛ն,
 Դու ավենին խափումես, նմանումես սուտ սիրական,
 Գլուխդ իմ գողումն, ոտներդ այլոց անխափան,
 Ներեցեք ինձ, արարքդ ասել տուեց անվայել բան,
 Օրը մի ասն չես մնալ որպէս դիւահար, մամոնայ:

Համ օրոյ, խաղաղութեան, համ չարութեան դու պատճառ ես,
 Համ կենաց յաջողութեան, համ կորստեան դու պատճառ ես,
 Համ մեղաց շոյլութեան, արդարութեան դու պատճառ ես,
 Աշխարհի համ շնութեան, համ աւերման դու պատճառ ես,
 Առանց քեզի չի կանգնիլ քարի վերայ քար, մամոնայ:

Երկու զօրութեանց տէր ես՝ ձեռքիդ ունիս կեանք եւ մահը,
 Մինին սովու սպանումես, միւսին տալիս կայսեր զահը,
 Էս մասին ինձ բամբաստողն ասէ թէ ի՞նչ իւրեան շահը,
 Մովսէսն է՛, մահ է խոկալս իմ կենացս ամեն պահը,
 Ո՛չ էնքան երկիւրած եմ եւ ոչ սրտէս կիրթաց հահը,
 Խեղապէս քեզ հալածիչ ես եմ կամակար, մամոնայ:

50.

Բոլոր երկիրներէն ինձի համար քաղցր Հայաստանն է,
 Ի հարկ է հայրենիքս այնտեղ է՝ բարձր ապաստանն է,
 Վենետիկ, Ամերիկայ տպուած աղէկ առլազին նայէ,
 Քնքնէ աշխարհացոյց տախտակը՝ Պոնտոսը սահմանն է:

Ո՛ւնենանք աղքատ անձանց սպրուստ ու խօթաց հիւանդանոց,
 Մեր ազգին կրթութիւն տուողը զպրոց-ուսումնարանն է,
 Տղէտը երջանկութեան զիրքը դաս առած, աւարտած չէ,
 Ամեն կերպ ազդեցութեան պատճառողը Համալսարանն է:

Փիսոյն, Եվրատը կելնեն շտապովմը Հայկայ լեռներէն,
 Բիւրակն իր սարը, դաշտը Արմենակի վարդենաստանն է,

Հոտաւէտ ծաղկըներու գոյնը բացարձակ կը փայլի անդ,
Հառազայլթ արձակողը ծաղկըներու մէջը շուշանն է:

Հայաստան աշխարհումը անկեց Ինքը փափ'ուլթեան պարտէզ,
Հառաւ'ակ*), գործեց այնտեղ առաջին մարդու բուրաստանն է:

51.

Բնական ձիւրքերս ինչ շատ նուազ են,
Երևելի մարդ չեմ աննշան եմ ես,
Բոլոր բարիքներս իբր երազ են,
Շուտով մը թարշամող վարդարան եմ ես:

Չանքերս տկար են, ես էլ անհոգ եմ,
Երբ կ'լինի որ փափաղներս նորոգեմ,
Մով արտասուելքովս պէտքէ ուղղեմ
Շնորհաց արմատը, պարտիզպան եմ ես:

Աւա՛ղ, ինձի տուի անարգ կիրքերու,
Գարձայ սխալ կանոններու զիրքերու,

*) Իմ Թղթակից պ. Աղէքսանդր Մխիթարեանցն պ. Հաւէտի երգերի մասին հաղորդում է ինձ. «Սորա երգերից մի քանիսը, որ ուղարկել եմ ձեզ տրպազրելու. «Սոխակ Հայաստանի» IV հատորում, ոչ թէ իրանից եմ ստացած, այլ փողով զնոց նոր երգիչ պ. Կարապետ Ապաշեանց բարեսիրտ երիտասարդից»: Իմ խորին շնորհակալութիւնը մատուցանում եմ որքան պ. Ա. Մխիթարեանցին, նոյնքան պ. Կ. Ապաշեանցին, որ սա, չնայելով իրա դրամական վճարին, դարձեալ կամեցել է ազգասիրական գործ կատարել, անմահացնելով պ. Հաւէտի անունը Հայ դրականութեան մէջ, նորանից գնած երգերը Հայ տպագրական պրեսսին մատուցանելով: Այս առիթով թող պ. Հաւէտին ինքն ես չղանայ արտայայտելու վերեւ յիշած երկու պարօններին իրա շնորհակալութիւնը, որ նորա, զրալով աղջի պահանջը, մեծ նշանակութիւն են տալիս իր երգերին, եւ փող վճարելով, եւ արտադրելով եւ տեղ որոշելով «Սոխակի» Թեւիկների տակ:

Ա. Գրիգորեանց:

Անրազդ Հառաւ'ակ եմ առանց ձիրքերու,
Անկիրթ, անբարեսէր, անպիտան եմ ես:

52.

Բազմացան վէրքերս, սաստիկ բազմացան,
Մինչև անգամ թիւ ու համար էլ չկայ,
Բժիշկները տեսանելով զարմացան,
Վա՛յ կարդալով ասին քեզ ճար էլ չ'կայ:

Իմ միտքս ինձ կամի շարժել վատութեան,
Նաև թշուառութեան, յուսահատութեան,
Փակուել է ինձի դէմ դուռն ազատութեան,
Բացուելու դիւրութեամբ հնար էլ չ'կայ:

Սիրտս Ռամայի և Նորի նման
Գառել է կը ողբայ Յակոբի նման,
Մխիթարելու չափ ինձ Յոբի նման
Մէջս իմաստութիւն, հանձար էլ չ'կայ:

Կա՛յ արդեօք Մալէլէ* խրախոյս տուող,
Ողջամիտ խօսքերով հաստատ յոյս տուող,
Բացի սուրբ զրքերէն ինձի լոյս տուող
Չ'կայ, էլ մէկ ուրիշ զամբար էլ չ'կայ:

53.

Բնութեան հրաշալեաց ներկայացուցիչ, մեղմիկ զարուն,
Ամենայն եղանակից դու գովելի, անուշիկ զարուն,
Չմեռուան թմրած աշխարհին տալիս ես կեանք դու նոր 'ի նոր,
Քեզէ հետ դու բերում ես միշտ հազար տեսակ ծաղիկ, զարուն:

Ունի յոյս մարդկային ցեղը քո վերայ բերաւոր կերպիւ,
Տխուր սրտեր կանես ուրախ, զուարթուն, գեղեցիկ զարուն,
Սոխակ Հայաստանի IV հատոր. Ա. Գ.

Անշունչ, շնչաւոր արարածներին սնուցանող ես դու,
Սրբաբնից կարգը վաճ գորովագութ ծնող մայրիկ, գարուն:

Պարումեն ցնծարով ամբողջ զգայուն շունչ քաշողները,
Երգով գոհանում են թռչունները տալով ձայնիկ, գարուն,
Զամալիս կ'լինէր ուրախ թէ քեզ պէս մեր Հայոց կեանքն էլ
Նորոգուէր-ստանար լուսաւորութեան արեւիկ, գարուն:

56.

Մայր Հայաստան.

Գեղաստեղ կոյս անարատ արեւելեան թագուհի,
Բնամեծար ազգիս Հայոց միակ պարծանք պաշտելի,
Ա'խ Հայաստան, ո'հ:

'Ի վեհ գահոյս դշոյ չքնաղ վայելչագեղ ճոխացար,
Գրգիուն աւա'ղ քերքեալ զորդիս զե՞ զքոյդ շորթեաց չարաչար,
Ա'խ Հայաստան, Ա'խ Հայաստան:

Ուրխական զրախ զուարճ եգեմային օթարան,
Բախացուցիչ հսկայ ազանց զերթ նագելին եղեւսեան,
Մայր Հայաստան, ո'հ:

Իսկ այժմ սուգ աշխարհաւեր աղց սրաշարեալ միգապատ,
Է՞ր սեւազգեաց մղձկեալ ջայլես զողբ աղեխարշ անփարատ,
Ա'խ Հայաստան, Ա'խ Հայաստան:

Եթէ աշունն անշքացոյց ձմեռն գբե սե պատեաց,
Բենեոյն զթոյ չիք չափ սահման, քաջալիրեաց խողազեաց,
Մայր Հայաստան, ո'հ:

Գիշերոյն նա յար վարկաղէ արփի' պայծառ շողշողուն,
Սեթեթեթեալ վերառաքէ 'ի քեզ անշուշտ և գարուն,
Ա'խ Հայաստան, Ա'խ Հայաստան:

Գրեգոր Մարտիրոսեան Մանդակաւոր:

57.

Մուխամմազ.

Գիշեր ցերեկ անդադար խնդրեցի Աստուածանից
Էս անիրաւ խմիչքը ձեռ վեր առնի ինձանից,
Դրան զործ ածելուցքս դիտար չունիմ իմ տանից,
Որ ընկնումէր գլուխս, ետ էր քցում ինձ բանից,
Ինձ տեսնողն ասումէր՝ կորի', գնա', պիանից:

Մէկ օր հարբած գնալիս ցեխի մէջն թաղվեցի,
Ոտիցքս մինչև գլուխ լաւ կարգին շաղախվեցի,
Ես վաշ, ես վաշ գնացի ծովուփս օղողվեցի,
Փոքր որ սեաղացայ, միտք արի, սարսաղվեցի,
Մի՞թէ ձեռ եմ վեր առել իմ դարիբ ջիվան ջանից:

Փողոցոյն գնալիս մէկ մարդ ինձ խօսացրեց, —
Ո՞րտեղ ես այդքան խմել, մէկ մէկ կարգին հարցրեց,
Ես վատ պատասխանեցի, մէկ խփեց, պարկայրեց,
Մէկ ինձ պէս պիանիցն կունցս բարձրացրեց,
Ելի տարաւ իւրեան հետ, խմիչք առաւ դուքանից:

Քսան ամ գործ ածեցի, խմիչքից չի շահվեցի,
Իմ շահմունքս այն էլաւ, անունս վատ հանեցի,
Միշտ ցերեկն անդադար արեւում չարաբովեցի,
Աշխատանքս դիւի կորաւ, զիւի խմիչքին առեցի,
Ինձ ամօթալի թողեց բարեկամից, իշխանից:

Ուխտ եմ արել իմ Տէրին, չի խմեմ մինչև մահս,
Եւ նա ինձ յոյս է տուել, հաստատ եմ պահում պահս,
Հիմա ինձի յայտնի է իմ վնաս, կամ շահս,
Տէրն ինձ զուրկ չի թողալ, կու հասցնի իմ փայքս,
Ամօթալի չի թողալ օտարից, ազգականից:

Խմիչքը չեմ գործ ածում, հիմա գործիս արի եմ,
 Եւ ինձի յայտնի է որ, փոքր մարդաշարի եմ,
 Աստուած ինձ ազատ պահի, քանի ես աշխարհի եմ,
 Չար գործերս վերացաւ, ամեն գործով բարի եմ,
 Համբերելով յաղթեցի, ձե՛ռ վեր առի նրբանից:

Շահ ի-բաւ էն ստացաւ Տէրիցն համբերութիւն,
 Այսուհետեւ չի անիլ նա խմիչքի սէրութիւն,
 Որ գոյանումէ նրանից ամեն տեսակ չարութիւն,
 Կամենումէ աշխատիլ իւր մեղացն թողութիւն,
 Որով զրկված չը մնայ երկնային օթեւանից:

58.

Յայտնի բան է, որ այդ ներելի է.

Գնումեմ փողոց (ի հարկ է գործի).
 Այնտեղ մի պարոն առած իր հասակ
 Այն բազմութեան մէջ իրա ծառայի
 Երեսին զարկեց մի թեթեւ ապտակ.—
 Պարոնե՛ր, մի՛թէ այդ կարելի է.
 Ի հարկ է որ այդ յիմարութիւն է.
 Բայց անցեալ օրը պարոն վարդանը
 Կո՛ւշ ծեծեց մէկին իր ներքնատանը.
 Ուղեղ է, թէպէտ նա ծեծեց շատ լաւ,
 Բայց այնպէս ծածուկ՝ ոչ որ չը տեսաւ.—
 Ա՛յ, քեզ կրթուած մարդ—հիանալի է,
 Յայտնի բան է, որ այդ ներելի է:

* *

Մի օր փողոցում կանգնած մէկի հետ
 Զրից եմ անում, յանկարծ մի տգէտ
 Գտակա առաւ և խիղջն փախաւ.

Յետքից ձայն տուինք.— ո՛չ, էլ չը դարձաւ:
 Ասացէ՛ք, խնդրեմ, այդ ի՞նչ կանոն է,
 Ի հարկ է որ այդ յիմարութիւն է.
 Բայց մի օր զատկին, երբ եկեղեցում
 Ժողովուած էր մեծ մարդկանց բազմութիւն,
 Մէկը իր ձեռքը կոխեց իմ գրպան
 Եւ հանդարտ հանեց մի քանի թուման.
 Բայց ի՞նչպէս հանեց, զարմանալի է,
 Յայտնի բան է որ այդ ներելի է:

* *

Անցեալ կիրակի մի մարդ—մերկ, աղքատ
 Ժամու՛մ սուրբ խաչը նա համբուրելիս՝
 Խաչահամբոյրից մի, թէ երկու հատ
 Կոպէկ գողացաւ. ցաւ դատաւ սրտիս:
 Ի՞նչ էք ասում, այդ անելու՞ բան է,
 Ի հարկ է, որ շատ յիմարութիւն է.
 Բայց մեր բարեպաշտ մեծ երեսփոխը
 Չորս հազար մանէթ—նոյն ժամի փողը
 Եւ ուրիշ շատ բան իր տակը զըրաւ,
 Կո՛շր ժողովուրդը ո՛չինչ չիմացաւ...
 Երբ եկեղեցին դեռ անհաշիւ է,
 Յայտնի բան է որ այդ ներելի է:

* *

Քաղաքական պարտիզում այն օր
 Տեսնեմ մի զրպիւր—աստիճանաւոր
 Հասարակութեան մէջ ազատ, համարձակ
 Մի աղջըկայ հետ խօսում էր մենակ...
 Տիրացո՞ւ, աղջիկ.— այդ ի՞նչպէս բան է,
 Ի հարկ է որ այդ յիմարութիւն է.
 Բայց անցեալ տարի «լոյս» օրադրում

Բնթեռնում եմ ես (չգիտեմ որ համարում),
 Թէ Պօլիս քաղքում մի սուրբ վարդապետ
 Մի լաւ սարկառագ ունէր իրա հետ՝
 Սիրով նորա հետ շատ տարի ապրած,
 Բայց այն՝—աղջիկ էր տղի շոր հագած:
 Տեսէ՛ք հայր սուրբը ի՛նչ խելք մարդ է,
 Յայտնի բան է որ այդ ներելի է:

* *

Մի քրէական յանցանքի համար
 Նտուում էի բանտ՝ մի կերպ ազատվամ.
 Տեսնեմ մօտացաւ ինձ մի քարտուղար:
 «Баринъ», ասաց նա, «дай наводку намъ».
 «Что?... мерзавецъ», դատաւորն խօսեց,
 «Наводку тебѣ, обожди, подлецъ...»
 Խեղճ քարտուղարը վախից դողում էր,
 Ի՛նչու,—պատճառն իր յիմարտ թիւնն էր:
 Բայց դատաւորը այն օրը իր հետ
 Քաշեց ինձ—տարաւ իրա կարխնէթ.
 Խօսեցինք... վերջը ու թ թուման առաւ,
 Որ ազատութիւն ապա ինձ տուաւ:
 Ա՛յ, ամենեւին այս ուրիշ բան է,
 Յայտնի բան է որ այս ներելի է...

Սիւե՛ն Սափարեանց:

59.

Նուէր Ազուլեաց դպրոցի աշակերտներին.

Գողթան մանուկներ, Դիմէք վարժարան,
 Հայոց զաւակներ, Սովրեցէք ուսում,
 Խումբ խումբ դասուեցէ՛ք, Սովրեցէ՛ք լեզուք,
 Առէ՛ք ձեր զրբեր: Արհեստ) գիտութիւն:

Դուք աշխատեցէ՛ք,
 Դուք լա՛ւ պարապէք,
 Մեր Հայոց լեզուն
 Շատ լաւ մշակէք:

Ապա սիրեցէ՛ք
 Սովրե՛լ աշխատել,
 Օգտաւէտ զրբեր
 Գրել, թարգմանել,

Որովհետեւ մարդ
 Մայրենի լեզուն
 Պէտք է իմանայ
 Ամենից սիրուն:

Որ ձեր անունն էլ
 Ամբողջ աշխարհում՝
 Յիշուի գլխաւոր
 Մարդկերանց շարքում:

Գոյ ինե՛ցի:

60.

Հայերու թուրք.

Դուն խելօք, հաշուով վաճառական ես,
 Միւլք, փող ու ապրանք, կասեն, շատ ունես.
 Բայց թէ փողէդ շահ չունի Հայաստան,
 Թըքել ենք քու ալ, փողիդ ալ վերան:

Քաջ ես, լսել եմ, ինքրդ մեծաւոր,
 Անուն յաղթողի ունիս փառաւոր.
 Բայց թէ թրքէդ շահ չունի Հայաստան,
 Թըքել ենք քու ալ, թուրիդ ալ վերան:

Ի վերուստ քանքար քեզի տուած է,
 Հեղինակ անունդ աշխարհ փրուած է.
 Բայց թէ զրչէդ շահ չունի Հայաստան,
 Թըքել ենք քու ալ, զրչիդ ալ վերան:

Հեռաստե միտքով դու զարդարեցար,
 Հզօր իշխանի սիրելին դարձար.

Բայց թէ մտքէդ շահ չունի Հայաստան,
Թըքել ենք քու ալ մտքիդ ալ վրան:

Բանուկ ու ճարտար դուն ունիս ձեռքեր,
Շատ կը յօրինես թանգազին բաներ,
Բայց թէ ձեռքէդ շահ չունի Հայաստան,
Թըքել ենք քու ալ, ձեռքիդ ալ վրան:

Երկինք շնորհեցին քեզ լեզու ճարտար,
Բարոզի ստացար հրուշակ ու հանձար,
Բայց թէ լեզուէդ շահ չունի Հայաստան,
Թըքել ենք քու ալ, լեզուիդ ալ վրան:

Մեծ ուսում առիր, եղար զիտնական,
Գործքովդ լցուած է մարդոց բերան,
Թէ ուսումէդ շահ չունի Հայաստան,
Թըքել ենք քու ալ, ուսմանդ ալ վրան:

«Փոք» Բ. Տ. № III.

Գամառ-Բախիյան.

61.

Աբանոսեան ամբողթին.

(Հատուած «Բարբունիի Տուփից»)

Դժգոհ, տխուր ամբողջ օրս
Ողբալուց յետ քուն եղայ:
Նիրհը պատեց չորս բոլորս,
Թափվելով և՛ իմ վերայ.
Աչքս կպան: Թէև կրկին
Հագար արտունջ, հայհոյանք
Բարձում էի իմ չար բաղդին,
Որ նա չունէ խղճմանք...

Տեսնեմ հահ՛ գլխիս վերև
Կանգնած է մի ծերունի,
Նորա մէջքին երկու զոյգ թև
Փռված էին զերդանիս
«Ո՛վ ես, հայրիկ» գոռացի ես
Տեսանելով ծերունուն,
Թէև հոգուս պատեց կարծես
Մահատեսիլ դէմք արտում...

Մերը շուտով— Եմ Գորգառնա — Ո՛հ, հզօր տէր, ասացի ես,
Մեծ աստվածը բաղդերի: Բաղդիս ձեռքն զերի եմ...
Ի՞նչ ես մտաթում, հարց արեց նա Ասա՛, հայրիկ, պիտ շատ այսպէս
Ունի՞ս դու իղձ մի թերի: Գեռ նորանից շանթումվեմ...

— ՊՍՅ՝, որդեակ, շա՛տ, շա՛տ, քանի.
Աշխարհի մէջ կ'ընչես—
Ասաց անգութ ծերը յայտնի,
Եւ չբացաւ կայծի պէս...

Բաբեանի:

62.

Ազգային երգ ասացեալ 'ի պատիւ Արտաշէր թագաւորին Հայոց*).

Դու լուսափայլ արքայ փառաց, պանծալի ես, պանծալի
Իբր արեղակ ցնծաս 'ի գահ, երջանիկ ես, երջանիկ,
Ուրախութիւն երկնի, երկրի, բերկրալի ես, բերկրալի,
Թագ պարծանաց Հայաստանեայց, աննման ես, աննման

*) Այս երգը բերուած է Ախալցխայից ի Գանձակ 1840 թուականումը շնորհիւ աւագ սարկաւազ Կարապետ Մատինեանցի, որը Գանձակայ արքունական ուսումնարանի (այժմ պրօգիմնագիայի) վարժապետութեան պաշտօնը արժանաւորապէս եւ շնորհաւանդութեամբ ու գովանի հաւատարմութեամբ կատարեց շարունակաբար 23 տարի եւ ստացաւ տեղական Հայ համարակուծան համակրութիւնը: Այս ազգային երախտաւոր վախճանվեց 1865 թուականում աւագ քահանայութեան կողման մէջ եւ թողվեցաւ Գանձակայ սուրբ Ղուսաւորիչ Եկեղեցւոյ մօտ: Այս պատկառելի քահանայն Էրզրումայ «Կարապետեան» ազգային դպրոցումը աւարտելով իւր ուսումն, եւ անկեղծ ու բարոյական անձն գոյով, իւր ժամանակին մեծ ազդեցութիւն արած է Գանձակայ ուսանողների վերայ, դաստիարակելով նրանց ազգային հոգով եւ նշմարիտ հաւատով: Վասն որոյ նորա անունը միշտ յիշվում է խորին երախ-

Հրճուեա՛լ փառօր, պայծա՛ռ արքայ, հրճուելի ես, հրճուելի՛ս
Աքքանազեան ազգիս պարծանք, ցանկալի ես, ցանկալի,
Լուսոյդ ցոլմունք մեզ ծագեցի, լուսալի ես, լուսալի,
Փառք աշխարհի փառաւորեալ, փարելի ես, փարելի

Դարնեայ պօսակ քեզ կապեցեն, փառաւոր ես, փառաւոր,
Արշակունեաց զարմէ ծագեալ թագաւոր ես, թագաւոր,
Ծիրանածին աշխարհակալ ահաւոր ես, ահաւոր,
Պայծառ զիմօք յանիւ բաղդիդ լուսաւոր ես, լուսաւոր

63.

Ղուբայու տորոնի վերայ.

(1875 թ. 20 հունիսի):

Դրացի՛ս դու, ի՞նչ ես նստել, արի՛ փորը խօսի ինձ հետ,
Ինձի ու քեզ չէ՛ միայն, ամենին է կպել այս նետ:

Այլպէս խորին զգացմունքով ի՞նչէ վրայ ես մտածում,
Քաղաքս ողջ փչացել է, մարդ չի մնացել այս քանդուածում,
Տորոնչէքը խարարներին տիկինի տեղ են պարածում,
Այսպիսի դժբաղդութիւն ոք չի տեսած ստեղծուածում,
Սորանից պրծում չունինք, զերեզման կ'տանենք մեզ հետ:

Փուչ փուչ համբաւներ լսելով՝ ականջներս էլ խուլացաւ,
Ով այսօր հաստատ խօսեց, տեսնուամես վաղն թուլացաւ,

տագիտական հողով եւ նորա քաղցրածայն երգերը արդէն յայտնի են ոչ
միայն Գանձակու եւ նորա զաւառումը, այլ եւ Կովկասեան ուրիշ Հայտրնակ
քաղաքներում, որտեղ գտնվում են Գանձակեցի երիտասարդ վտճառականներ
կամ ծառայողներ: Գարապետ վարժապետի յատուկ իւր հեղինակութիւններն
արդէն տպագրուած են «Սոխակ Հայաստանի» II հատորումը (երես 448,
449, 450, 180 եւ 184):

Ներսէս Տէր-Ներսէսեանց:

Ինքներս հոգալի ընկանք, առուտուրներս ծուլացաւ,
Տորոնն մեզ լաւ դմակ էր, վերջն ամօթներս բացաւ,
էլ չենք տեսնիլ այն օրերը, թողեց մեզի գնաց անհետ:

Պարտապանն ու պարտատէրը՝ երկոքեանն էլ ՚ի միասին,
Որին որ բերան ես բացում, խկոյն զցումէ վայ-նասին,
Թռչուններն էլ են զսրմացել Ղուբումն էլած կուոյ սասին,
Մէջ տեղ մի ուրիշ բան չկայ, այս ամենն է տորնի մասին,
Շատերն էս սորա համար էլ չեն խօսում մէկ մէկու հետ:

Չէ՛ թէ մենակ տորոնչոցը, տները քանդել է Անաթիւն,
եթէ փչես մշակներին, ճանձի նման վայր կ'թափին,
Ամիսներով վատտակումեն, զին չեն առնում իրանց ջաջին,
Թէ ուզես՝ հաց էլ չես տալ, դա մնումէ քո ինսաթին,
Կ'վախենան մօտդ էլ զայլ՝ թէ որ տեսնեն ձեռիդ մի փէտ:

Տեսնումես փողոցումը դատտայ դատտայ ման են գալիս,
Դիւի ամենն անդործ մարդիկ, գործի համար ջան են տալիս,
Քանիսի զոյնն փոխվել է, կ'ասես թէ ջինդար են խալիս,
Երբեմն նորանց տեսնալիս՝ վայ եմ տալիս ես իմ հալիս,
Նրանցից մէկն էլ ես եմ, որ չունիմ մի գործ օգտաւէտ:

Քաղաքիս ո՞ր մէկն ասեմ, կոտր ընկած խառաթները,
Թէ տորոնչոցը ազուաւի պէս կէսն կոտրած զանաթները,
Եթե անասան երկուսից տափի մնացած բարաթները,
Մի քանի տեղ կիսակատար նորաչէն ամարաթները,
Նրանց շինող ուստաներն էլ կիսատ են մնացել նրանց հետ:

Ահա՛ տես մին քանիսի նոր դուրս հանած մօղան սա է,
Հաշիւներին մօիկ է տամ, իմանումէ պարտքն դա է,
Կայքն յանձնումէ այլըց, որ իւր վերջի օրուան պահէ,
Նատարիուսով էլ հաստատումէ, որ իմանան արդար Հայ է,
Այն օրուանից պարտատէրը ի՞նչ պէտքէ անէ նրա հետ:

Տեսնումես մին քանիսն էլ պարտական են իրանց կնոջ,
 Գառայքն ու աղախնայքն պատկանումեն իր տան արկնոջ,
 Որ ուզենան անհայ, անջուր տանից կ'հանեն տան արկոջ,
 Ետի համար մահն լաւ է, քան թէ այսպէս մնալ առողջ,
 Որ ակամայ չարչարվումէ դժբաղդարար չար կեանքի հետ:

Քաղաքս այսպէս փչացաւ, էլ մի ուրիշ ճար չմնաց,
 Ամենի հետ սէրն քանդուեց, հաւատ, յոյսը կորաւ, զնաց,
 Թէ սյսպէս երկար աւել, ողջ կ'մնան մերի, զլխաբաց,
 Այժմս էլ շատերը դայ շաբաթներով անջուր, անհայ,
 Դրացի'ս, ի՞նչ ես լուել, փոքր էլ դու խօսի ինձ հետ:

Դրացիս մունջացել է, ինչ է, դիւի արդար եմ ասում,
 Տորոնչոցը այսուհետեւ հողին հաւասար եմ ասում,
 Ինձ էլ միջեցը չեմ հանում, նրանց բարեբար եմ ասում,
 Արձախորէն խօսող մարդին հէնց ես միշտ ճարտար եմ ասում,
 Թէև վրաս էլ ծիծաղեն, խօսքս ես չեմ դարձնիլ յետ:

Տորոնն շատ լաւ ասրանք է, բայց քեզ ասեմ ի՞նչէ մեղը
 Տես'ս թէ որքան օձ է դուրս դամ զանաները փորում տեղը,
 Սարսափանքով հալիցնումէ բանւորների սրտի եղը,
 Ել ի՞նչ օղուտ ենք սպասում այսպէս փորձանքն էլա՞ծ տեղը,
 Օձն էլ զխոնք թշնամի է մեր նախահայր Աղամի հետ:

Տորոնն թէ մեզ խէր տար, չէր պահպանիլ մեր թշնամին,
 Սամե լից*) վատ է փչել մարդկան ազգին սա իւր քամին,
 Տեսնումնք որ չեն ճանաչում բարեկամը բարեկամին,
 Ահա՛ քեզ հաշիւները Տորոնչիների Աղամին,
 Հարկաւոր է այժմս մեզի քչէ՛, տանէ՛ մին վարար դետ:

Տորնի վերայ խօսողներից դու էիր պակաս, Ղարեմ-Տղայ,
 Խօսքումդ էլ սխալ չ'կայ, որ փոշմանես, ասես «Եղայ»:

*) Հարաւային բամբ:

Ի՞նչ է, դիւի արդար ես ասել, ով լսէ, կ'ասէ սարսաղ ա,
 Բայց դու մուացել ես ասել, թէ տորոնն ինչի դեղ ա,
 Եթէ ներկես քաւթաւներին, փոխար կ'ընկնեն մէյմունի հետ:

64.

Ղարիբ Մշեցի.

Ես Մշեցի ճամբորդ եմ հեռու տեղերէն,
 Ձեզ շատ բարե բերեր եմ Հայի գեղերէն,
 Ախպէրքըս ինձ զբրկեցին դէպի էս կուման,
 (Մի՛ վախճաք, չուզեմ ձեր մանթն ու թուման)
 Վարագայ սուրբ խոչէն բերեր եմ ձեզ լուր,
 Խըղճացէ՛ք Հայ ազգիս, տուէ՛ք մէկ մէկ Լուր:

Հայ ազգը մեր տեղը նեղ օր կը քաշէ,
 Օսմանլին ու Ֆիւրդը կեանքերս կը մաշէ,
 Օր կըլայ՝ գերեվար կանէ մեր տըղոց,
 Օր կըլայ՝ արտերըս ձըգէ կրակ ու բոց,
 Թէ չ'օգնէք՝ մենք ալ շուտ կըլանք ցիր ու ցան,
 Խըղճացէ՛ք Հայ ազգիս, տուէ՛ք մեզ հրացան:

Սուրբ ժամերս դարձուցին, անասնոց կայանք,
 Խորաններս պղղծեցին, քանդեցին սուրբ վանք,
 Խաչը ոտքով փշոցեցին, տեղը դրին լուսնակ,
 Խեղճ Հայը օրն 'ի բուն ծաղը է ու ծանակ,
 Ո՛վ եղբարք, բերեր եմ ձեզ այսպէս սե բօթ,—
 Չուզնիք մենք ձեր ոսկին, տուէ՛ք մեզ վասօք:

Այսքան շատ տանջանքին ի՞նչպէս զիմանանք,
 Մինչև ե՞րբ ձեր դիաց անօղ պիտ մընանք,
 Մեր ազգը տէր չունի Ալափունի նման,
 Բարի դուք ըլայիք մեզը օգնական,

Հողինները արորած է, ջաները ցաւոտ,
Զուգենք մենք ձեր փարան, տուէ՛ք ընդամենը:

Շատ տառապանք քաշեցինք դուշմանի զէնքէն,
Շատ ալ մահ դուշմանը կերաւ մեր ձեռքէն,
Առանց ատոր աշխարհքը մեր չէր բազմամարդ,
Հիմի փուշ կրբընի, ուր առաջ էր վարդ,
Բայց մենք ձեր սունդուկի փողին կարօտ չենք,
Հա՛յ աղբարք՝ շնորհեցէ՛ք դուք մեզ մէկ մէկ զէնքէն:
„Փոք”՝ Ա. Տ. Ձ 3. Գամար: Բախիպատ.

65.

Մի գիծ Պօէտի կեանքից.

(Հատուած «Բարբուռիի Տուփից».)

Երևանեան ոգեսպառ.
Անդու թ շոքին դէմ զրած,
Մեր Պօէտը կրկին գրեւ
Շարունակումէ վառված...
Ամռան կիզուն պատկերի պէս
Վառ է նորա սիրտ, հոգին,
Տարու թիւնից զաղափարը
Եռ է զալիս թնդագին:
Զով Յունիսեան աստղոտ երկինք
Պարզեւումէ նոր աշխոյժ,
Եւ ցերեկեան տապից յետոյ
Զօրանումէ նորա ոյժ:
Մեծ տեփրաչափ կէռ լուսինը
Գոհարի պէս է շողում,—
Տալով լեզու նորանց ողջին,
Ինչ կան օղում և հողում:

Եւ այս ձեռով վառ Պօէտը
Արագ շարժումէ զրիչ,
Նորա ոգում իւր գրածը
Յից մնումէ պինդ, անջինջ:
Այս միջոցում տիեզերքը
Արպէս մի իր գննութեան,
Կանգնած նորա հայեացքի տակ
Ննթարկվումէ զմայլման:
Մինը միսին յետքից կարգով
Ընթանումէ նորածին,
Արպէս էակ, պատկերները
Լոյս զգեցիկ երկնածին:
Շա ապշեցած ուշքէ՛ դնում
Երևանեան խիտ շոքին,—
Բայց թէ ահա՛ կանգ առաւ նա
Հատաչանքով ծանրաղին...

Թուղթը հատաւ: Խեղճը չունէ
Մի հատ Գրչը զրգանում,
Եւ սորանով ողորմելին
Դադարումէ, կապանվում:

Բախիպատ

66.

Բահրի (Թաւիլ *),

Եկաւ, եհաս, եբեր ահա՛ լուր ցնծութեան զեփիւռն ու
քախ խիտ շտապով. դարնան վարդին և նուսուֆար, մեխակ,
շուշան թէ համասարամ՝ ծաղանց է ժամ բացելուն.
Կարգով եկան՝ դեղին ու ալ, կարմիր, սպիտակ, մեծ ու փոք-
րիկ, անուշահոտ, բիւր պճրանքով նուրբ թուխներ բացած,
պարզած մէջ պարտիզաց ՚ի դէմ մեղմիկ հովերուն.
Վարդի վերայ իբրև շքեղ զարդ դարդարուն, զեփիւռն հան-
դարտ ցօղի կաթեր մին մին ժողված՝ շարեց, պատեց, իւր հո-
վաբեր մեղմիկ հնչմամբ աւետեց նա դաշտերուն.
Բուսեց, կախուեց, ծաղկեց այգիք. դաշտեր, պարտեղք, դարձաւ
եղեմ՝ ամենայն տեղ, կարկաչք թռչնոց բիւր ձևերով անուշ
ու խիտ անուշիկ նուիրեցին ծառերուն.
Դէ՛ վեր, դէ՛ բեր կարմիր զինի, լից տուր և ա՛ռ ՚ի սեր վարին,
խմենք քեզ հետ, ուրախ լինենք, դարնան արժան հիւսնեք,
չարենք և մենք երգեր ՚ի խնդու թիւն ամենուն.
Թէ՛ ան ու աչք, թէ՛ քիթ, բերան, թէ՛ ոտ, թէ՛ ձեռք, սիրտ
ու հոգի, ջիղ ու արիւն, մարմին ու մորթ, լեզու կոկորդ, մազ
*) Բ ա հ Ր ի Թ ա Վ ի Լ . կնշանակէ երկայն ոտանաւոր: Սրա օրինակը
գտնւումէ Պարսից եւ Արաբացոց մէջ, իսկ Հայք չեն ունեցել այս չափի
ստանաւոր: Նեազմի:

ու միրուք, ահանջ, մատուներ թո՛ղ միանան յայդ սիրուն.
Թորհորդ կազմենք, սիրով կապուենք, այստեղ երդուենք, ես
քեզ, դու ինձ, բոլորն մեզ, մենք ամենուն, պատերազմում,
տան մէջ, դուրսը պատուենք միմեանց թէ քնած ժամին կամ
արթուն.

Կենդանեաց, հանգուցելոց, նահատակաց, կաղ ու հիւանդ և
անկելոց կեանք, հանգիստ, առողջութիւն, պտղոց, բուսոց ա-
ռատութիւն մաղթենք և մեզ անուշիկ քուն:

Նեաղք:

67.

Ունայնութիւն.

Եթէ լինիս մեծ շահանշահ՝ Եթէ ամեն օր ժամ գնաս՝
Կայսերական ունենաս գահ՝ Ինչ որ ունիս աղքատաց տաս՝
Որովհետեւ վերջդ է մահ՝ Սշտապէս ծով լինիս և պաս՝
Խնացի՛ր, ունայն ես, ունայն Խնացի՛ր, ունայն ես, ունայն:

Եթէ ունենաս գանձ անհուն՝ Մերձ լեր միշտ բարեգործութեան
Լինիս հզօր և զերաղուն՝ Նա է անջնջելի արձան՝
Մի՛ յուսալ արծաթին, ոսկուն՝ Թէ հազար ամ լինիս կենդան՝
Խնացի՛ր ունայն ես, ունայն: Խնացի՛ր ունայն ես, ունայն:

Սէ՛յեաք, անթիւ փիլիսոփայք՝
Թէ՛ Ատրիք, թէ՛ Յոյնք, թէ՛ Հայք՝
Են խօսքերիդ հաստաա վիայք՝
Խնացի՛ր, ունայն ես, ունայն:

68.

Թէջնիս.

Ես եմ աշխարհումն անպիտան, յիմար,
Չուն որ ճշմարտութիւն չունիմ իմ ձեռիս,
Ընկամ էս օրիս.

Ի՛նչպէս խոստովանեմ, ես առս ասեմ,
Չունիմ մի քրիստոնեայ հասնի հառայիս,
Նստի իմ վայիս:

Վ ա՛յ ինձ, աշխարհումն մնացիմ յիմար,
Աստուծոյ սրատուիրանքից ես եմ բէխաբար,
Ես ի՛նչպէս գանեմ մի գուզ ճանապարհ,
Պատահելով աատ չի գայիս աքիս,
Կորաւ իմ հողիս:

Հողիս կորաւ, մարմինս ինչե՞ տէր ա,
Այլ մարդոյ վրեն աւելի բեռ ա,
Խոնարհ-Նա-ն չունքի միշտ էլ անաւր ա,
Խնդրեմ, Աստուած, առնես իմ հողիս,
Չուն որ ես եմ փիլիս:

69.

Եղբա՛րք, ուժից ընկած պողպարով
Ել աւելի չեմ կարող խմել,
Կարելի է, որ մեռնեմ շուտով,
Ու գուժեմ շուտով կտախ ձեզ յայտնել:

Ինձ այն զինեաանք թաղեցէք,
Որ շատ անգամ ես հարբել եմ,
Գերեզմանս այնպէս փորեցէք,
Որ տակառի տակին պառկեմ:

Ունեքս պատի կողմն ուղղած,
Բերանս լինի լուլի տակ,
Երիւ ձեռնով ունենամ բունած,
Ահազին զինով լի բաժակ:

Թաղման հանդէսս մի՛ կատարէք
Պատարագով, զանդակներով,

Դիակիս վերայ զինի թափեցէք
Բաժակները չորրկակացնելով:

Գերեզմանիս վերայ քար չ'դնէք,
Տակառն արձան է ինձ արժան,
Կպրով միայն չորս խօսք զրեցէք՝
«Հարբեցող է սա պապան»:

Գերեզմանիս տեսութիւն զալով
Շուտ շուտ ինչպէս լաւ բնկերներ,
Իմ խեղճ հոգուն ողորմի սալով,
Կոնծեցէք լեք լեք բաժակներ:

Բայց գեռ քանի հոգիս բերանուան է,
Տուէք, եղբարք, ինձ մի շեշ զինի,
Ամօթ է, որ մահու հրեշտակը
Գայ և ինձ հարբած չ'զանի:

Թարգմ. Գերբ. Գ. Բարխուդարեանց.

70.

Երեք ազգ թշնամիք սպանել են ինձի,
Առիւծի պէս սաղ սաղ կլանել են ինձի,
Հողոյ ճանապարհից զիւր հանել են ինձի,
Ամենայն կերպ մեղաց ժամանել են ինձի,
Բարեգործութիւնից թալանել են ինձի:

Մէկն է սապանան՝ իւր զանազան փորձով,
Մէկն էլ աշխարհս՝ իւր սնտոյի վարձով,
Մէկն էլ ճարձիւն՝ իւր մեղաւոր գործով,
Քաղցրահամ կերակրով, գեղեցիկ հանգերձով
Փշաբեր երկրում սերմանել են ինձի:

Սատանան ասում ա՛ն աչքերդ լա՛ւ բացիր,
Աշխարհիս երեսին լաւ, փառաւոր կացիր,
Ինքդ քեզ ամենից զերազանց իմացիր,
Ընկերօջի հետ սէր երբէք մի՛ ունացիր.
Պատուիրանից խապաւ խափանել են ինձի:

Աշխարհն ասում ա՛ն ուրախութիւնս շատ ա,
Վայելչո՛ւ թեան բաներս բարաթ բարաթ ա,
Ինչ տեղ ուզես, քեզ համար սաղ ու սովբաթ ա,
Կե՛ր, խմի՛ր, քէ՛ջ արա, էղուրն աղաթ ա.
Յանցանաց մէջումն թաւալել են ինձի:

Մարմինս էլ կ'ասի՝ ինձ էլ մեխթարիր,
Սրտիս ցանկութիւնն լիովին կատարիր,
Համեղ կերակրի՛ր, զեղեցիկ զարդարի՛ր,
Խրախճանաց մէջումն ուրախ կացիր, պարի՛ր.
Ձանազան մեղքեր էլ սահմանել են ինձի:

Հոգիս սրանց մէջին մնացել ա խեղճը,
Մտիկ տալուց իրան, գալիս ա իւր գեղջը.
Ուզումայ որ թողնի էս բաներն ողջը,
Թէք ազատվի սրանց ձեռքիցն առողջը,
Առժամանակ հալա պահպանել են ինձի:

Սայեադ-Օղլիս հոգւովն եկել ա դատի,
Աստուածածնին զիշեր, ցերեկ կ'զանդատի,
Թէ բարխոսութեամբ փոքր ինչ աշխատի,
Յոյս ունեմ անկարծիք մեղքիցս ազատի,
Ըստ որում որդեղիր անուանել են ինձի:

71.

Եղբարք, տեսէ՛ք ի՞նչ է մարդուս վիճակն էօ աշխարհում,
Մէկն քնած, մէկն զարթուն, մէկն կայնած բան կանի,
Աստուած մարդկանցս կարգել ա զանազան աստիճանում,
Մէկին շատայ, միւսին պէր, մէկին պարտեղան կանի:

Մէկն ճնել ա 'ի մօրէ իշխանութեան փառքումն,
Իսկ սնել ա, զարդացել ա անասնական կեանքումն,
Այժմ 'ի միջն բազմն թեանց ժողովից կարգումն
Կարողութեամբ կու բարբառի, հարց ու պատասխան կանխ:

Մէկն թէև կայ 'ի միջն խղճալի աստիճանի,
Կու ցանկանայ իւր արարքն առաքինեաց նմանի,
Իւր տարաբախտ սև օրերն խոհեմութեամբ կու տանի,
Գոհանակ լինի Արարչէն, Աստուած փառաբան կանխ:

Մէկն զործով զբաղեալ է փաճառական շահումն,
Մէկն աքնի 'ի մէջ կենաց դատաստանի ահումն,
Մէկն սգայ անմխիթար իւր սիրելոյ մահումն,
Մէկն հանդերձ բարեկամօք ուրախ խրախճան կանխ:

Սայեաբ-Օղլի, լա'ւ ճանաչիր այս սնտոի բաներն,
Մի' պակասցուր քո Արարչէն քո յոյս, հաւատ և սէրն,
Լա'ւ զխոացիր, որ ամենն հարցանելոց է Տէրն,
Երբ որ փառաց աթոռ բազմեալ արկար դատաստան կանխ:

72.

Որբ մանուկ.

«Вечеръ былъ, сверкали звѣзды» կրգի եղանակով.

Երեկոյ էր, աստղ էր փայլում,
Գուրբը ցուրտ էր և սառոյց,
Փողոցի մէջ զնու մեր մանուկ,
Ողջ կապուտած գողումեր:

Ո՛վ Աստուած, մանուկն ասումէ,
Սառել եմ և քաղցած եմ,

Աստուած իմ, ո՞վ կտաքացնէ,
Կը կերակրէ ինձ որբիս:

Անցնումէր պառաւ կին այնտեղ,
Եւ որբի ձայն նա լսեց,
Տարաւ իւր տուն և տաքացրեց,
Եւ հաց տուեց ուտելու:

Եւ պառկեցրեց անկողնի մէջ,
«Ի՛նչպէս տաք է» նա ասաց,
Ծածկեց աչքեր, սերուն ժպտաց,
Եւ քնեց նա հանդիստ քուն:

Աստուած խնամումէ թռչնեկին,
Եւ յօղումէ նա ծաղկին,
Անապատան որբ մանուկին
Ձի թողնի նոյնպէս Աստուած:

Իշխան Բագրատունի:

73.

Ա՛խ ուսո՛ւմ, ուսո՛ւմ*).

Երբ պատուհանի առաջին նստած,
Տեսնումեմ շատ շատ օրիորդք խմբով
Ուրախ սրտերով զրքերն առած

*) Վստահանումեմ յայտնելու մեծ. օրիորդ Նունէ Եղորեանցին իմ սրտի անկեղծ շնորհակալութիւնն, որ նա այդպէս սիրով մշակումէ Հայկական լեզուն իրա մտաւորական համեստ պաշարով: Երանի՛ թէ Բագուի իրան լուսաւորված համարած եւ քինձը դէվեր բարձրացրած Հայ գեղեցիկ սեռը զոնէ մեծ. օրիորդ Եղորեանցի չափ աշխատէր Հայ դրականութեան մէջ, եւ չզարմացնէր մեզ իրա սովորական bonjourներով, pardonներով, guten

Գնումեն ուսման սիրոյ եռանդով,
Քանի՛ հառաչանք իմ տխուր սրտից
Ա՛խ, դուրս են վազում իրար ետևից:

Երբ լսումեմ որ իմ ընկերներէջ
Շատերն արգէն ուսման շրջանը
Վերջացրել են ուսումնարանից,
Եւ ստացել են ուսման պարգևը,
Ի՛նչ մտածական խորհուրդներ պիտոյէս
Լցվումեն սիրաս, մաշում գառնապէս:

Ինչո՞ւ, ո՛վ Աստուած, ինձ թողիր որբիկ,
Որ ես զբրկվելով քաղցր ուսումից,
Դառնամ ազգի մէջ, ա՛խ, մի թշուառիկ՝
Գանգատ կրելու մանուկ ամբոխից.
Ուրեմն, Տէր իմ և Փրկիչ Յիսուս,
Տո՛ւր միայն քո շնորհ և՛ համբեր, և՛ յոյս:

Օրերդ Ես-նէ Ես-դ-բէ-անց:

74.

Հանգուցեալ Աղան.

I.

Երբ որ մեր Աղան ապրում էր ուրախ,
Եւ չունէր պատճառ հառաչելու յո՞րս,^u

morgen! leben Sie wohl! Քրազներով եւ այլ այսպիսի մերենայական մոզմի
անակրօնիզմներով. այլ թողէր նոցա, եւ նոցա տեղ գործ դնէր, գոնէ
ընտանեկան շրջանի մէջ, իրա մայրենի լեզուն, իրա պապերից մնացած Հայ
բարբառը.....

Ա. Գրիգորեանց:

Ամենայն բարի գործ նորա համար
Զո՛ւր և ո՛չինչ էր, — նա միշտ անդադար
Ծաղրով ասում էր՝
«Ողջ դատարի Բա՛ն է»:

II.

Չբքաւորը թո՛ղ հաշուէր կօպէկը,
Թո՛ղ դառն վաստակէր նա իւր վաստակը...
Բայց արծաթի հողս այդ Աղան չունէր,
Միայն իւր վերայ գլուխը ողջ լինէր. —
Նա միշտ կրկնում էր՝
«Ողջ դատարի Բա՛ն է»:

III.

Փառք գտանել թո՛ղ հողար քաջ մարդը,
Ազնիւ լինէին թո՛ղ բարեգործները
Բարի գործելով, — բայց մեր մեծ Աղան
Չէր սիրում պտանալ փառք բարոյական,
Պատճառ, ասում էր՝
«Ողջ դատարի Բա՛ն է»:

IV.

Թո՛ղ գրքերի հետ ուսումնականը
Միշտ պարապելով մաշէր իւր կեանքը...
Կարդալ, մրտածել Աղան չը կամէր,
Միայն իւր տեղում գլուխը ողջ լինէր,
Պատճառ, ասում էր՝
«Ողջ դատարի Բա՛ն է»:

V.

Թո՛ղ ազգասէրը իւր ազգի համար
Գիշեր ու ցերեկ որոնէր մի ճար, —

Թո՛ղ ազգի համար նա միշտ չարչարվէր,
 Բայց Աղան այդ բան խենթ համարու՛մ էր
 Ասելով այսպէս՝
 «Ողջ Կարաբէջ Բա՛ն է» :

VI.

Այժմ՝ ձեզ պատմում կեանքը Աղայի,
 Դա ունէր քարեայ տուն երեք յարկի,
 Վերնայարկերը գեղեցիկ զերքով՝
 Շողշողում էին ծագկաներկարով.
 Վանդակապատ էր բակը չորս կողմից,
 Դրաները շքեղ հիւսած երկաթից,
 Ողջ քարայտտակ բակը արձա՛կ, լա՛յն,
 Նորա մէջ տեղում զարկող շատրուան.
 Բոլոր սենեակներ զուգած, փառահեղ,
 Եւ վարդոյրներ կախ դռներին տեղ:
 Եւ զիշեր, ցերեկ միշտ այցելութիւն
 Առնում էր նորան մի մեծ բազմութիւն...
 Նրան պաշտում էին որպէս մի աստուած,
 Իրաւացիելով նորա բոլոր ասած...:
 Բազմութիւ ծառայք նորա սենեկում
 Պատրաստի էին, — կամքին սպասում, —
 Մինը նորանցից ընդունում էր հիւր,
 Միւսը Աղային շուտ բերում էր լուր. —
 Իսկ խոհարարներ ամեն օր անգամ
 Պատրաստում էին ճաշեր քաղցրահամ...:

VII.

Աինը Աղայի նայում էր զմայլված,
 Չորս կողմը արծաթ և ոսկի սիւսած...
 Իւր բազրի վերայ երբեմն ժպտում էր,
 Պատճառ, աշխարհում փառքով ասպրում էր:
 Երբեմն սորան, երբեմն նորան

Արհամարհում էր կերպով ծաղաղան,
 «Ո՛վ է» ասելով...
 Նա միշտ հագնում էր մախմուր, ծիրանի,
 Տեսնողը տալիս էր նորան երանի,
 Աղախինները նորա շուրջ պատած՝
 Ծառայում էին նորան սարսափած...
 Նստեցնելով կրօններից բրնձած
 Շրքեղ կառքի մէջ չորս ձիով լրծած,
 Իսկ ձիաները ահեղ, գերապանծ,
 Կարծես առիւծներ սանձի տակ զրրած,
 Իբրև թեւաօր դռքա վիշապներ,
 Թռցնում էին օայլը վեր ՚ի վեր:
 Այսպէս տիկինը փառաւորապէս
 Գլնում էր յաճախ զիշերահանդէս,
 Ուր ընդունվում էր պատուով զէպի վեր,
 Իւր վերայ դրաւելով ամենայն աչքեր...
 Այնտեղ լըռութիւն թագաւորում էր.
 Մանաւանդ երբ նա ինքը խօսում չէր. —
 Իսկ երբեմն նա, որպէս հանդիսում,
 Կեղծաւորութեամբ տաղաուկ էր յայտնում,
 Կանանց ժողովում չէ՛ր սիրում նրստել,
 Նա և՛ նոցա հետ խօսակից լինել,
 Կարծում էր անուան այդ ստորութիւն,
 Իւր հարստութեան մեծ անարգութիւն. —
 Սիրում էր ժողով արդամարդերի,
 Խօսք ու զրոյց առնել սիրոյ վէպերի,
 Այլ և՛ նոցա հետ խաղալ պրօֆէրանս՝
 Կամ լըսօ, բօնօթիլ, կամ պիլօլայ բանս...:

VIII.

Եւ նորա այրը — պատուելի Աղան՝
 Իւր այս վիճակով դեռ չէ՛ր բաւական,

Ուրիշ շատ բաներ ունէր իւր սրտում,
 Մեծ մեծ փառքերի էր նա սպասում...
 Կը ցանկար լինել մեծ կալուածատէր,
 Այլ և ստանալ բարձր աստիճաններ.
 Ամենայն միջոց նա գործ էր դընում
 Բարձրութեան հասնել, փող չէր խնայում...
 Նա միշտ պատրաստ էր շահել օտարին,
 Քան արինակից իւր խղճուկ չային,—
 Ազգոգուտ գործին նա ձեռք չըմեկնեց,
 Եւ օգնելու տեղ նորան խափանեց...
 Բայց իւր ճոխութիւն ստացաւ Հայերով...
 Նոցա վրայ գլխի պաշտօն վարելով,—
 Երբ ընտրվում էր այդ կերպ պաշտօնում,
 Այլ հընար չըկար... այլ չէր ելանում...
 Ինքեան հըպատակ գործակից մարդեր
 Կարգում էր, խաղում իւր շահուն զերեր...
 Հըպարտ ու գոռոզ ներում չէր նորան՝
 Ով իւր պատուի դէմ կըխօսէր մի բան...
 Կամեցած կ'լինէր յաւիտեան ապրել,
 Եւ աշխարհի մէջ միշտ փառք վայելել...
 — Ես չեմ կամենում սագերը զրգոել,
 Բայց ճշմարտութիւն սիրել եմ յարգել,
 Հա՛րկ կայ իմ վերայ զրչով կամ խօսքով,
 Ինչ որ ըզգումեմ ասել պարզ սրտով.
 Ներեցէք ուրեմն խեղճ Հայ Պոյէտին,
 Որ կամի միայն օգուան իւր ազգին...:

IX.

Տեսանէ՛ք Աղան ի՞նչ կերպ վաստակեց.
 Արծաթ ու ոսկի լեռնաչափ զիգեց...
 Արդեօք Աստուծոյ դրած օրէնքո՞վ)

Արդար, անարատ իւր աշխատանքով.
 Ո՛չ... Այլ անօրէն գործքով զարշելե,
 Խաբում էր մարդիկ վասն իւր օգտի.
 Նա մըշակների վարձը կըտրում էր,
 Չըքաւորների ցաւին անխոյժ էր.
 Նա խարդախութեամբ հաշիւների մէջ
 Ծածկում էր գումար, բանալով սուտ վէճ,
 Կամ հոգարարձու լինելով որբերի՝
 Յուցանում էր նա քառորդ գոյքերի,—
 Կամ բըռնութենով, արծաթի ուժով
 Խլում էր կալուածք խեղճ այրիների:
 Եւ իւր գործքի մէջ ներհակողներին
 Ահ էր տալիս նա փնասից սաստիկազին,—
 Փակում էր ոսկով ազատ բերանքը,
 Յետոյ կատարում իւր սրտի կամքը...
 Դէպի դատաստան մինին ակնարկում,
 Միւսին դէպի բանդ անխնայ քարշում,—
 Եւ մի ուրիշին մահ պատրաստելով,
 Դէպի գերեզման զըկում էր շուտով...
 Դեռ արդար էին Աղայի գործքը—
 »Նա կատարում է Աստուծոյ օրէնքը՝—
 Ասում էին նորա չար կուսակիցքը,
 Եւ հարստութեան երկրպագուքը,—
 Որ ընդունում էր զոցա ժողովում
 Եւ նախողջոյնը և նախաթուր...
 Նորա դէմ ո՛չ որ չէր վատահանում
 Բերանից հանել զէ՛թ մի խօսք դառը:

X.

Բայց ահա՛ մի օր Աղայի համար
 Այնտեղ միւս կողմում պատել էր խաւար...:

Ջո՛ւր էր և զո՛ւր ջանք Ազան յանձն առել,
 Իւր զիղած գանձով ուրախ կեանք վարել...
 Աշխարհի վերայ զընելով յոյսը,
 Որ յառաջ տանէ միշտ իւր չար կամքը...
 Պիտոյ էր նորան վերջապէս կեանքին,
 Եւ նորա բոլոր պատուին ու փառքին
 Բարեա՛ւ ննա առել, հաշիւն աւարտել,
 Յառաջ զիմելով մի աշխարհ մըթին, —
 Ուր մնայլապատ վարագործի տակ
 Պատրաստ էր մի խոր վիրապ անյատակ...
 Պիտոյ էր Ազան նոյն տեղին հասած՝
 Նորա մէջ խեղոյն զլորուէր խոր ցած...
 Ուր պիտի կլանէր ծեր կռնոսը
 Եւ նորա կեանքը, — որպէս կլանումէ
 Աշխարհի բոլոր ծնված սեռերը...

XI.

Եկաւ այն օրը... և անհետացաւ...
 Նորա հետ ևս Ազան չըքացաւ...
 Չըքացան բոլոր նորա գանձ ու գոյք,
 Միւսերին հասան տուն և տան դահոյք...
 Նորա գերտաստան ամեն անդամներ
 Առատ, անհաշիւ ծախսեցին գուժութիւններ...
 Միշտ օր ու զիշեր ածնախմբոթին,
 Տիրել էր նրա տան մեծ շոյլութիւն...
 Մոլը որդիքը ցեց դարձան տան մէջ,
 Արծաթի մասին բացին կռիւ, վէճ...
 Ստացան ամենքը առանձին բաժին,
 Մի քանի տարում և այն վատնեցին...
 Եւ այնուհետև այդ պատանիքը
 Զգոցին դառնապէս կեանքի կարիքը...

Այո՛, զժուար է վաստակել չո՛ւսած
 Մարդը զըտանէ իւր օրական հաց:
 Նոքա և ապա իւրեանց օրկորը
 Լցուցանումէին միւսերի դրանը...
 Եւ նոցա մայրը — փափկասուն այրին
 Երանում էր միշտ անցած օրերին...
 Նորա վիճակը դառն էր քան [Թէ [Թոյն)
 Յրբ կորուսել էր իւր հարստութիւն...
 Գուցէ նա յայնժամ մուրանում էր հաց
 Բայց ի՛նչ հարկ կայ ինձ այս տեղ առել բաց...
 Աշխարհիս օրէնքն այսպէս է կարգած,
 Պիտը բարձրանում, միւսն ընկնումէ ցած...
 Պիտը ինչ բան այսօր մարդ սերմանում է,
 Վերջապէս անշուշտ և այն հընձումէ...»

XII.

— Ինչո՞ւ դատում ես այդպէս հակառակ,
 Պիթէ իւր կեանքից մի կերպ յիշատակ
 Ազան չըթողեց: — Միթէ չըհնձեց
 Նա ժ՛նչ ինչ բաժին իւր հարուստ գանձից: —
 Միթէ և այնչափ անարժան էր նա,
 Որ լաց, արտասուք չե՛ղան նորա վերայ...
 Ոչ ոք ցաւելով և ուղարկաւ որ
 Չե՛ղաւ մեռածին մեծ աշխատաւոր...»
 Այսպէս, ընթերցող, հարցանելու ես,
 Հաշիւ պահանջել այո՛ կարող ես...
 Ահա՛ իմ արդար և պարզ պատասխան.
 — Յիրա՛ւի, անմասն չմնաց մեր Ազան...
 Ստացաւ շատ յարգանք և իւր մահից յետ,
 Պատուել վարթամին աշխարհը չէ՛ արդէս,
 Դեռ նոր էր Ազան տանջող ցաւերից

Հանգչել, և յաւերժ աչքերը փակել՝
 Որ եկեղեցեաց աշտարակներից
 Յորդոր զանգակներ սկսեցին հընչել...
 Սա էր մեր կողմում կարգից դուրս մի բան,
 Հարուստ մեռելի պատուելու նշան,—
 Որին հասարակ կարգի մեռելներ՝
 Համարվում էին իբրու անարժան...
 Եւ նոյն բուպէին Աղայի ամբողջ տուն
 Սաստիկ լացերով հանեց զըղըղին...
 Տան սենեակների բոլոր զարդերին
 Ծածկեց սև լաթեր, — սև հագաւ նրա կին...
 Նա իւր մեռելին թանգ զգեստներով
 Զուղեց, զարդարեց փառահեղ կերպով... —
 Նորա դագաղը անչափ պրճնագարդ
 Պատեց ոսկեթել մախմուր դիպայով —
 Ապա Աղայի անշնչացած զին՝
 Նոյն այն դագաղի մէջը հանգուցին, —
 Եւ նորա շուրջը վառեցին կերտներ,
 Նորա մարմնի վրայ փռեցին ծաղիկներ...
 Ուր շուտով գործեց իւր այցելութիւն
 Հոգևոր դասու միաբանութիւն...
 Եւ ուր քանի որ անհատ շարունակ՝
 Ելելէջ արեց անթիւ բազմութիւն:
 Երբ դագաղակիր սայլն յառաջ տարին,
 Որի վերայ կար ճոխ ամպ հովանին,
 Երգեց մուգիկան ողբաձայն նուազ...
 Մեռելը հանվեցաւ դէպի բակ արձակ,
 Եւ սայլին լծված երեք գոյգ նժոյզներ
 Թխաղղեստ հագուած, և կառապաններ՝
 Յառաջ շարժվեցան, — շարժեցին և սայլ,
 Գէպ եկեղեցին զնալով համրաքայլ: —

Բայց կինն Աղայի — սրգաւոր այրին
 Հարուստ մարդերի յեցուած կրտներին,
 Գագաղի հեռքից զնումէր քարշ գալով,
 Հերարձակ զլլսի մագերը փետտելով: —
 Եւ ճանապարհին հոգևոր դասը՝
 Կատարում էր իւր հարկից դուրս մասը...
 Փողոցների մէջ տեղ տեղ կանգ առած՝
 Ուղղում էր միշտ ջերմ մաղթանք առ Աստուած...
 Մինչ երբ տաճարի դռանը մօտեցան,
 Գագաղը սայլից իջուցին, տարան, —
 Եւ եկեղեցում շքով բազմացրին...
 Շոյտ աշտանակներ չորս կողմ շարեցին:
 Վառվեցան բոլոր կանթեղ ու ջահեր,
 Եւ ժողովրդեան բաժնեցին մոմեր...
 Ուր պատարագեց ջերմեռանդաբար
 Յաջորդ արեղան Աղայի համար...
 Ապա կատարվեց կարգը մեռելի
 Մեղմ, հանդիսաւոր ու պատկառելի...
 Կարդացին ճառեր, և շատ դուռատներ...
 Մեր ուսումնական երիտասարդներ, —
 Անգամ Բաբբունին խօսեց երկար բան,
 Տալով իւր խօսքին ազդու բնաբան...:
 Եւ այնպէս ամենքը յայտնի, վճռաբար
 Գովեցին Ազան անխղճմտաբար, —
 Մինչ արքայութեան ժառանգ կոչեցին,
 Արդար, անարատ հոգի երկնային...:
 Եւ երբ վերջացաւ կարգի այս հանդէս,
 Հանեցին մեռելը դուրս և վերջապէս
 Յորդոր զանգերի ձայներ տխրալից
 Ընդհատ հնչվելով լավեցան նորից... —

Նորից նոյն սայլը ամայ—հովանաւոր՝
 Հանդուցեալն առեց իւր մէջ փառաւոր...
 Եւ մինչ տանում էր նորան գերեզման,
 Ուր պիտի հանդէր Աղան յաւիտեան,
 Ահա՛ մի մեծ խումբ փարթամ մարդերի
 Գնումէր հետքից,— և ցաւակցական
 Թափում էր խօսքեր մեռելի համար...
 Այդ նոքա էին, որ շատ տարիներ
 Կեանք էին վարել նորա հետ յարմար...
 — Գարձեալ և մի խումբ այն միւս կողմով
 Գնում էր արևուր Աղան գովելով...
 Սոքա ևս էին այն մարդիկներից՝
 Որոնք յոյս ունին շահուիլ հարստից...
 — Այլ ևս մի խումբ սև զգեստներով
 Նաշի առաջև շարժվում էր կարգով,—
 Խնկով, բուրվառով մեռելին մեծ շուք
 Զերմ ընծայում էր հոգու ալելուք...
 — Գարձեալ մի այլ խումբ հերթով հետևակ՝
 Երգում էր ուժեղ իւր տխուր նուազ...
 Մինչև ՚ի շիրիմ այս փառքի հանդէս
 Ստացաւ մեռելը իւր մասը ճոխապէս...
 — Բայց յետո՛յ, — յետո՛յ՝ անցաւ ամենայն,
 Աղային մընաց հող ու գերեզման...
 — Այլ ևս ոչինչ... Այո՛ մի այլ բան—
 Մի մարմարիօնեայ փառաւոր արձան,—
 Որ այսօր ևս մի լոկ յիշատակ՝
 Յրցուած է այնտեղ արևուր ու մենակ,—
 Ոսկի տառերով փորուած անունը,
 Այլ և անցուցած կեանքի տարիքը,—
 Այլ ևս ո՛չինչ

XIII.

— Ուրեմն ննջե՞ց քնով յաւիտեան,
 Աղան չըստացա՞ւ ո՛չինչ դատաստան...
 — Բայց ո՛չ, — ո՛չ մի մարդ առանց դատելու
 Ըստ իւր գործերի երբէք չէ՛ մնալու,—
 Պատճառ, բիւր բերանք բաց են մարդու վրայ,
 Գատում են թէ լաւ, թէ վատ ինչ որ կայ...
 Հարկաւ և Աղան այս օրէնքի տակ՝
 Պիտի ենթարկուէր մի օր ժամանակի—
 Եւ այդ օր հասաւ,— դատաստանի օր
 Մի առողջադատ խոհեմ անցաւոր,
 Տեսնելով փայլուն շքեղ արձանը,
 Եւ կրակի պէս վառուն տառերը,—
 Իսկոյն արձանին կանգնելով հանդէպ՝
 Կարդաց փորուածքը պարզ և անվրէպ.
 Նա խոր հառաչեց զլուսը շարժելով...
 Իւր դատաստանը այսպէս վճռելով։—
 — Պուքո կեանքի մէջ՝ կեանք չա՛շխատեցիր,
 Եւ բարի գործքից դադարի մնացիր...
 Դու խեղճ մարդիկից յափշտակութեամբ
 Լոկ կեր ու խումբի զանձ ժողովեցիր...
 Ապա՛ վերջապէս զանձդ թշո՛ւտա, զուր
 Միւսերին դարձաւ որս և կերակուր...
 Եւ սակաւ օրեր ամեն վայելքը
 Ստացաւ աշխարհում քո անյապ կամքը.—
 Բայց երբ որ քո մօտ, քեզինից օգնութիւն
 Խնդրելու համար դալիս էր քո տուն
 Այն քո վշտացած եղբայր չըքաւոր,
 Կոյր, կաղ, մութացկան և սպիտաւոր,—
 Քո լիութենից չ'առուցիր բաժին
 Անհաց և անջուր, անյոյս աղքատին...
 Անհաց և անջուր, անյոյս աղքատին...

Վատաբաղդներէց զու հեռի փախար,
 Չ'օգնեցիր ո՛չ ում անցաւակցաբար,
 Հաղարի վերայ բարդեցիր հազար,
 Ազահ, աչքածակ, զու հարուստ տխմար.
 Ահա՛ քո վերջին հանդիստ օթեան,
 Երեք քայլաչափ քեզ հող ու սահման:
 Գու այդտեղ կ'մնաս մի նեխած մարմին,
 Պարարտացուցիչ կեր ճճիներին...
 Մինչև երկնային Գատաւորն արգար՝
 Կոչէ քեզ Ատեան գործքերիդ համար,—
 Գու այն ժամանակ կրտաս պատասխան,
 Ահեղ Գատողին կացած յանդիման...»
 Այսպէս խօսեց նա, այն մարդ անցաւոր,
 Այսպիսի խօսքեր սաստիկ ու խոշոր
 Եւ ապա երեսը մահու արձանից
 Շրջեց, հեռացաւ իսկոյն այն տեղից,—
 Նա չըկամեցաւ այլ ևս յետ նայել,
 Եւ այդ զերեզման կրկին նըկատել,—
 Նա տուեց դորան խոր մոռացութեան,
 Իբրև մի անպէտ յիշատակարան...:

Յովհաննէս Քոչարէի հիշատակ:

75.

Ես պիտի Քրիստոսի գալուն անընդհատ սպասեմ,
 Փրկութեան քարոզ եղող խօսքին համեմատ սպասեմ,
 Մարմնու աշխարհային խորհուրդը արագ կ'ընդունէ,
 Քայլերս փոփոխելով լինեմ անարատ, սպասեմ:
 Քուրճերը պատրաստեցի նախնեաց սովորութեան նման,
 Չարչարեմ անձրս հաղած, երթամ անապատ, սպասեմ:

Ունենամ ազնիւ, բարի խորհուրդ Արարչէն բաշխուած,
 Լինելով բարքս թիւրոզ՝ կարծիք է ազատ, սպասեմ:

Թաթախուայ, անկարգութեամբ մեղքին ծառայեցի, աւա՛ղ,
 Ես տկար Հաստի՞ն եմ, մեքով հարազատ սպասեմ:

76.

Իմ գեղեցիկ վարդի անմոռանալի յիշատակին նուէր.

Ես տեսեայ նորան, եղբա՛րք, զունաթափ,
 Ընկած այն մահճի վերայ կիսաշունչ.
 Չրկար տանջանքին ոչ համար, ոչ չափ,
 Բայց նա կըրուճէր լուռ և անտրտունջ:

Ես տեսայ նորան իր ձեռքը մեկնած՝
 Աւնում էր ծաղիկի փունջը սուրբ հրեշաակից.
 Որքա՛ն արատաւք, ողորմած Ասուած,
 Թափվում էր նորա անմեղ աչքերից:

Ես տեսայ նորան իր դէմքը շքեց
 Եւ մի խիտ նուազ, մի խիտ սրտաշարժ
 Չայնիւ ախ քաշեց ու խոր հառաչեց
 Եւ ապա իր թոյլ գլուխը թեքեց:

Ես տեսայ նորան, նա ինձ կանչում էր.
 Ո՛հ, այն ի՞նչ ցաւ էր նորան տանջում էր.
 Ախ, նա՛ և մահու զարպասի շէնքում
 Ինձի մոռանալ երբէք չէր ուզում...:

— Հրամայելի, հողի՛ս,— լեզուն փակվել էր
 Բայց իր աչքերով կարծես ասում էր.

»Բնորունի՛ր վերջին իմ հրաժարական,
Միայն չ'տաս ինձ դու մոռացութեան»:

Ես տեսայ նորան աչքերը փակեց,
Ա՛խ... շա՛տ ձայն տուի.— ոչ, էլ չը բացեց.
Բռնեցի ձեռը— վա՛յ ինձ, պաղել էր,
Նորա դեղնած կուրծքը— ո՛չ, էլ զարկում չէր:

Այս ի՞նչ էր, Աստուած, մի՞թէ նա մեռաւ...
Գուցէ երազ էր.— ո՛չ, անհետացա՛ւ...
Բայց դու, թշուա՛ռ մահ, ինչո՞ւ այդպէս շուտ
Անցար— դնացիր, ինձ էլ տար, ա՛նգութ:

Սի՛նքն Սոփարեանց:

77.

Չգուշանանք, լինի՛նք մտքով հեռատես,
Մեր միջեց դաւաճան թշնամին վաննեք,
Ճշմարտութիւնը միշտ խօսնեք առ երես,
Ինչ որ մեր բարին է՝ հետևենք աննեք:

Զ՞ որ մենք էլ մարդ ենք հոգւով զգայուն,
Ինչո՞ւ մենք միշտ մնանք թշուառ երերուն,
Ամեն բան լաւ քննենք խելքերով հասուն—
»Ունքը դընելու տեղ՝ աչքն էլ չը հաննեք»:

Ուննանք մերայնոց ճշմարիտ խնամ,
Հետևենք բարութեան կեանքով յարածամ,
Զամալի՛ս ազգութեան եմք սերտ բարեկամ,
Բարոյականութեան սերմերը ցաննեք:

78.

Թէ իմ ալևոր հերքս սենային,
Ոյժս ինձ յետ վար, կրտրիչ գառնայի,
Նրժոյզ ձի նրատած բխերս ոլորած,
Զեռս թուր առած ես դաշտ կերթայի.

Ես դաշտ կերթայի— դաշտ Աւարայրի,
Ողողած ցողած Հայոց արիւնով,
Ա՛զգ իմ սիրական, դու ազգ թորգոմեան,
Բու կորցրած հողը քեզ յետ կուտայի:

Կ՛ասէի Հայոց օրիորդներին,
«Ծախեցէ՛ք հազի ձեր թանգ շորերը,
Թողէ՛ք պաճուճանք, զարդ մարգարիտներ—
Ժանգոտած ու զուլ են մեր թըրերը.
Տուէ՛ք բեհեզեայ մեզ ձեր շապիկը,
Որ մենք փաթաթենք մեր մարմնու վէրքը,
Վիրակապ հիւսեք դուք ձեր մազերից,
Սյապէս յայտնեցէ՛ք դուք մեզ ձեր սէրը:

Թէ ես լինէի հարուստ մեծատուն՝
Մընդուկներըս լե ոսկով, արծաթով,
Շատերու նրման ես չէի լինիլ
Երբէք ազգասէր ունայն խօսքերով:
Շամպանեա գինու ալմաս խաչի տեղ
Կառնուի սուստ զնտակ ու վառօդ,
Արձակ համարձակ կերթայի հանդէսը
Տաճկական ազգին անթիւ զօրքերով:

Թէ ես լինէի մի երկրի իշխան՝
Կու տայի զօրքիս սաստիկ հրաման,
Շուտաքայլ երթալ դէպի Հայաստան,
Խըղճուկ Հայ ազգին լինել օգնական:
Եւրոպ՝ Ասիա արեան գետերը
Կրկազեցնէի հեղեղի նման,
Մինչև որ իրաւունք ու ազատ կրթոն
Ինձնից չըստանար թշուառ Հայաստան:

Բայց՝ եթէ մի օր, մի ժամ, մի բուպէ
 Աստուած լինէի մեր հողագրնդին,
 Ի՛նչ սուր սրլաքներ պիտի շաղ տայի
 Մեր արենարբու թշնամեաց զընդին:

Ռ. Տ-Գ. Պատկանեանց:

79.

Հեռուորութիւն «Թէ ի՞նչ Հայրենեաց
 քնար «գասար» երգին*):

Թէ ինձ կ'տեսնէք տխուր ու արտում
 Նստած միայնակ իմ մութ սենեկում,
 Թռէք, լուր տարէք իմ քաղցր Հայրենեաց,
 Ասացէ՛ք զերի է դառն արտասուաց:

Թէ ինձ կ'տեսնէք ձեռքումս ծրար
 Բացած կարգումեմ լալով անգաղար,
 Թռէ՛ք Հայրենեաց ազնիւ սիրուհւոյս
 Պատմեցէ՛ք թէ նա տխուր է անյոյս:

Թէ ինձ կ'տեսնէք ծովի ափերում
 Լալով, ողբալով թէ ի՞նչ եմ պտուում,
 Թռէ՛ք, ասացէ՛ք միայն էր շքում,
 Ո՛չ ոք չէր պտուում, այլ քեզ էր յիշում:

Թէ ինձ կ'տեսնէք ծաղկոտ պարտիզում
 Մարգաց ափերում արցունքներ թափում,
 Թռէ՛ք, ասացէ՛ք, խոնարհած զլիտով
 Փունջեր էր կազմում քեզ համար սիրով:

Թէ ինձ կ'տեսնէք քնարը ձեռքիս
 Փափուկ մասներով թելերին տալիս,

*) Նայիր «Սոխակի» առաջին հատորի մէջ երես 100, երգ 84.

Թռէ՛ք, ասացէ՛ք, այլ ի՛նչ չէ՛ր հնչում,
 Միմիայն սիրուհի անունն էր կրկնում:

Թէ ինձ կ'տեսնէ՛ք դալիահար ընկած,
 Քնարը կողքիս վայր ընկած, լած,
 Թռէ՛ք, ասացէ՛ք թէ նա վաղ մեռաւ,
 Քեզի՛ց կարտած՝ օտար հող մտաւ:

Շատարչ:

80.

Ք ն ա ր .

Թէ դառն հողերից, տխուր գործքերից
 Սաստիկ սախուռած ննջումեմ արտում,
 Ո՛հ, երազական ցնորմունքներից
 Գոնէ՛ մի բուպէ՛ հանգիստ չեմ գտնում:

Թէ սեզ ու հպարտ քայլեր փոխելով
 Մերթ յաջ և մերթ ձախ յառաջ եմ գնում,
 Մար, ձոր ու անտառ արձագանք տալով՝
 Ինձ ամեն կողմից աւաղ են կարգում:

Թէ եկեղեցւոյ կամ աղօթատան
 Միջում ծունկ չըբած աղօթք եմ անում,
 Սրտեր կախարդող երաժշտական
 Երգոց ձայները երբէք չեմ լսում:

Թէ սենեակիս մէջ մի կողմ կուչ եկած
 Իմ իսկ անձնական գործով զբաղում,
 Ո՛հ, մի սեւաբաղդ, մի խիստ վշտացած
 Տխուր քնարի ես ձայն եմ լսում:

Բժուր գործքերս շուտով մոռացած՝
 Իսկոյն տեղեցս ես վեր եմ կենում,
 Դէպի նոյն ձայնը վազումեմ յոգնած,
 Գանել, ձեռք բերել, աստ անդ որոնում:

Գտնումեմ այո՛, բայց թէ ո՞րպիսի
 Տխուր զրութեան դառն դէպքերում,
 Ո՛հ, ախրատեսիլ և աղէտալի
 Սրտեր մաշելով երգեր էր երգում:

Աւքիս արցունքը չեմ կարում զսպել
 Մինչդեռ այսպիսի ողբեր եմ լսում,
 Ծնկներիս վերայ չեմ կարող կանգնել,
 Բայց ինձ նման էլ շատերն եմ տեսնում:

Խեթ է ես ածեմ, թերևս լաւ լինի՞ս,
 Մերթ ոգի առած՝ ես ինձ եմ ասում,
 Շարժումեմ լարերն ուրա՛խ, ցնծալի՛,
 Բայց ո՛չ դայլայլիկ, սուղ, կոծ եմ լսում:

Միտքս մոլորած, աչքս մթացած,
 Միրոս քար դառած կանգնած եմ մնում,
 Այս տեսարանից սաստիկ սախարած՝
 Կրկին քնարը ես վեր եմ դցում:

Ընթերցո՛ղ ուշեմ, եթէ Հայու թեան
 Սխրալի սիրոյ կայծը քո սրտում
 Կայ և չի հանդչել մինչև յաւիտեան,
 Այս ի՞նչ քնար է, լաւ ես իմանում:—

Թէ ինչպէ՛ս ախուր, ոսկեայ թելերով
 Մեր խեղճ Հայրենեաց վերայ է ողբում,
 Թէ ինչպէ՛ս սիրով, վառված եռանդով
 Նա Հայաստանի վերքերն է պատմում:

Նախնի Հայերի արդար արխնով
 Հայրենեաց հողը ինչպէ՛ս էր թրջվում,
 Կամ Ջանգու զետի խառն փրփուրով
 Դէպ Պարսից ծովն ինչպէ՛ս էր թափվում:
 Սարգիս Տէր-Սելէի երէկեանց, Բայնիդուրցի:

81.

Տաղ 'ի դիմաց իւրաքանչիւր Հայկազնւոյ
առ Հայաստան.

«Ա. Կաճիկ» երգի եղանակով 1)

Թշուա՛ն Հայաստան, տուն առելութեան,
 Փութա՛ բժշկել ըզվէրք քո բնութեան,
 Քանզի ցաւն այն՝ չունի զեղ ու ճար,
 Որ զաղտ հասանի վերին ուժգնութեան:
 Ո՛հ ո՞ւր ես, ո՛հ ո՞ւր ես, ո՛հ ո՞ւր ես
 Անմահն Ներսէս²⁾

'Ի ծննդենէ էր՝ քեզ նա հարազատ,
 Դու եղեր նմա ծնող անհաստատ,
 Թէև լինէիր մայր արատութեան,
 'Ի քէն օտարաց՝ չէր առնել զանդատ:
 Ո՛հ, ո՞ւր ես, և այլն:

'Ի սէր քո կրեաց՝ բազում աշխատանք,
 Ետես շատ լաւ օր՝ և շատ անարգանք,
 Որդիքը իբրև՝ Կայէն ռխացեալ

1) Նայիր «Սոխակի» I հատորի մէջ, էրես 67. երգ 54.
 2) Այս երգը պատկանում է երջանկայիշատակ Ներսէս V-րդ Հայկական
 Կաթողիկոսի անմահ և և վառ յիշատակին Ա. Գրիգորեանց.

Հասուցին նմա՝ վիշտ և սողտանք:

Ո՛հ, ո՞ւր ես և այլն:

Վատ արարք նոցա՝ էին անսահման,
Ջետ Յուդայ նմա՝ եղևն դաւաճան,
Ապերատու թիւն՝ նոցին յայտնապէս
Իջոյց զնա՝ ՚ի՛ մութն զերեզման:

Ո՛հ, ո՞ւր ես և այլն:

Աստուհետե դու՝ հազար աշխատես,
Պտուղ չես տալ զի՛ նեխեալ արմատ ես,
Ինչ որ ծնանիս՝ պիտի լինի հրէշ,
Թէ չես հաւատում, փորձի՛ր ահա՛ տես:

Ո՛հ, ո՞ւր ես և այլն:

Կորուսիր Գահրը՝ կորուսիր Լաճըրը,
Խաւարեցաւ քո՝ լոյս արեգակը,
Սյնպիսի որդի՛ էլ չես զտանել,
Որ նա ուղղէ՝ քո վատ վեճակը:

Ո՛հ, ո՞ւր ես և այլն:

Նա էր միմիայն՝ որդիդ պարզերես,
Յոյս չ՛կայ մէկն էլ՝ ծնանի այնպէս,
Դար և ժամանակք շատ կը լրանան,
Որ Հառաչանօք՝ կասես, ո՛հ, Ներսէս:

Ո՛հ, ո՞ւր ես և այլն:

Թո՛ղ որ իմ՝ վկայս՝ լինի Սէյադը
Քրիստոնէական՝ կրօնի հաստատը,
Որ ըստ՝ փրկչական՝ անսուտ հրամանի՛
Լաւն անցել է՝ մնացել է վատը:

Ո՛հ ո՞ւր ես, ո՛հ ո՞ւր ես, ո՛հ ո՞ւր ես

Աննման Ներսէս:

Թո՛ղ կործանուին դէպի դժոխք
Նորա, որք են ազգի ոսոխք,
Իսկ ազգասէրք իմ՝ սիրելիք—
Դուք Աստուծոյ ազնիւ որդիք,
Եկէ՛ք, եկէ՛ք միաբան
Սիրենք մեր մայր Հայաստան:

Հեռո՛ւ, հեռո՛ւ, անխիղճ մարդիկ,
Դուք քանդեցիք մեր հայրենիք,
Ձեր շնորհիւ խեղճ Հայազգը
Կորուսել է իրա փառքը:
Դուք որդիք էք չարութեան
Եւ չար ծառայք—անպիտան:

Ե՛կ, ազգասէր, Հայկի գաւաի,
Առնենք հրբացան սուր և դաշնակ,
Վազե՛նք ուրախ դէպի Տաճկին,
Որ նեղումէ անբաղղ Հային,
Ջարդենք նրանց բոլորին,
Թո՛ղ զո՛հ լինին մեր սրին:

Բարթէ. քանի՞ — քանի՞ տարիք
Մենք պիտ լուենք . . . եղբարք, հերի՛ք:
Մեր խեղճ՝ ազգի հիւանդ մարմին
Ժանտախտովեցաւ բոլորովին:
Բայց դեռ մեր մէջ, ո՛վ Հայեր,
Կան վարակիչ Վասախներ...

Ո՛վ համբերէ այդպիսներին,
Նա թըշնամի է իր ազգին,
Ո՛վ չի լինում՝ ազգի պաշտպան,
Վըրէժխնդիր ճշմարտութեան—

Նա անկեանք է, անհողի,
Նա չար որդի զբժոխքի:

Ով սիրում է անշարժութիւն,
Նա ոչ մարդ է, ոչ անասուն,
Ով ատում է ազգայնութիւն,
Նա ատում է և մարդկութիւն,
Նա անշունչ է, մի դիակ,
Ողջ աշխարհի հակառակ:

Սեփեմ Սափարեանց:

83.

Վերջին Ուխտս.

Թէ մոռացայց զքեզ, Երուսաղէմ, մոռացի զիս
աջ իմ: Կցեսցի լեզու իմ ի քիմս իմ, Թէ ոչ յիշեցից
զքեզ, Երուսաղէմ, սկիզբն ուրախութեան իմոյ:

Սաղմոս ար:

Թո՛ղ չար օրհասը թափէ իմ զըլխին
Ապագութ մահուան բոլոր սև չարիք,—
Բայց Քո սուրբ Անուն՝ մինչ իմ շունչ վերջին
ես չեմ մոռանալ, «Երո՞ւն Հայրենիք»:

Թո՛ղ սողոմահան բոլոր պատուհաս
Թափէ խեղձիս վրա իմ անգութ օրհաս,—
Բայց ես մինչ կեանքիս մաշուած յետին գծիկ
Քեզ չեմ մոռանալ, «Երո՞ւն Հայրենիք»:

Թո՛ղ գոմերական արիւնտ մոխիր
Մաղէ միշտ զըլխիս իմ ճակատագիր,—

Բայց մինչ չը մոռնեմ մահու դամբարան՝
Քեզ չեմ մոռանալ, «Երո՞ւն Հայրենիք»:

Թո՛ղ ինձ պատրաստէ անխիղճ թրշնամին
Կախազան, և սիւն, և կամ այլ գործիք,—
Բայց մինչ չը զըցեն շիրիմ իմ մարմին՝
Քեզ չեմ մոռանալ, «Երո՞ւն Հայրենիք»:

Թո՛ղ թրշնամութեան զրժնեայ ծառի ճիւղ
Տայ ինձ իր փրշոտ թունալից պրտուղ,—
Բայց ես մինչ կեանքիս վերջնական վայրկեան
Պիտի քեզ յիշեմ, «Երո՞ւն Հայրենիք»:

Թո՛ղ կոյր ամբոխը անձրևէ զըլխիս
Քար, հուր, շանթ, երկաթ... և այլ շատ չարիք,—
Բայց մինչ իմ բերնից չ'ելանէ ոգիս՝
Քեզ չեմ մոռանալ, «Երո՞ւն Հայրենիք»:

Թո՛ղ ինձ հալածեն վասակի թռուներ՝
Ասելով սրգէտ, յիմար և անբան.—
Սյդ ես կը տանեմ մինչ կեանքիս վախճան,
Բայց Քեզ մոռանալ, երբեք, Հայրենիք»:

Թո՛ղ իմ դիակս մանրած մաս առ մաս՝
Տանեն սրգալով դէպ մահու դարպաս,—
Յայնժամ կաշկանդուած խոր քնով մըշտական՝
Գուցէ քեզ մոռնամ, «Երո՞ւն Հայրենիք»...

Բայց ո՛չ, երկնքում լուսոյ որդոց հետ
Իբրև մի անմահ սուրբ հրեշտակապետ
Պիտի միշտ կոչեմ, կըրկնեմ յաւիտեան՝
«Սեփեմ Հայրենիք, «Երո՞ւն Հայրենիք»:

Սեփեմ Սափարեանց:

Բարոյական վէպ.

Ժամանակով մարդոյն մէկը անդադար
Իրան յարմար մի գործ գտնել կ'ցանկար,
Գործքի յեան էլ որչափ ջանքով մարդ ընկնի,
Կարծես արծուոյ թևեր առած կ'փխխի:

Բարդ ասածդ էլ որչափ մէկին հարուածէ,
Գարձեալ մէկ օր սիրոյ արև կ'ծագէ,
Սորան յարմար պատահեց դէպք այս մարդոյն,
Տուաւ նորա տխուր սրաին խնդու թիւն:

Արքունական գործքերի մէջ բացուեցաւ
Սորան յարմար շահաբեր գործք բարեխաւ,
Որով և սա թագաւորին վաղվաղեց,
Գործքի մասին բերանացի աղերսեց:

Թէ, «Տէր Արքայ, ձեր գործքին տեղ բացուած կայ»
Խնդրեմ՝ Տէրդ էլ շնորհք առնէ զայն ինձ տայ՝
Որով մէկ անձն կ'ազատէք դառն հարուածքէ,
Պարապութեան տուած սատիկ տանջանքէ»:

Թագաւորը խելոյն նորան «չէ» ասաց,
«Զի ես այն գործք ուրիշ մարդոյ եմ պահած».
Իսկ այս մարդն էլ մեծ յարգանքով զոհութեամբ,
Ողջունելով շոյտ դուրս ելաւ խնդու թեամբ:

Թագաւորը կարծեց թէ ծուռ հասկացաւ,
Որ զոհունակ իրա մօտէն դուրս ելաւ,
Կանչեց ասաց «ի՛նչ ասացի, իմացա՞ր»,
«Այո՛», Տէր իմ, այն ուրիշին կամիք տալ»

— «Հապա ի՞նչու ինձ զոհութիւն ցոյց տուիք»
— «Նորա համար, որ սուտ յուսով չ'խաբեցիք»

«Այլ ձեր կամքը բացասութեամբ յայտնելով,
«Իմացուցիք» որ պարագիմ այլ գործքով»:

Թագաւորը հաւանելով շոյտ յանձնեց
Զայն՝ և ուրիշ նորան պաշտօն շնորհեց.
Ա՛խ, երանի՛ ամեն մարդիկ այս տեսակ
Հաստատապէս խօսքը առնեն իրանց օրինակ:

Է՛հ, ո՞ր կն, ո՞ր արքայիս պէս իսկ մարդիկ,
Որ սուտ խօսքով չ'առնեն մարդկանց խաղաղք,
Թո՛ղ ո՛չէ՛ ասեն անոյշ լեզուով հաւատով,
Եւ գործ չ'ածեն դժոխալուր «վաղն արի»:

Վերջին շունչը կ'առնէ կ'տայ հիւանդը,
Բաղդի դառն բաժակ կ'քամէ անբարդը;
Ցաւոց դարման անձարները կ'փնտռեն,
Իսկ մերայինք «վաղն արի» կ'ձայնեն:

Որք չ'զխանն խեղճերի դառն վիճակը,
Նոցա սրտի աղէտալի կրակը,
Առանց հոգսի նոցա ցաւերը կ'թողնեն,
Եւ հեշտութեամբ «վաղն արի» կ'ձայնեն:

Գրեցոր Մանդակաւոր:

Արտասուագին ողբերգութիւն.

«Вечерний звонъ» երգի եղանակով.

Իմ հրեշտակ ՚ի մարմնի յերկինս փութացաւ,
Պայծառ օր իմ յերկրի խաւարեալ մթացաւ,
Մահն ինիստ տարածամ կանխեալ քաջ պատանւոյս,
Յառոյգ փիս հասակի նորա ո՛չ զթացաւ:

Առ ձեզ են այժմ իմ բանք, առ ձեզ ո՛ր ցաւած հարք,
Եւ ընդ ձեզ արդ իմ խօսք, վաղամեռ որդւոց մա՛րք,
Ասացէ՛ք, աղաչեմ, կարեվէր խոցելոյս,—
Դիւրութեան այս ցաւոյ ե՞ն արդեօք ինչ հնարք:

Ցաւոյ որ յետ միակ որդեկի գայ մահու,
Ծնողաց ՚ի վերայ ծերութեան ՚ի պահու:
Զի՛ք ըստիս զիւր բնաւ, չի՛ք դարման յաւիտեան —
Յորոց մարթ իցէ կալ գէթ դոյզն ինչ շահու:

Ո՛հ քանի դառնաղէտ այս վիճակ ծնողաց,
Հանդամանք փութամահ զորդեակ մի ունողաց,
Զի՞նչ եթէ պատուհան ՚ի կուրծս էր մարդկան,
Տեսանել ներքին վէրս արկածիս տանողաց:

Թէ՛ Յակոբ անսփոփ զՅովսէփայն լայր զօրհաս,
Ոյր էին մետասան այլ ուստերք չափահաս,
Զի՞նչ ապա ես որ արդ մնացեալ անորդի,
Յարեմուտս իմ կենաց կրեմ՝ գայդ պատուհաս:

Մի՛ լիցի յայսմհետէ ինձ երբէք զիւր սրտի,
Որ ՚ի միում միայնում այն ազնիւ իմ որդի
Կորուսի համօրէն և՛ զեղբայր և՛ զընկեր —
Եւ զանզոյդ մտերիմ ինձ միշտ ՚ի խորհրդի:

Այլ աւա՛ղ գի և սա մեր միակ վերջին յոյս
Այդքան շոյտ, ա՛յդչափ փոյթ ետ ՚ի մէջ խալատ խոյս,
Զի՞նչ ընդիս, զի՞նչ ընդ մայր, զի՞նչ ընդ քորս արդ սորա,
Որոց ո՛չ աչաց այլ կենաց իսկ շիջաւ լոյս:

Կարկեսցի իմ լեզու զորդւոյդ ողբ մի՛ երգել,
Գօսասցի ձեռն իմ տողել գայն չատակել,
Շա՛տ է ինձ ցսպառուած աւուրց իմ լսելեայն —
Զկմախոջ ցամաքեալ արտասուօք առողնէ:

Ա՛յս Աստուած, Աստուած իմ, դու Աստուած մարդասէր,
Յօգնութիւն որդւոյս ինչ մի՛թէ քեզ պակասէ՞ր,
Եւ ընդէ՞ր մինչ զնէր ՚ի մահի՞ծս նա ցաւոց —
՚ի նպատ դու նման տիրաբար ո՛չ հասեր:

Որ բարձեր ՚ի գլխոյս գլթագ իմ պարծանաց,
Առ իմոց ծովացեալ մեղացն յորձանաց,
Տու՛ր ապա, Տէ՛ր իմ, կար յուսաբէկ ծերունւոյս՝
Ողջամիտ տանիլ այսց դառնաղէտ փորձանաց:

Խալատայ Մարդանեանց:

86.

Հառաչանք Մայր Հայաստանի *).

Իմ Հա՛յ անբաղբ գաւախներ, Օտարին սիրա կ'շահէք
Ի՞նչ կը շրջիք հեռացեալ, Զեր քրտինքով, ձեր ջանքով,
Մէկ դարձուցէք ձեր աչեր Օտարին տուն կ'շինէք
Դէպի Մասիս լուսափայլ: Զեր ունեցած կայքերով:

Մոռացել էք դուք ձեր մօր — Թողած լեզուն Հայկազեան²⁾
Հայաստանիս վշտահար, ձոխ և քաղցր բառերով,
Թողած հարուստ իմ դաշտ, ձոր, Կ'խօսիք միշտ օտարաց
Կ'թափառիք յայլ աշխարհ: Օտար ու խորթ հնչմունքով:

*) Սիրով եւ ուրախութեամբ տպագրելով այստեղ մեծ. Տիկին Կատարիայ Մանդակունայ ազնիւ եւ զեղեցիկ զգացմունքի արտադրութիւնը, յայտնուեմք հրապարակաւ իմ սրտի խորին եւ ջերմ շնորհակալութիւնը:

2) Թէ՛ որչափ վնասակար է մայրենի — Հայկազեան լեզուից զուրկ լինելը, այստեղ կրեմք մեծ. օրիորդ Եղիսաբէթ Ալիսանեանցի «Օտար լեզուով կըրթելը — որդեսպանութիւն է» վերնագրով պատուական եւ սիրուն եւ համակրելի եւ պաշտելի յօդուածը, որ տպագրուած էր «Մեզու Հայաստանի» 1877 թւի № 6-ի մէջ: Ահն նա: —

„Թէպէտ վերջին ժամանակներումս աւելի եւ աւելի է լսվում Հայոց լե- Սոխակ Հայաստանի IV հատոր. Ա .Գ. 8.

Որդւոց ջանքը մօր պէտքէ, Հա'պա: զուակ'ք, օրէ ցօր
 Աշխատանքը հայրենեաց, Սէր միութիւն կապելով,
 Փառք ու յարգանք 'ի սրտէ Դարձէ'ք զիրկը ձեր խեղճ մօր
 Նուէր ազգի պարծանաց: Ազնիւ ու նոր յոյսերով:

Տէրն Նապաստակայ Մանուկներ:

զուն մեր հասարակութեան մէջ շնորհիւ այն միսիմարական երեւոյթի, որ մեր գրականութեան մէջ ուշադրութեան առարկայ է դարձել ուսումնարանների խնդիրը, սակայն մեր հասարակութեան մի մեծ բաժինը դեռ եւս փակել է իւր աչքերը մայրենի լեզուի համար եւ իւր օրդիրը օտար լեզուով է կրծում կամ աւելի լաւ է ասել մարզում մանուկ հասակից: Բազմամիւ ընտանիքներ, մանաւանդ հարուստ դասակարգից, աշխատում են, որ իրանց օրդիրը օր առաջ կարողանան դ ու ը ը տ ա լ մի քանի Ֆրանսերէն, Ռուսերէն բառեր եւ այս բանում մի ընտանիք միւսին արտօնան է զուրս գալիս: Ինչ է սորանց նպատակը: Այո, միայն այն, որ իրանց օրդիրը «լուսաւորեալ» տիտղոսը ստանան եւ օտարներին «լուսաւորեալ» երեւան: Ֆրանսիացին սովորում է օտար լեզուն ուրիշ, աւելի օգտակար նպատակի համար. նոյնն անում են Գերմանացին, Անգլիացին եւ ուրիշ Եւրոպական ազգերը: Իսկ Հայը սիրում է նորա համար, որ միայն մի քանի խ օ ս ք ե ը Թ ո թ ո վ է այդ լեզուով: Եւ այսպիսի մի դատարկ եւ վնասակար գործի համար բազմամիւ ընտանիքներ ծախսում են անազնի գումարներ, վարձելով իւրաքանչիւրը իւր օրդւոց համար մի մի «գուլերնանտկայ» (դաստիարակուհի): Ի հարկէ, երբ կայ պահանջ մի ապրանքի, իսկոյն ծախողն էլ լոյս է ընկնում, այսպէս եւս մեր ծնողները կամենալով միայն դարտակ խօսել սովորեցնել, աշխատում են զտնել այնպիսի անձն, որ միայն խօսէր ու խօսէր: Եւ անհա Եւրոպայի զանազան անկիւններից լոյս են ընկնում մեր քաղաքը զանազան անձնաւորութիւններ եւ «գուլերնանտկայ» անունով ընդունվում են մեր հարուստ ընտանիքների մէջ: «Վունցիկուլի վուր Թ..... դ ու ը ե ը ն ա ն կ ա յ ու ն ն ն ա յ», ասում էր մի հարուստ մորթաբի կին, «ու մինք չունենանք, զնա չուտ մի դ ու ը ե ը ն ա ն կ ա յ գ տի, վուր միր օրդիրն էլ փ ը ր ա ն ց ու զ ե ը ե ն ը ու ն ե մ ե ն ց ե ը է ն ը խօսին»: Զամանակի կուրծիւն: Եթէ Թիւրքիայից եկած չուրերը, թէ Հայի արդար սեպհականութիւնն այս ինչ, կամ այն ինչ մուկնաւոր բուրքը խեց, յափշտակեց, մեզ վրդովում է, վիրաւորում, ապա ուրեմն սրբան աւելի պէտք է վիրաւորվենք, երբ տեսնում ենք որ այստեղ, այս ցրիստոնեայ երկրում, Հայերս կուրթէն ինքներս մեր զաւակներից յափշտակում ենք նոցա արդար եւ այն ամենամանկուկն սեպհականութիւնը:

Ստուգենտի ուրախութիւնն ու տրամուլթիւնը.

Ինչի էդպէս շուտ փոխվեցար, մեր բարեսիրտ ուրախ ընկեր, Ինչի համար էլ չեն լավում քո խաղերը, հանաքները, Ինչը կոտրեց ուրախ սիրտդ, Ինչը քանդեց քո քէֆերը, Թէ սիրու՞մես ընկերներիդ՝ պատմիր լսենք քո դարդերը, Կարելի է մէկ ղեղ գտնենք, յետ բերենք քո լաւ օրերը, Խմենք, երգենք, խաղանք, խօսենք, սարքենք մեր կենաց թասերը:

Զահել օրերըս անց կացան քէֆերումը, բալերումը, Ստուգենտի քաշած կենսքը շատ մարդ չունի աշխարհքումը, Հազարաւոր փախուկ ձեռքեր ես ջարդել եմ կայրելումը:

«Օտար լեզուով կրծելն ոչ միայն բծացնում է մանուկի հոգեկան ընդունակութիւններն, Ինչպէս վաղուց հաստատել են զիտնական անձինք, այլ եւ խորթացնելով մայրենի լեզուից, ազգայնապէս սպանում է նրան: Այո, օտար լեզուով կրծելը ճշմարիտ արդեսպանութիւնը է: Օտար լեզու սովորելը մեզ համար միայն այն նշանակութիւնը պէտք է ունենայ, որ նա լինի միջոց ծանօթացնելու օտարների հարուստ եւ թանկագին գրականութեան հետ, որ դա լինի մի բանալի, որ բանայ մեր առաջ Եւրոպայի մտքերի թանգարանը, որ ծանօթացնէ նոցա օգտակար եւ նոյն գրականութեան հետ: Եթէ այս վերջին նպատակի համար չէ ծառայում օտար լեզուի ուսումն, ուրիշ ինչ միտք ունի: Արքան մեր ծնողների նպատակն օգտաւէտ կարող է լինել չափահաս վաճառականներին, որոնք առեւտրական յարաբերութիւն ունին Եւրոպական ազգերի հետ, այնքան վնասակար է մեր մանուկների համար: Վերջացնելով մեր խօսքերը, խորհուրդ ենք տալիս մեր պատուելի հայրերին եւ մայրերին, որ նորա վերջապէս սեփական այդ երազական խաբէութիւնից եւ չը ճգնեն ի զուր իրանց օրդուցը կեղծ «լ ու ս աւ ո թ ե ա լ» տիտղոսին արժանացնելու: Համոզվեցէք, հայրեր ու մայրեր, որ կրծելով ձեր օրդիրը մայրենի լեզուով, աւելի լուսաւորված կերելիք օտարի աչքումը, քան թէ վայր ի վերոյ կրծէիք նոցա օտար լեզուով: Արովնետեւ, ով կպատուէ իրան, նա կպատուի եւ ուրիշից»:

Ա. Գրիգորեանց,

Հազարաւոր սիրոյ զրեր ես ալիել եմ հաղորդիւմս,
 Բայց ո՛չ մէկի կերպարանքը չը զըրվեցան իմ սրտումը,
 Մտացունեցան տարեքի հետ՝ ինչպէս տեսած երազումը,
 Մէկ դեղ գտէք, որ յետ բերենք իմ էն ազատ լաւ օրերը,
 Խմենք, երգենք, խաղանք, խօսենք, սարքենք մեր կենաց թասերը:

Քանի վարդիս տեսնումէի, սիրտս փոքր ինչ մեղմանումէր,
 Նորա անմեղ մաքուր սիրով, քաղցր յուսով կշտանումէր,
 Նորա պատկերն ամեն տեղ՝ աչքիս առջևը քաշվումէր,
 Խօսքս համով, սիրտս քէֆով, հոգիս սիրով՝ նա լցնումէր,
 Բայց ի՞նչ անեմ իմ քոռ բախտին... էս մէկ բախտը որ տվել էր,
 էն էլ խլեց, ինձնից տարաւ, բցեց սարեր... քցեց ձորեր:
 Մէկ գեղ գտէք, որ յետ բերենք իմ էն ազատ լաւ օրերը,
 Խմենք, երգենք, խաղանք, խօսենք, սարքենք մեր կենաց թասերը:

Էս կրակին ի՞նչպէս զիմնամ, ի՞նչպէս երգեմ իմ խաղերը,
 Ուրախ սիրտս վարդս կտարեց, մոռցրուց իմ հանաքները,
 Ընչո՞վ հիմի հոգիս վառվի, ի՞նչ յոյս ունենայ իմ սէրը
 Դուք ասացէ՛ք, ես պատմեցի իմ սրտիս բոլոր դարդերը,
 Տեսաք ողջով, որ դեղ չ'կայ, — յետ բերելով լաւ օրերը,
 Հապա՛, խմէք, ուրախացէ՛ք, սարքեցէ՛ք կենաց թասերը,
 Մէկ գեղ գտէք, որ յետ բերենք իմ էն ազատ լաւ օրերը,
 Խմենք, երգենք, խաղանք, խօսենք, սարքենք մեր կենաց թասերը:

88.

Աստղիկն Հայոց.

Ինչո՞ւ, Հայ աղջիկ, տխուրթեան ամպեր
 Սքողած են քո քնքուշիկ պատկեր,
 Ինչո՞ւ դու այդպէս տխուր ու տրտում
 Անցնումես լալով քո քաղցրիկ օրեր:

Անբա՛ղդ օրիորդ, ո՞ւր են քո զարդեր,
 Ո՞ւր քո պաճուճանք, թանգաղին ակներ,
 Ո՞ւր այն մատանիք, շողշողուն ալմաս,
 Որով պճնէիր քո մամեայ մատեր:

Թողար դու Մասիս, թողար Հայաստան,
 Օտար հողի մէջ եղար ապաստան,
 Փոխար Զէյանի՞ն սևի հետ մուսլլ,
 Ընկար սար ու ձոր, աւա՛ղ աննման:

Նայի՛ր դէպ երկինք, աղջի՛կ սիրասուն,
 Սրբի՛ր արտասուք, տե՛ս ի՞նչ վառվռուն
 Փայլումեն աստեղք մութ հօրիգօնի
 Քաղցրիկ հայրենեաց կապոյտ երկնքում:

Ահա՛ այն աստեղք, որ այնպէս վառվառ
 Մութ ամպի տակից շողումեն պայծառ,
 Նորա մէջ կարգայ դու բաղդ հայրենեաց,
 Նա քեզ կ'ցուցնէ ճանապարհ արդար:

Երբ որ դու տեսար սևաթոյր ամպեր
 Այլ չեն խանգարում նորա վառ պատկեր,
 Իմա՛, որ նոյնպէս քո անմահ երկիր
 Կրկին նորոգեց իւր զարդեր, փառքեր:

Քանի որ խաւար ու մուսլլ ամպեր
 Կ'պատեն Հայու խեղճ՝ որդւոց սրտեր,
 Գիտցի՛ր դու, քնքո՛յշ, աննման աղջիկ,
 Այլ չեն բժշկվել նորա խոր ցաւեր:

Շամախեցի Դօլէկէ:

Թիֆլիզու Կինսոյի երգ*)

Իմ խաղողը Գանջու է,	Էժան եմ ծախում միրգս,
Չափիւնքն կրենու է,	Չունքի ծուռն է կշիւքս,
Խնչորը Ախալցխու է,	Ինչ զղամ շատ իմ ծախում,
Լիճն, Կանչը բախու է:	Բարաքաթ չունէ ջիւրս:
Տառանինայ նանրայ Կինսո,	Տառանինայ նանրայ Կինսո,
Ամեն մարդ չի դառնայ Կինսո:	Ամեն մարդ չի դառնայ Կինսո:

Փէշակս Քաղքին շահ է,	Մեր փեշակն փչացաւ,
Բաղկաներուն խոմ մահ է,	Չունքի Կինսոն շատացաւ,
Իմ Թաբախի մրգերից	Թաբախի մանածելեմէն
Առնողին Աստուած պահէ:	Գլխիս գղակն տափկեցաւ:
Տառանինայ նանրայ Կինսո,	Տառանինայ նանրայ Կինսո,
Ամեն մարդ չի դառնայ Կինսո:	Ամեն մարդ չի դառնայ Կինսո:

Էս մեր անտէր Քաղքումն	Քաղքումն Կինսո շատ կայ,
Էլ խէր չկայ Թաբախումն,	Ինձ նման ո՛չով չ՛կայ,
Միրգս հետը փռումէ,	Ինձ էլ են ասում Կինսո,
Մուշտարին էլ փանումէ:	Հալկա ծախողին էլ Կինսո:
Տառանինայ նանրայ Կինսո,	Տառանինայ նանրայ Կինսո,
Ամեն մարդ չի դառնայ Կինսո:	Ամեն մարդ չի դառնայ Կինսո:

Ինչճանէր Արփայական՝ երգի եղանակով.

Ի Թարմ քնոյդ նսեմական, զարթի՛ր, նազելի իմ, զարթի՛ր, ծամ է արդէն լուսոյն ծագման, զարթի՛ր, նազելի իմ, զարթի՛ր:

*) Կինսո Կոչվում են նորա, որոնք փողոցէ փողոց մանզալով մրգավաճառութեամբ եւ այլ մանրավաճառութեամբ են պարապում: Ա. Գրիգորեանց:

Տխուր ժամերն եկին, անցան, արդ ժամանեաց օրեր դարնան, Գունատ դաշտերն զարդ զգեցան, զարթի՛ր, նազելի իմ, զարթի՛ր:

Արեակէզ տապ խորշակը՝ փչեց իւր յետին Թոշակը, Անցաւ Թշուառ քոյդ վիճակը, զարթի՛ր, նազելի իմ, զարթի՛ր:

Անգարդ զլխին քո վառվռուն՝ փայլի պսակ ներկայ դարուն, Յնծայ երկիր, հրձուի դարուն, զարթի՛ր, նազելի իմ, զարթի՛ր:

Ոսկեփետու՛ր ազնիւ Սոխակ, Թեւերդ բա՛ց, Թռի՛ր արագ, Գնա՛ երգիր դու այս դունակ, զարթի՛ր Մայր Թաղուհի զարթի՛ր:

Աղաւթակէցի Խաւիչ:

Պարսկահայի երազը Թէհրանում.

Իմ Հայրենեաց սիրուն Ջեփու, հնէ դու մեզ անոյշ հողմեր, Մեղմէ իմ սիրտ վշտօք լցված, բաւ է կրնմ դառն ցաւեր. Զախշախ բեկեալ նաւի նման պատռտուած առագաստներ Ալիքների առաջն ընկած, զիս կվարեն փոծօրկներ:

Օգնէ դու ինձ, ո՞վ հաւապետ, ալետատան վտանգներէն, Այս վրդովեալ վիճակիս մէջ չունիմ մի յոյս բացի բեղմէն. Արհեստի մէջ ի դուր անցան շատերն իմ անգին օրերէն, Նիրհէ, սիրտ իմ, մի քիչ նիրհէ, որ սին հոգեր դրեզ չն նեղեն:

Մինչ ծանրացան արտեւանուներս, Մորիէոս*) ինձ ետ մի այլ դեր. Սիրուն մի կոյս դէպ ինձ կղար, որքան զԱստղիկ**) զերազանցէր, Գէմքն նորա կփայլիայէր, էլ գոհարի բնաւ կարօտ չէր. Զքնազ հրեշտակն այն վշտալից թառաչելով ինձ կծայնէր:

— Օրն բացուեց, արեւն ծագեց, չորս կողմ ճառագայթ արծակեց, Աշխարհս մի այլ կերպ փոխվեցաւ, քո խոր բունն շատ երկարեց.

*) Քնոյ աստուածը: **) Գեղեցկութեան աստուածը, որին նմանեցում են մի գեղեցիկ եւ քնոյշ օրիորդի. Յունարէն ասում են Ափրոդիտէ, (Aphrodite.) իսկ Լատիներէն՝ Վենուս: (Venus). Ա. Գրիգորեանց:

Ծառն ծաղիկեց, վարդն բացուեց, անուշ բուրեց, դեռ քեզ չազդեց,
Մինչ երբ խորդաս, բաւ չեղաւ քեզ քո Մայրն այսքան օրօր ասեց:

Ելի, որդիս, էլ հերիք է, քո ընկերքն վաղ արթնցան,
Շատ ջանքերով, շատ նեղութեամբ դաշտեր, ձորեր լեռներ անցան.
Նրանց թմրեալ երակաց մէջ Հայ արիւններն շարժեցան,
Արտասուալից իմ աչքերն տեսնելով զայն, հանդարտեցան:

Դու էլ ելիր, նորանց նայիր, աշխատելով հետեւեցէք,
Լուսաւորեալ այսպէս դարում օրներդ քնով մի անցընէք,
Ձեր հին դրութիւնն փոխեցէք, թմրած արիւններդ շարժէք,
Պարսից մէջն խորթանալով, Հայութիւնն մոռացեր էք:

— Սիրուն Մայրիկ, մի նեղէր զիս, Թող տուր մի քիչ հանդարտ քնեմ,
Իմ ցաւերս մի նորոգիր, քանի որ ես մոռացեր եմ.
Մտածելով կեանքս մաշուեց. նորս համար ես քնեմ եմ,
Անօգնական ուրիշ հողում թէ չի քնեմ, բա՛ ինչ անեմ:

Արդեօք ելնեմ ինչեր տեսնեմ, օտար ազգաց ապշած նայեմ
Պարսկաստանի մեր Հայ եղբարց դառն վիճակը նկարեմ,
Անգօրծ պարապ պտըտողաց որ խեղճութիւններն ասեմ
Թող մնայ իմ սրտիս խորքում, չի պատմեմ վատամարդ լինեմ:

Սիրուն Մայրիկ, Թող զիս հանդարտ, ասա՛ օրօր, քունս տանէ,
Պանդուխտ ուրիշ երկիրներում այսպէս ցաւեր զիս չնեղէ,
Միթէ իմ սիրտս ինչքան է, որ այսչափ վիշտ տեղաւորէ,
Այս ցաւերէն աչք եմ զոցեր, ննջելն ինձ համար լաւ է:

— Բա՛ւ է, որդիս, ել ոտքի կաց, զիտեմ ամենն, ինձ մի կրկնէք,
Ձեր ցաւերի դարման սա է, որ հետեւէք ուսմունք սովորէք.
Լուսաւորեալ ազգերի մէջ դուք գլխակոր չի ամաչէք,
Տեսակ տեսակ լեզուներով այլ ազգաց սիրտն գրաւէք:

— Անգնթ Մայրիկ, մոռացեր էի, անցեալ ցաւս բերի միտքս,
Գորս համար էի ննջեր, մի արթնութեամբ տեսնէ աչքս,
Ինչ օգուտ որ ուսմունք սովորեմ, նա յարգ պատիւ չունի տեղս,
Երեւումէ անտեղեակ ես, երկարի էլ իմ պատմելու:—

Ունիք մենք մի ուսումնարան, որ կատարեց իւր եօթ շրջան,
Քսան ընկերօք էր նա կազմեալ, յետոյ ճարեց շատ օգնական,

Մանունը նորա շատ վաւովուն երեք լեզուալ գրեն, կարդան,
Տեսակ տեսակ ուսմանց միջում շատ քաջութեամբ յառաջացան:

Մին մեր մէջէն ուսումնական*) ամեն բանով նա հարչարուեց,
Իւր անձնական գործն Թողեց, անձնանուէր միշտ հետեւեց,
Այսպէս մի կարճ միջոցի մէջ քանի ուսեալ անձ դուրս բերեց,
Այլ այդ պատիւն ու յիշատակ իւր վերայ շատ ծանր նստեց:

Թող արդ ննջեմ, վիրուն Մայրիկ, չի արգելէ զիս մորմորն,
Որ կարենամ ես պատմել քեզ ծայր է ի ծայր մեր անցքերն,
Լաւ է լուեմ, էլ չի խօսեմ, ինչ է խօսելու օգուտն,
Ասա՛ օրօր, հանդարտ պառկիմ, քնով անցնի վատ օրերն:

— Ելի, որդիս, այժմ դու ելի, պատմութիւնդ շարունակիր,
Դա էլ անբուժելի մի վէրք, նետ գրչովդ սրտիս խփիր.
Տխրազգեաց սիրտ իմ անմուռնչ, Պարսկահայէն առ զայդ պահիր,
Որ թէ հասնեմ ես իմ փառքին, միտքս բերես այս մեծ խնդիր:

— Թող տուր, Մայրիկ, արդ ես ննջեմ, թէ որ ելնեմ որ մինն ասեմ,
Երբ կարող չես այժմ ինձ օգնել, ի զուր քո սիրտն ինչ մորմորեմ,
Ուսեալներին աստ զորձ չկայ, նորանց որ խեղճութիւնն ասեմ,
Հարկ է ռամունքն ի զորձ ածեն, որ լինի միշտ յառաջադէմ:

Մանկունք ուսմանց կճետելին, բայց երբ մի քիչ հասակքն առնեն,
Պիտի կրկին աշակերտին, տղէտ մարդկանց մօտ ծառայեն
Ուրիշ արհեստ ինչ սովորելու, որպէս զի զէ՞ծ չոր հաց ճարեն.
Այս է ահա՛ պատճառներն, որ ուսմունք մեր մէջ անպտուղ են:

Երբ նա իւր վարպետի հետն մարուր Հայերէն կխօսի,
Ձի հասկանար, կրարկանայ նորա երեսին կնայի,
Նախանձելով յանկարծ կասէ «շուն շան որդի, շիտակ խօսի»,
Ել ինչ լոյս ու զիտութիւն մեզ, սպասեմք մինչ այս դարն փոխուի:

Խանութիցն երբ տուն զնան, նորան վարպետն առաջնորդէ,
Ուսեալ աշակերտն ետեւէն փքանալով մանրաքայլէ,

*) Կեցցեն այդպիսի անձնանուէր մարդիկներ, որոնք ազգի մանուկների ապագայ բարօրութեան եւ երջանկութեան համար իրանց անձնական գործունէութիւնն անդամ մոռանալով, բանումնն նոցա համար բարոյական եւ մտաւորական ասպարէզ: Ա. Գրիգորեանց:

Մեծ մեծ բաներ ուսին առած, կարծես վաճառի բեռնակիր է, Աշկերտ ծառայ կամ մանկլաւիկ, որն կուզես դու զայն հաշուէ:

Իսկ նոցա հէզ վարժարանի երբ լրացաւ եօթն շրջան, Պաշտպան ընկերքն պակսեցան, ոմանք գործէս հրաժարեցան, ոմանք իւրեանց քաղաք դարձան, ոմանք ընկեր յերկինս ելան, Որով այդ անձնուէր անձի գործքն ու դիտմունք շփոթեցան:

Ուսումնարանն արդ հիւանդ է, հոգեվարքի, ցաւք զայն նեղեն, Հառաչէ նա իւր խոր սրտէն, խնդրէ, որ իւրն ձեռք կարկառեն*) Բժիշկներն կհետեւին, որ նորան դեղ, դարման ճարեն:

Էլ թող տուր այժմ հանդիստ պառկիմ, այսքանս քեզ բաւական չեն: —Ելի, որդիս, որ քեզ ասեմ—ջանք յարատեւութիւն հարկ է, Այդպէս բաներ մի ստածեր, ուսեալը տղէտէն լաւ է, Շուտ անցանին այս մութ ժամեր, ահա արշարոյս ծաղեր է, Մօտ է, մեր արեւն ելնէ, նախապատրաստութիւն պէտքէ:

Անհոգ դանդաղ դու մի պառկիր, հարկը պահանջէ, որ ելնես, Արթուն զգաստ միշտ հետեւիս, գործիդ վերայ պատրաստ լինես, Յանկարծ այն ժամն չի հասնի, ստրջանաս, ափսոս ասես, Վերջն փնտուես, ու էլ չի ճարես, ափսոսելովդ էլ բան չօգտես:

—Մի մեղադրեր զիս դու, Մայր իմ, թէ որ ելնեմ, ինչ կտեսնեմ, Չունինք աստ վանք, ուխտատեղիք, զուարճանալով անդ պտըտեմ, Չունինք աստ մի ընթերցարան, կարդալով անդ օր անցընեմ, Չկան ուսեալ անձինք այստեղ, որ խօսելով նոր բան սովբեմ:

Կան շատ տեսակ լրագիրներ, որոց լոկ անունն լսած եմ, Նոր տպած են ընտիր գրեանք, արդեօք յումմէ, ճրտեղ ճարեմ, Շէն քաղաքներ, թէատրօններ, որոցմէ զճճակ մնացեր եմ, Թող որ քնեմ, կարելի է սորանք ես երազով տեսնեմ:

*) Ինչ մարդ պիտի լինի, որ կարդալով այս տողերը, չզգայ խորին ցաւակցութիւն: «Սոխակ Հայաստանին» թարգման հանդիսանալով իրա Ազգի, իրա Հայրենիքի բարոյական ցաւին, յուսով է, որ Ազգի զգայուն սրտերը, ազգի անհատներն ուշք դարձնելու են այս ն ու ի թ ա կ ա ն հաստատութեան վերայ, դիցելով նորա աղքատ զանձանակի մէջ զէթ իրանց լ ո մ ա ն:

Ա. Գրիգորեանց:

—Եկի այցել ձեր դրութեան, Պարսկահայեր, մտքէս ելած, Ձեր այս կրած նեղութիւնքն արժանի են յիշատակաց: Մնաս բարեա՛ւ պանդուխտ որդիս, հեռանումեմ տրտում տխրած, Բժշկապետն օգնէ միայն այս քո ցաւիդ, Մ. Բ ժ շ կ ե ա ն ց:

92.

Լ ա պ տ ե ր:

—Լ ա պ տ ե՛ր, դ ու լ ա պ տ եր, լ ու ս ա փ ա՛յ լ լ ա պ տ եր, Ա ս ա՛, խ ն դ ը ե մ՛, է՞ր են ք ե զ պ ա տ ի ց կ ա խ ե լ, Հ ա ս տ ա տ վ կ ա յ կ ս մ եր ո ճ ի ը ն եր ի կ ա մ թ է ու զ ի ց ո յ ց մ եր վ ա տ գ որ ծ եր ի:

Պ ա տ մ ի՛ր, դ ու լ ա պ տ եր, անցքը զ ի շ եր ու ա յ, է՞ր ես դ ու լ ու մ, անխօս դ ու վ կ ա յ:

Մ ի ա յ ն ք ե զ յ ա յ ա ն ի ի ն չ ե՞ր են լ ի ն ու մ, Եւ ի՞նչ վ ա տ գ որ ծ եր ք ո լ ու ս ո վ անցն ու մ — Ա ն ա ա կ ու թ ի՛ւ ն, ո ճ ի՛ր, վ ա՛տ գ որ ծ եր Բ ո ա ա ջ ո վ են կ որ չ ո՛ւ մ — չ բ ա ն ո՛ւ մ:

Պ ա տ մ ի՛ր, դ ու լ ա պ տ եր, անցքը զ ի շ եր ու ա յ, է՞ր ես դ ու լ ու մ, անխօս դ ու վ կ ա յ:

Խ որ զ ի շ եր ու ա յ մ ջ ջ և հ ա ն դ ի ս ա չ՛կ ա յ, Կ առ ք եր, ս ա յ լ ա ի ն եր ար ա զ դ ն ա յ, դ ա յ Ա զ ա ղ ա՛կ, կ ու ի՛ւ, ա ղ մ ո՛ւ կ, հ ա յ հ ո յ ա՛ն ք Մ ի ն չ և ա ա ա ա տ տ ե ու մ անխնայ:

Պ ա տ մ ի՛ր, դ ու լ ա պ տ եր, անցքը զ ի շ եր ու ա յ, է՞ր ես դ ու լ ու մ, անխօս ա ա ա ի ա յ:

Ո վ ք ե՞ր են դ ոք ա, լ ա պ տ եր ս ի բ ու ն ի կ, Ա ս ա՛ դ ու, խ ն դ ը ե մ՛, պ է ծ ո վ զ մ ե դ ի կ, Ի՞նչ են որ ո ն ու մ ն ոք ա զ ի շ եր ու մ, Ի ն չ ո՛ւ են շ ը ջ ու մ անգործ, թ ա փ ա ա ի կ:

Պատմիր, դու լապտեր, անցքը զիշերուայ,
է՞ր ես դու լուում, անխօս դու վկայ:

Մի՞թէ չունին գործ մարդիկը յամառ,

Որ շրջում անգործ ձմեռ թէ ամառ,

Չիցէ՞ պտրումեն որսեր անդադար,

Մեր այս քաղաքը կարծելով անտառ:

Պատմիր, դու լապտեր, անցքը զիշերուայ,

է՞ր ես դու լուում, անխօս դու վկայ:

Շուտով լապտերը յանկարծ բորբոքուեց,

Դժոխքի բէժեր մէջից արձակեց.—

— «Ո՛հ դու պատանի, լսի՛ր մի առ մի

«Թէ է՞ր եմ կախուած զիշերուայ գերի:

«Լսի՛ր խօսքերս—վէպը զիշերուայ,

«Լինինք՝ ես անխօս, դու արթուն վկայ»:

«Արդարև տեսնումեմ ես շատ վատ գործեր—

«Ո՞ճիր, անամօթ, ու հագար բաներ,

«Որոնք իմ լուսից օգուտ քաղելով՝

«Շրջում, թագչում են անառակ տեղեր:

«Լսի՛ր խօսքերս,—վէպը զիշերուայ,

«Լինինք՝ ես անխօս, դու արթուն վկայ»:

«Լսի՛ր խօսքերս, մարդիկ թափառուն,

«Որոնք շրջումեն զիշերուայ կիտուն,

«Չեն առանց պաշտպան և չեն թշուառիկ,

Կ'տեսնես այնտեղ քո իշխան մարդուն:

«Լսի՛ր խօսքերս,—վէպը զիշերուայ,

«Լինինք՝ ես անխօս, դու արթուն վկայ»:

«Երբ ես կ'վառուիմ բոցավառ լուսով՝

«Պռաջիցս կ'անցնեն շատ անդամ խմբով,

«Երբեմն անշունչ՝ հարբած կառքերով

«Գնում, չքանում գոռանայսով, սապով:

«Լսի՛ր խօսքերս—վէպը զիշերուայ,

«Լինինք՝ ես անխօս, դու արթուն վկայ»:

«Իսկ երբ առաւօտ, կ'լսես խոխոյն

«Կտրել է տունը խումբը մոլեկան

«Մէկ հարուստ մարդի, կամ թէ դատարկել

«Կրպակը անբաղդ մէկ խեղճ վաճառի:

«Լսի՛ր խօսքերս—վէպը զիշերուայ,

«Լինինք՝ ես անխօս, դու արթուն վկայ»:

«Ես այս տեսնումեմ, անխռով տանում,

«Ինձ չեն հարցանում, իսկ ես միշտ լուում,

«Կ'գայ ժամանակ, որ ես համարձակ

«Գիտցածս կ'ասեմ իւրեանց ճակատում:

«Լսի՛ր խօսքերս—վէպը զիշերուայ,

«Լինինք՝ ես անխօս, դու արթուն վկայ»:

«Թո՛ղ ես միշտ հսկեմ բոլոր զիշերը,

«Ով ի՛նչ է անում, զիտեմ գործերը,

«Որ ժամանակին տամ իմ հաշիւը,

«Իցէ դատ բանայ երկնից լապտերը...»

«Լսի՛ր խօսքերս—վէպը զիշերուայ,

«Լինինք՝ ես անխօս, դու արթուն վկայ»:

Այլ չ'լսօսեց այն լապտերը սիրուն,

Հառաչանք հանեց իրա պէժերից,

Իսկ ես քնացի կանգնած, մոլորուած,

Սնշարժ քար դարձայ լապտերին ապշած:

Յարուստի մոլեկան զանեանց:

93.

Խրախոյս Վարդանայ 'ի դաշտին Աւարայր.

(«Երկն+ զոռայն» երգի եղանակով *).

Լ երկնք Հայոց, ցնծացէ՛ք, Վարդան նստաւ 'ի նժոյգ,
Ընախք բնախր և այկաղունք, բնկեր բնկեր, զոյգ առ զոյգ,

Գրօշք 'ի յօղ ծածանին որպէս յալիս նաւ, մակոյկ,
Նիզակք ճօճան 'ի յայեր, Վարդան զոչէ, ա'յ Հայեր:

Թնդաց Մասիս, Արագած, երբ զօրք Հայոց միագունդ
'ի մարտ, կռիւ արշաւեն, շողայր սուսեր առ մկունդ,
Զգունդ առ գունդ յառաջեն հովիտք, բլուրք Թունդ առ Թունդ:

Քաջագօտի պատանիք աշտանակեալ 'ի ճերմակ,
Բռուան, գռուան 'ի ջամբար բուռն 'ի սուսեր նիզակ,
Գրոհ սուին 'ի ճակատ կազմեալ բանակ հրոսակ:

Գոչէր Վարդան, Արշաւիր, փութա' ընթա' ընդ առաջ,
Ճօճեա' զքօ զնիզակ, առթեա' Պարսից զհառաչ,
Յո'յց քօ բազկաց զօրութիւն, հա'ր մի յահեակ և մի աջ:

Արտա'կ, Խորէ'ն, սէ'զ ճաճատ, վառեցարո'ւք 'ի ճակատ,
Հարէք 'ի սուր և 'ի բիր, արկէք Պարս 'ի յակատ,
Արշաւեցէք ամենհի զհեա Պարսից առ զակատ:

Թո'ղ երկվարք դարբ տան, Թո'ղ անդ կարդան զվաշվաշ,
Թո'ղ անդ Պարսիկք սրտաբեկ հոգւոց հանեն սրտամաշ,
Թո'ղ զիք Պարսից զլորին ոմն 'ի գաւակ, ոմն 'ի բաշ:

Թո'ղ մեր սերունդք մեզ տօնեն, Թո'ղ մեզ կապեն մրցանակ,
Բարեկենդան անուանեն մեր քաջութեան յիշատակ,
Թո'ղ մեր կենաց վայելեն ուրախ ուրախ սուրբ բաժակ:

Օ'ն անդր, ընկե'րք, փութացէ'ք, մեք զոհ լիցուք մեր ազգին,
Մեր կրօնին, հաւատոյն, մեր մայրենի սուրբ լեզուին,
Առ այն կմախք մեր քաջաց դարոց 'ի դար միշտ յարգին,
Նիզակք ճօճան 'ի յայեր, Վարդան զոչէ, ա'յ Հայեր:

Թեոդորոս վարդապետ Երեւանի:

*) Տես „Սոխակի“ I հատորի մէջ երես 87, երգ 74.

Նուէր հանգուցեալ մահտեսի Խա- չատուր Օվչեանցին*).

Լոյս դառնայ հողիդ, Օվչի-Նավասի,
Պէտքէ մնայիլ^մ մի առ ժամանակ,
Խեղճիկ մնացինք, հասանք օրհասի,
Հանգվեցիր շուտով ինչպէս մի ճրագ:

Մեր զեղումն դու ինչպէս սուրբ անդին՝
Նախատում էիր, խրատում ազգին,
Վատ չէին ատում ոչ ով քո խօսքին,
Քարոզում էիր խօսքով ընդունակ:

Մէկ էլ զարթնէիր, դէպի մեզ դայիր,
Անուշ լեզուով մեզ խրատ տայիր,
Մեզ էլ վեր առած քո հետ տանէիր,
Առէիր Վեկէ'ք դուք ինձ հետ, որդեակ:

Երգերդ շա'տ է, բայց չէ երևում,
Նորա յայտնապէս փտումեն հորում,
Եղբօրդ որդին ի'նչու չի գրում՝
Տալ տղազրեւի այլին նմանակ:

Խեղճիկ Պարսա՛ն եմ, թէ իմանայի՛
Ես այն ժամանակ երջանիկ էի
Եւ ուրախացած զիւ՛ն կ'զրէի,
Որ ազգը լսէր ու ասէր ներա'կ:

*) Մահտեսի Խաչատուր Օվչեանցը (Օվչի-Նավասի մականունեալ ազգային երգիչը) Շամախու Մատրասայ զիւղիցն է: Նա մի առաքինի և ճշմարտասօս անձն է եղել և պարապելիս աշուղութենով ոչ երկար ժամանակ: Նա յայտնի և նշանաւոր աշուղներից մինն էր: Ասում են, եթէ Մատրասում երկու մարդի մէջ անբաւականութիւն էր յայտնվում, խկոյն շտապում էին մահտեսի Խա-

Տաղ անոյշ և պիտանի.

Խրատ մի ասել կամիմ, որ արժէ բոլոր մի ջուհա՛ր,
 Մարմինս է նաւու նման, տէ՛ր, տէ՛ր, տէ՛ր, (2
 Թէ ունիմք մենք խոր քնակա՛նս) (2

Աշխարհս է ծովու նման, ով որ գայ՝ անթաց չ՛մնայ,
 Այս ծովս ես ՚ի նաւս նստայ, տէ՛ր, տէ՛ր, տէ՛ր, (2
 Նաւս զնաց, որ ես չիմացա՛յ: (2

Եղեր մօտացեր է նաւս, կու վախեմ՝ քարին զիպենա՛յ՝
 Քակտի իմ ազվոր շինվածս, տէ՛ր, տէ՛ր, տէ՛ր, (2
 Նա տախտակս մէկմէկանա՛յ: (2

Աշխարհս է ծովու նման, որ մարդիկ ՚ի ներս կու լողան,
 Մարմինս է նաւու նման, տէ՛ր, տէ՛ր տէ՛ր, (2
 Հոգիս գանձ է անմահական: (2

Միտքս է նաւավա՛ր, որին որ հանէ երևան,
 Վախեմ թէ կտորի այս նաւս, տէ՛ր, տէ՛ր, տէ՛ր, (2
 Մենք ՚ի վար մնամք փոշիմանս (2

Երթամք աղաչեմք զԱստուած, որ հանէ զիմաց միքամի
 Այս մթանըս լոյս առնէ, տէ՛ր, տէ՛ր, տէ՛ր, (2
 Մեզ բարի յերկիր մի տանի (3:

չատուրի մօտ եւ նա վերջ էր տալիս անբաւականութեան: Մահտեսի խաչատուրը զնացած էր ուխտ երուսաղէմ եւ „մահտեսի“ անունը իրաւամբ ժառանգած: Աստուծոն երուսաղէմ զնալու ժամանակ նորա վերայ թշնամիներ են յարձակվում եւ նա քանի մի երգեր ասելով, նոցա ձեռից ազատվումէ: Երբոր Մատրասու եկեղեցին հասարակութիւնը չէ կարողանում կատարելագործել, Մահտեսի Խաչատուրը շրջումէ քաղաքից քաղաք, ժողովարարութիւն է անում եւ այդ փողով Մատրասու կիսատ Հայոց եկեղեցին կատարելագործում: Մահտեսի Խաչատուրը վախճանել է մօտ 70 տարեկան հասակում: Յիշատակ արդարոյն օրհնութեամբ եղիցի: Աստուծոն հանգուցեալը շատ երգեր ունի, մանաւանդ երուսաղէմի եւ այլ ուխտատեղերի վերայ ասած: Հանգուցեալը

Խոցերին չկայ բժշկելու յոյս,
 Ոչ փող, ոչ ոսկի, ոչ լողման զխտէ.
 Մէն միայն Աստուած կ'տայ խրատոյս,
 Անհնարինը նա միայն զխտէ:

Այլ չեմ բժշկուել այս ցաւերիցը
 Վշտալի սրտիս խոցուած կարիցը,
 Չի ցամբել աչքս աղբիւրներիցը.
 Արտասուեաց չափը մէկ սփռան զխտէ:

Չարաչար կեանքով, անբաղդ դարերով
 Սրտուսն է դարսուած վէրք հարիւրներով,
 Ո՛ր զխտէ այնպէս շատ տարիներով
 Մնամ փակուած, դա հոգեհան զխտէ:

Ինձ յետ ձգեցին ընկերի շարքից,
 Իսպառ զրկուեցի բնական կարգից,
 Մնացի գատարկ սրբազան վարքից.
 Աստուծոյ տնտես բահանան զխտէ:

Կրկին նորոգման փառքի և պատուի
 Հետը ուժ չունիմ, որ բանամ դաւի.
 Աղբիւրն առջևիս՝ իսկ ես ծարաւի,
 Այս ցաւն միայն Հայաստան զխտէ:

Աշխարհիչի Խաչէ:

գեղեցիկ իշխելիս է եղել եւ ճանկական լեզուի մէջ, զանազան բանաստեղծութիւններ յօրինելով: Ցանկալի էր, որ այդ գրվածքը աղատէին փոշու ժանիքներից եւ ուղարկէին ինձ տպագրելու, որով կենդանի պահած կլինին հանգուցելու յիշատակը միշտ: Ա. Գրիգորեանց:

Սոխակ Հայաստանի. IV հատոր. Ա. 9.

Սուրէնը.

Ծնաւ յաշխարհ մեր Սուրէն, Ծնողաց քարոզ, խրատը
 Աւետման օրն ի՛նչ անուշ, Բարոյական ի՛նչ անուշ,
 Օրօրոցին օրօր տան, Երբ Սուրէնն այս ունակ է,
 Սօր օրօրածն ի՛նչ անուշ: Հօր, մօր խնդումն ի՛նչ անուշ:

Պարզ ու վճիտ աչերը Ուսում Հայոց սուրբ լեզուի
 Քունն է պատեր, ի՛նչ անուշ, Գրել, կարդալն ի՛նչ անուշ,
 Կարմրափայլ երեսի Սուրէն, քո հօր, մօր սրտի
 Գոյն և քրտինքն ի՛նչ անուշ: Այս լեզուի ձայն ի՛նչ անուշ:

Տղայու թեան լաց, միմունջ, Ուսի՛ր, Սուրէ՛ն, մեր լեզուն,
 Հեկեկանքն ի՛նչ անուշ, Որի կրօնքն է անուշ,
 Գորովալի մօր սրտի Մենք նրան հոգով, սրտով
 Տրօփ, թնդիւն ի՛նչ անուշ: Ծունր և համբոյր տանք անուշ:

Մեծցաւ Սուրէն չորս տարւայ Սուրէ՛ն, քեզ օտար լեզուն
 Ժպիտ, զրոյցն ի՛նչ անուշ, Թէ և չէ՛ այնքան անուշ,
 Սուրէ՛ն, դու մի՛ յանդգնիր, Բայց ուսի՛ր օտար լեզու,
 Յանդգնութիւն չէ՛ անուշ: Յարգանք կ'զայ քեզ անուշ:

Թէ լեղի և թէ անուշ, Սուրէ՛ն, քո հայրը խեղճ է,
 Դեռ Սուրէնը տղայ է, Մի՛ պապերդ միտդ բեր, Սուրէ՛ն,
 Ընտանիք փայփայումեն, Որոնք արդէն անցեր են,
 Այս զգուանքը չէ՛ անուշ: Բայց յիշատակքն ի՛նչ անուշ:

Դու ևս ծնողացդ յոյս,
 Որք կ'սպասեն շատ անուշ,
 Սուրէ՛ն, մեծցիր քաղցր, արդար,
 Գնա՛ առաջ հա՛ անուշ:

Աւետիք և սուրբ:

Ծննդոց զիրքը կարգայ, տե՛ս որ երկինքը ծիածան կայ,
 Նաև Հայր Աստուծոյ աջ կողմը նստած Յիսուս Իշխան կայ,
 Քսան և երկու «Յայտնութեան» զլուսը բա՛ց և ընթերցի՛ր,
 Կենաց գեան երկու կողմէն և կենաց ծառ ու բուրաստան կայ:

Զօրաց Տէր աշխարհի ճրկիչը ուժ՝ որ սուրբ հոգւով ընտրէ,
 Նորան սուրբերու հետ երկինքը երթալու հրաման կայ,
 Կը պատմէ զիրքը թէ, տնկեաց դրախտ, եղ անդ մարդն Աստուած,
 Գետովմը ջրուաւ անշուշտ արևելքը վարդենաստան կայ:

Հա՛ւանք, զօր զիշեր աչքիցդ արիւն արտասուք վազցօ՛ւր,
 Տէրոջը գալը մերձ է, ինչու որ վերջը դատաստան կայ:

Երեխանց երգ.

Կատուն նստեր լաց կը լինէր,
 Թաթիկներով աչքեր սրբէր,
 Աշխէնն հարցրուց, — «սիրուն փխսիկ
 Ինչո՞ւ այդպէս կուլաս սաստիկ,
 Ո՞վ է ծեծեր քեզի, խեղճիկ,
 Պառա՞ւր, թէ Արա՞ն փոքրիկ,
 Մի՞ս փախցրիր, թէ բա՞ն զոզգար,
 Ասա՛ մի՛ լար, սիրուն փխսիկ:»
 Փխսիկը նայեց դէպի վերև,
 Աօաց — «տարաւ վայն իմ՝ արև,
 Մարդ չէ՛ ծեծել ինձի բնաւ,
 Լացի պատճառն է ուրիշ ցաւ.
 Արայն այսօր ինձ հետ խաղաց,
 Պառաւր շփեց, սիրեց զնայ,
 Ո՛չ դողացել եմ, ո՛չ փախցրել:

Լաւ փխտիկ եմ, վիայ Աստուած:
 Շուշանն եկաւ թոնիր վառեց,
 Եսհնու համար միս կտրբուեց,
 Մեծ շաղ կտորն եփեց՝ կերաւ,
 Ինձ փայի էլ արժան չարաւ:
 Յետոյ այստեղ թողեց մէնակ,
 Որ իմ վրաս մնայ յանցանք,
 Մի՛ հաւատար, որ գողութիւն
 Անեմ, ես ձեր սիրուն կատուն.
 Գիտեմ Շուշանն ինձ կը մրէ,
 Իմ անունս գող կը հանէ,
 Հաւատացէ՛ք, որ չեմ կերեր,
 Մինչեւ հիմա ծում եմ կեցեր:
 Կը վախեմ ես, հիմա կու լամ
 Թէ ծեծէք ինձ անմեղ, ՚ի զուր,
 Ինձի մրէք թէ՛ զո՛ղ փխտիկ,
 Ինչո՞ւ կերար թնթողոց մտիկ
 Գնա՛, կորի՛ր դու մեր տնէն,
 Մենք բէգրած ենք գողութենէն:»

Ս—Ս.

100.

Կայր մին քասիր Ծկտի անուն. բարեկամաց մէջին նկուն,
 Պատահել էր դառն սպրուտտի, կարօտ էր մին նոր հագուստի,
 Ամեն օր կ'գնար ծմակ, ճախ կու բերէր երկու շալախ,
 Այն ճախի փողով էն օրն, անց կու կենայր քաղցած փորն.
 Մին օր մէշից տուն էր գալիս, ա'խ էր քաշոււմ, դառն լալիս,
 Սատանան նորան պատահաւ, ճամլիի միջին խօսքի պահաւ—
 Ասաւ «ո՛վ մարդ, է՞ր ես լալիս, ինչո՞ւ չես մօտս գալիս,
 Ինչ կամենաս ինձնից ուղեր, այս բողբոջն կանեմ հաղեր,

Ոսկի, երծաթ, ձի կամ տավար՝ ունենաս քեզի անհամար,
 Ամենից մեծ իշխան կանեմ, վերջումն երկրի խան կ'անեմ,
 Միայն հետս եղբայրացի՛ր, իմ մասլահաթօղն կայիր.
 Պաս մի՛ պահիր, ժամ մի՛ գնալ, քարոզ լսելուս մի՛ մնալ,
 Ո՛չ տունդ մեռնն կ'տանես, ո՛չ երեսիդ խաչ կը հանես»
 Ծկտին ասաւ «ես յօժար եմ, ինչ որ ասես, կ'կատարեմ,
 Եթէ լիացնես ինձ փողից, զու լաւ ես իմ ստեղծողից»:
 Սատանէն վաղաւ մին տեսակ, գնաց բերաւ տասն քսակ,
 Ասաւ չսա քեզ փող ձեռաց, առատ մոխիր, ո՛չ թէ կամաց,
 Յորժամ ինձ կանչես՝ մօտդ եմ, միամտութեան դօտիդ եմ,
 Երբ որ տեսար պրծաւ փողդ, ճանաչիր քո փող տուողդ»:
 Էլի շուտով անյայտ եղաւ, Ծկտին շալախն տեղ թողաւ,
 Այնպէս ուրախ տուն էր գալիս, որ աշխարհն տեղ չէր տալիս.
 Կինն տեսաւ մարդն ուրախ է, քօլ խօսածն աջ ու ձախ է,
 Ասաւ «այ՛ մարդ, ի՞նչ կայ եարաբ, չե՞ս պէլացել, խանի խարաբ,
 Դու չէիր ծիծաղիլ տարով, թէ եկար ուրախ խաբարով»:
 Ծկտին ասաւ խր կնիանը «ահա՛ ինչ տեսակ է բանը,
 Սատանի հետ եղբայր էլայ, նոր հարստութեան մայր էլայ,
 Ինձ տուել ա տան քսակ, մէջին փողեր տեսակ տեսակ,
 Հիմի ես գնումեմ բողբոջ, առնելու եմ ինչ որ ուզար»:
 Քսակներէցն վեր առաւ, գնաց փողոց պարոն դառաւ.
 Առաւ ինչ որ հարկաւոր էր, ուտելիքն կամ թէ շորեր,
 Վերջապէս հինգ օրվայ վերջին, ապականաւ փողի մէջին,
 Քրտամբ չի աշխատած փողն՝ ո՞նց կու խնայի մրստողն:
 Էլի կանչաւ սատանային, սատանան եկաւ արխային,
 Ասաւ «եղբայր, պրծաւ փողն, էլ խարջելոյ չունիմ վաղն»:
 Կրկին տուաւ ինն քսակ, ասաւ զլխիդ շինիր պսակ,
 Տունեղէնն պատրաստել էր, բարձեր, լիհէբներ զարսել էր,
 Երբ տունն տեսաւ տան նման, կատաղաւ սպանդի շան նման,
 Հարիւր զրուխ ձի ու ջորի, տավար, գոմէշ, ոչխար սիւրի
 Ամենայն, բանիւ լիացաւ, խր ապրուստին շատ հիացաւ.
 Ծկտին մի օր խր մեծ ասնն՝ զուգվել էր ինչպէս սուլթանն,

Կանգնաւ պարզ հայելուն զիմաց, հպարտացաւ կամաց կամաց,
 Տեսաւ կարճ է հասական, սկսաւ մտածել այս ցաւն.
 Իսկոյն եղբօրն միա քցաւ, եղբայրն շուտ ներկայացաւ,
 Տեսաւ Յկտին շատ մթնած է, ունքերն խիտա կախ քցած է,
 Ասաւ, «եղբայր, ի՞նչ է ցաւդ, ո՞ւմ հետ է պտտահել դաւդ».
 Յկտին ասաւ «իմ եղբայրս, քեզի մատաղ հայր ու մայրս,
 Գիտե՞ս քեզնից ինչ եմ ուզում, բոյլս կարճ է, շոր չի սազում,
 Անյաղթ պիտի մին ճար անես, իմ կարճ բոյլն երկար անես»:
 Սատանան ասաւ «սիրելի, կարող ես քիչ համբերելի,
 Գիտես մեր այս երկրի խանն՝ ունի մին լաւ աղջիկ տանն,
 Վաղն գնալու եմ մօտն, կու բռնեմ նորա ձախ ոտն,
 Աղջիկն կու լինի զիւրահար, կու տանջեմ նորան շարաշար,
 Գու հմուտ կախարդի նման՝ ե՛կ, կանգնիր խանին յանդիման,
 Ասի՛ր ես այն զիւրահարին փրկիչ եմ՝ յաղթելով չարին.
 Յորժամ եկիր աղջկայ մօտ, բանն վերջացո՛ւր կարճաւօտ,
 Գուներն ներսիցն փակիր, աղջկան ասպտակով թակիր,
 Ես դուրս կ'գամ՝ նորանիցն, նա կ'ամանչի իրանիցն,
 Գու մեծ պարզեւներ կ'ստանաս, ամենի հետ կը դօստանաս,
 Յետոյ մին իւր կ'տամ քեզի, այն իւրիցն փոքր լուր,
 Բոյլդ կանի իբրև շինար, տեսնողն կասի բախտավար»:
 Սատանան ինչպէս որ ասաւ, վաղն գնաց զործն բոխաւ,
 Պէլացաւ աղջիկն խանի, ո՞վ էր կարող դէն հանի,
 Յկտին լսաւ այս համբան, թռչումէր ինչպէս կաքան,
 Գնաց, հասաւ մեծ պալատն, խօսաւ ստանի խրատն,
 Խանին էնպէս յոյս էր տալիս, որ աչքերին լոյս էր տալիս.
 Յկտին գնաց աղջկայ մօտն, տեսաւ կապած ձեռն ու ոտն,
 Գուներն ներսիցը փակաւ, ողորմելոյն քացով թակաւ,
 Երկու կողմանց ցաւն յաղթաւ, սրտիցն էլ եղբայրն ճխտաւ:
 Աղջկայ մարմինն ստաւ, հողս գլխին էլստ, մեռաւ:
 Երբ խանն այս լուրն լսեց, զլուխն քանդել ըսկսեց.
 Կախարդին բերին քաշ է քաշ, մինչի գալն իլաւ հալեմաշ.
 Խանն ասաւ «անպիտան դադան, մի՛թէ քեզանից մահ ուզան,

ինձ թողեցիր անզաւակ, բախտս քցար խոր հորի ասի»:
 Հրաման տուաւ դահճապետին, «տարէ՛ք այս լիւրը չար տղէտին,
 Մին շինարի ծառ սրեցէ՛ք, սորա տակիցն խրեցէ՛ք,
 Որ հասնի մինչի բողազն, վարդապետի ասաց խազն,
 Երեսն կեղտով շաղախէք, փայտն փողոցի մէջ թաղէք,
 Մինչի որ շան պէս սատակի, ապա թաղէք Ֆէյնի տակի»:
 Մէկ փայտ բերին քառասուն կազն, ջոնդն սրեցին նման վազի,
 Յկտի-բէկին շամփուրեցին, փայտն զետնի մէջ փորեցին.
 Մինչդեռ նա չէ՛ր մեռել, սաղ էր, տեսնողին անտուտ ծիծաղ էր,
 Սատանան եկաւ փայտի տակ ձեռին մին երկաթի մահակ,
 Հարա՛յ տուաւ, «եղբայր Յկտի, ինչ եղբայր քեզ այսպէս կ'օգտի,
 Ինչպէս ա բոյլդ, սի՛րելի, կարո՞ղ ես ասող վեր բերելի,
 Ո՛չ թէ Գարե՛ժ կամ Թէհրանն՝ պարզ տեսնումես շնդաստանն,
 Բոյլդ մտի՛կ տուր հա՛ց արա, էլ մի՛ դանդաղուր, տաղ արա՛»:
 Կամ մարմնով կորաւ կամ հողով, այնպէս մնաց Ֆէյնի տակով:
 Եստ կան այժմեան աշխարհումն ստանի եղբօր շարունակ
 Սուրբ լուսաորչին մոռացող, կամ լոյս օրէնքից հեռացող,
 Երբ ստանան ճարաւ միջոց, քաշելու է մին օր փողոց.
 Թէպէտ խօսքիս ձեն վէպ է, բայց ոմանց զործին հանդէպ է,
 Ինչպէս Շամսախին Հայաքնակի, այժմոյս եղել է խայտառակի,
 Երեխայքն անմկրտութիւն, կամ մեռեալքն անարբութիւն,
 Ով կարգաւ զիտէ շատ ու քիչ, նորան կոչումն քարոզիչ,
 Իրանցից երգ են յօրինում, ո՞վ զիտէ ինչեր են շնում,
 Չեմ ուզում ամենն բացել, կարողն վաղ է հասկացել,
 Մայրիջին էնդուր եմ սիրում, ամեն տեղ անուէր գրում,
 Որ ժառանգ է լուսաւորչի, հաւատացեալ ազգն Փրկիչ,
 Զարկէ՛ար*), դու ամենից չար ես, բայց քո Ազգին օգտակար ես,
 Ով ոք փոխի իւր հաւատն, կու լինի չարեաց արմատն:

*) Հանդուցեալ Զարկեարի երգերը, բանաստեղծութիւնները պատրաստում եմ եւ շուտով ամբողջապէս հրատարակելու եմ յօգուտ նորա որբացեալ ընդանեաց: Ա. Գրիգորեանց:

Գիւլանի*).

Կինա՛ քեօյլում հաւալանդի, փարվանայ թաք դօլանըր,
Բիր զաման շաղ օլուր քեօյլու, բիբ դա կեօրդըն բուլանըր,
Չարխի Ֆալակն իշի դըր, չունքի դաստ օլմիշ բեգա,
Քիմլարի միսկին դըր զուկուրդ, քիմլարի գանկինլանըր:

Մարտ օլան դունեայի բասար, շէյթանի գաֆա բեդար,
Չալըշըր ջաննաթ դազանայ, հար իշի դարար էդար,
Նա քի վերսա դաստի ինան, հախ ինան ըխար էդար,
Մաշարդա չաքմաղ խաջալաթ, նուր ինան փառալանըր:

Կէա՛լ, բէ՛չարս սաֆիլ Իվան, քեա՛ս ումուղըն դունեադան,
Սէջա դըլմի՛ շեւքի՛ւր էյլա նաքի վերմիշ եարադան,
Բէշ արշին բէզ դըր խալաթն ափարդըրն բուրադան,
Մալի, միւլքըն ալդան կեդար՝ զալդա ինան փայլանըր:

Մասեաց զանգակին հրաժարական
մէկ երգը:

Կարծեմ, ժամանակն եհաս, պիտի երթամ օտար երկիր,
Մնա՛ք բարեաւ, իմ ընկերներ, մէյմն ալ գալս Աստուած զիտէ.
Չիս չմոռնաք, այլ ամէն ժամ յիշատակէք հառաչանօք,
Ընդ հուր, ընդ ջուր պիտի անցնիմ, ո՛ղջ մնալս Աստուած զիտէ.
Յաւո՛վ կեյնեմ ես այս երկրէն, խոցուած է սիրտս նետերով,
Աւա՛ղ, քայլերս չեն շարժիր, վերադառնալս Աստուած զիտէ.
Թշնամիներս խիտ շատացան, ամէն չարիք բերին զլեխս,

*) Տես 27 երգի ծանօթութիւնը:

Թէպէտ ընկձել զիս չկրցան, բայց վախճանս Աստուած զիտէ.
Ամէն կողմէ ձայն կ'լսեմ, որ կը հարցնեն, թէ ո՞ւր կերթաս.
— ձանապարհս շա՛տ փշոտ է, ուր երթալս՝ Աստուած զիտէ.
Ափսո՛ս, յարգանքս չգիտցան, ունայն մարդկանց հեռեկցան,
Սր մը կուգայ, որ կ'ղջան, բայց թէ ի՞նչ կայ, Աստուած զիտէ.
Տրտում, տխուր, շա՛տ տարիներ օրս անցուցի, լացի, սգացի,
Ասող չկար թէ՛ լացդ ի՞նչ է, իմ քաշածներս Աստուած զիտէ.
Ես շա՛տ գործքեր պիտ անէի ազգիս ու կրօնքիս համար,
Բայց ի՞նչ կայ որ, էլի կանեմ, ինչ գործ անելս Աստուած զիտէ,
Ծագիկ մնաց երկրի վերայ, որ արցունքովս չթրջուէր,
Սրտիս մէջ անշէջ հուր մը կայ, կսկիծս ի՞նչ է, Աստուած զիտէ.
Շա՛տ բարեկամք ինձմէ գատուած, իմ երախտիքս մոռացան,
Հող չէ, լա՛ւ որ այնպէս ըրին, հատուցումն Աստուած զիտէ.
Խօ՛ր խոցուած եմ, վերքս է անբուժ, բայց ո՛չ, սրտիկս չէ անյոյս,
Թող չսպասեն իմ կորստեան, վերքս ի՞նչ է, Աստուած զիտէ.
Եղէ՛ն եմ ես ողբարար, վշտերու մէջ համբերատար,
Մարդիկ ինչ կասեն, թո՛ղ ասեն, նպատակս Աստուած զիտէ.
Ոհ, հէ՛րիք է, Մեծապառնեան, ընկերներուդ սիրտ վառեցիր,
Դուն ալ էրուար, խորովեցար, ճակապաղէրդ Աստուած զիտէ:

«Է՛հ չեմ սիրել»

(Փառասէր Հարուստ)

Կը սիրեմ ես ա՛խ, թէ ըլնէր, Կը սիրեմ որ ունենայի,
Որ լինէի վէզեր, փաշայ, Մի մեծ պալատ զարմանալի,
Ու յետագայ առարկայից Միջի զարդը զիփ մետաքսեայ,
Տիրող լինել, շատ կ'սիրեմ: Այս էլ գեղեցիկ կ'սիրեմ:

Ար սիրեմ ես մի չքնաղ կոյս, Ար սիրեմ երբ բոլոր մարդիկ
Որ ճեմ առնեք պալատիս մէջ, Ինձ տեսնելիս սաստիկ պատուեն,
Այն էլ քնքուշ փափուկ լինէր, Ուռիմ՝ վերուիմ՝ հպարտանամ,
Այս էլ իսկ սրտով կ'սիրեմ: Անմահ մնալն էլ կ'սիրեմ:

Ար սիրեմ այն սրտակցիս հետ Ար սիրեմ ես միով բանիւ՝
Ուտել խմել, զուարճանալ, Ով ինձ տեսնի չաստուած կարգայ՝
Եւ նորա սեաւ-սեաւ աչերին Բայց Աստուծոյ պատգամ խօսող,
Մատաղ լինելն էլ կ'սիրեմ: Մարդ չ'տեսնելն էլ կ'սիրեմ:

Ասիրեմ հարուստ մարդկանց, Ար սիրեմ ես, որ յաւիտեան
Աղքատն ատել՝ լաւ կ'սիրեմ, Այս սուտ փառաց ժառանգ լինեմ
Փող տալ շահով, շահն էլ շահով Բայց սեաւ դազաղ, սառ զերեզման
Այս էլ չափից դուրս կ'սիրեմ: Դժոխք, տանջանք չ'է՛ն չ'է՛մ սիրելու՝

Սարկաւազ Աբրահամ Փափանեանց:

104.*)

Անեսատու Բրիտանոյ Տիւանդ հողուոյս մեծ դեղ գտայ,
Գեղը դարման, դարման ու ճար, ճարը մաքուր եղ գտայ,
Յրուելու ստուերներս մէկէն շնորհեց լոյս ու ջահ,
Ջահ ու դամբար, դամբար ու լոյս, լոյսը լե կանթիղ գտայ

*) Համարձուր Աթոյեան, (մականուանեալ Հաղիբի) ծնվել է 1840 թ. Ալեքսանդրապոլ քաղաքում եւ վաղճանվել 1876 թ. Յունիսի 22ին 36 տարեկան հասակում: Հանգուցեալի ծնողները քաղաքիս անշան դասակարգիցն էին եւ երկրագործութեամբ էին պարապում որոնց հետ եւ Հաղիբին: Հանգուցեալը այնքան սէր ունէր դէպի ուսումը եւ այնքան համեստ վարք ու բարբ ունէր, որ մի անկիրթ եւ չքարգացած երիտասարդի համար աներեւակայնի իրողութիւն էր: Մի օր ծնողը բարկանալով նորա վերայ, փախչում, գնում է իւր քեռի (ժօր եղբայր) տիրացու Յակոբի մօտ (այժմ քահանայ) կարդալու: Հանգուցեալի համար կարգալը այնքան յաջողվում է, որ հազիւ կարողանում է քերականը (այբբենարանը) եւ սաղմոսը՝ կարդալ, այնուհետեւ դարձեալ ստիպվում է երկրագործութեամբ պարապել: Տեսնելով, որ այլ եւս միջոց չկայ նպատակը

Աղտերս լուանալու իսկ նա շնորհեց երկնացող,
Յօղ ու անձրեւ, անձրեւ ու շաղ, շաղը միշտ հեղեղ գտայ,
Գրքերէն լաւ հասկացայ, ամեն բանից Աստուած է մեծ,
Մեծ ու իշխան, իշխան ու դատ, դատը խիստ ահեղ գտայ:

Արդալով սուրբ գրքերը ամենայն բան քննեցի ճիշդ,
Ճիշդ ու ստոյգ, ստոյգ ու նոր, նորը եւ լաւ շքեղ գտայ,
Ես տկար Հայկերէն եմ, քննեցի շատ տաղանդ ու կիրք,
Կիրք ու կանոն, կանոն ու վարք, վարքը յոյժ համեղ գտայ:

105.

Աորաւ հաւատարիմ արդարութիւնը,
Երբ հաստատուեց մեր մէջ անիրաւ սուտը,
Նորա հետ յառաջեց վատ չարութիւնը,
Սրաւ մեր հոգիքը իւր գրաւ սուտը:

Քանի սուտ չխտէինք՝ միամիտ էինք,
Անուններով ազնիւ մարդարիտ էինք,
Առուստրով անմեղ ճշմարիտ էինք,
Այժմ՝ արաւ մեզի վատ համբաւ սուտը:

Շատ ընկերներ ունեմ խօսքս հաստատող,
Շատերըն են սրտին անարգող — ատող,
Զամալ է, շատ մեղքեր սուտն է խրատող,
Շատ կողմից պատճառեց մեզի ցաւ սուտը:

յառաջ տանելու, սկսում է Տարեկերէն երգեր յօրինելով ժամանակն անցկացնել: Վերջին ժամանակներս ատենելով Հայոց երգերի ընդհանրանալը, ինքն եւս (առանց ոչ որի աշակերտելով) հետեւեց ընդհանուր կանոնին, Հայերէն երգեր յօրինելով: Հանգուցեալը ժամանակի պահանջին հակառակ վարմունք է ունեցել, որովհետեւ իւր հեղինակած երգերի իսկական սեւադրութիւնը անխնայաբար տուել է իւր ծանօթներին, չմտածելով, որ մի օր ժամանակը կը պահանջէր իրանից: Իւր մահուանից մի քանի օր յետոյ, հազիւ կարողացայ

**Մօր աղէկիզի՝ ողբ քստմենել՝ ընդ մահ անդ-
րանկի՝ յօտար աշխարհի.**

Հողեզուարճ դարձիզ, հողեկից որդեակ,
Զցայգ և ցերեկ բաց աչօք սպասեմ,
Ի տուրնջեան յուսով զես խափեմ, որդեակ,
Ձգիչերն երազովք միշտ ընդ քեզ խօսիմ,
Ո՛հ, ե՛րբ եկեսցես, զես ե՛րբ սփոփեսցես:

մ սիրտ մայրենի իբրև ջուր յտակ՝
Զպատկիրդ ցուցանէ յինքեան պարզ, որդեակ,
Ա՛խ, մեռցի՛ իմ սիրտ, սիրտ տրամագուռակ,
Քայքայիմ, հալիմ, կաթողնիմ, հաշիմ,
Զիս ե՛րբ սփոփեսցես, ե՛րբ տեսցես, որդեակ:

Միանգամ ցոյց մօրդ գերեսս քոյ, որդեակ,
Միանգամ լուայց զձայն քո՝ որդեակ,
Շանթ երկնահասանք զեսաւ կենաց իմ թեւ
Փութասցին ապա կտրատել, խզել,
Ի սէր քո կիզիմ, տոչորիմ, որդեակ:

Ո՞ գիտէ թէ յո՞ր անկեան աշխարհի
Ի մէջ օտարաց յաղտոտ անկողնի
Հիւանդ, անխնամ, մերձ մահուան գրի
Մա՛յր ձայնես, և ես կամ ՚իքէն հեռի,
Վա՛յ, ցաւի հոգիս, լեարդ իմ խարշատի:

տան անկիւններից ժողովել մի քանի հատուկտոր երգեր, որոնք հանգուցեալի ինքնակրթութեան զարգանալու յիշատակը եւ միանգամայն պարծանքը պէտքէ համարուին: Աղերսանդր մխիթարեանց:

Ի մէջ անկողնի, ՚ի մութ գիշերի,
Յահեղ երազի զորդեակդ իմ տեսի,
Ի մահուան մահճի, ՚ի մեծ տագնապի
Զձեռն իմ ձգեցի առ քեզ ո՛չ հասի,
Երա՛զ նզովեալ, ուշ իմ ցնորի:

Փարիմ զքո ոտիք, որդեակ նազելի,
Զո՛հ լիցին իմ կեանք քեզ՝ անզին որդի,
Դու արդ դա՛րձ առիս: իմ հնազանդ որդի,
Ընդ քո զիս մեռո՛, կեցո՛ զիմ հոգի,
Վա՛յ, քանի՛ դառն է մայրութիւնն, որդի:

Համբար է վշտաց սիրտ մօր քո՝ որդեակ,
Անհուն են աչացս հոսանք արոտատուաց,
Դու ինձ մխիթար, ծաղիկ անուշակ,
Խարիսխ իմ յուսոյ, իմ կեանք, լոյս տատարակ,
Փութա՛, դարձ առիս, սպառիմ ՚ի կենաց:

Յարութիւնն վարդապետ Աւստրաբեանց:

Սէր պանդխտին առ Հայրենիս.

Հայրենի՛ք ցանկալի, քեզ եմ փափագում,
Անունդ լսելուց սիրտս է զոգում:
Մնացեր եմ պանդուխտ պարսից խորքերում,
Եւ քո սիրոյդ վիշաք միշտ զիս մորմուռում:

Իմ կենաց օրերն շուտ շուտ անցանին,
Ե՛րբ կարօտ իմ աչքեր արդեօք քեզ տեսնին,
Քո սուրբ վանորայք, վա՛յրք նուիրական,
Ե՛րբ արժան լինիմ ես նորանց տեսութեան:

Երբեքալ, տատանեալ պանդուխտ հողերումս
Թափառելով շրջիմ տար սահմաններումս,
Հարագատ երբ չեն ինձ այս օդ և այս ջուր,
Հայելով մաշեն զիս, չեն ինձ երբէք զիւր:

Վե՛հ Ոգի դու պաշտպան Հայոցս թշուառ,
Չունիմք մեք ուրիշ յոյս, արա՛ մեզ մի ճար,
Մեր անբոյժ վերքերին խնդրեմք տո՛ւր դարման,
Գթա՛ մեզ պանդխտոցս լքեալ անխնամ:

Անողորմ՝ Ուրուրքն ճտերդ տարին,
Մնացեալքն էլ ցրուեցին գունդիս երեսին,
Սգալով դու ողբաս նոցա կորստեան,
Մինչի ե՛րբ նստեալ լաս տխուր յայդ անկեանս:

Որդիքդ ահա՛ քեզ սովրեցան սիրել,
Տե՛ս ուսման դրօշակներ ծածանին ծալեր,
Նորա քաղցր ճաշակն ի՛նչտեղ է հասեր,
Մինչև ՚ի սէր նորին Զարկեարն էլ վառեր:

Ամենայն հին տաղնապք անցին գնացին,
Սակայն նորանց մեծ մասն մեր հարք կրեցին,
Հայաստան արդ ծաղկեր, չկա՞յ մեզ բաժին,
Լո՛ւր խնդրեմ՝ զեղոք Մ. Բժշկեանցին:

108.

Վանեցի կտրիճ.

Հազի լըրացաւ քրսան մէկ տարիս,
Աղբամազ ըրսաւ երես ու ճնօտիս,
Թըշերս կարմիր վարդեր կը կաթի,
Զիւրբս ամուր՝ ասես երկաթի:

Տըւէք ինձ սարեր՝ սարեր կործանեմ,
Ծառը արմատով գետինէն հանեմ,
Սուր ակօաներով երկաթ կը ծամեմ,
Մէջս այդքան ոյժ՝ ասէք, ի՛նչ անեմ:

Առաջևս դրէք մարդ հարիւր ու հազար —
Զարդեմ, տըրորեմ զերդ բողի ու դազար,
Ինչ այլք շարթու մէջ՝ այն ես օր կ'անեմ...
Մէջս այդքան ոյժ՝ ասէք, ի՛նչ անեմ:

Իմ պէս բիւրերով լն է Հայաստան,
— Նրոս սուրբ հողին ըլեմ ես զուրբան —
Մարմինը ուժեղ լառոյց է Հային,

Այլ, ախսո՛ս, թըմբած է նորա հողին:
Թէ մի օր զարթի նորա վե՛հ հողին,
Նա պարզ կը ցուցնէ Օսմանլի ազդին —
Ով էր երկուսէն սարուկ և կամ տէր...
Ա՛խ, երբ պիտ թնդաք խեղճ Հայի սրտեր:

«Փոք» III հատոր. Գամառ-Քախիպա:

109.

Վանեցոց Հայրմերը.

Հայր մեր երկնաւոր՝ սուրբ լա քու անուն
Հային երկրաւոր տո՛ւր արքայութիւն.
Ամեն բանի մէջ քու կամքը թո՛ղ լա,
Միայն թէ Հայը լուծի տակ չի լա.
Ո՛չ չոր, ո՛չ կակող հայրդ մենք կուզենք,
Միայն տո՛ւր ամեն Հայի ձեռքը զենք.
Զենք խնդրիլ թողնել մեր անձանց պարտքը,
Թէք վերցուր թուրքի խայտառակ հարկը.

Գլորէ մեզ, Աստուած, մարտի փորձութեան,
Որ ազատվի աղզըդ քո Հայկեան:

«Փոք», III հատոր, Գասան-Բախիպա:

110.

Չաւակներես.

(Հատուած Բարբուհիի Տուփից)

Հանապաղ շքեղ նոր քաշած նկար
Դէպ փոշոտ փողոց տանումեմ վաճառ...
Մարդ չէ՛ մօտենում... Եւ երեկոյեան
Կրկին դնումեմ տանս պահարան,
Ուր ամբողջ կեանքիս բիւր նկարները
Կրծումեն միայն անզութ մկները...

Մի օր պատահմամբ նայեցի այնտեղ,
(Ո՛հ ինչ տեսարան... թափեցի հեղեղ...)
Ահա՛ միմեանց մօտ կենդանի նորանք
Բերումեն կանգնած նայողին զարմանք...
Իսկ ես ամաչած իմ վաստակների
Թշուառ բաղդիցը, որպէս մի գերի,
Մնացի սառած... նորանք ինձ կարծես
Ասել կուգէին— «արարիչ, է՞ր մեզ
Ողի փշելով կեանքից մեռլաղին,
Գերի ես շինել մկների ձեռքին...»

— Մի՛ լայք, գոռացի, մտքիս դուք ծնունդ,
Եւ մի՛ չոր սրտիս զարկէք հրոտ զունտ,
Երբ ձեր ծնողը մարդի է գերի,
Քիչ էլ դուք եղէք ստրուկ մկների.....

Բաբեբոանի:

111.

Ազգային երգ «Չապայի» եղանակով.

Հայոց հսկայ երիտասարդներ,
Թողէ՛ք դուք անմահ յիշատակներ,
Ազգութեան վառուած սրտերով,
Ուրախ սիրով հայութեան հոգւով
Յառա՛ջ, յառա՛ջ, եղբարք, սիրոյ ասպարէզ,
Յառա՛ջ, յառա՛ջ, եղբարք, ազգային հանդէս

Հայաստանի ծաղկեալ դաշտերում
Գիշեր, ցերեկ Սոխակ է երգում,
Հայկազեան տոհմի խմբերով,
Բարի յուսով, սուրբ նպատակով
Յառա՛ջ, յառա՛ջ, եղբարք, սիրոյ ասպարէզ,
Յառա՛ջ, յառա՛ջ, եղբարք, ազգային հանդէս

Վարդան Եղիաշաբեանց:

112.

Հալալ մալիդ մէջը հարամ մի՛ խառնիլ,
Հարամին մասրաֆ չունի, հալալ մալ պիտի
Սուտ ասող մարդի հոգին կ'երվի
Մարդկանց մօտին քեզ մի դողրու հալ պիտի

Հալալ քաղցրդ էլ հարամ կ'դառնայ,
Երանի՛ էն մարդին,— մեղքից յետ կ'դառնայ,
Վ'փտի մարմինդ, ոսկորդ հող կ'դառնայ,
Գերեզմանիդ վերայ մի մեծ սալ պիտի

Փուչ կենդանի, շատ մի թամահ անիլ էս դիւնեայ մալին,
Հողիդ պայծա՛ռ պահիր էդ քաղցր հալին,

Սոխակ Հայաստանի IV հատոր Ա. Գ.

Քրիստոս զատաստան կ'նստի ՈւռնաՏի-կալին,
Զէ՞որ մի օր Զուղարը տալ պիտի:

Պակաս մի՛ բռնիլ շա՛տը, կէտը, Կարը,
Մեղքի վերայ կ'ցնուի շատ մեծ մեծ սարը,
Բեկարայ Միտիլ, բաս ո՞նց կ'լինի քո ճարը,
Մի ժամանակ քո մեղացը ողբով լալ պիտի:

113.

«Среди долины родныя» երգի եզանակով.

Հեռո՛ւ, հեռո՛ւ Հայրենիքից շրջումեմ տար աշխարհ,
Ո՛հ, իմ ծնած օրից ծանօթ են ինձ սուգ և աշխար,
Աշխարհումս ամեն արարած ունի իրան ընկեր,
Ես միմիայն միայն ցրվում եմ իմ կեանքիս օրեր:

Ո՛ւմ հետ խնդամ, ո՛ւմ հետ բաժնեմ սրտիս զգացմունքներ,
Ո՛ւմ հետ ցաւիմ, և ո՛ւմ պատմեմ հոգւոյս վրդովմունքներ,
Ո՞վ է Հայր և Հայրենիքն, ծիծաղելի է այս,
Հայր փախչումէ անունից, քրտամներ ի է այս,
Հայր չունի իրեան անցեալ, ողորմելի է նա,
Հայր չունի իրեան լեզու, կարեկցելի է նա:

Զորս կողմս օտարութիւն, միայնութիւն տիրեց,
Իմ կեանքի անապատը մի ծաղիկ չ'զարդարեց,
Եղո՛ւկ կեանքիս պանդխտական, եղո՛ւկ և ձեզ, Հայեր,
Ի՞նչ ստիպեց ձեզ անայլ թողուլ ձեր երկիրներ,
Դարձէ՛ք, շէնքէ՛ք նուիրական ձեր հին աւերակներ,
Եւ զգուեցէ՛ք այն հողերը, ուր են ձեր հարց սակօրներ,
Նա ձեզ կ'տայ հաց և զինի, ազնիւ բերքեր առատ,
Գործող ձեռքեր տարէ՛ք այնտեղ, նա դանձ է անընդհատ.

Հեռո՛ւ, հեռո՛ւ, օտարութեան ամեն վայելչութիւն,
Ես երջանիկ կ'լինեմ այնտեղ, ուր իմ հայրենի սունդ,
Եւ երբ մեռնեմ, իմ տապանը նոճիկների ներքոյ,
Նոցա վերայ կ'երգէ Սոխակն զգացմունք իւր հոգւոյ:

Ն—Ա.

114.

Ազգային երգ, ասացեալ 'ի վաղ ժամանակաց
'ի պատիւ Արտաշիր (Թագաւորին Հայոց*).

Հնչեցէ քողցրածայն տասնաղի երգարան,
'ի գովել հրճուանօք զԱրտաշիր մեծ արքայն,
Բոլորակ կապեցեն ձիթենիք բիւրոստեան
'ի զլուխ վեհափառ արքային զիւցազեան:

Երգեցեն զումարտակք պարանցիկ կուսանաց,
Հերարձակ ցնծացեն թմրկահարք հիասքանչ,
Քանցի մեր թագաւոր 'ի բազդ իւր կայ բերկրած,
Վասն այն մեք գովեսցուք զԱրտաշիր բազմապանծ:

Բարձրացի Հայաստան 'ի չքնաղ իւր Արքայն,
Շողեսցի 'ի վերայ լոյս երկնից գերազան,
Զի պայծառ փայլեցան տիեզերք ամենայն,
'ի լուսոյ երեսաց Օծելոյն վեհական:

Փայլեցին ապարանք լուսափայլ զարդարած,
'ի փողոց պճնազարդ թափեցին ճիւղք դարնեաց,
Նազելով ձիւմեցէ Արտաշիր քաջ արանց,
'ի չքնաղ հիացումս ամենայն աշխարհաց:

* Տես 62 երգի մեծ. պ. Տէր-Ներսէսեանցի ծանօթութիւնը:

Յնծացաւ արեգակն ընդ զուճարս աստեղաց,
եւ երկիր փայլեցաւ ՚ի պայծառ իւր փառաց,
Քանզի կայ իւր արքայն Արտաշէր միշտ բերկրած,
Որով և մենք ջնծամք ընդ այս բաղդ մեծաբանչ։

115.

Մայիփի խօսքերից.

I.

Հազար ութ հարիւր եօթանասուն հինգ թուին
Տեսայ մէկ «Պարտիզիկ»*), հիացայ նորա հոտին, հովին,
Գարնան քաղցր հով էր փչում, տեսակ ծաղիկունք կար միջում,
Ստեփաննոս**) քահանան ասաւ ահա՛ ընծայ քեզ,
Որքան լաւն ուզես, չես զանիլ այսպէս պարտէզ։

Ես էլ սիրով ընդունեցի, այնտեղ ինձի յիշած էին,
Թէև ինձի յիշած էին, շատ տկուկներ տաշած էին,
Թէև ակունք տաշած էին, իւրեանց կեանքն էլ մաշած էին,
Թէև կեանքն մաշած էին, ազգին զէպի լոյս քաշած էին,
Թէ կ'անն սուտ ես խօսում, կասեմ ես չունիմ ուսում։

II.

Մաղթանք Բագուի «Մարդ» ընկերութեան.

Ո՛վ բարեկամք, իմանանք ամենից յառա՛ջ յառա՛ջ,
Սէր, պինդ միաբանութիւն ունենանք յառա՛ջ յառա՛ջ,
Հարկաւոր է ի՞նչ անել, մեր գործերն լաւ տանել,

*) Այս պատուական աշխատութիւնը արժ. Խորէն քահանայ միջաբեզեան-
ցինն է։ Այն մեզ-Հայերիս շատ ուրախալի է, երբ մեր քահանաների մէջ ու-
մանք բացառութիւն կազմելով, բացի իրանց ծանր պաշտօնակատարութիւնից,
աշխատում են եւ Հայ գրականութեան նեղ ասպարիզում։ Շատ կեցցեն այդ-

Լաւ է միշտ այդպէս անել, սէր մնալ յառա՛ջ յառա՛ջ,
Թէ չ'անն զուր է խօսում, միշտ կ'լինինք մենք լոյսում,
Իսկ թէ ունենանք ուսում, կգնանք յառա՛ջ, յառա՛ջ։
Մեր հարքն մեզ թողին կոյր, ո՞ր էինք, ընկանք ո՞ւր,
Արտասուելով ամեն օր, յետ ենք մնում, յառա՛ջ յառա՛ջ,
Այլքն մեզ օրինակ, աշխարհքն դիմակ դանակ,
Կտրենք խելքով, իմանանք խղճմանքն յառա՛ջ յառա՛ջ։
Այժմն է ազատութիւն, ինչո՞ւ քաշենք նեղութիւն,
Ունենանք խաղաղութիւն, ազատ կեանքն յառա՛ջ, յառա՛ջ։
Քա՛ւ է այժմ մենք զարթնենք, մեր առաջին կարգ դնենք,
Վարդ փունջերն մարդ գնենք, հասկանանք յառա՛ջ, յառա՛ջ։
Լոյսի որդին խաւարում չե մնալ իրա օրում,
Լուսաւորն էլ հորում, այդ զգանք յառա՛ջ յառա՛ջ։
Պէտքէ կեղտից սրբու ինք, և սրտերով մարբու ինք,
Տէրի անունն երգենք, Տէրին յուսանք յառա՛ջ յառա՛ջ,
Թէ մանգանք, կգանենք, դուռն թակենք, կբանանք,
Ի՛նչ ուզենք, կտանանք, հաւատանք յառա՛ջ յառա՛ջ։
Այս առաջուց խոստացաւ, մեզի էլ կապից բացաւ,
Մեզ իրանն իմացաւ, մենք գնանք յառա՛ջ յառա՛ջ։
Թէ չօրը ճանանչումենք, մեզի որդիք կոչումենք,
Ազատութեան մեջումն ենք, միշտ փառք տանք յառա՛ջ յառա՛ջ։
Բայց որ ուսում չունենանք, ո՛վ պարոններ, ե՞րբ կ'ստենենք,
Ո՞վ ասաւ մեզ կոյր մեռնենք, չհասկանանք յառա՛ջ յառա՛ջ։
Այս խօսքերս ասեմ բաց, մեր իշխանների զիմաց,
Եկեալի համար հաց աշխատենք յառա՛ջ յառա՛ջ։
Մայիք Յարս-Նիւնն եմ անտես, խորէն քահանայ-Յովհաննէս,
Ամենն ինին քեզի պէս, կգնանք յառա՛ջ յառա՛ջ։

պիսի քահանաներ մեր ազգի եւ եկեղեցւոյ պայծառազարդութեան համար

**) Լանբարանու տեղական քահանան է։
Ա. Գրիգորեանց։

Պատասխանի 'ի դիմաց Անի քաղաքին
առ օրօրողն իւր.

Հիւանդութեան ցաւն է կտրել աչքիս քուն,
Որովհետեւ կորցրել եմ տեղ ու տուն,
Երբ պատահիս Արարատայ որդեկին,
Ասես նրան, Հայոց կուռնկ իմ սիրուն,
Թէ՛ քու Անին չի պահանջիլ «օ՛ր օ՛ր օ՛ր»
Մի՛ նորոգեր նորա ցաւեր նոր ի նոր,
Նորա ասաղը էլ չի վայլում ի յերկին,
Զի երեւում ի շարս այլոց անդանօր:

Ի՞նչպէս քուն զայ նորա սգւոր աչերուն,
Երբ կնայի իւր հեա մեռած քաջերուն,
Որ չը պիտի քնած տեղից վերկենան,
Խրախոյս կարդան աստանդական լաճերուն,
Որոնք որ զիս չեն ճանաչում գլխովին,
Զեն մտածում սպեղանիք իմ ցաւին,
Օտարները զգում են իմ խղճութիւն,
Բայց Աղբը Հայոց զիս մռանան բնախն:

Թո՛ղ ես չըլեմ, իմ տեղ լինի Ձոր Վայոց,
Կարա՞յ արդեօք մնալ անլաց և անկոծ,
Մէկ կողմիցը զիս վառումէ իմ ցաւեր,
Եւ միւսիցը՝ անձախտապէս սրտիս բոց:
Ա՛ն ո՞րն ասեմ, ո՞ր մին թողում ցաւերիս,
Ո՞վ հոգ տանի ծովում շուար նաւերիս,
Կայ Վահան, չկայ Վարդան և Գաղիի,
Ընկար կեանքիս չը յաջորդեց մէկ մայիս:

Երբեմն էի Հայոց պարծանք սարծանաց,
Շքեկ պալատ Բագրատունի որդեկաց,
Զէ՛ր ինձ նման նորահարսին և վիտայն,
Պճնեալ զգետուք նախանձելի աշխարհաց:
Սակայն հիմա կամ ես կամ զաշտ Արտազի՛
Հայոց համար առարկայ եմք տրնակի.
Ուստի փոքր ինչ կա՛ց՝ բան ունիմ ասելու,
Հայոց կուռնկ, համբերի՛ր մի՛ վազի:

Այս թուղթ քեզի ահա՛ կառնեմ ապաստան,
Շուտով տարեալ հասցնես ի Շիրակման,
Իմ յիտաղայ ողջ զանդատանք տեղն ի տեղ
Այնպէս պատմես որ լսի բուն Հայաստան
Ասես թէ՛ Ձեր անբաղդ Անին սեւաւոր
Զեղ կը խօսի այս բողոքանք զրա որ,
Եթէ Մեղուն, Աբծիւ Կուռնկ, Ալաւնի
Ինձնից աե՛լ յարգ ունէին հարկաւոր:

Ո՞վ է լսել, բա՛բէ, ամօթ այսուուր,
Մասնաւորաց յարդել զերբան զընդհանուր,
Մեղուն, Արծիւ Կուռնկ և Կոխ կը կայթեն,
Վա՛յ քեզ, Անի, թռչնոց եղեր առաթուր
Սշոտ, Սմբատ, մեծ Բագարատ և Նիրսէս
Երբ յիշումեմ, արիւն կաթի ի սրտէս,
Անմարդարեակ դառաւ տունն իմ մարդաշատ,
Զօր ու զիշեր բուոյ մնամ ասպարէզ:

Յանկանումեմ թէ մին Հայազգ զայ ստի—
Անբա՛ղդ Անի, վե՛րկաց հետս քիչ խօսի՛,
Ո՞րտեղից է քու ցաւերի զանգատը,
Կամ ցաւելով խեղճ զրօ թիւնս ախտոսի:
Ո՞վ է սու ել որբեկուն խրախոյս
Որ ուրիշն էլ օրինակեալ տայ ինձ յոյս:

Ո՛չ Մասիսը, և ո՛չ գայուց Եօթնարկեան,
Ո՛չ անդրանիկ Արարատեան Արշալոյս:

Ուստի Թո՛ր, երկայնավիզդ իմ կռունկ,
Թո՛ղ չե իջնեն քու աչիրդ քաղցրիկ քունք,
Արարատեան օթեանին շուտ հասիր,
Պատմի՛ր նորան զիմ այս տխուր զգացմունք:
Ասա՛, որ ձայն տայ իմ ազնիւ որդեկաց,
Նա մանաւանդ նորագոյարձ հասակաց,
Ինամք տանեն որբւերի քաղաքիս,
Ներգործական դեղ մատուցին իմ կենաց:

Սոսկ «օրօրով» իմ աչքերուս քուն չի՛ գալ,
Խռովել է, անդորրու թիւն տուն չի՛ գալ
Մասիս լեռան և Աովհասին անկարծիք,
Բայց տէրունի կացարանում ձուն չի գալ:
Ֆիրար եղան իմ բնակիչք աստ և անդ,
Ես մնացի այլազգեաց ձևք ի պատանդ,
Օր ըստ օրէ դեռ կարգ ի կարգ իմ քարինք
Ինքնակործան, ո՛չ յուսմքէ կան ի քանդ:

Այսքան բա՛ւ է տեղեկութիւն իմ համար,
Թո՛ր, գնա՛, Աստուած տայ քեզ ճանապարհ:

Յովհաննէս Եսայեանց:

Ի մ եր գ բ.

Հեռացել եմ իմ մայրենի աշխարհից,
Սերտ բարեկամք անջատած են ինձանից,
Թառամումեմ ես այս օտար երկրումը,
Մենակ բըսած ծաղկի նըման դաշտումը:

Կամաց կամաց տարիները անցնումեն,
Մեզ նորոգած դարուն, ամառ դարձնումեն.
Միայն իմ խեղճ կեանքը չունի ո՛չինչ նոր,
Ինձ երեկը կրրկնումէ միշտ այսօր:
Ասպարիզիս նեղէ ճամբան ու վշտ,
Խեղճու թիւնըս համարումեն ինձ ամօթ.
Իմ վիճակին կարեկցութիւն մարդ չունի,
«Պա, ասումեն, իր կեանքումը դարդ չունի»:
— Ես դարդ ունիմ, դարդս մեծ է ու պէտպէս,
Բայց չեն տեսնում ձեր աչքերը կարճատես, —
Երբ ես մըտայ անհիւրընկալ այս աշխարհ,
Քանի բուպէ բազըր ժրպտաց ինձ պայծառ:
Հա՛, ասացի՛ դարձել է իմ անիւր,
Լքացել է իմ վատ բազըրի չար թիւր:
Յանկարծ վրչեց անտուժելի հիւսիսին,
Թառամեցուց վարդ, մանուշակ մայիսին,
Այսպէս չորցուց իմ նազելի հասակը
Իմ անողորմ, անագորոյն վիճակը:
Ա՛խ, մօտեցի՛ր, օրհասական օր մահուան,
Բե՛ր քու հետը սե հող ու նեղ գերեզման:
Թո՛ղ սառ լինի իմ նոր տանը յառակը
Ծանրը քարէ վրէս ծածկած վերմակը:
Բայց ա՛խ երբոր կանցնի ամիս ու տարի,
Կըմամուտի գերեզմանը այն քարի,
Հեռքը անգամ չի մընալու իմ խաչին,
Իմ անունը, իմ յիշատակ — կը կորչին:
Բայց կուգէի թողնել այստեղ մի արձան,
Որ դարէ դար մընար, ամուր անկործան.
Ես երգեցի երգ ոլորուն ու անոյշ,
Իմ քընարի ձայնն էր մեղմիկ ու քընփոյշ:

Մի՞թէ այնքան անգութ կլինի Վեռայ,
Որ անուշըս անդամ կանէ նա անհետ

Ռ. Պատիւանեանց:

118.

Հայեր, իրար սիրենք ու խաղաղ լինինք,
Ուրիշ ազգեր ինչե՞հ հակառակ տեսնեն,
Իրար համար զոհուինք ու մատաղ լինինք,
Մեզն սիրով ու բախ բախճանակ տեսնեն:

Վատու թիւն սիրողն է անասուն անբան,
Մեր հայազգին երբեք կռուիլ չէ պատկան,
Ս. յնպէս ընթացք բռնենք՝ չճաղղեն— խնդան,
Իրարու սիրական շարունակ տեսնեն:

Չամալիս կը խօսեմ մեր ազգին յարմար,
Խաղաղութիւն սիրենք կեանքի օգտակար,
Օտարք չ'կարծեն մեզ անխելք ու յիմար,
Ամեն տեղ պարզերես համարձակ տեսնեն:

119.

Հայ մարդ, մի՛ կորցրնէր նախնեացդ ոգին,
Այն է՛ կրօնական պահպանութիւնը
Միմիայն այդ մնաց աշխարհի միջին,
Պարծանք մեր Հոգևոր իշխանութիւնը:

Սակայն պարտաւոր ես աչքերրդ բանալ,
Նախապաշարմունքներ հերքելու ջանալ,
Հոգևորաց լաւերի հետ միանալ,
Վայելել աշխարհի երանութիւնը:

Չամալիս պէս եզեր դու պարզակրօն,
Կատարէ ազգիդ հետ ամեն ծէս և տօն,
Մի՛ խղեր միութեան կապը, լե՛ր դգօն,
Կորուստ կը պատճառէ բաժանութիւնը:

120.

Հնչեցո՛ւր քաղցրաճայն նուազարանդ,
Ո՛վ իմ հոգեհատոր յարդոյ երաժիշտ,
Շատ թանկ է մեզ համար քո մի վայրկեանըդ
Քեզնով է փարատուում ամենայն ցաւ, վիշտ:

Սպասում ենք քեզի նայելով ակճիւռ,
Թէ արդեօք լարերիդ ե՞րբ կտաս կշիռ,
Բերկրելով ամեն սիրտ կստանայ զրգիւռ,
Քեզնով փափկանում է սիրտը ամբարիշտ:

Դու ես պատերազմի զրդիլ մակարդը,
Ուրախութեան և տրամու թեան նորբ զարդը,
Չամալիս զովում է երգ սիրող մարդը,
Շիլլերից առնելով Վերդը կեանք է միշտ:

121.

Հայ եղբայր ուսուցիչ, դու մի՛ խնայիր,
Ինչ ուսում առել ես, քու ազգիդ խղճուկ
Գիտութեանդ լոյսը սրտով ընծայիր,
Արծարծէ սրտերում մանկական փափուկ:

Նայելով փրկութեան վեհ ատիճանից,
Ամեն մի բան սպասուում է քեզանից,
«Ու՛մ շատ տուա՛ւ շատ պահանջվի նորանից»,
Կատարիր փրկչական այս խօսքը յատուկ:

Յարգրդ չը դիտենալ մի՛ բերել պատճառ,
Չամալիս յուսով է՛ չես մնայ թշուառ,
Ապագային արածներդ շատ պայծառ
Կերևի փայլելով, չի մնայ ծածուկ:

Բողոք առ Եւրոպա.

Ձեռքերըս կապած, ոտքերըս շղթայ,
Կ'ասէ Եւրոպան «Հէ՛ր չելաք ոտքի,
Ձեզ ազատութիւն, ձեզ օրէնք չի կայ,
Տարէ՛ք, կըրեցէ՛ք դուք կեանք ըստրկի»:

Վեց հարիւր տարի մեր երակներէն
Կաթ կաթ ծորեցաւ մեր վերջին արիւն,
Եւրոպան կասէ «Շուռ գանք Հայերէն,
Հայի մէջ չի կայ ուժ ու քաջութիւն»:

Ամբողջ Հայաստան ասեղ չէր մնացել,
«Հայք, կասեն, ի՞նչու թուր չի վերուցին»,
Մի՞թէ վառօղի հոգս պէտք էր անել,
Թէ՞ պէտք էր բրդեւ չոր հաց քաղցածին:

Եւրոպ՝ մոռացա՞ր երբ Ձրաբաշտը
Ձեռքը թուր՝ կուգար շիտակ քու ծոցը,
Բայց Հայի ահեղ Աւարայր դաշտը
Շիջոյց մոլեռանդ այն կրօնի բոցը:

Եւրոպ՝ մոռացա՞ր այն կուռ հարուածը
Որ պատրաստել էր Իսլամ՝ քու օրոցս,
Հայը չուզեց քու արտօսք ու լացը,
Քաղաքաց հրդեհ, խողխողանք մարդոց:

Երկերիւր տարի՝ արիւն թափելով
Գէ՛մ տուեց ահեղ, ուժգին այն գրոհին,
Մինչև որ ձեր կեանքն դարձաւ սպահով,
Մինչև որ ուժէն ընկաւ թշնամին....

Եւրոպ՝ մոռացա՞ր, երբ քու քաջերը
Սնասպառի մէջ մընացին քաղցած
Ի՞նչ պիտ օգնէին նոցա զէնքերը,
Թէ որ Հայք նոցա չը տային կուշտ հաց:

Ապերախտ Եւրոպ յիշէ Հայերուն,
Դու շատ մի՛ խաբուիլ սուրի շաչունէ,
Սրիւն վո՞թելը չէ՛ առաքինութիւն,
Եւ ո՛չ նա ազատ ոգու նըշան է:

Մենք խաղաղութիւն գրկէին սովեցանք,
Նեղիչին ներել — Ս. Եսաբանէն,
Մի՞թէ մենք այսօր պատուհասեցանք,
Մի՞թէ խաբուեցանք մեր բարերարէն:

Ինչերո՞ւ էր պէտք առաքինի վարք
Ե՛ր չեղանք Հայքըս սրիկայ, մարդասպան,
Անշուշտ կը դասէր մեզի ազգի կարգ,
Սրիւնածարաւ զոված Եւրոպան:

«Փոք» Ա. Տ. № III.

Գամառ-Քալիպա:

Հո վիւ.

Ձիւնն եկեր, երկիր պատեր,
Սար ու ձոր առեր, նստէր,
Եղնաւորին հանդիստ քուն,
Շինականին երազներ:

Դաշտեր ձիւնով էր պատած,
Հովիւ նստաւ մոլորած,
Զուրկ արօտից և հօտից,
Տան տիրոջ մշակ մնաց:

Առաօտեան վաղ ելեր,
Թեղձ հովիւ կժերն աներ,
Գնաց առուից ջուր բերել,
Առուն և ջուրն էր սառեր:

Հովիւ ցրտիցը սառած,
Աչքը վերցուց վշտացած,
Սար ու ձոր մտիկ տուեց,
Աչքն էր արտասուքով թաց:

Ա՛խ քաշեց մի խոր սրտից,
Չգիտեմ ի՞նչ էր մտքից
Անցաւ՝ այս ինքն էր գիտում,
Միայն այսպէս նա երգեց:—

«Պարունն էլ անցաւ օրերն էլ դարձաւ,
Հօտ ու հովիւն էլ զնաց, վերջացաւ,
Բայց զեռ իմ առուր՝ իմ ժամանակի
Պայմանեալ օրը ա՛խ չ՛լրացաւ:

Չմեռն էլ եկաւ ցրտով սառուցով,
Սար ու ձոր ծածկից լուռ ու մունջ սղով,
Ծառք և ծաղիկներ թափեց, աւերեց,
Էլի ինձի թողուց լալով, արտասուքով:

Ետտ այսպէս գարուն ու ձմեռ անցան,
Մանկական օրերս տարան, հեռացան,
Դարձեալ ինձ թողին անտէր այս զիւղում,
Հովիւ ու մշակ օտարի դռան:

Բլբուլն իբ վարդին ինչպէս վառ սիրով
Ես էլ մեր զիւղին այնպէս կարօտով
Անցնումեմ թէև օրերս այսպիսիւղում,
Բայց իբրև սղուր հալ ու մաշ ցաւով:

Աղքատ իմ ծնողք մեռան, թողուցին
Մեզ անտէր որբոցս աշխարհի միջին,
Օտար զիւղերում ցիրուցան ծառայ,
Քօխ ի իւղբաշու, համկի առաջին:

Պապուս փողերը հօրիցս խլեցին,
Վար ու ցանք հողն էլ օտարք տիրեցին,
Էլ չ'մնաց մեզ մի պատառ չոր հաց,
Որից կարօտիւ իսպառ զրկեցին:

Ա՛յ խղճուկ ախպեր, ա՛յ իմ խղճուկ քոյր,
Դուք էլ ինձ նման լալուց դարձաք կոյր,
Դուք էլ օտարի իշխանութեան տակ
Արդեօք քաշո՞ւմ էք ինձպէս թուր ու մուր:

Դեռ ծառայել ինձ մնաց շատ օրեր,
Բայց արդէն մաշուել է իմ կենաց թելեր,
Չեր հոգւոյն մատաղ, դեռ ձեր թարնապով
Քաշումեմ այս կեանք և ձեր վիշտ, ցաւեր:

Էլ կլինի՞ արդեօք ձեզ հետ միատեղ
Վարենք մեր երկիր, նստենք ՚ի մեր գեղ,
Օտարի ձեռքից առնենք մեր հանգեր,
Կայք ու կարասիք ու մեր տուն ու տեղ:

Ա՛խ, ազօթարածն, պայծա՛ռ առաւօտ
Լսի՛ր ինձ անտէր մշակիս ցաւոտ,
Որն ջերմ արտասուքով կանգնած քո առջև
Ի բոլոր սրտէ կարգայ քեզ ազօթք:

Տո՛ւր, Տէ՛ր, ո՛վ Աստուած, հանուր էակաց,
Տո՛ւր ազատութիւն ինձ և իմ եղբարց
Ազատ մեր հոգեր՝ ինչ նոյն էր առաջ,
Քո ամենասուրբ հրամանաւ անդարձ:»

Աւետիք նախանց:

Աղեքսանդրապօլի Հայ երգիչներին.

Չեղ համար, Հայ երգիչներ իմ կողմից նուէր եմ տալիս,
 Ոսկեղէն լար մուսայից և որփեան թելերն եմ տալիս,
 Զեփիւռի սիւք արձագանք, բայց գողթման երգերն եմ տալիս,
 Քաղցրաւաչ սոխակաց երգ, իսկ մեր վարդի սէրն եմ տալիս,
 Պարնասեան*, լերան վերայ ձեր երգերը տէրն եմ տալիս:

Հայ բարբառ անտէր թողած, օտար լեզուն ի՞նչ եմ անում,
 Այլ կրօն թէ սրտիս կայ էլ Հայաստանն ի՞նչ եմ անում,
 Երբ Հայրս ինձ սիրումէ, օտարի տունն ի՞նչ եմ անում,
 Գորովս խեղճ մօրս դէմ, յանդգնութիւնն ի՞նչ եմ անում,
 Հա՛ւ-է-սի. քեզ պատասխան իմացիր, որ վերն եմ տալիս:

Յուսահատ մարդոյ կեանքը ասերջանիկ միշտ կմնայ,
 Մրտու՛մը աներեւոյթ միշտ այրվելով վիշտ կմնայ,
 Այնպիսին բնկերաց հետ յար և անբարիշտ կմնայ,
 Երանի՛ անդորր հոգւոյն. որ իւր հաշվում ճիշդ կմնայ,
 Մա՛ւ-լու-ի, կրօնաց դէմ խօսածդ յայիր եմ տալիս:

Հայ տղայ, սիրէ Հայը, Հայի կրօնն է գովելի,
 Հայաստան շատ գաւառ. կայ բայց իսկ կեարծնն է գովելի,
 Նոցա մէջ սուրբ տիղեք կան. գիտեմք Տարօնն է գովելի,
 Մարդկանց մէջ ճարտար լեզուն դարձեալ գզօնն է գովելի,
 Իմ Զի՛ւան, այս խօսքերով քեզ երփն ծաղկանց թերնեմ տալիս
 Հայաստան, հողիդ մատաղ, ինձ դու գերեզման կլինիս,
 Թէ հոգւով քեզ հետ կապված, դու ևս անբաժան կլինիս:

*) Պ ա Ր Ն ա ս (պարնասոս) լեառը գտնվում է միջին Յունաստանում (Θηλαδα): Յոյների կարծիքով նորա գազամին բնակվումեն եղել ինն քոյր մուգայք կոչուած (զանազան արհեստների ջատուածուէրներ): Ա. Գրիգորեանց:

Այլ կրօնք թէ ընդունես՝ քայքայեալ կործան կլինիս,
 Պապերիս օսկորներից անդի նգովման կլինիս,
 Քո ցաւով խեղճ երգիչը արեան արտասուք է լալիս:

Աւետիք Նալեանց:

Ներսէս Շնորհալու «Աշխարհ Ահնայն» երգի թարգմանու-
 թիւնը կարնեցի Գրիգոր Պետէն*):

Ա. Բ.

Ճէհանի ալեմ, հէփ պանայ պաքըպ, սըզ դեր ալեշինիզ:
 Աչամ ազըմի, սէջլեսին դիլեմ, շէք վէմ քէնտիմ տէն:
 Բապպիւմ բա՛հմ էյլէ, բապպիւմ բա՛հմ էյլէ,
 Բապպիւմ բա՛հմ էյլէ:

Գ. Գ.

Գիւնահ հրգըգե, պուլտիմ պելամի, գազամ բիր գոյու:
 Յէն-տի քէնտիմի իպլիզ թուլինէ զահի տիւշերուում:
 Բապպիւմ բա՛հմ էյլէ և այլն:

Ե. Զ.

Պիրտիմ նուրիտիմ, շիմայի գուլումաթ, էօլում քեօլկեսի:
 Նիճէ նազլ իտիմ, կիւնահ հեսապիմ քի սայըսըզ սըր:
 Բապպիւմ, բա՛հմ էյլէ, և այլն:

Ե. Ը.

Ե՛ր կեօկիւմիւմին, կե՛ալն աղլային, նեփաք ճանըմի:
 Սէվտիմ կիւնահը, վէ գապուլ էթարմ կիւնահ իւքլերին:
 Բապպիւմ բա՛հմ էյլէ:

*) Այս թարգմանութիւնը, որ ստացած եմ Թիֆլիսից պ. Եղիշէ երգնկեանցից, հաղորդումէ ինձ եւ այս. «Այս երգը շատ աշխատեցի, որ անսխալ դուրս գրէի բնագրից, որովհետեւ շատ մաշուած էր: Այո, սա մի երեւելի գործ է, մի գեղեցիկ թարգմանութիւն է. ուստի արժան է ջնջող գրուանի տակ եւ փոշեկուր»: Ա. Գրիգորեանց:

Թ. Ժ.

Դէպէլէնորմ ման կիւնահ իչէնտէ, սիլքիսիզ միօր Զէհր իլէ սօլտու, փէք Ֆանայ գօքտու, պիր հալի զհման: Բապպիւմ, րահմ էյլէ և այլն:

Ի. Լ.

Փէք ճիւտա տիւշտու, աղիմ սիլարտէն, Ֆաղիլ ամեւտէն փէք խօշ ջանն էթտիմ, նուրտէն հաղ օլմաք, զուլուամթ զլտմ: Բապպիւմ, րահմ էյլէ և այլն:

Խ. Ծ.

Խապիզ շէյթանլար ալտտարպ ճանմ, կիրտապէ սալուպ. Զէմին տիպէնէ, տալորպ մենի կիւլերիբ պենէ. Բապպիւմ, րահմ էյլէ և այլն:

Կ. Զ.

Ղարդ օլուպ պաթտրմ, րատաթիմ իլէ, գուրթու լուշրմ եօգս կիւնահ այլէֆիմ, թութուշպ եաքտի սէֆիլ ճանրմի. Բապպիւմ, րահմ էյլէ և այլն:

Զ. Գ.

Տօլտու Ֆատիլէ գօրեն վայ վերիպ, աճշտայ ճանրմ: Զէհիրլէ կիւնահ, սինէմէ կերիպ, նուրու սէն տիր տու: Բապպիւմ, րահմ էյլէ և այլն:

Ճ. Ս.

Կիւնահ տատրնտան, եօլում տատրանտմ, վարլքտան տիւշտրմ: Էօլում ճանիզէ, տիւշտմ Ֆիքիրտէն, զալտրմ ջանսրգտէն. Բապպիւմ, րահմ էյլէ և այլն:

Յ. Ն.

Էօլում տուղաղայ, խապիզ աւճրննն ալտանրպ տիւշտու: Տիւշմեն օքունայ, նշանկեահ օլտու, հէրտէմ օքլանտու. Բապպիւմ, րահմ էյլէ և այլն:

Շ. Ո.

Տիօրթ չէվրեմ ալէպ, մէլուն քօֆէքլեր, գանմ իշերլեր: Արս

օլտու ճանրմ, իպիզ շէհթանան, նարի սա գերէ: Բապպիւմ, րահմ էյլէ և այլն:

Չ. Պ.

Զալում դարտ իլէ. չաքլանրպ ճանմ, եօքտուք րահաթմ: Պօրճու տիւշմիշամ կիւնահ պահրիլէ, քիպէնի եէնկտի: Բապպիւմ, րահմ էյլէ և այլն:

Ձ. Ռ.

Թէօպէ տէյիլիպ թէքրար եանարմ, կիւնահլար իլէ: Ալինն նազլարմ, փէք ճիտա տիւշտու, չիք ամեւտէն: Բապպիւմ, րահմ էյլէ և այլն:

Ս. Վ.

Զալմ հրսիլէն, խըշրմ եօրքէյլէն, սէնիմ եայրալի: Կիւնահ ղէրտիլէն, բուհում թութուշուպ, մէճլոն կիւղերիմ: Բապպիւմ, րահմ էյլէ և այլն:

Տ. Բ.

Մէլին շէյթանլար, պէնէ եաղ չքարպ, սահէպ րապիմտէն: Բապպիլ ալէմին, խօշ աւաղինէ, պեն կիւշ վերմէտրմ, Բապպիւմ, րահմ էյլէ և այլն:

Յ. Ի.

Չիրքէֆ հաւէս իլէ խօշ պազըշլի, կօղիւմ քեօրլաթտիմ: Զերպիլէր ինին, տիւրի խըշմտան, էօլմիշար ճանմ: Բապպիւմ, րահմ էյլէ և այլն:

Փ. Ք.

Է՛ սէֆիլ բուհի, Ֆիրարէթ Ֆեսանտէն, էյլիկէ եէթէն: Սազըն պիլ սէնայ, էօլում ուքոնտանտուն, մէուալի հա՛քիմ: Բապպիւմ, րահմ էյլէ և այլն:

Ճշմարտութիւնն, ո՛վ մարդ, ա՛ռ ու մի՛ ծախիր, Ստութիւնը ներս մի՛ թողոր քո՛ տանէն,

Վատասիրտ նախանձող յիմարէն փախիր,
Երես պահէ զբախօս անպիտանէն:

Եթէ անանէս մէլը յիմար սուտ անող,
Անմեղ անղը իւր ընկերին բամբասող,
Ծանխիր, որ իսկ նա է հողի վնասող,
Մի՛ մօտենար, իսկոյն փախիր նրանէն:

Շուտ բարիացող ու անհամբեր մի՛ լինիր,
Խոնարհ կացիր, մտքով դու վեր մի՛ լինիր,
«Ես եմ» անող մարդուն ընկեր մի՛ լինիր,
Հեռու կացիր հպարտ ինքնահաւանէն:

Միրէ հեզութիւնն ու հանդարտութիւնը,
Կեանքիցդ վեր պահէ ճշմարտութիւնը,
Բայց քեզնից դուրս վանէ հպարտութիւնը,
Ներս մի՛ թողուր քո սրտի պատուհանէն:

Անխորձ մարդուն չ՛յանձնես դու քո շունը,
Բայց փորձածիդ յանձնէ քո բոլոր տունը,
Դու լաւ զիտցիր, որ անխորձ մածունը
Երբէք լաւ չի լինի փորձուած թանէն:

Միտշահամ եղն ու կողին ճանաչէ,
Պտուղ սուող ծառն ու այգին ճանաչէ,
Մարդը փորձ առնելով հողին ճանաչէ,
Զգոյշ կաց չ՛խաբուիս կախարդաբանէն:

Այս խօսքը քեզանից չը մնայ ծածուկ,
Ահա ասեմ, լսէ, ով դու վաղանցուկ,
«Ով որ քանդէ ցանկն հայրենեաց յատուկ,
Կը գարկուի իժէն ու խարամանէն»:

Արթնացիր, որ չանցնեն թանգ օրերդ զուր,
Բանը որոշելու միտքդ արա սուր,
Նախնեացդ խրատը պահելով ամուր,
Մի՛ հեռանար նորանց ուխտ ու պայմանէն:

Ուղղութեան ճամբու մէջ լե՛ր դու սրբնթաց,
Աշխատէ որ զտնես ամեն օրուայ հաց,
Միտքդ արթուն պահէ, ականջներդ բաց,
Լո՛ւր իմացիր շնորհաբեր դեսպանէն:

Եղի՛ր աղքատասէր, օտարին զթած,
Կերակրէ նոցա սրտով անկասկած,
Որ քեզ կերակրէ բարձրեալն Աստուած
Իրա առատ անմահութեան սեղանէն:

Գլթած սիրտ ունեցիր, աղքատին նայէ՛
Ունեցածը նորանից մի՛ խնայէ,
Միրան առատ աղքատը, Տէրը վկայ է,
Որ լաւ է քարասիրտ անգութ իշխանէն:

Ունեցած վիճակէդ մի՛ լինիր անբաւ,
Մի՛ լինիր կամապաշտ, որ չքաշես ցաւ,
Մարդը հասաւթենէն կը կտարի իբաւ,
Թէ կուզ լինի թանձր փայտի դերանէն:

Պէտքէ մարդս լինի իւր բնութեամբ հեզ,
Յխուես փրկչի համար պողատու պարտեզ,
Կամապաշտութիւնը արդելուած է մեզ,
Անգթութեան հետ վերին Արքայէն:

Քեզ ահա մի խրատ կուտամ համառօտ,
Եւ այն դու միտքդ բեր ամեն առաւօտ,
«Խաղաղարար սիրտը չի մնայ կարօտ
Ուրախութեան տանէն ու խրախճանէն»:

Դրացիք կը շինեն տունը՝ տանը խիտ,
Որ միմեանց հետ վարուին սիրով պարզամիտ,
Առանց յօժարութեան գաղտնի թէ ճշգրիտ
Պիտի բան չըտունաս քո հարեանէն:

Դու որ չես տալիս քո երկաթն ընկերիդ,
Ինչո՞ւ ես կողոպտում արծաթն ընկերիդ,

Ասեղը քեզ ցցէ, մախաթն ընկերիդ,
 Տես թէ լա՞ւ է ցա՛ւ քաշելը խթանէն
 Վատ մարդը վատ ճամբով անշուշտ կը գնայ,
 Չարասիրտը միշտ շարութիւն կը յղանայ,
 Հոր փորոզը ինքն կընկնի կը մնայ,
 Չի ազատուիլ իւր պատրաստած դարանէն:

Սուրբ գիրքը կը պատմէ բանը գեղեցիկ,
 Թող լսեն այս բանը թէ մեծ թէ փոքրիկ,
 «Հով ցանոցը պէտքէ քաղէ մրրիկ»
 Պարզամիտը թանգ իմանայ այսբանէն:

Անմիտ մարդը հաւասար է անբանի,
 Բան չմտածողը մարդ չէ կենդանի,
 Մարդս այս աշխարհէն ի՞նչ պէտքէ տանի:
 Միայն իրան մէկ քանի լափ պատանէն:

Աշխարհը որ ունի գալու շատ զրաւ,
 Ուրեմըն այս կեանքն է սուտ ու փուչ համբաւ,
 Մարդու ծնած օրէն մահուան օրն է լաւ,
 Եթէ ազատ լինի մեղաց կապանքէն:

Կեանքդ անցաւ որ է, կապաւինես ո՞ւմ,
 Ջանք արա սովորիր հոգեոր ուսում,
 Որ չմնաս վերջը դատարկ ու տրտում,
 Աղքատ ու չքաւոր, զուրկ գանձարանէն:

Հոգեոր ուսումն է արդարութեան փաստ,
 Մարդուն փորձութիւնից կպահէ զգաստ,
 Նաև վերջին օրը կը լինի նպատտ,
 Կազատէ իւր հոգին անշէջ գեհեանէն:

Հեռի կացիր անկրթութեան խմորէն,
 Պէ՛տք չէ քեզի օգուտ գալը նորանէն,
 Բանցի ուսումն է լաւ ոսկի խնձորէն,
 Պատուական ահուներէն ու կարկեհանէն:

Անկրթութիւնն եղաւ ինձ կանոն, ինձ ծէս,
 Ուսման ժողովի մէջ չունեցայ հանդէս,
 Անբաղդ Հապլիքն եմ, մնացի այսպէս
 Հեռաւօր հոգեշահ ուսումնարանէն:

127.

Սիրատանջ Մորմուք*)

Մի՛ լար, իմ բալաս, քուն մտիր շուտով,
 Գու լալիս սիրաս լցումէ ցաւով,
 Քո՛ւն մտիր սիրուն, ես ունիմ խոր վիշտ,
 Որ և սուանց էն տանջո՛ւմէ ինձ միշտ,
 Գարտիս աղբիւրը հայրիկդ է քու,
 Մխիթա՛րս այժմ մնացել ես դու:

Մի ծիծաղ ինձ տո՛ւր, դու ծիծաղելիս
 Բացումէ իմ սիրտ և շահում հոգիս,
 Միայն քո հոր պէս ծիծաղ անիրաւ
 Ո՛հ, թո՛ղ չստանայ մի աղջիկ բնաւ....
 Այդ նախշուն աչեր՝ նորա են աչեր,
 Որ ինձ զրաւեցին, սուան սև օրեր:

Ո՛, հաւատացի սրտով պարզազին
 Նորա ստալից, խարդախ խօսքերին,
 Չհաւատա՛յի, Տէ՛ր, այդպէս մի անձին,
 Երբ անչափ երդում, երբ այս մատանին.

*) Պ. Գրիգոր Նիկողոսեանց 1875 թուին Ս. Պետերբուրգի զինւորական ուսումնարանում աւարտելով իր ուսման ընթացքը, այժմ զինւորական պաշտօնի մէջ աստիճանաւոր է: Սորա մի զեղեցիկ երգը «Աղքատ Ուսանող» վերնագրով ընթերցողն արդէն կարող է տեսնել «Սոխակի» առաջին հատորի մէջ 266 երես, որը գրել է 1875 թուին, երբ դեռ ուսանող էր Բագուի Ռէալական Գիմնազիոսում: Այդ նկարագրութիւնը ճիշդ իրա տիպն էր և,

Անդո՛ւթ, այսպէս շուտ մոռանա՛լ խապառ
Հարազատ որդուդ և մօրը թշուառ:

Երբ ևս զբաւուած խօսքերից երգման,
Նորան կ'ասէի. «քունն եմ յախտեան»

Չէր զգում սիրտս իմ կործ.քի միջին,
Թէ սպասումէ դաւ ևս վիշտ խորին,

Միայն գանկելով այս թշուառ վեճակ,
Ո՛, ճանաչեցի իմ սիրած էակ:

Գնա՛, գնա՛, բարե՛աւ, անողորմ արարած,
Թո՛ղ էլ քեզ ո՛չ ոք չհամբուրէ սիրած,

Թո՛ղ էլ չհաւատայ ո՛չ մի թշուառ կին,
Որ դու կսիրես նորան մշտադին.

Ընծայել հաւատ, քեզ սէր նուիրել,
Է կեանքը սեցնել ու բաղդը խարել:

Մի՛ լար, իմ բալաս, աչերդ խիի,
Կցաւին աչերդ փայլը կպակսի,

Հայրիկդ գնաց կուրի դաշտ, անզին,
Գնաց, վեր զցած զաւակ ու իւր կին:

Ո՞ւր է նա այժմ, իմ անէծք արդեօք
Հասա՞ւ նորան—դիտէ Աստուած լոկ:

Գուցէ զղջման մէջ մաշելով տարիք,
Նա աղօթո՞ւմէ քեզ համար հիմիկ.

կարծես, գուշակելով իր ապագան, անն ինչպէս է վերջացնում նա իրա բա-
նաստեղծութեան վերջին համարը.

- Շատ չի անցնիլ կաւարտեմ
- Ես շրջանը իմ ուսման,
- Եւ կգոհեմ իմ դարը
- Ազդի՛ օգտի զարգացման.
- Այն ժամանակ կգոչեմ,
- Մարդիկ, ինչ մեծ բազղ ունեմ:
- Ա. Գրիգորեանց:

Գուցէ թէ նորան սո՞վն է տանջում.
Գուցէ նա արդէն պառկած է հողում.

Ո՛, թո՛ղ իմ անէծք չհամնի նորան,
Երբ սպասումէ Տէրի դատաստան:

Իսկ ևթէ յանկարծ մօտեցած նորան
Տեսնեմ հեղեղում նուազող արեան,

Տեսնեմ ևս նորա հայեացք մահազին,
Ո՛, կառնէի յետ իմ անէծք կրկին,

Բայց մոռանալ ո՛չինչ չէի բնախն:
Գրիգոր Եկեղեցեանց.

127.

Հայի գանգատը.

Մեզի մոռացաւ Հայոց ազգը,
Չի լրսիր մեր պաղատանքը.

Տեսնել չուզէ մեր տանջանքը,
Ապա ո՞րին մենք զանդրտինք:

Աստուած, սրտով որ բարի ես,
Մեր վար, դուն վեր—շատ հեռի ես,

Այժմ ալ խոշոր գործերի ես,
Ապա ո՞րին մենք զանդրտինք:

Յոյնը մեզի ա՛սլը կ'ատէ,
Նէմցէն մեզնէ կրօնքով զատ է,

Ֆռանկի բանը, կասն. վատ է,
Ապա ո՞րին մենք զանդրտինք:

Թուրքին միտքը դէպի Պալքան,
Իսպառ մոռացաւ նա Հայաստան,

Նըբան պէտքէ լուկ մեր վարան,
Ապա ո՞րին մենք զանդրտինք:

Մեր տեղը քաջ կարիճներ կայ,
 Պէտք որ եղաւ՝ ստակ ալ կուգայ,
 Մենակ՝ ճամբայ ցուցնող չկայ,
 Ապա ո՞րին մենք գանգրտինք:

Հայի դաշտեր՝ արեան դաշտեր,
 Շատ կուլ տուիք Հայի քաջեր,
 Թէ որ ձեզմէ մէկը ելլէր,
 Մեր գանգրտին վերջ կըղնէր:

«Փոք» Ա. Տ. № 3. Գաճաճ-Բախիւտ:

128.

»Անքակտելի «ութիւն» «.

(Հատուած «Բարբուռնի Տուփից».)

Մեղրաճանձի փեթակի մօտ
 Կանգնած էի քառորդ ժամ,
 Զարմա՛նք... ի՛նչպէս առանց չիթ
 Աշխատումեն ժրջան...
 Յանկարծ ահա՛ խուռն խմբով
 Իշխու՛նք թափվեցին...
 Կարծումէի թէ մի դամով
 Պիտ փեթակը թաշնէին...
 Մի շքնչոց դռնակի տակ
 Հաւաքեց ողջ ճանձերին,
 Որ թշնամու վերայ կուտակ
 Յարձակվեցան միասին:
 Կէս ժամից յետ թշնամիքը
 Ընկած էին անկինդան...
 Ես պաշտումեմ ա՛յն կարծիքը

Թէ «Չի՞ք զօրեղ մի այլ բան»,
 Որ կարենար լնդրէ՛ճ կենալ
 Քաղցր սէրի ժո՛ւղեան»:

Բաբե՛ր-նի:

129.

Մի քաջ վիթխարի լում հին ծառի տակ
 Ննջումէր հանդիստ, անհոգ, անպաշտպան,
 Իսկ նորա կողքին կանգնած էր միակ
 Նժոյգ երկվարը նորան պահապան:

Նա զեռ չէր արթնում թմրո՛ւթեան քնից,
 Ի՛նչ էր երազում քաղցր սրտերից...
 Միմիայն խոր մրափն էր փակել պատել
 Ու նորան կաղնին հովանի արել:

Մօտեցայ նորան մեղմիկ քայլերով,
 Գողումէր մարմինս, սրտս սարսափով
 Նայեցի թէ իւր և թէ նժոյգին,
 Ոսկեճոյլ սանձը փակուած էր ձեռքին:

Նա չէր այլ օտար՝ Հա՛յ էր, թշուա՛ն Հայ,
 Վազումէր, խաղում և վստահ փայլում
 Նորա ճակատին Հայո՛ւթեան անուն,
 Վառումէր նորան և մի տաք արիւն:

Արթնեց խոր քնից, այն խոր երազից...
 Մօտեցաւ ձիուն նորա սչքերից
 Զոյգ սիրոյ համբոյր խլեց եռանդով,
 Թռաւ թամբի մէջ արագ թևերով:

Անցաւ նա գնաց մեղմիկ ժպտալով
 Ասաց, «զնա՛ Հայ...» ինձ բարեկերով,

«Այս թափուր դաշտում դու ի՞նչ ես պտուղում,
Սէր և Ազգութիւնն, ազնիւ Հայութիւնն»:

Երանայ:

130.

Հայրենիք.

Մինչ երբ, ո՛վ երկինք, յայս դառն վիճակ
Արտասուեն Հայոց խեղճ աւերակներ,
Կիզիչ արևուն խեթիւ Հայուածքը
Քանի՞ ձենձերէ գայս տխուր քարեր:

Քանի՞ գառնաղէտ քանի՞ տոչորուած
Տարազիր լքեալ մաշեն վեհ սրտեր,
Քանի՞ գալարին աղիք սգազգած
Եւ ձեռն ՚ի ծնօտ ողբան Հայ աչեր:

Բաւ չե՞ն, ո՛վ երկինք, դեռ շա՞տ յուսահատ
Հայրենեաց զրգէն տարարնակ Հայեր
Օտար հող պանդուխտ շրջին տարաբախտ,
Թողած Հայրենի սուրբ աւերակներ:

Աշտարհն ահաւասիկ ամենքն ընդ յառաջ,
Յառաջ կիպղեն յասպարէզ փռուաց,
Իսկ Հայք ծուռի ձմեռ, սրտերն ՚ի հառաչ
Հէզ ձակառք ՚ի հող հեծեն գեանամած:

Մինչ երբ դաւ դնես, սև ձակատաղիր,
Դեռ շա՞տ Հայատանն ՚ի տխուր Հանդէս,
Առ իմմէ՞ զրկանքդ, ո՛վ անկարեկիր,
Հայ ուսերն ՚ի լուծս դեռ շա՞տ պիտ ձմիտ:

Բա՛ւ են տառապանք սևազոյն աւուրցդ,
Քաղցրիկ Հայաստան թողուն աւերակ,

Հերիք սուրբ վայրեր մերկիկ ՚ի գարդուց
Մնան յակճիւս անմարդաբնակ:

Ա՛խ անմիութեան, չար ատելութեան
Եւ տգիտութեան դաժան պտուղներ,
Ո՛ւր բարձիք արդեօք մեր զէն, զօրութիւն,
Ո՛ւր Հայաստանի երջանիկ օրեր:

Ո՛վ անգութ ձմեռ, թշուառ ժանտաժուտ,
Ո՛ւր մերժեր դարնան օրեր զեղալոյս,
Ո՛ւր ծածկի Հայոց պայծառ առաւօտ,
Խեղճ աւերակաց չծագէ իւր լոյս:

Քանի՞ չժպտաս, ո՛վ Հայոց լուսին,
Հայի հօրիզոն մինչ խաւար պատած՝
Շրջիս դու հեռու հեռո՛ւ մոլորված,
Հայ աւերակներ վհատեալ թողած:

Քանի՞ սև դիշերն սևազոյն ամպոտ
Թանձրամած ստուերք խաւար մթութեան
Պատեն սուրբ քարեր ահով մահահատ
Գերեզմանական տխուր լուսութեան:

Լսէ՛, ո՛վ երկինք, լսէ՛, ո՛վ եթեր,
Գէթ աւերակացս լալեաց արձագանք,
Որ դարուց բազմաց ընդ վճիտ գետեր
Խառնեն թուխ աչաց արտասուաց վտակք:

Հայոց ըմպելիք այդպէս պղտորակ
Հերիք է հերիք, ո՛վ անմահ Աստուած,
Հերիք հայ մանկտեաց այդ դառն բաժակ
Զամբես աղէտից արտասուօք խառնած:

Դարձի՛ր, ով անմահ, դարձի՛ր, ողորմած,
Դարձի՛ր սուրբ վճռոյդ կնիք բանալու,

Ձգէ՛ սուրբ աջդ, ձգէ՛ ո՛հ զթա՛ծ,
Տառապեալ Ազգի արտառնք սրբելու:

Ընկա՛լ, ով կրկինք, կաթիլք արտասուաց
Տառապեալ անտէր խղճուկ Հայերուս,
Ընկա՛լ զիմ՝ մրմունջ անձայն մաղթանաց,
Եւ հառաչ սրտի տխուր Հայկորդոյս:

Ով բարձրեալ, ընկա՛լ յաթող զթութեանց
Վիրաւոր սրտիս լալեաց յիշատակ,
Ա՛խ, թէ և մխիթի՛ր իմոյս ոսկերաց
Խառնէիր ՚ի հող յայս հիւանց յատակ:

Մէլիփեղեի Կանանց Մանուկեանց:

131.

Հաշտարխանի գովասանութիւնը.

«Հայրենիք» սրբապան» երգի եղանակով.

Մայրաքաղաք ես դու, ազնիւ Հաշտարխան
Քո գեղեցիկութեանդ գովասանք կու տան,
Քեզանում ճարվումէ ամեն տեսակ բան
Առնողն թո՛ղ առնի կարումէ որքան,
Հազար հազարներով թէ կուզի մարդ գան,
Մայրաքաղաք ես դու, ազնիւ Հաշտարխան:

Ուզայիդ երեսն տաճված է նաւով,
Որ մէկն կրակով, որ մէկն հաւով
Գնումեն և գամեն ահագին ծովով,
Կասես բառ թռչումեն զուշի պէս թևով,
Ամենը բանումեն, մէկն չէ անբան,
Մայրաքաղաք ես դու, ազնիւ Հաշտարխան:

Ուզայիդ էս թայ էն թայնն պրիտտ ա,
Պարտիօր, շէտն, Բարձ, անչափ պատրաստ ա,
Մեշայի պէս մաշտերն բարակ ու հաստ ա,
Գիշեր, ցերեկ ամեն ժամում «Վիսպ» ա,
Գնալ զալուց անդադար սվիտ կու տան,
Մայրաքաղաք ես դու, ազնիւ Հաշտարխան:

Դուք նես ապրանքդ բիւր բիւր է,
Բոլոր ազգի համար բաց հացի դուռ է,
Բազմութիւնով ամեն քաղաքից գիւռ է,
Առուտուրով քօլ քաղաքին կը ծռէ,
Գնացող եկողն լինումեն բաւական,
Մայրաքաղաք ես դու, ազնիւ Հաշտարխան:

Թէև մեծ քաղաք կայ, դու ամենից հին ես,
Ուզան քեզանումն ա, միշտ թանգագին ես,
Տէրութեան բերանն ես, պատուական տուն ես,
Ալէքսանդր Արքայի պէս դու տէր ունես,
Ազնիւ ես և ազնիւ, քեզ գովեմ որքան,
Մայրաքաղաք ես դու, ազնիւ Հաշտարխան:

Քառասուն ժամ ունես, հինգն եմ որոշում,
Առաւօտ, երեկոյ զանգեր են քաշում,
Մէջի ժողովուրդն ջերմին աղօթում,
Քաղցր եղանակով երգեր են լսվում,
Ամենը իւր կամաց գանձանակ կտան,
Մայրաքաղաք ես դու, ազնիւ Հաշտարխան:

Կանայքը դուս են զամ մանգալի հովում,
Ամենքը զուգված են թանգագին մովում,
Վարդերի պէս բացուած, սրտեր են պովում,
Կանաւի ավերը գարուն է թվում,
Կարեպով, ֆայտօնով, դրօշով կզան,
Մայրաքաղաք ես դու, ազնիւ Հաշտարխան:

Չուկի փողոցումն ձկներ են ծախում,
 Աւնողն տանելուց ձեռնումն է խաղում,
 Տանումեն վայելում աներում, բաղում,
 Ամենքն իւր չափով հարուստ են փողում,
 Հագնելու համար նոր մօդեր կհոգան,
 Մայրաքաղաք ես դու, ազնիւ Հաշտարխանս

Սփսո՛ս, դու Հաշտարխան, քեզ մին փուտ ունես,
 Շէնքսերդ գեղեցիկ, բիրժդ մութ ունես,
 Աղամջանովիցն քեզ ի՞նչ օգուտ ունես,
 Շատ լաւ կլինի որ բնաւ չընդունես,
 Ազգի համար էլ օգուտ չունի մին բան,
 Մայրաքաղաք ես դու, ազնիւ Հաշտարխան:

Մայի՛ճ Յարութիւն, այդ յիշատակն հին ա,
 Դու Հաշտարխանին նոր ընծայ տո՛ւ, դնա՛,
 Պատճառ ազնիւ քաղաք ա, թանգազին ա,
 Թէ կընդունեն այս աշխատանքս՝ մնայ,
 Տէրի տուած պարգեւն ինձ ունիմ այդքան,
 Մայրաքաղաք ես դու, ազնիւ Հաշտարխանս

132.

Ա. Ն. Հայաստան.

Մինչ առաւօտեան պարզ արշալուսին
 Դուրս եմ ելանում սիրով մանկական,
 Ամենից առաջ տեսնումս ավուր
 Քո սուրբ դաշտերը՝ Մայր իմ Հայաստան:
 Տեսնումս այ՛ո՛ւ և ցանկանումս
 Անբոյժ ցաւերուդ օգնական լինել,
 Քեզ համար տանջվում, սիրտս է մաշվում,
 Բայց քո ցաւերին չէ՛ կարում օգնել:

Ո՛վ Հայոց օրբան, քանի՞ դեռ այգաէս
 Պիտ պատէ քեզի խորին լուսթիւն,
 Ո՛հ թէ կենդանի դրախտումն էլ լինիմ,
 Գարձեալ տխուր եմ, չունիմ ցնծութիւն:

Չունիմ կարեկից, Մայր իմ Հայաստան,
 Ուստի խնդրումս ինձ էլ քո ծոցում
 Շիրմի տեղ շնորհել, որ մեր քաջաց հետ
 Միասին ննջեմ մութ գերեզմանում:

Յովհաննէս Ալայեանց:

133.

Մաղթանք առ Հոգին սուրբ*.)

Մաղթեմք, Հայե՛ր, առ Հոգին սուրբ ՚ի ծունկս անկեալ դեռ
 նամաճ,
 Մաղթեմք արե ջերմ արտասուօք երկիր ՚ի պագ առ Աստուած:
 Մաղթեմք յերկնից երջանիլութիւն, մաղթեմք այսօր ո՛վ Հայեր,
 Խնկեմք յերկինս խունկս ազօթից, Տուխ ծառանայ մինչ այեր:
 Մաղթեմք տացէ ազգիս Հայոց Աէր, Միութիւն, սէր անկեղծ,
 Մաղթեմք պահել անքակտել զկապ սիրոյ յար անկեղծ:
 Մաղթեմք Հայոց բարօրութիւն, զարտօնութիւն, անձնազատ,
 Յաղատ Մասիս վերաջուել ՚ի նազ ՚ի ձեմ յար ազատ:
 Մաղթեմք արե մեծի կայսեր—վեհ Արքային Ռուսաց,
 Ազեքսանդր Երկրորդի—նընակալին կայսերաց:

*) Այս «Մաղթանքը» արժ. Հայր Թեոդորոս վարդապետ Շիրակունին գրել է Բագուի Հայոց «Մարդասիրական» Ընկերութեան 1876 թուի տասն եւ երկուերորդ տարեգարծի առիթով: Այս ազգօգուտ Ընկերութիւնը, ինչպէս հողորդած եմ «Սոխակի» I հատորում, հաստատուած է 1864 թուի Մայիսի 24-ին, որի կազմութեան պատճառ եղած է Բագուի Նահանգի բժշկապետ Սոխակ Հայաստանի IV հատոր. Ա. Գ.

Մաղթեմք կայսեր սուր շողասցի յիւր թշնամեաց 'ի վերայ,
 Մաղթեմք կայսեր զբոշ պարզի 'ի խաչ, 'ի զլուխ գերակայ:
 Արծուանիշ զբոշ պարզի 'ի վերայ մեր հոլաթեւ,
 Տէր պահեսցէ զզահ նորին յամայր ամս յարատեւ:
 Մաղթեմք արև, կեանք, կեցութիւն Միրանածին Ճառանգին,
 Մաղթեմք յաւերժ տացէ Աստուած կեանք երջանիկ կեանք անգին:

Մաղթեմք, Հայե'ր, յաւերժ կեցցէ մեր փրկութեան աւագան,
 Մաղթեմք Հայոց Հայրապետիս յաղթող կացցէ գաւազան:
 Միածնաեջ կաթուղիկէն կացցէ հաստատ բարձրաբերձ,
 Մաղթեմք կացցէ անդրդուել խաչ 'ի զլուխ ամսպամերձ,
 Մաղթեմք արև, երջանկութիւն Վեհապետիս Վեորգայ,
 Մաղթեմք կացցէ յիւրում գահի թագ 'ի զլուխ գեր արբայ:

Մաղթեմք Բագուայ Ընկերութեան՝ կեանք, կեցութիւն, և արև,
 Վեհ անդամոց ընկերութեան Սէր, միութիւն յարատեւ:
 Յանուն սրբոյն Գրիգորի Լուսատուին մեր հոգւոյ,
 Ընկերութիւն յար հաստատեալ խնամածու խեղճ որբոց:
 Մաղթեմք աներբ երջանկութիւն Ընկերացն Մարդասէր)
 Մաղթեմք անեղբ երանութիւն ընկերացն ազգասէր:
 Տօնեմք այսօր ընկերութեան երկոտասան զըջան,
 Մաղթեմք յաւերժ կեցցէն անդամք ամ ըստ յամէ ժրջանս
 Քանի զնան ամք և ամիսք և յաջորդեն տարիք զար)

հանդուցեալ երջանկայիշատակ Թիֆլիսեցի Դաւիթ Յարութիւնեան Ռոստոմեանց: Այս Ընկերութիւնը կազմակերպուած է Հիմնադիր, Պատուաւոր, Անփոփոխ և Տարեկան անդամները: Հիմնադիր անդամները համարվում են ութ: Պատուաւոր, Անփոփոխ և Տարեկան Անդամների թիւը սահմանափակուած չէ: Պատուաւոր անդամները նուիրում են միանուագ ոչ պակաս քան հազար (1000) բուրլի: Անփոփոխ անդամները ոչ պակաս քան հարիւր (100) բուրլի: Տարեկան անդամները նուիրում են իւրաքանչիւր տարի ոչ պակաս քան հինգ (5) բուրլի: Հիմնադիր անդամների կոչումը նոցա մահից յետոյ, անցնում է ժառանգներին կամ նորանց մերձաւոր ազգականներին, նոցա ցանկութեան և

Ընկերութիւն Բագուայ կացցէ որբոց այրեաց բարերար:
 Շի'րակունի, մաղթեա՛ և զու Ընկերութեան լոյս, արև,
 Յաւերժանալ 'ի սէր ազգիս յարամալ յարատեւ:

Թեոփոսոս Լուսատուայ Երանանի:

Անվերջ գանգատներ.

Մեր խեղճ ազգը ուսում չունի,
 Չունի ուսում՝ խելք ալ չունի.
 Խելօքներս այդ լաւ զիտենք,
 Բայց, ա՛խ, միայն մենք կը խօսենք:

Մեր խեղճ ազգը հալածած է,
 Երկէ երկիր տարազրած է,
 Բաղդաւսրներըս այդ զիտենք,
 Գիտենք և միայն կը խօսենք:

Հայ մշակը երկիր չունի,
 Երկիր չունի՝ հարկ շատ ունի,
 Հարուստներըս մենք այդ զիտենք,
 Գիտենք և միայն կը խօսենք:

նշանակութեան համեմատ: Պատուաւոր և Անփոփոխ Անդամների կոչումը կրելի է մինչեւ ցմահ, իսկ Տարեկանները պարտաւորիչ նուիրարեւութիւնների դադարման հետ զրկվում են իւրեանց կոչումից:

Ընկերութիւնը ներկայ 1878 թուի համար ունի զուտ գումար 49,595 բ. 44 կ. իսկ խաղարկական տոմսակներ 4,702 բ. 50 կ. արժողութեամբ: Ռեբմն Ընկերութիւնը 1878 թ. համար ունի ընդ ամենն 24,097 բ. 64 կ.: Յանկանում մ ոչ միայն այսչափ, այլ աւելի և աւելի բաղադրեալ գումարներ Բագուի Հայոց ազգաշահ «Մարդասիրական» Ընկերութեանը յանուն Ս. Գրիգորի Լուսաւորչին Հայաստանի: Ա. Գրիգորեանց

Հայի արդան զրոքիբ չունի,
 Վարժարանը վարպետ չունի,
 Գիտունները այդ լաւ գիտենք,
 Գիտենք և միայն կը խօսենք:

Հայ տէրտէրը կարդալ չգիտէ,
 Հայ տիրացուն շատ արգէտ է,
 Կաթուղիկոսքս այդ ձիշդ գիտենք,
 Օգնելու տեղ լոկ կը խօսենք:

Հայ գեղջուկի աղջիկն ու կին
 Անվարձ սեղեխ են թուրք, Պարսկին,
 Ամիրաներս մի՞թէ չ'գիտենք,—
 Օգնելու տեղ լոկ կը խօսենք:

Աւերս դարձնում արեւմուտքին,
 Արև ծաղէ Սլավուն ազգին,
 Հայի արևն, ահա՛ վեց դար
 Համատարած պատէ խաւար:

Հայի գանգա՛տ, անվիրջ գանգա՛տ
 Տրբանջ ու լաց սուգ անընդհատ...
 Ե՛րբ ապա ստատ, ե՛րբ սրոյ շաշխն
 Փողի ձայներ, մարդի գոչիւն...

Թուրք ձեռքէս թուրքը առաւ,
 Տուայտանքէ խելքը թրուաւ,
 Անգո՛ւթ ուղնեց, մի՞թէ չես տալ
 Աղէտալի բաղդըս սրգալ:

«Փոքր» Ա. Տ. № 4.

Գանձառ-Բաղնիկայս:

Мы дружно на враговъ.

Хорватскій маршъ.

Tempo di marcia.

Мы дружно на враговъ, на бой мы поспѣшимъ,
 За родину, за славу, за честь мы стоимъ!
 Пусть наше оружье смирять враговъ славянь,
 Пусть знаетъ сила вражья какъ силенъ нашъ народъ!

Друмъ, друмъ, друмъ, друмъ!

Мать моя меня просила:

Ты останься здѣсь, мой милый!

Поддержи мой ты силы,

О, не покидай меня!

Богъ пошлетъ тебѣ отраду,

Мать моя, ты дорогая!

Но зоветь меня честь и слава,

Ура, ура, впередъ, впередъ!

Չորս հսկայք կամ պրծաւ գնաց*).

«Չորս էին նսրայ ժամանակին» Աստուածաշունչ.

Մին մեծ տան մէջ չորս մարդ կանգնած
 Խօսում էին խիստ տաքացած,
 Երբ մտայ տուն, ողջ լուցին,
 Գնալով ամենքը ջսկ նստեցին:

*) Տպագրելով սցստեղ պարոն Յովնանէս Բուշուրէզեանցի ներկայ

Բարով տուի, գնացի մի քունջ,
Կս ևս նստայ նոյնպէս լուռ մունջ,
Բայց չ'զխտեմ ի՞նչ էր անցած,
Որ այս մարդիկ կան զայրացած:

Այս միջոցը շատ չը անցաւ,
Խօսքը նորից կրակվեցաւ,
Մէկը յանկարծ մէջ տեղ զալով՝
Խօսեց այսպէս պիկը գոռալով:

— Ուսումնարան՝ ուսումնարան՝
Շատ ասելով զահլա տարան,
Ի՞նչ էք թողում բանը ձգած,
Բռնենք մէկ տուն՝ պրծաւ գնաց:

Ամեն բանը զիւր պատրաստ է,
Բայց փող չկայ, ձեզ յայտնի է,
Նստարանները պատրաստ շինած՝
Բերեն դարսենք, պրծաւ գնաց:

Շուտով գնանք, առնենք զըբեր,
Ստենք որ գան երեխաներ,
Հէ՞ր ենք՝ եզբա՛րք, մնում քնած,
Վազն սխենք, պրծաւ գնաց:

Ամօթ չէ՞ մեզ, չորս հսկայ ենք,
Սար շուռ կըտանք, եթէ ուզենք,
Վարժապետներ վարձած պրծած,
Թո՛ղ կարգացնեն, պրծաւ գնաց:

Մեզնից մինը ուսումնական,
Երեքս էլ մեծ վաճառական,

դրուածքը, յիշեցի, որ մեր մէջ շատ եւ շատ են պատահում այս սովորական
պրծաւ գնաց՝ ձեռք, օղի մէջ շինելով ամեն մի տեսակ ազգային եւ
նուիրական հիմնարկութիւններ: Ա. Գրիգորեանց:

Կասես մէկ մէկ սար ենք կանգնած,
Ի՞նչ չենք շինի, պրծաւ գնաց:

Մանաւանդ որ Բանթօ հաջին
Մեծ բարերար մեր առաջին,
Որդին էլ խօ շատ բանխմաց,
Ազգասէր է պրծաւ գնաց:

Թողնենք մի կողմ Գէջիկ ալան,
Որ միշտ կլինի մեզ օղնական,
Բաւական է թէ նա ասաց՝
Գէ՛հ սխենք, պրծաւ գնաց:

Բայց մենք վաղը վաղն ասելով,
Գնացինք ամենքս բազ վաղ տալով,
Գեռ մինչ էսօր բանը մնաց,
Վճիռ տուէ՛ք, պրծաւ գնաց:

Մէկն ասումէ, հալա էսօր
Շատ բան ունիմ մինչև տասն օր,
Միւսն ասումէ, գէ՛հ հալա կաց,
Խորհուրդ կանենք, պրծաւ գնաց:

Քանի էսպէս ասենք, խօսենք,
Ու զպրոցի բացման սպասենք,
Ի՞նչ էք ասում, մարդ էք նստած,
Կամ հա՛, կամ չէ՛, պրծաւ գնաց:

Ի՞նչ ես էսքան տանում զահլայ
Խօսքը կարեց միւս հսկայ,
Քեզ ասումներ բանը օրհնած,
Կ'վերջացնենք, պրծաւ գնաց:

Մի՞թէ քեզ էլ հոգսը չունես,
Գնաս տունդ, գործիդ լինես,

Թէ ոտելու կայ խորոված,
Այ քեզ զպրոց, պշտա- գնաց:

Բարա դառաւ ուսումնարան,
կասէս սա է համալսարան
Մէկ ծակի մէջ զիւր հաւարված
Գրեն, կարդան, պշտա- գնաց:

Թէ չէ, թողնենք, կորչի գնայ,
Զիլնի՞ գաննել մին մահանայ,
Ասենք չիայ փող հաւարված,
Ճամանակ չի, պշտա- գնաց:

Ի՞նչ էր ցանցառ խօսում էրքան,
Յանկարծ կոչեց երրորդ հսկան,
Ի՞նչ շինեցիք, էլ ի՞նչ մնաց,
Հէնց ասում էք, պշտա- գնաց:

Զարմանում եմ ես ձեր վրայ,
Կարծ էք խալխի աչքը կուր ա,
Ո՞ւմ էք խաբում, բան չը շինած
Հէնց ասում էք, պշտա- գնաց:

Լոկ խօսքով բան չի գոյանայ,
Ումուղով փոր չի կշտանայ,
Թէ չէ՛ այլոց ապաւինած
Զուր էք ասում, պշտա- գնաց:

Մէջ տեղ բերէք փող, եթէ կայ,
Բաս հէ՞ր ընտրան չորս չորս հսկայ
Թէ չէ ձեր պէս քինթս թամբած
Ես էլ կասեմ պշտա- գնաց:

Ասենք թէ տունըն էլ վարձած,
Նստարանները կարգով դրած,

Բաս ինչի՞ էք դուք շուարած,
Ախր ասում էք, պշտա- գնաց:

Հէնց որ առաք այբբենարան,
կանոն սաղմոս, ընթերցարան,
Նոր Чтенія, Букварь Ռուսայ
Է՛դ է իլաւ, պշտա- գնաց:

Մէկ իմացէ՛ք, ի՞նչ էք անում,
Դուք օյիններ էք խաղ անում,
Թէ էդպէս է, ե՛կ ծափ տուած
Պար զանք, ասենք, պշտա- գնաց:

Արդ դուք զիտէք և ձեր զպրոց,
Թէ կուզ շինէք հիւանդանոց,
Վերջի խորհուրդս ձեզի տուած,
Ահա՛ էս էր, պշտա- գնաց:

Կացէ՛ք, կացէ՛ք ամենքեան,
Աղաղակեց չորրորդ հսկան,
Հէնց ինքս էս բանը գլուխ բերած
Ասելու եմ, պշտա- գնաց:

Վախենում եմ, որ ամաչէք,
Պատճառ, դուք մէկ կոպէկ չաժէք,
Ես կը բացեմ մէկ օր չանցած,
Իսկ որ կասէք, պշտա- գնաց:

Այս կիրակի եկեղեցում
Հայր սուրբն աննէ թող ծանուցում,
Երկուշարթի օրը լուսացած,
Բացուի զպրոց, պշտա- գնաց:

Թո՛ղ գան ժողովն երկխաներ,
Բաքոսապաշտ վարժապետներ,

Եւ նոյն օրը դպրոցն օրհնած
Թո՛ղ սկսուի, պրծաւ գնաց:

Թո՛ղ տարածուին իմաստութիւն,
Հանձար, ուսում և գիտութիւն,
Մենք էլ երբեմն ուռած, ուռած
Կերթանք դպրոց, պրծաւ գնաց:

Մեծ ու փոքր առհասարակ
Մեզ կը պատուեն ծանր ու բարակ,
Եւ աշակերտք ոտի կանգնած
Մեզ փառք կտան, պրծաւ գնաց:

Թէ որ էդունք ողջ մտք անենք,
Պէտք է խիլի հաց էլ չուանք,
Մենք մերը անենք, յետոյ Աստուած
Ողորմած է, պրծաւ գնաց:

Բանը էստեղ երբ կը հասնի,
Մենք ձեռ չենք տայ ո՛չ մի բանի,
Կամ թէ կասենք աշակերտաց
Գնացէք ձեր տուն, պրծաւ գնաց:

Հսկա՛յ եղբարք, ի՞նչ էք ասում,
Կարծեօք ես ձեզ լաւն եմ ասում,
Համաձայն էք դուք իմ կամաց,
Թէ համաձայն, պրծաւ գնաց:

Դէ՛հ ուրեմն կեցցէ դպրոց,
Կեցցեն մանկունք ազգիս Հայոց,
Կեցցեն՝ հսկայք մեր զերապանծ
Բացին դպրոց, պրծաւ գնաց:

Եկա՛ք մանկունք աղքատ հարուստ,
Ծծեցէ՛ք նոր զիտութեան նիւթ,

Հաստատուեցաւ ուսումնարան,
Նոր բարութեանց շտեմարան:

Խնդա՛, Հայ ազգ իմ վշտահար,
Քեզ աւետիս տամ ծափահար,
Շուտ լուսաւոր սերունդ նորից
Պիտի ստանաս դու Ղալաբէց:

Այս սերունդը շուտ քեզ կօղնէ,
Բիւր վերքերիդ դարման կանէ,
Փառք Աստուծոյ, ո՛ւրախ կացիր,
Փափագդ այդ էր, արդ ստացիր:

Յովհաննէս Բոլոր-Էկեղեանց:

137.

Մինչև ե՞րբ այսպէս, Տէր իմ, բազում ապիրատ մնամ,
Վատ ու անձար, անձար ու խեղճ, խեղճ ու դառն աղքատ մնամ,
Մի՛ թողուր ինձ անմշակ իբրև թեղօշ անպտուղ ծառ,
Ծառ ու անբեր, անբեր ու չոր, չոր թուփ ու արմատ մնամ:

Մինչև ե՞րբ ճշմարտութեան ճամբէն որոնեմ ոտնակալ,
Կաղ ու անոտ, անոտ ու խեղ, խեղ ու անփարատ մնամ,
Տո՛ւր շնորհք որ ես լինիմ հողում բարեպաշտ, սրտով սուրբ,
Սուրբ ու անմեղ, անմեղ ու հեզ, հեզ և անարատ մնամ:

Զրկուելով արեգակէն ի՞նչու մնամ ես մութ խաւար,
Խաւար անլոյս, անլոյս ու մէզ, մէզ մառախլապատ մնամ,
Խղճալի Հաղճի ծառադ վտանգներէն հեռի պահէ,
Պահէ ազնիւ, ազնիւ ու քաջ, քաջ ու միշտ ազատ մնամ:

138.

Մի մանկալու տեղում երկու Հայ աղջիկ
Հանդիպեցին միմեանց դէմ առ դէմ ներհակ:

Մինը երկար, սիրուն, տէսքը գեղեցիկ,
Իսկ միւսը տղեղ էր և կարճահասակ:

Տղեղը հարուստ էր, զարդարած ազատ
Հագուստը փառաւոր, վեղը ոսկի շատ,
Բայց սիրունը խեղճ էր, չքաւոր, աղքատ,
Նորա մօտ ծաղրելի խղճուկ նշաւակ:

Սակայն խեղճ ասածս էր բարբոյժ պարկեշտ,
Գլուխը խոնարհեց ու բարեկեց հեշտ,
Ուղեց որ զբաւէ խօսքերով զաւելշտ,
Կամ խօսելով մի երկու հատ լաւ առա՛

Ասաց, քո՛յրիկ, ասա՛, ի՞նչ է անունդ,
Ինձի չափ տասնըհինգ կըլի՞ արբունդ,
Վերայիդ պէս ճո՞ղս է քո կայքդ, տունդ,
Թէ ինձ — Մաղթաղես պէս անտուն, անբնակ:

Իմացայ անունդ, Մաղթաղ, հաճոյ է,
Իմ անունս էլ ասեմ՝ քեզի՛ Սօֆոյ է,
Սօֆօն ունեցածից բաւական գո՛հ է,
Ունիմ՝ իշխան մի հայր հարուստ համարձակ:

Ասաց, Սօ՛ֆոյ, քեզ հետ խօսել չէ արժան,
Ըստ որում գու փարթամ, ես եմ՝ աննշան,
Բայց հասկացի՛ր, հողիքս է մէկ անբաժան,
Խօսի՛ր ինձ հետ, մի՛ սպաներ անդանակ:

Սօֆօն ասաց, ինձ հետ դու մի՛ լինիր մին,
Չէի խօսիլ քեզ հետ, չ՛լիք առանձին,
Չե՛ս տեսնիր ես ունիմ՝ զարդեր թանկը զին,
Յաւերժահարսի ես եմ՝ նմանակ:

Մաղթաղն ասաց, տեսայ, ունիս լաւ ապրուստ,
Գոյնզգոյն պատուական կերպասեայ հագուստ,
Շարժչար մարդարիս, զոհարներ ու բուստ,
Հանդերձներդ մաքուր, փայլուն սպիտակ:

Սօֆօն ասաց, քո՛յրիկ, տեսածդ ի՞նչ է, որ,
Տանը ունիմ՝ պահած այսպէս տասնաւոր,

Տասը ձեռ օժիտս պատրաստ է բոլոր,
Մօտ օրերս պէտքէ՛ գնեն նշանակ:

Ա՛խ քաշեց Մաղթաղը ու զունահատեց,
Իրան կոյր բաղդիցը սրտով գանգատեց,
Ծնած օրը մոքով բամբասեց, ստեց,
Աչքերից զլորեց մի երկու կայլակ:

Մեղայ գոչեց սրտով, մեղայ, տէր, հաստատ,
Տո՛ւր ինձ կարողութիւն չ՛լիմ՝ յուսահատ,
Պահպանեմ՝ անունս մաքուր, անարատ,
Սնտա՛ր բաներու չունենամ փափագ:

Սօֆօն ասաց, ինչո՞ւ արամեցիր հիմայ,
Ինչ որ կամիս՝ ասա՛, քեզ կտամ ընծայ,
Խօսի՛ր ինձ հետ, զուարճացի՛ր ու ցնծա՛,
Քեզ էլ կառնի մի մարդ, կ՛գոյ ժամանակ:

Մաղթաղը այդ բանին չունէր տարակոյս,
Ամուսին գառնալու ունէր վերջը յոյս,
Գորա խօսքերից էլ առաւ խրախոյս,
Նոր էլի սկսեց ծաղը ու ծանակ:

Ասաց, Սօ՛ֆոյ, քեզ ի՞նչպէս մի տղայի
Արժան կհամարես քեզ հարս փեսայի,
Մի կատարեալ ու զարգացած լաւ հայի՞,
Թէ կամ լինի հարուստ տղէս ու համբա՛կ:

Սօֆօն ասաց, ես, իմ՝ քո՛յրիկ պատուական,
Կուզեմ՝ առնի ինձի մէկ վաճառական,
Ունենայ շատ ապրանք ու զանձ բաւական,
Ուտե՛նք, խմե՛նք առատ անչափ, անքանակ:

Մաղթաղն ասաց, քո՛յրիկ, զիտցի՛ր, չեմ՝ մոլոր,
Կուզեմ՝ առնի ինձի մի արհեստաւոր,
Թո՛ղ ունենայ շնորհ, չլի փառաւոր,
Անինայ ինձ բերէ բաժին նկանակ:

Ասացին մէկ մէկու — խօսանք բաւական,
Այսու հետեւ մեզի գնալ է արժան,

Չ'մոռանանք միմեանց մինչի գերեզման,
Մեր խօսած խօսքերը միան յիշատակ:

Այսքան բանից յետոյ Մաղթաղ, Սօֆիան
Համբուրեցին իրար, թողին հեռացան,
Ամենքն իրան ուզած բաղձանքին հասան,—
Ունեցան հարսանիք, ունեցան պսակ:

Բայց անսէ՛ք խաբեբայ աշխարհի բանը,
Միշտ կ'փոխուի մարդու բախտի շրջանը,
Շատ մարդ կ'կորցնէ իւր աստիճանը,
Շատ ամուսինք կ'լլեն իրար հակառակ:

Մեռան Սօֆիայի հայրն ու մայրը,
Կաշքերը վասնուեց, հասաւ վերջ ծայրը,
Սնանկացաւ հարուստ և շուայլ այրը,
Ամեն բան փչացուց ընկաւ պարտքի տակ:

Այնուհետև խեղճ Սօֆիան միշտ տրտում
Խղճալի աւուր մէջ չուներ կեր ու խում,
Շատ օր կանցնէր անտուաղ ու ծում,
Լալով սգով կաներ նա միշտ աղաղակ:

Գանք հիմա նկատենք Մաղթաղի կեանքը,
Տեղը հասաւ նորա փափազը ջանքը,
Ամեն բանով լցուաւ— սերը, բաղձանքը,
Ունեցաւ լաւ ապրուստ և բարի վիճակ:

Սորա այրն արհեստաւոր էր բարի,
Խելացի, կատարեալ, քաջ առողջ արի,
Կ'վազէր միշտ ամեն գործի, հնարի
Քրտինքով կ'ստանար նա արդար վաստակ:

Չամալէ երզիչս տամ ինձի խրատ,
Գիտեմ անցաւոր է ամեն բան լաւ, վատ,
Կ'խնդրեմ Արարչից սէր, յոյս ու հաւատ,
Աշխարհի փառքերն են չնչին, հասարակ:

139.

Մարդս պարտական է Աստուածսիրութեան,
Նուիրել իւր կեանքը բոլոր անվրդով.
Երկրորդ՝ պարտական է ընկերսիրութեան,
Սորանցից կախուած են օրէնքներ յոլով:

Նախ ընկերն է մարդուս իւր գերդաստանը,
Յետոյ արենակից ազգ սիրականը,
Հուսկ յետոյ մարդկեղէն ողջ բանականը,
Սիրել պարտ է ամեն մէկին իւր չափով:

Չամալէ՛, պարտ դրեց երկնային Տէրը
Այս էր Քրիստոսի անսուտ պատուէրը,
Ում մէջ գտնվումէ այս երկու սէրը,
Կը լինի սորանցով մարդը անխուով:

140.

Մեր նախնիքը ունէին շատ
Փառք ու պարծանք, պատիւ, հայե՛ր,
Եին բարքով իսկ պայազատ,
Բնութիւնով ազնիւ, հայե՛ր:

Ունէին վեհ սիրտ հաստատուն,
Եւ հռչակուած բարձր անուն,
Չէր պակաս հայերից զիտուն,
Եւ շատ բարի հովիւ, հայե՛ր:

Կար Արամ, Արտաշէս, Տիգրան
Վահագն, Արշակ և Գայլ Վահան,
Նախ Վաղարշակ, յետոյ Վարդան,
Համբաւեցան անթիւ, հայե՛ր:

Չամալէ ի՞նչ ո՞ր մէկն ասեմ,
Հայ քաջերի ո՞րն գասեմ.

Գիտութեան մէջ շատ պակաս եմ,
Միտքս էլ է ցրել, հայեր:

141.

Մարդու լաւը այն կը կոչվի, որ մտածէ վախճանը,
Ոչ թէ միայն անգիտութեամբ հոգայ այսօրուան բանը
Արարչը կամեցել է մինչ անգամ մըջլեններին
Մտածել և պահել պաշար բաւականին ձմրանը:

Ահա մեզի մէկ օրինակ որ կերելի պարզապէս,
Հողադործը սերմ ցանելով կապասէ նոր աշնանը,
Ինչո՞ւ համար չի տաեր նա պատրաստուածը ծուլութեամբ,
Որովհետեւ կը սպասի շուտ անածել այնբանը:

Բայց մեզանից շատ շատերս հնու թիւնով մոլորած,
Չենք հասկանայ բրնութեան կարգով կատարած սահմանը,
Ինչպէս Ռուսաց հին առածը կասէ թէ «մինչ երկինքը
Չը որոտայ, չի խաչ կնքել երեսը շինականը»:

Ո՞վ Զամուխ, մոլիները մինչ ամեն բան չ'վատնեն,
Չեն աշխատիր մինչ չերելի սովածութեան նշանը:

142.

Միտ թարանք*)

Մէկ լաւ նայէք վաթսուն ու չորս նահանջ թուոյ վատ
գործերին,
Որ նա խոցաւ անխիղճ բարքով Շամախուոյ Հայ իշխաններին,
Թէպէտ պարտ ենք խոստովանիլ թէ կատարաւ կամքն Տէրին,
Լացն, կոծն, ախոսասլն սրտառուչէ անհամբերին,
Տացէ նորանց հանգիստ հոգւոյ երկնաւոր Գատողն վերին:

*) Հանգուցեալ Զարկարը (Արքանամ Մարտիրոսեանը) երբեմն գրա-

Ծառն զօրեղ է արմատով, — ազգի պարծանքն է իշխանն,
Որոց երկուսն վախճանեցան մեծատոհմ Լալայեանց տանն,
Առաջինն Աթանէս Աղան, որ մինչևի օր մահուանն
Ազգին սիրեց, օգտեց, ինչպէս Մամիկոնեան քաջ վարդանն,
Աւաղ, աւաղ, հազար աւաղ այս իշխանութեամբ անթերին:

Երկրորդն Մարգարէ աղան էր, մին ճրագ ազնուական,
Հանգիստ բարուք, համեստ վարուք իշխանաց մէջ յոյժ զովական,
Աղքատասէր, ողորմասիրտ, խաղաղարար, և պատուական,
Դո՛ւ նահանջ թիւ վաթսուն ու չորս, սև երես գնաս պարտական,
Որ մէկ տանից երկու առիւծ մատաղ տուիր արծիւներին:

Իշխանաց մահն ազգի համար անբախտութեան դուռն է բանում,
Ափսո՛ս որ մենք կուրացելիմք, այս պատիժն չենք հասկանում,
Երբ ընկնու մենք նեղութեան մէջ, որդւոյ պէս են մեզ պահպանում
Ազգն անիշխան, մարդն անաստուած՝ միւլենոյն է ամեն բանում,
Մեր Հայ ազգն է միայն ուղող չորանալն պողպերին:

Հանգուցեալ Աթանէս աղան հոգւով պարտեմք հայր անուանել,
Որ նա դատաւորաց հեռն կեղծելով չէր միաբանել,
Քանի բանտում լինողների շղթաներն է ոտից հանել,
Դաւաճանաց աչքին փուշ էր, Աստուած էր նրան հաւանել,
Ի հարկէ ճշմարտախօսն ընդդէմ է կեղծաւորներին:

Իշխան կայ որ ազգի համար երկրաշարժին ամուր սիւն է,
Որտեղ աղքատաց նեղացնեն, նորան օգնելու արթուն է,
Իշխան կայ որ Յուդայի պէս գործն միայն մասնութիւն է,

մական կարօտութեան մէջ եղած ժամանակ, դիմելիս է եղել այս եւ այն
անծանց իրա բանաստեղծական նամակներով եւ բաւականացել: Անն այն նա-
մակներից մինը, որ իմ խնդրանացս համաձայն, ուղարկել է ինձ Շամախուց,
Զարկեարի Հայրենիքից մեծ. պ. Աղեքսանդր Լալայեանցը, որին պատիւ ունիմ
յայտնելու իմ սրտի խորին շնորհակալութիւնը:

Ամենայն ժամ կաշառակէր զատաւորաց տանն է քուն,
Առաջինն երկրորդի մօտ նման է զոհուած սուրբերին:

Այս եկեալ զարնան բիւլբիւն*) անդադար «ազա՛ վա՛յ» կասի,
Քանզի նորանք արժանի էին զասուելոյ իշխանաց դասի,
Իշխանական շնորհքները ո՛չ փողի են, ո՛չ լիբասի,
Ճակատազիրն էր ցո՛յց տալիս ազնիւ ազա Աթանէսի,
Ըստ սուրբ գրոց, Աստուած նորան ստեղծել էր իւր պատկերիս
Լոյս արեգակից խաւարվեց, օրդ սեւացաւ, Շամախի,
Անկաւ քաղաքից գերանն, չարն լիացաւ, Շամախի,
Բնակիչքդ Լուսաւորչի զադրն չիմացաւ, Շամախի,
Մանկունքդ անտէր մնացին, Աստուած բարկացաւ, Շամախի,
Այսուհետե կ'հասկանաս լաւն ու վատը, չարն ու բարին:

Աստուած մեր հայր Աբրահամին բազմացուցանել խոստացաւ,
Այն օրհնութիւն բերող հողմն նախ Լալայեանց դուռն բացաւ,
Որով նորանց ազգի մէջին արական սեռն բազմացաւ,
Որդուվք թողամք, հարստութեամբ զանազան փառօք լիացաւ,
Բարի սերմն բազմանալով լիացոյց բարերեր տարին:

Այժմն երեք ամուր եղբարք նորանց հաստատուն տեղակալ,
Մեծ իշխան Աբրահամ աղան**) եղբայրասէր, խնամակալ,
Բարեհոգի Գէորդ աղան՝ ժիր գանձապետ և գործակալ,
Նորահաս Կարապետ աղից ո՛վ չէ արդեօք շնորհակալ,
Սէրն առատութեան նիւթէ ՚ի մէջ եղբարց կամ ընկերաց:

Հօգուով չափ ուրախ կլինէի, որ այն պարոններ, որոնց մօտ գտնուում են հանդուցեալ ջարկեարի բանաստեղծական նամակներից կամ երգերից, բարեհաճէին նոցա ուղարկելու հնձ ի տպագրութիւն:

*) Ինչպէս երևումէ, սա իրա համար է ասում: Կարծես հանդուցեալ ջարկեարն եւս զգացել է իրա քանաստեղծական հոգին, իրա նուրբ եւ սուր սուր մտքի ծնունդները: Ընթերցողը կարող է տեսնել այդ նորա գրուածների մէջ:

**) Այժմ վախճանված է: Ա. Գրիգորեանց:

Ինչ տուն ունի սէր բնական, այն տունն միշտ հիմնաւոր է,
Անուն բարին, անմահ, անզուժ փուչ աշխարհն անցաւոր է,
Վասնորոյ քաջ իշխանաց մահն զգալ հարկաւոր է,
Ամեն բերան ողորմի տալ կամ ախտասալ պարտաւոր է,
Կենդանին մահ չի հասկանալ թէ չի տեսնի անցաւորին:

Միւթարի՛չք ամենայնի, տո՛ւր փոխարէնն այս տխրութեանց
Ուրախութիւն տանապատիկ, ըստ կամաց քոց՝ անցեալն էանց,
Ո՛չ պակասի յայսմ հետէ ճիւղ ի տանէն տեարց Լալայեանց,
Որպէս հասեր արադ թիւօք ՚ի մէջ հրոյն երեք Մանկանց,
Որոյ լուրն օւրախութիւն լինի Աբրահամ Զարկեարին:

143.

Թէ՛նիս Հայերէն.

Յոյս հաւատով Աստուած պաշտենք անցաւոր աշխարհի մէջ,
Աւետարան, քարոզ լսենք մեր սուրբ եկեղեցու մէջ,
Նկեղեցուց դուրս գալուց՝ լինինք խողաղութեան մէջ,
Ջերմեռանդ սրտով սիրենք Աստուած հանդերձեալ կենաց համար:

Ճշմարտութեամբ սէր քարոզենք Լուսաւորչայ տաճարի մէջ,
Օրէնք ու պատուիրանք պահենք մեր մատաղ սրտերի մէջ,
Զրկողութիւններ չի անենք այս դատարկ աշխարհի մէջ,
Խեղճնրին միշտ ողորմենք մեղաց փրկութեան համար:

Աստուած սիրելով մարդկութիւն, առաքեց իւր Միածին,
Յզացաւ մայր Աստուածածին՝ ճնաւ անկղ Յիւսուսին,
Կարգադրեց օրէնքները, լուսաւորեց աշխարհին,
Չնչեց իշխանութիւն սատանայի մեր ազատութեան համար:

Յաւիտենական կեանք խոստացաւ Աստուծոյ Որդի Յիսուսը,
Արդարենրին արքայութիւն, մեղաւորաց սանձանքը,

Զա՛ռափ, մեղքերդ զըջացի՛ր, պէտքէ դատուի աշխարհքը,
Աղաչենք Տիրամայր Կուսին բարեխօս լինի մեզ համար:

144.

Ն ա մ ա կ.

Նա՛մակ, բարևս տա՛ր սևերես փողին,
Ասի՛ր թո՛ղ պատիւը տայ նորան սիրողին,
Քայց ես յոյս եմ կապել իմ Ստեղծողին,
Աղօթելով, ժամ զնալով, միշտ լալով:

Նա՛մակ, ասիր թո՛ղ նեղի ինձ աշխարհում,
Ինչքան ձիք տայ չե՛մ տալ կամքին կտտարում,
Միայն կը չոքեմ Տէրիս ճանապարհում՝
Աղաչելով, լաց թափելով, ուզելով:

Նա՛մակ, ասի՛ր չեմ ուզում ես էն փողն,
Որովհետև նա էր Յուզին խափողն,
Ինքն իր ձեռք Ստեղծողին մասնողն՝
Ուրանալով, փող առնելով, ցոյց տալով:

Նա՛մակ, ինձ աշխարհում փողի սեր չունեմ,
Այնու պատճառաւ էլ հէնց խեղճ Մե՛կն եմ,
Ինձ ողորմող մենակ մէկ Մարգասեր ունեմ,
Կը ողորմի, կը խնայի ինձ տալով:

145.

«Սոխակ Հայաստանի» Հրատարակչին.

Շատ դուր եկար խօսելովք դու ինձի՛, Գրիգորեանց,
Անունդ հռչակվել ա մեր Ղզարում՝ Գրիգորեանց,

Քեզանով հետևել են շատերը մեզնից գրեանց,*)
Ընդունի՛ր զովասանքս, ընծայ է քեզ, Գրիգորեանց:

Ի՛նչ կը լինէր, որ քու հետ երես երես խօսէի,
Եւ քեզանից օտար տեղ՝ մի քանի բան լսէի,
Կ'ափսոսամ որ քու պէսին չեմ տեսնում մեր Ղզարում
Տասնութ ամեայ հասակում քեզն զովեց Չե՛րսիեանց:

146.

Հարբեցող մարդու երգ.

Ո՛հ գինի, գինի, սպիտակ ու կարմիր գինի,
Ով որ քեզ չի խմել, նա չունի հոգի,
Նա չէ մարդ, չունի բանականութիւն,
Մեռածի շարքում նա պիտի գրուի:

Ա՛խ գինի, քո հոգուն մատաղ ես դառնամ,
Քո շարք տանեմ, քո հնարողին ես զոհ գնամ,
Տխուր սրտերի ուրախութիւնը միայն դու ես,
Ա՛խ, գինի ջան, գինի, առանց քեզ ի՞նչպէս զիմանամ:

Մինչև որ չ'հարբենամ քո սուրբ տիճորից,
Զուրկ կ'լինիմ զգացմունքից ու մտքից,
Մինչև որ քայլամուտը չ'գնամ պատէպատ կպչելով,
Բանս չի յաջողուիլ, կ'պատժուեմ քո լուլով:

Ե՛ս սչինչ չեմ ցանկալ, ո՛չ փառք, ո՛չ մեծութիւն,
Միայն թո՛ղ լիքը լինի տիճորումս գինւոյ զօրութիւն,

*) Ուրախ եմ, եւ դարձեալ ուրախ, որ «Սոխակ Հայաստանին Ղզարում եւս համակրութիւն ունեցել է, գրգռելով, զոնէ մի քանի, երիտասարդներին զէպի ընթերցասիրութիւն եւ զէպի մայրենի լեզուի մշակութիւն:

Ա. Գրիգորեանց:

Տակառներս շարքով եթէ լինի պառկած մատանումս,
ես հաց չեմ ուզել, նա է իմ կենդանութիւն:

Որքան որ շատանան անկիւններում գլինեաներ,
Ս. յնքան ես ուրախ կանցնեմ իմ օրեր,
Հարբած վերկենալ, հարբած անկողին մանել,
Թո՛ղ միայն լինի իմ կեանքի նպատակներ:

Եթէ չլինի զրպանումս ո՛չ մի կոպէկ,
Կ'ծախեմ բոլորը, անգամ և որդին իմ հէզ,
Միայն թո՛ղ լիքը լինի տակառներս մեծափոր,
Որ միշտ զարտակեմ ու լցնեմ նորից գլինի վրփրաւոր:

Աշխարհումս ոչինչ չո՛ւնիմ, որ կտակեմ իմ որդուն,
Իմ միակ կտակս է՝ սովորել հարբեցողութիւն.
Իսկ ես կ'աւանդեմ և իմ մահուան անկողնում,
Որ որդիս հետեւի իւր հարբեցող հօր խօսքերուն:

Թո՛ղ նա այց ելանէ իմ գերեզմանի վերայ,
Թո՛ղ չ'թրջէ արտասուքով, որ իմ հողին չ'վշտանայ,
Քանի մի բուժիլ գլինի թո՛ղ իւր հետ նա բերէ,
Արտասուքի տեղ իմ հողը թո՛ղ նորանով նա թրջէ:

Յարո՛ւնի՛ն Յովնանգանեանց:

Ինչո՞ւ համար.

Ով յանցանք ունէ՝ օրէնքն պատժումէ անխնահ կերպով
Յուլութեան, մոլութեան, զոգութեան համար:
Նոյնպէս և յարգումէ ով արժանի է իւր բարի գործքով
Սրբութեան, ճշդութեան, լիութեան համար:
Չունիմ ես յանցանք, ինչո՞ւ պիտ ինձի պատժեն այդ չափով

Մասնութեան, չարութեան, նենգութեան համար.
Համեմատ մեղացս թո՛ղ դատեն ուղիղ կանոնով, կարգով
Լքութեան, շնութեան, ցանկութեան համար:
Եթէ ինձ դատեն առանց պատճառի, այլ պո՛տ պատէ լը պան*)
Հաճութեան, զերութեան, տխրութեան համար,
Լաւ կլնի թէ որ մինչ դեռ չդատած կարեն իմ պատան
Գթութեան, փրկութեան, սխրութեան համար:
Կենդանի թաղեն, հողի տակ ծածկեն և լան անդադար
Թողութեան, զրութեան, զրկութեան համար.
Մոռացմամբ ինձի մինչև յախտեան այնպէս տան դաղար
Խնդութեան, հեշտութեան, քաւութեան համար:

Նեաղի՛ն:

Յանկարծածին խօսք.

Ունայնութիւն ունայնութեանց՝ ամենայն ինչ ունայն է.
Զայս բանը մեզ աւանդ տուաւ իմաստունն Սողոմոն,
Ունայնութեան կարգիցը դուրս Արարիչը միայն է,
Զայս էլ յայտնի խոստովանեց Արիստոտել գերզգօն:

Ինչ որ մեր աչքը տեսնումէ՝ մի՞թէ ճշմարիտն այն է,
Շատ բան կայ, որ մեր մարմնաւոր աչքը նորան չի հասնում,
Մի՛ կարծէք թէ հօրիզոնը՝ մեր աչաց այնչափ լայն է,
Որ՝ աշխարհի ամենանուրբ առարկաներն է տեսնում:

*) Pour passé le temps (պուռ պատէ լը տան) Ֆրանսերէն է, եւ նշանակումէ անցնել ժամանակի համար:

Ս. Գրիգորեանց:

Մարդկային գիտութիւնը՝ երկնայնոց մօտ լոկ ձայն է,
Քանզի մարդիկ հողեղէն են՝ երկնայինքը լուսեղէն,
Լուսեղինին նմանողը՝ միայն մարդոյ մէկ փայն է,
Զոր ստացաւ մարդն առաջին իւր զթառատ ստեղծողէն:

Ո՛վ որ էն փայլեց զրկուած է՝ նորա վեճակը վայն է,
Ինչպէ՛ս որ միշտ վայոց մէջ է՝ ամենաշար սատանան.
Սէ՛յեաբ, մարդկային ազգիցը զրկուած քո խեղճ Հայն է,
Որ թողեց սուրբ Հայրենիքը՝ եղև ցիր ու ցան:

149.

Տէր—Կիրակոս.

Ո՛վ ճոխ բազմամարդ դու Անի քաղաք,
Հայոց լի երկիր, Հայ ազգի պարծանք,
Դու որ շատ ազգի աչքին իբրև Կոյս,
Կուզէին խլել, կտրել Հայոց յոյս:

Յովհաննէս արքայն անձար մնալով,
Յետկար մի նամակ զրկեց Յոյն Կայսեր,
Որով խօստացաւ իւր մահից յետոյ
Տալ Յունաց Կայսեր Անի ճոխ երկիր:

Եամանակ անցաւ Կայսրը փոխուեցաւ,
Յովհաննու նամակ նոր Կայսրը տեսաւ,
Կանչեց Հայ տէրտէր-Տէր Կիրակոսին,
Յանձնեց այն նամակ այդ քահանային:

Որ տանի նամակն Հայաստան երկիրն,
Եւ տայ Յովհաննէս Հայ թագաւորին,
Չուզեց նոր Կայսրն նեղել Հայերին,
Ու ձեռքէ խլել լիասաստ Անին:

Բայց մեր սուրբ տէրտէր հոգևորական
Չեղաւ օգնական իւր իսկ ազգութեան,

Պահեց այն նամակ մինչ Կայսրը մեռաւ,
Նորէն Միքայէլ չորրորդը նստաւ:

Մեր Հայ քահանան շուտ վազեց յառաջ
Ու առեց Կայսեր իւր պահած նամակ,
Ստացաւ Կայսրից շատ մեծ պարգևներ,—
Ոսկի ու արծաթ, զարդ, մարգարիտներ:

Ո՛վ դու քահանայ հոգևորական,
Պիղծ հողի ունես, հողի չարութեան,
Ոսկի ու արծաթ քու հոգու համար
Շա՞տ մեծ գին ունէր քան ազգի պաշտպան:

Կռիւ, պատերազմ, արիւնհեղութիւն
Ինչո՞ւ շաղ տուիր Անիի գլխին,
Ինչո՞ւ մեր Գազիկ հոգւով ազգասէր
Զոհ արիր անմեղ փրկանք Անիին:

Փոխան բարութեան ի՞նչու չար անուն
Քեզանից յետոյ թողիր յիշատակ,
Ի՞նչու չար հողիդ դարչ ազահութեան
Քո յաջորդներիդ թողիր օրինակ:

Սարգիս Փելոյեանց:

150.

Փողի վերայ ասած.

Ո՞վ է հարցնում մարդկութիւնն՝ մարդ բառն փողն է. իմացէ՛ք,
Մարդկանց անթառամ պահողն՝ սրտերի ցօղն է, իմացէ՛ք,
Եթէ փող ունես, աներկբայ ինչ որ պատահաւ զողացի՛ր,
Հարուստն ինչքան զողանայ, աղքատն զօղն է իմացէ՛ք:

Ա. հասարակ պիտի սպրեկք մինչև հարկւ՛ր քսան ասրէ,
Փողն մարդկանց ծերացնող, շուտ սպանողն է, իմացէ՛ք:

Ծնողք իւրեանց որդւոց միջին աշխատաւորին են սիրում,
Անփող որդին իւր ծնողաց աչքի գրողն է, իմացէ՛ք:

Թէպէտ կասեն մեծատունն արքայութեան անարժան է,
Բայց մին կերպիւ արքայութեան դուռն բացողն է, իմացէ՛ք,
Մի՛ զարմանայք, ում տեսնումէք միշտ հարբած է առանց զինի,
Նորա սրտի մէջ կռողն՝ ոսկի խաղողն է, իմացէ՛ք:

Ո՛վ որ փողոք փող աշխատի, փողի համար է աշխատում,
Իրան համար աշխատողն՝ հաղնող, ուտողն է, իմացէ՛ք,
Անփող մարդն հարսանեաց տան՝ մի այրի կնոջ նման է,
Փողն նուատին մէջլիսում՝ արխացնողն է, իմացէ՛ք:

Ո՛չ ով չ՛աւտի ես խնօք եմ, այսու պատիւ ունեմ աշխատած,
Փողն մարդկանց պատուի հանող, պատուից քցողն է, իմացէ՛ք,
Յուզան իւր Տէրին մասնելով, դառաւ նզովեալ, անպիտան,
Նա միմիայն բանին պատճառ է, փողն մատնողն է, իմացէ՛ք:

Ես էլ շատ վախտ ցանկանումէի լինել փողատէր յիմար,
Աշխարհիս մէջի արլահն՝ շատ մտածողն է, իմացէ՛ք,
Քալ մարդիկին իմ խօսքերս կարծեմ ոչինչի տեղ չ՛գնեն,
Բայց յոյս ունեմ, որ Մայի՛թի ականջի օդն է, իմացէ՛ք,
Զարկեալն որքան մտածաւ, որ փողից լաւ մին բան ճարի,
Ո՛չ կայ և ո՛չ էլ լինելու է, սա վերջին տողն է, իմացէ՛ք:

151.

Ողջո՛յն յՀայաստանի Սոխակիդ՞.

Ողջո՛յն քեզ շատ ողջոյն, Սոխա՛կ քաղցրաձայն,
Ողջոյն սիրանուէր նաև անձկանօր,
ձուռողեա՛ հանապազ, իմ սիրուն թռչնիկ,
Թո՛ղ աշխուժիւ լսեմք, ցնծամք բերկրանօր—
Խնդաւք հրձուանօք:

Ընդունէ՛ զիմ ողջոյն մարդասիրական՝
Նթէ սիրես վարդին կարմիր տերեւի,

Մի՛ մերժեր դու ինձ, ցո՛յց սիրոյ նշան,
Թէև չեմ ես Հայոց ազգին անդրանիկ,

Այլ թշուառ մանկիկ:

Արդէն արշալոյս է, իմ սիրուն Սոխակ,
Երգէ՛, մի՛ դադարիր, անուշիկ երգէ՛,
Ինձ շատ սիրելի են քո ձայն, քո նուագ,
Քո քաղցրիկ երգելով ինձ մխիթարէ՛:

Սիրով յուսադրէ՛:

Սոխակներ թէև շատ կան սար ու ձոր,
Բայց նոցա երգածն է անոյշ դայլայլիկ,
Իսկ բանաւոր Սոխակդ երգէ նոր ՚ի նոր
Մեզ հաճոյական երգեր շատ քաղցրիկ—

Սիրուն ու մեղմիկ:

Արարածն ու Անին*) էլ երգէ, Սոխակ,
Հային ու Արամայիս չ՛մոռանաս, զխոն՞ս,
Սոցա սիրոյն նուիրէ փոքր ինչ ժամանակ,
Թէ Իսրայէլեան զԱստուած կ՛սիրես,

Նա պահեսցէ քեզ:

Հա՛պա, ա՛գնիւ թռչնիկ սլացի՛ր, արդ ժամ՛ է,
Մատաղիկ թւերով ճախրէ դէպ ՚ի վեր,
Օ՛ն, փութա՛ Հայոց դու ևս ողջունէ՛,
Ողջունարեր Սոխակդ զիմէ՛ աշխարհ մեր,

Օգնեսցէ քեզ Տէր՛:

Ազեռանոր Սիբիւսացեանց:

*) «Սոխակ Հայաստանին» իբրև օրգան Հայկեան կեանքի, երբէ՛ք, երբէ՛ք մոռանալու չէ այդպիսի նուիրական տեղեր, այդպիսի սրբազան տեղեր: Նա անբուն աչերով երգելու է դոցա. Թարգման լինելու է դոցա, հանգէս բերելով ամեն մի ճշմարիտ հայու առաջ նոցա տխուր եւ ցաւալի յիշատակները... Այդպիսի զգացմունքներ ընթերցողը կտեսնի ներկայ գրքիս մէջ, երբ նա ուշքով կթերթի: Ա. Գրիգորեանց:

Հառաչանք Անիի վերայ.

Ո՞րանդաց ո՞րանդ էլի միտս ընկաւ
 Բարդաղուրի Անիի կրած վիշտ ու ցաւ,
 Չիլաւ ո՛չ մին օր, յորում ես ուրախ
 Կարող լինէի մնալ առանց « ա՛խ »:

Շուարած եմ ես, ա՛խ մէկ ցաւակից
 Ո՞վ է ինձ տուեր Հայոց աշխարհից
 Քան ինձի մօտիկ, նորանց է Անին,
 Մանաւանդ ընթեր մեծ Հայաստանին:

Ինձ սոսկ լսելի, ողբ ու Հառաչանք
 Կովիասու սարեր կրկնեն արձագանք—
 Հերի՛ք քնի՛ք՝ Հայք և Ազքանաղ,
 Հերի՛ք զիս մաշէք միշտ և հանապաղ:

Էրնէ՛կ մին տպվէր Անի՛ վշտակիր,
 Քու «Շէ՛ն» «- Ա-էր» անուամբ պատմազիր,
 Ստոնասիրտ ազգին, այո՛ փոյթ ու ջան
 Շուտով կու տայր այն ոսկիտող մատեան:

Ա՛յն ազգու զրբի յարգոյ հեղինակ
 Սրտով է սիրել քու սուրբ աւերակի,
 Անխարդախ մտօք նրան կու գովեմ՝,
 Բայց նա քաջ զիտէ, եթէ ես ով եմ:

Լրում կունենար քու սրտի փափագ,
 Որ եթէ տպվէր քու «Շէ՛ն Ա-էրակ»,
 Թէ կուզես ազգդ բոլորդ պատին,
 Զա՛յն սուր, ազգասէ՛ր իմ՝ Սբարատին...

Ի՞նչ կարանք առնել ես ու Գարեգին,
 Հանդէպ կենալով կիզող արեգին,
 Ինչպէս ասել են բան աշխարհաբար—
 «Ծառ ճիւղով չէ՛ ծառ, արմատով է ծառ»:

Կարծեմ լսեցիր այն իմ՝ սուրբ եղբօր
 Ի խորոց սրտէ լացն արտասուածոր,
 Սակայն ի՞նչ օգուտ թէ ես և թէ նա
 Չենք քեզ ձեռնտու այժմ և առ յապոյ:

Շատ կամ ապաճս, կասեմ վերստին,
 Հայք ստոնասիրտ են և անսէր անգային,
 Թէ ո՛չ, այժմէն իսկ Հայոց աշխարհիկ
 Ունի բաւական լուսաւոր մարդիկ:—

Բայց աստանտական ՚ի յայս և յայնկոյս,
 Եւ ոչ մի ազգից ունեն խրախոյս,
 Օտար ազգերին երբ մօտիկ կըտաս,
 Բոլոր ասածիս շուտով կու աւտաս:

Հայն ունի առ այժմ՝ քանիմ՝ լրաթուղթ,
 Բաժանորդ*) կասես, չեն արած այդ ուխտ,
 Ի՞նչեր կը պակսի, որ ամեն աւագ
 Տասը մանէթ ձգէ նրանց գանձանակ:

Կ՛աղաչեմ յատուկ, իմ Անի՛ անդին,
 Այդպէս առաջարկ մի՛ անիր քու ազգին:

*) Եթէ մեր Հայերից ոմանք գոնէ բաժանորդագիրներ են լինում մի որ
 եւ է Հայ օրգանի, Հայ պարբերական թերթի, նոցանից շատերը ապառիկով
 են վայելում նայն իսկ րագրի ընթերցանութիւնը—օգուտը, մինչև չեն խնդ-
 բում, չեն աղաչում եւ մինչև անգամ նայն իսկ րագրի միջոցաւ բազմիցս
 յայտարարութիւններ տպագրում ապառիկով ստացած րագրի զինք դարձնելուն:
 Անն մեր ընթերցասէր գասի, մեր զրականասէր ինտելիգենցիայի Հայ արէստի-
 Հայ ճրագարակութեան պաշտպանութիւնը... Ա. Գրիգորեանց:

Հայոց մին կոպէկ այդպիսի տեղեր
Չունի սովորոյթ, նրանց մի' նեղեր:

Թէ թուղթ խաղ կուզես, մոմեր վառ անենք,
Տոպրակով գրամ մեզն հետ տանենք,
Կրքեր կարդալուց ի՞նչ ես հասկանում,
Թէ ինձ կը սիրես, վե՛ր կաց մեր բանում:

Ո՛հ սարսափելի ազգային կորուստ,
Գուցէ իմ մեղաց պատէր յամենուստ,
Ի՞նչպէս ես դատում, իմ գառնուկ Անի,
Այն անբուժ ցաւը ո՞վ կարայ տանի,

Վասն որոյ քնի՛ր, սղբալն քաղաք,
Քու առողջութեան դեռ չէ ժամանակ:

Յովհաննէս Եսայեանց

153*).

Ողբ 'ի վերայ աշխարհին Հայոց.

Ողբամ զքեզ Հայոց աշխարհ,
Ո՞րպէս եղև վայելչութիւնդ,
Ո՞ւր է ազնիւ ձայնդ երգոց,
Լռեալ կացին ամեն աշխարհ:
Ղօջեալ եկաց վիշտ զազրալի,
Տապալեցան հիմունք երկրի.

*) Մի մագաղաթնայ փոքրիկ ձեռագիր գրքում վերոյիշեալ երգը հետեւեալ տողերի հետ միասին գրած էր, որից նոյնութեամբ արտագրեցի— «Յամին 1827-ին յունվար ամսոյ 19 զրեցաւ ի նահանգն Լօսի ի դիւղն Լէճան, յայտ ամի որ պիղծ հասան Խանն պարսից շատ քանդմունք արար ի նահանգն շիրակվանու եւ շատ զերի տարեալ, եւս յոյժ վիրաւոր անկեալ եւ

Ոչ գոյ մանուկ 'ի մարց զրկի,
Ամենն օտար երկիր վարի:

Բարձան մանկանց ձայնք 'ի գաշտի,
Խոպանացեալ ախօս նստի,
Փոխան վարդին փուշ բուսանի,
Ո՞ւր է անուշ երգ տատրակի:

Սիրտ իմ լցեալ աղէտալի
Վասըն Հայոց յոյժ խղճալի,
Տարապարհակ 'ի գուր վարի
Խալէկ-դպիր աշխարհելի

154.

Ո՛վ սիրելի, աղաչումե՛մ միշտ քաղցր բարբառ լինիս,
Բարբառ անոյշ, անոյշ ձայնով, ձայնովոլդ կիթառ լինիս,
Ամենայն տեղ բարոյութեան սուրբ ճիւղերը տարածես,
Տարածես շատ, շատ պտղաւէտ, պտղաւէտ քաւառ լինիս:

Անունդ քաջ եւ անարատ պահես, լինիս հեզ խոնարհ,
Խոնարհ վարքով, վարքով համեստ, համեստ ու պատկառ լինիս
Ազնիւ բարբոք տեսնելով քո ուրիշները քեզ դիմեն:
Գիմեն սիրով, սիրով ամբի՛ծ, ամբի՛ծ լոյս կաճառ լինիս:

Եթէ կեանքդ ապահովել կամենում ես ճշմարիտ,
Ճշմարիտ զործ, զործդ ուղղէ, ուղղէ որ պիտառ լինիս,
Ո՛վ Զաճալի, զգուշութեամբ պահպանէ քեզ մշտական,
Մշտական քեզ, քեզ պահէ հայ, հայ ու ուղղափառ լինիս:

մեծ կոտորումն եղև, որ եւ Տէր Աստուած այնպիսի վիշտ եւ կսկիծ ոչ տայցէ ողորմելի հայոց ազգին: Եւ ես անարժան տիրացու Խաչատուրս մշեցի զայսպիսի աղէտալի տարին կնքեցի, որ մինչեւ որդւոց որդիս յիշեցի, որ եւ ընթերցողը յիշեցէր զանարժանս: Աստուած յիշեսցէ զձեզ, — ամէն:»

Ս. Մխիթարեանց:

155.

Ո՛վ քաջդ անուանի Հովուապետ բարի,
Խնդրում է քո հօտդ առոյգ հովիւներ,
Հեռացնել նորանց որք են անարի,
Ընդունել նոր ՚ի նոր զիտուն ազնիւներ:

Գայլերը շատացած՝ կամին քեզ ատել,
Քո սիրելի հօտդ քեզանից զատել,
Վազ ունեցած ուխտդ իրանք հաստատել,
Նորանով ստանալ փառք և պատիւներ:

Ջամալիս հօտիդ մէջ եմ մի աննշան,
Բայց խեղճ ու ցաւոյներ շատ կայ ինձ նման,
Մինչ ՚ի մահ քեզանից հոգւով անբաժան,
Թէև ցոյց տան հազար խորին հաշիւներ:

156.

Ո՛ւր են մեր նախնիքը, սիրելի Հայեր,
Որանցից զողում էր Պարսիկ և Քուշան
Մէկ ժամանակ էինք զովելի Հայեր,
Ո՛ւր է այն քաջանուն նրուանդեան Տիրան:

Կայր Արշակ, Վաղարշակ, Վահէ. Արտաշէս,
Պատմութիւնը մեզի կաւանդէ այսպէս,
Նորանց ազգի սիրով կռիւներ հանդէս,
Ո՛ւր է Մամիկոնեան վիհ սուրբն վարդան:

Մի՞թէ նորանց պէսներ չունինք մեր մէջ արդ,
Որ լինին հայրենեաց լ'ազգի համար զարդ,
Փառք Աստուծոյ, ունինք շատ բարերար մարդ,
Որք հոգւով են պաշտպան հայոց ազգութեան:

Ջամալի. հայերըս ունինք հզօր Տէր,
Թէ ունենանք ուսում, միութիւն և սէր,
Կեանքերս պէտքէ ասնք մենք ուսման նուէր,
Որ ուսմամբ ճոխանայ մեր մայր— Հայաստան:

157.

Ո՛վ մարդ, աշխարհի մէջ այնքան աշխատէ,
Որ մի քանի բարի յիշատակ թողնիս,
Փախի՛ր վատութիւնից, հեռացի՛ր, առէ՛,
Ջանք արա բարութեան օրինակ թողնիս:

Վատ կիրքերուդ յաղթող ու տիրող եղի՛ր,
Նեղութեան զիմացող, համբերող եղի՛ր,
Ոգոյթեան զիտութեան զու սիրող եղի՛ր,
Կիտուններու մէջը նշանակ թողնիս:

Քիչ բանով զո՛հ եղի՛ր ու բա՛ւ համարէ,
Օգնի՛ր նորան, ով որ քեզնից տկար է,
Ջամալի, մաածէ, միշտ բան հնարէ,
Աշխատի՛ր անունըդ շարունակ թողնիս:

158.

Ո՛վ մոլորեալ ազգ, արի՛ նորոգուիր, նուանդ ստացի՛ր,
Վերնային իմաստութիւն, Արարչաւանդ ստացիր,
Փրկութեան զրբին զարձիր, որոշ գաղափարդ ձգէ,
Փրկիլէն բժշուութիւն (հողիդ է հիւանդ) ստացիր:

Մաքրուած սիրան փափուկ ստանալու փափագ կրէ,
Երկնային կեանքն վարէ, շնորհք ու տաղանդ ստացիր,
Ջանք արա՛, աղօթք արա՛, ցայգ և ցերեկ աղթուն սիրով,
Մեղքերուդ իշխանը քեզ զրած է պատանդ, ստացիր:
Սոխակ Հայաստանի IV հատոր. Ա. Գ.

Չը գիտե՞ս մեռելները յատուկ կենագործող մի կայ,
ձշմարիտ հաւատք ու յոյս, սիրոյ պարաւանդ ստացիր,
Յոյս լեցուն անմահ փառօք ստոյգ Քրիստոսն է քեզի,
Խեղճ Հաւե՛ս, դարձի գալով, փառքը զնա՛ անդ ստացի՛ր:

159.

Ոչ մի մարդ չհպարտանայ
Իւր ունեցածներէ վերայ,
Որքան կուզէ պարարտանայ,
Վերջն է նա որդերին ընծայ:

Ոչ յոյս զնէ հարստութեան,
Ոչ քաջութեան, ոչ գիտութեան,
Ոչ բազդի, ոչ գեղեցկութեան,
Ըստ որում է ցաւոց ծառայ:

Թերի է մարդուս փափազը,
Լացով առաջին նուազը,
Ասած է— «մէկի ճրագը
Մինչև ՚ի լոյս վառ չի մնայ»:

Բոպէներով ունի ծիծաղ,
Տարիներով կայ անխաղաղ,
Պատրաստում է մահուան դագաղ,
Աշխարհի ձեռքից խաբեբայ:

Չա՛մալի, աշխարհը բանդ է,
Մարդը նորան հնազանդ է,
Ծնած օրիցը սպանդ է,
Գահի՛ճ մահը է միշտ ներկայ:

160.

Ողջո՛նում ենք քո գալուստը,
Եկիր բարեաւ դու նոր տարի,

Ապագայ կենաց ապրուստը
Քեզնից սպասում ենք բարի:

Լինիս նոր օր շնորհաւոր,
Հայոց կենացը դարաւոր,
Երանի՛ հայերս բոլոր
Կիմենք քեզ հետ լոյս հնարի:

Թօթափենք հնութեան քօղը,
Ստանանք շնորհաց ցօղը,
Պայծառ արեգակի շօղը,
Չը մնանք միշտ մէջ խաւարի:

Մտածենք մենք, որքան ազատ
Ունինք միջոց ուսման հաստատ,
Մեր հին կեանքը է մեզ խրատ,
Ո՛ւր մնանք թմրած անարի:

Չա՛մալի, չենք ունենայ վիշտ,
Թէ գործ բռնենք արդար ու ճիշտ,
Արարչին գոհութիւն տանք միշտ,
Որ հասանք լուսաւոր դարի:

161.

Ուրախացէ՛ք մարդիք ու վայելիցէք,
Աշխարհը բացի այդ ուրիշ բան չունի,
Խոհուն մտքով սորան լաւ քննեցէք,
Վայելչութիւնից զատ խրախձան չունի:

Ոչ շատ շուայլ եղևք և ոչ շատ կրկիտ,
Ընկերութեան միջով եղէ՛ք միամիտ,
Սէր ցոյց տուէք իրար սրտով ձշմարիտ,
Աշխարհը սէր բանից լաւ պայման չունի:

Աւետարանը սուրբ այսպէս կը ձայնէ,
«Առաջին պատուիրան սէրը միայն է»:

Սողոմոնի խօսքով «բոլորն ունայն է»,
Զամալէ՛, աշխարհը կապ, սահման չունի:

162.

Զը գիտե՛մ թէ միայն ես եմ վատաբախտ,
Թէ էլ ինձի պէս ուրիշ խղճուկ կայ,
Մի՛թէ ուրիշ վայելք, աշխարհ ապերախտ,
Զըկար որ կամեցար ցաւ ու վիշաւ ընծայ:

Թշուառութիւն և սուգ է միշտ ինձ մօտ շատ,
Վիճակ անտանկի, վիճակ յետին վատ,
Թէև ապրուստ աւնիմ, բայց սրտով ազքատ,
Ըստ որում զխպուածներ ունիմ ախամայ:

Խեղճ Զամալուս կիանքը ցաւով է բոլոր,
Օր ըստ օրէ հոգ կը ձարեմ նոր 'ի նոր,
Շամիրամայ սիրոյ նետից վիրաւոր-
Համարեայ ապացոյց ես ինքս եմ Արայ:

163.

Վանեցի մօր երգը.

Պրզտի՛ տըղայ՝ չեմ օրօրիլ օրօրանքըդ, որ քուն լատ,
Հայ աղբաբքըդ ոտքի ելան, մէնակ դո՛ւն ետ պիտ մընաս.
Զարթէ՛, հոգիս, անուշ քունեդ, թո՛ղ աչքերըդ լուս տեսնին,
Արևելքէն արև ծագէ՛ց, բազը բանեց շայ ազգին:

Զար սուլթանի ոսկի թախտը ջարդուեցաւ, վար ինկաւ,
Թախտի տակէն հազար ազգաց ազատութիւն ծօղեցաւ,
Ո՛վ որ շուտով ոտքի ելլէ՛, ազատութիւն կըգտնէ,
Սիրուն որդիս մի՛թէ մէնակ չար լուծի տակ պիտ մըտնէ:

Մենք սուլթանին շատ խնդրեցինք կողկողազին, ու լայինք
Ազի՛ ազի արատուներով ձեռքն ու ոտքը լուացինք,
Բայց նա չ'անաց պաղատանքին ոգորմելի Հայերուն,
Այժմ՛, նայինք, նա կըլսէ՞ շառաչիւնը սուրերուն:

Տո՛ւր, սիրական, քակեմ ձեռքիդ պալու ըները, արձակեմ,
Ու այդ թուլի աջիդ մէջը մի պողպատէ սուր դընեմ,
Ըստրուկ զընա՛ արեան դաշար, վերադարձիր ազատուած,
Արդեօք մի օր պիտի լըսե՞ս մեր խնդիրքը, ո՛վ Աստուած:

«Փոք») Ա. Տ. № 3.

Գամառաբանիկայա:

164.

Անեղին մաղթանք.

(Հատուած «Գարբունիի Տուփից»).

Պար-գլուխը՝ քառամիլիօն
Գարուց որդի միազգի,
Անթարթ աչօք, սրտիւ զգօն,
Կ'ողբայ դռնում տաճարի...
Պըշած դէպ՛ էն նա խնդրումը—
«Փոխի՛ր զիս, Տէր, կոյտ արեան,
Եւ այդ կոյտից դարձո՛ մասնի
Հայոց թվով՝ որչափ կան:
Ամեն մինը կաթիլներից
Մի-մի Հայի սիրտ մտնէ,
Նորանց ողջի կրակներից
Թո՛ղ Ազգաւելի՛ն բարբառէ...
Ցաւ չէ՛ երբէք, ես կմեռնեմ,
Բայց թէ ոգով ողջի մէջ,
Ինձ քա՛ջ յայտ է, կենդանի եմ,

Որպէս կըրակ վառ, անշէջ ...
 Եւ ողջ ազգը, ո՛վ պահել Տէր,
 Կստանայ սիրտ իմի պէս...
 Բուպէի մէջ «Հայրենեաց սէր»
 Կ'զգան ողջը, որպէս ես
 Գորով սրտից-ը ամենքի
 Կաղաղակեմ միտ թի՛ւն,
 Ընդարձակ մեծ Հայրենիքի
 Ժողովել շուտով տաճարում...
 Որից յետոյ...ես լսումեմ:
 Քեզի յայտ է իմ խնդիր...
 Չա՛ր կլինի, թէ քեզ վսեմ
 Փառք տայ ե՛ մի թաղակիր...
 Ինձ այրումէ իմ փափազը...»
 Այս միջոցում տաճարի
 Ղողանջ հանեց մեծ զանգակը—
 Անգութ ողին սև տարրի...

* * *

Չայնը լռեց: Ծերը կրկին
 Ծունկ է չորած վշտահար...
 «Ընկա՛լ զոգիս» և լռեցին—
 Սար, քար ու ձոր—ողջ աշխարհ...

Բաբեռնի:

Ծանօթ. Այս երգի մէջ նկատելի է մի խառնուրդ հին լեզվից: Մի քանի բառ հոլովված են ո՛չ աշխարհիկ լեզուի նմանութենով. մի քանի արտայայտութիւններ դրված են գրաբառ,—սորանք մեզ անխորժ են: Այս խ ա ւ ո ս ա կ ա ն ու թ ե ա ն համար չունինք ոչինչ ասելու, պատճառ, սոյն երգը «խրթին գրի» այսպիսի մի պահանջով է գրվել...

Բարբունի:

Պէտքէս մելութեամբ հողիս կորուսած,
 Մեղքերու ալեաց մէջը ընկզմած,
 Եւ անդեղջ մինչև ցարդ կացի, մնացի,
 Մեղա՛յ, Տէ՛ր, մեղա՛յ, հողույս ճա՛ր արա:

Սուրբ աւազանին շնորհք զոր առի,
 Վա՛յ ինձ, անարատ ես չպահեցի
 Անգին զոհարովս ընկայ մէջ աղմի,
 Մեղա՛յ, Տէ՛ր, մեղա՛յ, հողույս ճա՛ր արա:

Կեանքի հեշտութեանն միշտ հեռեցայ,
 Մեղաց սանական ցանցի մէջ ընկայ,
 Նայեցի շուրջս, ազատող չկայ,
 Մեղա՛յ, Տէ՛ր, մեղա՛յ, հողույս ճա՛ր արա:

Ո՞վ է մեծ քան դու, Աստուած ահաւոր,
 Երկինք ու երկիր քու գործքն են բոլոր,
 Դու խնամես պահես, մարդասէր հզոր,
 Մեղա՛յ, Տէ՛ր, մեղա՛յ, հողույս ճա՛ր արա:

Քո սուրբ հրեշտակին ինձ պատահեցրո՛ւ,
 Եւ մի՛ տանջանքին ինձ նիւթ դարձրու,
 Աստուած իմ, Տէ՛ր իմ դու ես ահարկու,
 Մեղա՛յ, Տէ՛ր, մեղա՛յ, հողույս ճա՛ր արա:

Յ. Փ.

Պարտիզական, ո՛ն անդր, լաւ օրինակ չունի վարդը,
 Աստիք է կակղած, հոտ ու անասկ չունի վարդը:

Արթուրն սոխակ, արդէն գիտեմ՝ յայտնի սէր ունիս դու
Բայց ինքը՝ սերարիկն քեզ համարձակ չունի վարդըդ:

Բոյսով նորատունի է, ո՞ւր է պարտիզպանը ջուր տայ,
Արմատ տուած հաստատ մէկ բարունակ չունի վարդըդ,
Սոյոյդ յունիս ամուսն գունը բացեալ տեսայ ամուսն,
Թարչամեալ է այժմուս, դեռ յիշատակ չունի վարդըդ:

Մինչև յե՞րբ ամպը սորա շուրջը փաթթէ,
Մթնացած է պայծառ մէկ արուսեակ չունի վարդըդ,
Ագուան է ոտխ և կը նախանձի սրա բոյսին,
Երկնչում է թերթը, Հա՛ւաս, արձակ չունի վարդըդ:

167.

**Յողբալի մահ Վարդան Մամիկոնեանի,
նահատակ Հայրենեաց.**

Մերտ Մուսային շարժի 'ի լաց, Գոչեաց մանկիկ 'ի ձայն հզօր,
Ա. յո՛, ողբայ և հառաչէ. Ողբա՛, ողբա՛ ասո՞ 'ի շիրիմ՝,
'ի մենիկ վայր նսեմ՝ նոճեաց Ո՛հ, ասո՞ մեռաւ 'ի վիշտ յաքսոր
Փարի գլխմաւ և անց դռէ. Միշտ օրհնելով զիւր ռիսերիմ՝.
Պարսիկ բռնաւոր: «Ո՞ գնա խլեաց»:

Թնդաց այեր, երկիր դողաց, Հայ որերոյն թօթ ակնկոր,
Եւ մի մանուկ եկն յերեան. Անխաւ անդէն աղատա թեան
Յանշուք դամբան յտոին եկաց Նրօշակախիւր ահեղազօր,
Եւ հարց նմա թշուառ Մուսայն. Անէ՛ծք. վայ քեզ մինչ յաւիտեան,
«Ո՞ գնա խլեաց»: Պարսիկ բռնաւոր:

168.

Սէրը պաղիլ է նշխարհի մէջ. ջերմ չէ մնացել,
Փոխվել է յատուկ մարդը, լաւ ընկեր չէ մնացել,

Առուտուրի մէջ կուզեն թէ մէկ մէկու կողոպտեն,
Փորձել ես որ այժմ՝ երգումի վաւերը չէ մնացել:

Անմիտ երիտասարդները միշտ սուտ կ'վկայեն,
Արդար վկայող ու անթերի մէկ ծեր չէ մնացել,
Որդիքն իրանց հայրերու պարզէր մոռացան,
Որդւոց վերայ միշտ գութ ունեցող հայր չէ մնացել:

Հարուսաններից ոմանք միշտ խղճուկ աղքատին կ'ձնչեն,
Աղքատներու մէջ էլ բարութեան պատկեր չէ մնացել,
Թէ իշխան, թէ հասարակ և թէ ապաքան վարձկան
Մարդկանց քով լաւ սիրտ, սուրբ հողի համբեր չէ մնացել:

Աշխարհիս մէջը անխիղճ, անբարի, անսէր բնակողի,
Հաղի՛ր, մի՞թէ առները միշտ աւեր չէ մնացել:

169.

«Հայաստանի Սոխակին» նուէր.

Սոխակ գեղեցիկ կանաչ պարտիզում
Երգումէ, երգում, այրվում, խորովվում,
Սուլումէ, սուլում, Հայաստան երկրում,
Եւ իւր նախահարց վերքերը պատմում:

Պատմումէ և, ա՛խ, Հայաստան երկրից,—
Հին քաղաքներից, մեծ մեծ գիւղերից,
Վանք, վանահայրից, զօրեղ սուրբերից,
Թագ թագաւորից, վարդան վահանից:

Ի՞նչ տեղ էիր դու, իմ սիրուն Սոխակ,
Մինչ եօթնամաստան և երեք լինելը:

Քեզանով միայն, քեզանով հոգեակի,
Կեանք առին սիրով, Հայի որդիքը:

Քո ձայն լսելով, քո երգ սիրելով՝
Կոկոն մանուկներ բացուեցան շուտով,
Տե՛ս, քանի՛ քանի՛ սիրուն զրվածներ
Նուիրումեն քեզ ուրախ սրտերով:

Ուրախ սրտերով, վառուն սրտերով
Երկար տարիներ մաղթումեն Հայեր՝
Եւ քեզ է՛ քո Տէր—Ա. Գրիգորեանցին,
Որ միշտ մշակէք անդաստան ազգին:

Կարապետ Գ. Տէր-Չափարեանց, Մեղրեցի:

170.

Մի մօր օրօրական երգ*).

«Աղէի— ընէր» երգի եղանակով.

Սիրահիգե՛կ սիրուն Աղջիկ,

Քնի՛ր անուշակ քնով,

Որ զօրանաս, սրախ ծագիկ,

Քնքոյշ տեսքով, հասակով:

Քեզ սիրումէ քո Մայրիկը,

Մաքուր կաթինա**). քեզ տալով,

*) Իմ յարգանաց խորին շնորհակալութիւնը վստահանումեմ յայտնելու մեծ. տիկին Սուսամբար Տէր-Յովհաննէսեանցին, որ նախքան ազնիւ զգացմունքի արտայայտութիւններն այսօր «Սոխակի» միջոցաւ հազարդումէ Հայ սիրական ազգին: «Սոխակը» իրան բաղդաւոր համարելու է եւ ամեն ժամանակ մե՛ծ ուրախութեամբ, մե՛ծ շնորհակալութեամբ ընդունելու է այդպիսի գեղեցիկ եւ անուշահոտ վարդեր եւ այնպէս մատուցանելու ազգին:

**.) Երանի թէ այնն մի Հայ տիկին կատարէր իրա այդ անհրաժեշտ պարտաւորութիւնը, մաքուր ու հարազատ կան տալով իրա. նորածին մանուկին:

Եւ օրհնումէ քո Հայրիկը
Քեզ փարելով, զգուելով:

Ինձ մի՛ տանջի՛ր իմ անուշիկ,
Թո՛ղ մնայ սրտիկս խաղաղ.

Ննջի՛ր հանդիսս, հոգւոյս հատիկ,
Թո՛ղ ես չ'առեմ ա՛խ ու վա՛խ:

Խաչն Յիսուսի քեզ պահապան
Գիշեր ցերեկ—օրն 'ի բուն,

Որ զարդանաս, իմ անման,
Եւ լինիս Մայր սրբասուն:

Տէ՛կն Սոսանքար Մ. Տէր Յովհաննէսեանց:

171.

Մեր „Հայաստանի Սոխակին“

Սոխակ, իմ Սոխակ, քաղցրաձայն երգէ՛,

Ամեն մի անցքեր Հայերին պատմէ՛,

Նոցա խեղճ մանկանց սրտերն սկտիէ՛,

Անուշիկ ձայնով նոցա դեղգեղէ՛:

Է՛ր մնաս այդչափ անխօս, անբարբառ,

Թռի՛ր դու շուտով հովիտ ու անտառ,

Քնքուշիկ դէմքով Հայ մանկանց առաջ

Սուլէ՛ դու նոցա իմաստ սիրավառ:

Քայց չէ, մեր մի քանի մօղասէր, պօնասէր եւ փրած Հայ լուսաւորված տիկիններ փառաւոր կերպով նստած բազկաթոռների եւ զահաւորակների վերայ, յանձնումեն իրանց նորածին մանուկներին օտարազգի դայեակներին, նոցա ժրտ եւ խորթ կանին, նոցա զատիարակութեան եւ ուղղութեան եւ առհասարակ նոցա ամեն մի վնասակար ազդեցութիւններին, ի հարկէ Հայերիս վերաբերմամբ: Յիշեցէ՛ք, յիշեցէ՛ք, Հայ պարկեշտունի տիկիններ, հինգերորդ

Թո՛ղ նորա բանան իրանց միտք, հանճար,
 Հեռուել իրանց օգտին անդադար,
 Ու թո՛ղ ճանաչեն զթառատ մեր Մայր,
 Որ գտնեն իրանց ցաւերին մի ճար:

Օհան Պապայեանց:

172.

Սէր Ազգի.

Սէրն է ամենայն անջատեալ մասանց ընդ միմեանց միացնող,
 Սէրն է ամեն անկարելի բաներին հեշտ հնարք գտնող,
 Սէրն է իւրաքանչիւր մարդոյ առ շահ ազգի հրաւիրող,
 Սէրն է ամենայն շփոթեալ գործերին կարգ, կանոն դնող:

Ինչ ազգում որ սէր չիլինի,
 Նորա ամեն ջանքն է ունայն:

Սիրով հողեղէն արարածք՝ ընդ շուտեղինաց գրկեցան,
 Սիրով բազումք ամենաչար տանջանաց ձեռքէն փրկեցան,
 Սէր չ'ունենալով շատ ազինք՝ յանթիւ իրաւանց գրկեցան,
 Սիրոյ թերութեամբ հրեշտակաց՝ փառաց աստեղքը մրկեցան:

Ո՛ր ազգի սէրը սառած է,
 Նորա հառաչանքն է ունայն:

Շահասէրն ու ազգասէրը՝ ընդ միմեանց չեն կարող կեալ,
 Զի մէկն առնուլ է սիրում՝ իսկ միւսը ցանկանայ միշտ տալ:

Ժողոված դարու, Հայկական պատմութեան մէջ յայտնուած ոսկեղէնիկ դարու, ոսկեղէնիկ շրջանի մէջ հանդէս դուրս եկած երանելի Հայ տիկիներին, որոնք իրանց կեանքն անգամ զնուժէին իրանց մանուկների վերայ:—Նորա եւ կերակրումէին նոցա, եւ սնուցանում, եւ մեծացնում Աստուածապաշտութեան մէջ: Նորա եւ հազցնումէին նոցա. եւ սիրում, եւ զգում, եւ պահպանում իրանց պարզ եւ անմեղ սովորութիւններով: Եթէ նոցա սպառնումէր մի որ եւ է՝ վտանգ, նորա թողնելով մայրենի ազատութեան փափկութիւնը եւ իրրեւ

Առանց արոց, յայտնի բան է, ո՛չինչ չի կարող գլուխ գալ,
 Ո՛ր ազգը յոյժ շահասէր է, նա երբէք չի յառաջանալ,
 Նորա փրկութեան ճար չ'կայ,
 Ամեն աշխատանքն է ունայն:

Անյոյս մնացած ազգի սրտի վերջի ցնծութիւնն է փողն,
 Ազգին ազգայնութիւն տուող՝ մարդն է զբամոց անարգողն,
 Այժմեան ազգասէրն է դատարկ՝ շուկաներումը խօսողն,
 Կամ մէկ երկու սող ինձ նման՝ աննպատակ բան գրողն:

Եռանդամեռ ազգին տուած
 Գիփ խրախուսանքն է ունայն:

Անսէր ազգը շատ նման է անկարգ լարերին ջութակի,
 Ամենքը ծոկ ծիչ կ'արձակեն՝ համարեա՛ միմեանց ներհակի,
 Ամենեւին չեն կարենալ հնարել զձայն եղանակի,
 Վա՛յ քեզ, Սէյէսփ, որ քո Հայքդ են այժմ՝ միւսնոյն տեսակի:

Անսէր ազգի մէջ ունեցած
 Հազարամեայ կեանքն է ունայն:

173.

Մուխամմազ

«Սոխակ Հայաստանի» վերայ.

Սոխա՛կ, Սոխա՛կ, իմ Սոխա՛կ,
 Գիտեմ չկայ քեզ նման,

գիւղացի մարդիկներ, իրանց մանուկներին զիրքը կամ շալակն առած, փախչումէին անապատներ եւ այնտեղ բարոյական եկեղեցի կազմելով. Սաղմոսների ընթերցանութիւնով եւ այլ սրտաշարժ երգերով էին զբաղվում: Թողնենք ջեր սաղմոսներն ու երգերը, միայն ջեր մանուկներին ջեր հարազատ կաթով սնուցէք ու զօրացրէք: Գորանով մեծ բարերարութիւն արած կլինիք ջեր մանուկներին նոցա ապագայ աշխարհի մէջ եւ ապա թէ իրաւունք կունենաք հարազատ մայր կոչուելու նոցա:

Ա. Գրիգորեանց:

Հայաստան աշխարհումը
 Գողթի էս աննման:
 Թռչումես ամեն տեղեր,
 Ժողովումես ծաղիկներ,
 Փունջ անելով բերումես
 Հայոց համար Երգարան:

Ո՛վ Սոխակ, խելքս տարաւ քո քաղցրանուշ կարգալը,
 Հայոց քաղաքներումը քո զանազան մանգալը,
 Իմ Հայ եղբարց սրտերին քո սիրոյ խնդում տալը,
 Միայն քո ձայնդ մնաց յաւիտենից յաւիտեան:

Սոխա՛կ, Հայաստանի մէջ քեզ տխուր տառ չ'տեսայ,
 Ես մանգալով ամեն տեղ՝ քեզիցից վատ բառ չ'տեսայ,
 Բոլոր Հայաստանումը քեզ պէս երգող չ'տեսայ,
 Սէրդ անպատմելի է, նա է անմահ մեզ նշան:

Ո՛վ Սոխակ, քաղցր ձայներ ունես քեզ քո մօտումը,
 Գիշեր ցերեկ երգումես բուրաստանաց հոտումը,
 Սոխա՛կ, ինձի թողեցիր քո սէրից կարօտումը,
 Ախտո՛ս, որ ես կ'մնամ քո սէրից անարժան:

Քեւէւ-Օղլէն եմ, Սոխա՛կ, քեզ կարօտ եմ առանձին,
 Հայաստանը կարօտ է, ա՛խ քո երգին, քո զանձին,
 Կեանք տայ Աստուած ազգասէր Աւագ Գրբիգորեանցին,
 Որ Հայ բանաստեղծների երգերը թողնի կենդան:

Սիրելիդ իմ համազգի հայ, շխնաւ մի օտար կեանքով,
 Հարուստ մարդոյ ունեցած փառաւոր զարդ ու պաճուճանքով,
 Մտածէ որ ամենայն ինչ է անցաւոր ժամանակաւ,
 Լե՛ր զգոյշ չ'հասանել այսպիսի փառաց դու գրիանքով:

Սիրել պարտաւոր էս քրտամբ քո երեսաց անիւ վաստակ,
 Բարու թիւամբ վայելել հացրդ համով, քաղցր ախորժանքով,
 Քրնրնէ, շատ տեղեր կայ շատ հարստութիւն զիզած անչափ,
 Սակայն չունին խաղաղ ասպրուստ, ուտում են հացը զզուանքով:

Ուրեմն ինչո՞ւ փափագումես սիրով անյազ սապէս կենաց.
 Գու աշխատիր ճարել հանդերձ ու հաց արդար սուրբ բաղձանքով
 Զամալէ՛, ինչ խրատ ունիս յառաջ դու քեզ համոզէ ճիշդ,
 Յետոյ եթէ կարող ես, ուրիշն հաղորդէ յարգանքով:

Երկու խօսք զէպի «Սոխակ Հայաստանին»*).

Սոխա՛կ իմ Սոխակ Հայասէր Թռչնակ,
 Թռի՛ր Հայաստան շուտով դու արագ,
 Այս իմ համբաւը դու տա՛ր Հայաստան,
 Սոխա՛կ իմ Սոխա՛կ լի՛ր ինձ օգնական:

Ի՞նչ դառն օր էր, որ այսօր ծնվեց,
 Իմ մահչիս դուռն ինձ համար բացվեց,
 Զունեցայ ինձի մի Հայ օգնական,
 Ո՛չ հայր, ո՛չ եղբայր, ո՛չ մի ազգական:**)

Ո՛վ Տէր ստեղծող, զէպի ո՞ւր փախչեմ,
 Անիրաւ ազգի ձեռից ազատվեմ,

*) Այս «Երկու խօսք» որ գրված է Համագանու բնակիչ Արարիկ Տէր Պողոսեանի Ռաշտի մէջ Պարսիկներից բարկոճվելու առիթով, ստացած եմ Ռաշտից պ. Ա. Ղազարեանից, որը ներկայ լինելով այդ տխուր եւ սարսափեցի տեսարանին, գրել է ղիմառնաբար: Այդ իսկ անցքի մասին Գալբէժից պ. Մէլը «Մշակ» լրագրի 1876 թուի № 24 մէջ գրած է:

***) Ուրեմն, Հայր մեռաւ ճեռու իրա երկրից, հեռու իրա բարեկամներից, հեռու իրա ազգականներից եւ հեռու իրա սիրելի ընկերակիցներից եւ ծա-

Տո՛ւր ինձի թևեր չայրենիք թռչեմ,
Պատճառ, այնտեղ ինձ մեծ կարօտ ունեմ:

Քարով կամ փայտով անգութ, խիստ ծեծան,
Կիսաջան անձս փողոցով քաշան,
Մինչև հրեշտակիս իմացում տալը,
Ինքս կենդանի՝ հոգիս դուրս բերան:

Սոխա՛կ, իմ՝ Սոխակ, ազգասէր թռչնակ,
Երգելով մա՛ն եկ գանազան քաղաք,
Թո՛ղ չայքը սիրեն չայոց նախանձը,
Քան թէ սէրութիւն օտար ազգացը:

Ասի՛ր գոյ լալով Զօհրաբ եղբայրս,
Բերէ իւր հետը, ա՛խ իմ պատանս,
Փողոցէ փողոց մանգալով յետս,
Սապա՛ռի յրանո՞ւմ գտնէ զիակս: —

Փորէ գերեզման զիակս թաղէ,
Եհօվահ՛ Տէրից նա մխլթարովէ,
Փրկի՛չ Տէր Յիսուս, հոգիս ընդունի՛ր,
